




ԲԺՇԿԱՐԱՆ ԶԻՈՆ

ՏԵՂԵԿԱՆ









«МАТЕНАДАРАН»

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

Л Е Ч Е Б Н И К
ЛОШАДЕЙ И ВООБЩЕ ВЬЮЧНЫХ
ЖИВОТНЫХ (XIII в.)

Текст, предисловие и словарь
Б. Л. ЧУКАСЗЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1980

A ii
63997 619:616:636.1 ✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՐԵՆԱԼԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ՄԻՒԽՍՏՐԱՆԵՐԻ ԽՈՐՉՐԴԻՆ ԱՌԵՆԹԵՐ
ՄԱՀԱՍՑԻ ԱՆԼԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

Բ Ժ Շ Կ Ա Ր Ա Ն
ՁԻՈՅ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ
(ԺԳ ԴԱՐ)

574-80

Աշխատասիրությամբ
Բ. Լ. ԶՈՒԳԱԾՋԱՆԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

Պատաօխանատու խմբագիր՝ բանասիրական
գիտուրյունների թեկնածու Մ. Հ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Գիրքը հրատարակուրյան է երաշխավորել գրախոս՝
բժշկական գիտուրյունների թեկնածու Ա. Ա. ՎԱՐԴԱԿԱՆՅԱՆ

Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ: (ԺԳ դար)
Բ 615 /Աշխատասիր. Բ. Լ. Չուզասզյանի; Պատ. խմբ.
Մ. Հ. Մուրագյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980.—
273 էջ

«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» երկը մեզ է հասել
մեկ ձեռագրով միայն և հրապարակվում է առաջին անգամ: «Բժշկար-
րանը» միշնադարյան Հայաստանի մշակութային կարեռը երևույթ-
ներից է և իր բառագանձով՝ հայերեն անծանոթ նոր բարզություն-
ներով, օտար, հիմնականում արարերեն ու պարսկերեն, բառեր ու
տերմինների փոխառություններով, միշին հայերենի հղակի հուշար-
ձաններից է:

Գիրքը հացեագրվում է հայ բժշկության պատմությամբ և
հայագիտությամբ զբաղվողներին:

$$\text{Բ } \frac{3805000000}{703(02)-80} \quad 99-79$$

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչուրյուն, 1980. ներածուրյան և բա-
ռարանի համար:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մեծանուն հայագետ պրոֆ. Հրաչյա Աճառյանը 1906 թ. իրանի թավրիդ քաղաքում տևսել ու նկարագրել է 13-րդ դարի մի եղակի անասնաբուժական մատյան, որը նա հիացմունքով բնութագրել է որպես «նյութով ու գրությամբ պատվական» ձեռագիր՝ Պրոֆ. Աճառյանը, ինչպես տեղեկանում ենք նրա հիշողություններից¹, ժամանակի սղության պատճառով «Բժշկաբան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» կոչվող այս հուշարձանին ծանոթացել է հպանցիկ, ուստի միայն կարողացել է կատարել դրա նկարագրությունը և ընդօրինակել հիշատակաբանը։ Այս կապակցությամբ նա զրել է. «Սույն պատվական և խիստ հետաքրքր գրվածքը ընտիր գանձարան մ' է հայերեն անասնաբուժական և անասնաբուժական բառերու, այնպես որ զրբիս լիակատար ուսումնասիրությունը պիտի տա թե՛ ընդարձակ տեղեկություններ գիտության մասին և թե՛ բազմաթիվ հայերեն նոր բառեր մեր բառարանի համար»²։

Հետագայում, քսանական թվականներին, պրոֆ. Աճառյանը մի քանի տարի ապրել և դասավանդել է թավրիզում, բայց մեզ անհայտ պատճառներով, այլևս որ զրբիս լիակատար ուսումնասիրությունը պիտի տա թե՛ ընդարձակ տեղեկություններ գիտության մասին և թե՛ բազմաթիվ հայերեն նոր բառեր մեր բառարանի համար»²։

1968 թ. հայ-լրացական մատենագրական կապերին քաջատեղյակ բանասեր Պ. Մուրադյանը Աճառյանի «Կյանքիս հուշերից» զրբի լույս ընծայման առիթով «Սովորական Հայաստան» լրագրում հրապարակած «Որտե՞ղ է հիմա «նյութով ու գրությամբ պատվական ձեռագիրը» վերնագրով հոդվածում անդրադեմ է այդ «Բժշկաբանի» 18-րդ դարում հայերենից վրացերենի կատարված թարգմանությանը, նշելով, որ թարգմանության՝ ձեռագիրը

1 Տե՛ս Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 300։

2 Հր. Աճառյան, Ցուցակ ձեռագրաց թավրիզի, Վիեննա, 1910, էջ 137։

ներկայումս պահպամ է Թթիլիսիի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտը (Տ-3467): Նկատի ունենալով, որ Հայերն թարգմանության ձեռագիրը համարվում էր կորած, հարգելի բանասերը առաջարկում էր վրացերենից այն վերաթարդմաննել հայերն³:

Դեռևս 50-ական թվականներից Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը սկսել էր հետաքրքրվել «Բժշկաբանի» ճակատագրով։ Ստացված կցկուուր տեղեկությունները ձեռագրի հետքերը տանում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներու Եվ աշա, 1971 թ. Կալիֆորնիայի համալսարանի Մերձավոր Արևելյան երկրների բաժնի վարիչ պրոֆ. Ա. Սանջյանը, երևանում գտնված ժամանակի, հայտնեց, որ «Բժշկաբանը» ներկայումս գտնվում է Լոս-Անջելոս քաղաքի բնակիչ Զարեհ Սարացյանի մոտ, իսկ 1972 թ. տողերիս հեղինակին բախտ վիճակվեց ձեռագիրը տեսնել և ստանալ զրա մանրաժապավենը։ Ինչպես մեղ տեղեկացրեց Զ. Սարացյանը, տարիներ առաջ, երբ իր ընտանիքը ապրում էր Քայրիզում, հայրը՝ Խաչիկ-աղա Սարացյանը «Բժշկաբանը» գնել է դերձակ Շիրմազանից, որի մոտ և ժամանակին տեսել է պրոֆ. Անառյանը։ Զեռագիրը պահպամ է խնամքով ու հոգատարությամբ և գտնվում է այն նույն վիճակում, ինչպես նկարագրված է Թավրիզի ձեռագրացուցակում։

Զիազիտուրյունը նին և միջնադարյան Հայաստանում.—Հանրահայտ է, որ Հայկական բարձրավանդակում ձին հայտնի է եղել հին ժամանակներից։ Ինչպես գրում է կենսաբան Ս. Մեթլումյանը, «Փոքր Ասիայի արևելքում ձիերի գոյության առաջին վստահելի ապացուցները վերաբերում են մ. թ. ա. 2000 թվականին։ Այստեղ ձին արգեն մ. թ. ա. 1900—1700 թվականներին օգտագործվում էր ուրղմակառքերում։ Հին Արևելքում Փոքր Ասիայի, Միրիայի, Հայաստանի և Կովկասի լեռնային շրջաններում մեծ եղջերավոր անասունների հետ մեկտեղ ձին օգտագործվում էր

3 Տե՛ս «Սովետական Հայաստան» լրագիր, 1968, հունիսի 24, № 171։ Զեռագիրն առաջին անգամ նկարագրել է է. Թաղայշվիլին, տե՛ս «Описание рукописей», I, էջ 690—693։ այնուհետև զրա մասին հիշատակել է և. Մելիք-սեբ-բեկն իր «Հայերը վրաց հին գրականության մեջ» հոգևածում։ տե՛ս «Գեղարվեստ», 1921, № 7, էջ 48։

որպես լծկանք⁴: Իսկ մ. թ. ա. առաջին հազարամյակում Հայաստանն արդեն հռչակված էր իր ազնվացեղ ձիերով և գրաստներով, ձիաբուծությունը երկրի տնտեսության հիմնական ճյուղերից էր: «Գրավոր աղբյուրները հավաստում են,— գրում է ուրարտագիտ Ն. Հարությունյանը,— որ ձիաբուծությունը եղել է Ուրարտուի և նրան առ ժամանակ հնիակա մի ամբողջ շարք նահանգների բնակիչների սիրած զբաղմունքը... Ուրարտուի և նրա հնիակա երկրների անասնապահության մեջ առանձին տեղ են ունեցել նաև ջորիները և ավանակները»⁵: Ուրարտուում ձիերը «օղագործվում էին հողագործական և այգեգործական-խաղողագործական աշխատանքներում, ինչպես նաև անասնապահության մեջ: Գրանք կանոնավորապես օգտագործվում էին նաև ռազմական նպատակներով, հատկապես մի շարք երկրների ու ցեղերի դեմ ուրարտացիների սրբնիաց արշավանքների ժամանակ»⁶:

Հին Հայաստանում ձիաբուծության զարգացման մասին են վկայում Քահնոֆոնն (430—354 մ. թ. ա.) ու Ստրաբոնը (I դ. մ. թ. ա.): Քահնոֆոնը իր Հանրահայտ «Անարասիսում» գրում է, որ Հայաստանում պարսից արքայի համար ձիեր էին բուծվում, որ ուղարկվում էին նրան որպես տուրք⁷: Հույն հեղինակը, որ էին աշխարհի առաջին ձիագետներից է եղել (տե՛ս նրա «Զիավարժության արվեստը»⁸), ավելացնում է, որ Հայկական «ձիերը փոքր էին պարսկականներից, բայց ավելի աշխույժ»⁹: Ստրաբոնը, երեք դար հետո, ավելի հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում. ըստ նրա՝ Հայաստանը «ձիերի համար սքանչելի արոտավայրեր ունի և ոչնչով չի զիջում Մեղիսյին, այնպես որ պարսից արքաների տրամադրության տակ զտնվող նեսայական ձիերը այստեղ են վար-

⁴ С. К. Межлумян, Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении, Ереван, 1972, стр. 89.

⁵ «Հայ ժողովրդի պատմություն», Հ. Ա., Երևան, 1971, էջ 374:

⁶ Հ. Արյունյան, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, стр. 210.

⁷ՏՇ' Պատեմուն, Անարասիս, թրգմ. Սիմոն Կրկիաշարյանի, Երևան, 1970, էջ 98:

⁸ Xenophon, VII, Scripta Minor, Translated by E. C. Marchant and G. W. Bowersock (Loeb Classical Library), London, 1968, p. 296—369. Այս տեղեկությունը մեղ հայտնեց պատմաբան զոկու. Հր. Բարթիկյանը:

⁹ Անարասիս, էջ 98:

ժեցվում, իսկ Հայաստանի սատրապը Միհրի հանդեսների համար ամեն տարի Պարսկաստան է ուղարկում մոտ 20.000 մտրուկ: Մյուս կողմից Արտավազը, եթե Անտոնիոսի հետ Մեղիա մտավ, բացի հեծելազորից, նրան մատուցեց նաև 6000 զրահապատ ձի¹⁰:

Աստվածաշնչում հաղորդված է, որ «ի տանէ Թորգոմայ» բերված ձիերն ու զորիները վաճառվում էին փյունիկյան քաղաքներում (Եղեկիել, իէ, 14):

Անասնագետ Գ. Կ. Ամինյանը, որ իր «Զիարուծությունը հին Հայաստանում»¹¹ հետաքրքիր աշխատանքում ի մի է բերել այս հարցի կապակցությամբ հայ և օտար աղբյուրների վկայությունները, հավաստում է, որ մինչ արաբական արշավանքները Հայաստանը, հատկապես Արշակունիների ժամանակ, ունեցել է հզոր հեծյալ բանակ, և գալիս է այն եղրակացության, որ «զեռս հայկական պետականության կազմավորման արշալույսին հայերը զարգացած ձիարուծություն ունեին»¹²:

Ավելի ուշ, 10-րդ դարում, իրն Հառիկալը վկայում է, որ Հայաստանի շահրիները (ազնվացեղ սեորակ զրաստներ) իրենց տոկունությամբ, գեղեցկությամբ, աշխատությամբ ու համբերությամբ հայտնի են եղել իրաքում, Սիրիայում և Խորասանում¹³:

Զիարուծական ավանդները Հայաստանում շարունակվել են նաև հետագա դարերում. Կիլիկիայի ձիերը նույնպես մեծ համարում ու ճանաչում են ունեցել ներքին ու արտաքին շուկաներում: Եվ դա հասկանալի է. մարտական ու տոկուն ձիերի ու զրաստների մեծ կարիք ուներ հայկական հեծելազորը, միաժամանակ դրանք եկամտի կարևոր աղբյուր էին և արտահանվում էին շատ երկրներ: Բավական է հիշել, որ 1263 թ. Հեթում Ա-ն մարտի է հանել

10 Տե՛ս Հ. Արցունյան, Նշված աշխ., էջ 174:

11 Տե՛ս Գ. Կ. Ամինյան, Զիարուծությունը հին Հայաստանում. «Ելութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ. 1, 1964, էջ 236—258:

12 Անդ, էջ 243:

13 Տե՛ս Opus Geographicum auctore Ibn Hawkal, ed. J. H. Kramer, Lugduni, 1938, p. 346. Այս վկայությունը մեզ է որամագրել պատմաբան դոկտ. Ա. Տեր-Ղետնդյանը:

18.000¹⁴ (Ալիշանի մոտ 12.000¹⁵) հեծյալ, թորոս Բ-ը Մանուկիլ կայսրին է նվիրաբերել «ձիս ազնիւս», իսկ կառն Բ-ը Եգիպտոսի սուլթանի հետ 1288 թ. կնքած պայմանագրով պարտավորվել է յուրաքանչյուր տարի նրան տալ 25 ընտիր երիվար և 25 ընտիր ջորի¹⁶: Նույն 1288 թ. կառն Բ-ը հատուկ հրովարտակով ճենովացիներին թույլատրել է Ալյասից ձի և ջորի արտահանել¹⁷: Նման պայմաններում միանգամայն պարզ է, թե ինչու Կիլիկյան Հայաստանում մեծ ուշադրություն էին դարձնում ձիաբուծության զարգացմանը, թե ինչու Հեթում Ա-ը հրամայում է պատրաստել «Վասն ձիոյ պայմանման», իսկ Սմբատ Գ-ը՝ «Բժշկաբան վասն ձիոյ և առհասարակ գրաստնոյ» ձեռնարկները, թե ինչու «Գիրք վաստակոցում» գյուղատնտեսական այլ ճյուղերի հետ մեկտեղ թարգմանված են նաև ձիերի բուժման, բուժման ու խնամքին վերաբերող հատվածները:

Հայկական ձիերի ավանդական հոչակը շարունակվել է և հետագա դարերում: Այս կապակցությամբ հետաքրքիր է 15-րդ դարի սկզբներին Հայաստանից իրան անցնող Խսպանիայի զեսպան Ռուզ Դոնցալեց զի Կավիխոյի (1403—1406 թթ.) վկայությունը: Իր ուղեգրությունների մեջ նա պատմում է, որ Մակվի բերդի հայ իշխան նուր էղ-Դինը իր որդու հետ «երեք լավ թամբված ձիեր» է նվիր ուղարկել Լենկ-Թեմուրին, երբ վերջինս մոտեցել և սպառնացել է բերդին¹⁸: Զիերի թվական այս փոքր քանակը ինքնին թելաղրում է, որ նվիրաբերված նժույգները արտակարգ լավ և ազնվացեղ պիտի լինեին, որպեսզի բավարարեին քմահաճ բռնակալին և շվիրավորեին նրա ինքնասիրությունը:

Զիագիտության հարցերի նկատմամբ հետաքրքրությունը Հայաստանում շի դադարում անգամ հայկական պետականության անկումից հետո՝ ուշ միջնադարում, երբ երկիրը գտնվում էր թուրք-պարսկական տիրապետության ներքո: Մրա ապացույցն է 1696 թ. Վանա Հոդոց վանքում Ղազար վարդապետի ձեռքով գրված ձիա-

14 Տե՛ս «Թաղմավեպ», 1924, էջ 387—388:

15 Պ. Ալիշան, Միասնական, էջ 32:

16 Անդ:

17 Անդ, էջ 387:

18 Տե՛ս Հովին. Հակոբյան, Ուղեգրություններ, հտ. Ա, Երևան, 1932, էջ 114:

մատյանը, որը կրում է «Բժշկաբան վասն ձիոյ և զորոյ և կամ իշու, որ Խոսրով արքայն զրել ետ» խորագիրը¹⁹, Նման աշխատանքի ստեղծումը, անկասկած, թելազրված է եղել անհրաժեշտությունից, միայն ձիաբուծական մեծ կենտրոնների առկայությունը կարող էր այսպիսի ձեռնարկի պահանջ առաջադրել:

* * *

Անասնաբուժության վերաբերյալ առաջին գրավոր վկայությունները մեզ են հասել Հին Եգիպտոսից, Բարեկոնից, մասնագետ ձիաբուժներ են եղել Հնդկաստանում, Իրանում, Հին Հունաստանում, ամենայն հավանականությամբ նաև Ուրարտուում: Հունական աղբյուրները ձիագիտական և ձիաբուժական ձեռնարկների հեղինակներ են Հիզում Քսենոֆոնին (430—354 մ. թ. ա.), Հիերոկլեսին (3-րդ դ.), Ապսիրտոսին (4-րդ դ.), Թեոմնեստոսին (ժամանակն անհայտ)²⁰ և ուրիշների, իսկ 10-րդ դարում Կոստանդին Սիրանածին կայսրը կազմել է տալիս ձիաբուժական և երկրագործական ամբողջական ձեռնարկներ՝ «Ֆեոպոնիկա» և «Հիպակիատրիկա» անուններով, որտեղ ի մի են բերված հին աշխարհի երկրադրական ու ձիաբուժական մտքի նվաճումները:

Ձիաբուժական ու ձիաբուժական առանձին ուսումնասիրություններ ու ձեռնարկներ են պահպանվել Հնդկական, արաբական ու պարսկական գրականության մեջ:

Արաբական գրականությունը հարուստ է եղել ձիագիտության վերաբերյալ երկերով. Ալ-Նաղիմին իր «Ֆիհրիստում» («Յանկում», մոտ 988 թ.) թվարկել է այդպիսի բազմաթիվ գրքերի անուններ²¹, իսկ աշխարհի շատ գրադարաններում պահպանված են արաբերեն ձիագիտական երկեր²², որոնցից մի քանիսն են միայն հրապա-

19 Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. Ա. 459, էջ 104 ր:

20 Տե՛ս Գеопоники, Վիզանտիйская сельскохозяйственная энциклопедия X века. Введение, перевод с греческого и комментарий Е. Э. Липшиц, М—Л, 1950, стр. 345—346.

21 Տե՛ս The Encyclopaedia of Islam, v. II, 1965, p. 786.

22 Եվրոպական արկենագիտական կենտրոններում պահվող ձիագիտական ձեռագրերի մասին տե՛ս Hammer-Purgstall, Sur la Chevalerie des Arabes antérieure à celle de l'Europe, Journal Asiatique, 1849 և L. Mercier, La chasse et les sports chez les Arabes, Paris, 1927.

բակված: Արաբերեն ձիազիտության հնագույն ձեռնարկն Ասմաթի «Զիամատյանն»²³ է (Հրատ. 1895 թ.), այնուհետև հայտնի են Հիշշամ ալ-Քալբիի և իրն ալ-Արաբիի աշխատությունները²⁴ (Հրատ. 1928 թ.): Կահիրեի Ահմադ Էրրորդի դպրոցում ներկայումս պահպող հեջըի 605 (1208/9) թվականին գրված աշխարուժության համառոտ մատյանը²⁵, ինչպես նաև Բրիտանական գրադարանի Օր. 3483 պարսկերեն ձիազիտությունը²⁶, որ ալ-Մուջահիդ Ալի իրն ալ-Մալիք ալ-Մուայադ Դավուդի (14-րդ դ.) արաբերեն երկի թարգմանությունն է, իրենց կառուցվածքով և բովանդակությամբ հիմնականում համընկնում են պահպանված արաբերեն այլ ձիազիտարաններին:

Պարսից գրականության հնագույն արձակ երկերից Օնսոր ալ-Մ'ալի Քել Քավուսի (11-րդ դ.) հայտնի «Կաբունամեի» 25-րդ գլուխը²⁷ ծիաղիտական հետաքրքրի տեղեկություններ է պարունա-

²³ A. Haffner, Das Kitab Al Chail von Al Asmai, Vienna, 1895.

²⁴ Ibn al-Kalbi and Ibn al-Arabi, *Kitab Asma khayl al-Arab wa fur-sanithim*, ed. G. Levi Della Vida, *Les Livres de chevaux*, Leiden, 1928.

ابراهيم شموع، فهرست المخطوطات 25 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս մշակումը՝ աշխատանքում առաջընթացի առաջնահատիքը (Եղիշե Արքա, 1959, էջ 169).

Այս ձեռագրի և դրա 1209/10 թվականի մի այլ ընդորիխակության մասնա-
ժապավենները շնորհակալությամբ ստացել ենք Կահիբեկի ֆրանչեսկյան միաբա-
նության անդամ Հայտագետ Հ. Վ. Մուսթարիհից, իսկ ձեռագրի վայրը մեղ է
Հայտնի զերմանացի արևելացի պրոֆ. Բ. Բրենտոյնը (Հակիմ Համալսարան,
Գլշ.)։

²⁶ *Sh'ü Ch. Rieu*, Supplement to the Catalogue of the Persian Manuscripts in British Museum, London, 1895, p. 114.

Այս և մյուս ցուցակում (Ch. Rieu, Catalogue of the Persian Manuscripts in British Museum, v. II, 1966, p. 480—482) նկարագրված պատկերները այլ ամենի մասնաւոր համար են մանրաժամանակները դոկտ. Վ. Ներսիսյանի օժանդակությամբ շնորհակալությամբ ստացել ենք Թիֆտանական գրադարանից (ձեռագրերը նախկինուում պատկենիլ են Թիֆտանական թանգարանին):

فابوس بن وشمگیر زبار، قابوسنامه، با تصمیح و مقدمه و حواشی²⁷ عبادالمجید بدوى، تهران، ۱۳۴۲، ص ۱۰۵، ۹۷۰، ۶۷۸-۶۷۹، ۲۹۰، ۱۳۴۲، ۱۰۵: *کارتوس هری-ل-لئوگرافیه*، ۱۳۴۲، ۱۰۵:

կում. այստեղ հեղինակը նախ բազմաթիվ խորհուրդներ է տալիս ձի գնելու վերաբերյալ, ապա համառոտակի թվարկում է մի շարք հիվանդություններ, որոնք ձիերի համար թերություններ են և նվազցնում են նրանց արժեքը: Այս հուշարձանում ձիերի արատների ու արժանիքների նկարագրությունները, գույների թվարկումն ու հիվանդությունների անվանումները վկայում են, որ հեղինակը շատ ընդարձակ գիտելիքներ է ունեցել ձիաբուծության ու ձիաբուծության վերաբերյալ, իսկ կիրառված տերմինները, հիմնականում արաբերեն, ցույց են տալիս, որ 11-րդ դարում արդեն արաբական ձիագիտությունը ուներ այնպիսի բարձր մակարդակ, որ հարեան երկրներում, ինչպես Պարսկաստանում, անկաշկանդ օգտվում էին դրանից, անգամ փոխ տոնում արաբական տերմինները: Այս ավանդները հետագայում ես շարունակվել՝ են պարսից դրականության մեջ: Արաբերենից, ինչպես և սանսկրիտից պարսկական թարգմանված ձիագիտարաններին զուգահեռ պարսկեներն ունեցել են նաև նմանատիպ ինքնուրույն երկեր: Մրանք հիմնականում ձեռագիր վիճակում են:

Բրիտանական գրադարանում պահպող մեզ ծանոթ պարսկերեն հինգ անտիպ ձիագիտարաններից²⁸ երկուսը (Add. 14057 և Add. 16854) թարգմանված են սանսկրիտից (առաջինը 15-րդ, իսկ երկրորդը 18-րդ դարերում), մեկը (Օր. 3483)՝ արաբերենից, իսկ երկուսը (Add. 7716, 23562) ինքնուրույն են (18-րդ դար): Սանսկրիտից թարգմանվածների տերմինները հիմնականում հընդկական են, իսկ արաբերենից թարգմանվածներին՝ ու ինքնուրույն զործերին՝ արաբական:

Հնդկաստանում զրված երկու ձիագիտարաններ 1911 թվականին հրատարակել է Դ. Ս. Ֆիլլուսը. մեկը հինդուստանի լեզվից անգլերենի թարգմանված Ռանգին անունով՝ հեղինակի «Զիամատյանն» է, մյուսը՝ Զաբարդաստ խանի (18-րդ դար) «Թուհիֆաթ-ու-Սադ» («Նվեր թագաժառանգին») խորագրով՝ պարսկերեն ձիամատյանի բնագիրը՝ որոշ տերմինների անգլերեն համառոտ բացատրությամբ²⁹:

²⁸ *Skr. Ch. Rieu-f նշված ձեռագրացուցակները:*

²⁹ *Zabardast Khan*, The Faras-nama, Edited in the Original Persian with English notes by D. C. Phillott, Calcutta, 1911.

Վերը հիշված ձիազիտարաններում գործնական նկատառումներով նկարագրվում են ձիերի տեսակները, նրանց կազմվածքից ու գույներից ճանաչելու, խնամելու եղանակները, հիվանդություններն ու բուժման միջոցները, երբեմն էլ՝ ձիավարժության որոշ ձևեր:

Զիազիտուրյունը հայ մատենագրության մեջ.—Հայ հեղինակների ինքնուրույն ձիազիտական երկեր մեր մատենագրությանը հայտնի չեն, բայց որութ է ենթադրել, որ Հայաստանի հարուստ արոտավայրերում սփոված տասնյակ հազարների հասնող ձիերը խնամվել ու բուժվել են գործնական դիտելիքներ ունեցող ձիապանների ու ձիաբույժների միջոցով:

Հայ մատենագրության մեջ ձիազիտության վերաբերյալ պահպանված երկերն ու մի քանի փոքր բնագրերը ժամանակագրական կարդով հետևյալներն են.

1. «Վասն ձիոց ազգաց և ցեղից մատակաց, յովտակաց և քուսակաց, խրատք և բժշկութիւնք»:—Սա 10-րդ դարի հունական «Գեոպոնիկայի» 16-րդ գիրքն է, որ Հայերին «Գիրք վաստակոցի» ՄՂԴ-3Ժ (294—310) զլուխներն չ ընդորելում: «Այս (իմա՝ 16-րդ) գրքի տեղեկությունները ձիերի խնամքի, նրանց բուժման, ավանակների ու ուղտերի վերաբերյալ, —գրում է «Գեոպոնիկայի» ուսուերեն զիտական թարգմանությունը (1960 թ.) իրականացնող Ե. Լիպշչյոր, —թիւ ընդհանրություններ չունեն հին հեղինակների «Հիպատիատրիկաների» ու «Կիննեգետիկոնների» հետ: Համեմատել նաև հռոմեական զյուղատնտեսներ Վարրոնի (2-րդ դ.), Կոլումելլայի (6-րդ դ.), Պալլադիոսի (4-րդ դ.), ինչպես նաև Պլինիոսի (8-րդ դ.) մոտ եղած տեղեկությունների հետ»³⁰:

Հայերին «Գիրք վաստակոցը», որ թարգմանված է «Գեոպոնիկայի» արաբական տարբերակից և հիմնականում արտացոլում է հունական բնագրի բովանդակությունը, իր 294—310-րդ զլուխներում (գուտն) մոտավոր ճշտությամբ պահպանել է նաև «Գեոպոնիկայի» 16-րդ գրքի զլուխների հերթական կարգը. Հայկական բնագրում, ձեռագրից թիրթեր լինելու հետևանքով, պակասում են միայն վերջինիս 16—22 զլուխները³¹: Բովանդակության որոշ

30 Գեօպոնիկ, ստր. 345—346.

31 Տե՛ս «Գիրք վաստակոցը», թարգմանութիւն նախնաց արաբացի լեզուէ, Վենետիկ, 1877, էջ 209 տողատակի ծանօթագրությունը:

խոտորումները հավանաբար գալիս են արաբական թարգմանությունից և կամ հայ թարգմանչի միջամտությունից:

«Գիրք վաստակոցի» ձիաբուժության և ձիաբուժության հարցերին նվիրված գլուխները հետեւալներն են (ըստ որում ՄՂԴ գլխի վերնագիրը «Գեղարդիկայի» 16-րդ դրբի ընդհանուր վերնագիրն է).

Դուռն ՄՂԴ. Վասն ձիոց աղքաց և ցեղից մատակաց, յովտակաց և քուռակաց, խրատք և բժշկութիւնք:

Դուռն ՄՂԵ. Յաղագս գունոց:

Դուռն ՄՂԶ. Վասն յովտակաց և վաղցընելոյ:

Դուռն ՄՂԷ. Վասն վաղցընելոյն,

Դուռն ՄՂԸ. Վասն սնուցանելոյ զրուռակն, խրատ:

Դուռն ՄՂԹ. Վասն իշոյ չորի ծնուցանելոյ, խրատք:

Դուռն Յ. Վասն գեղերոյ և ցաւոց, որ ընծայի ի գրաստ:

Դուռն ՅԱ. Յաղագս տաքութեան գրաստու:

Դուռն ՅԲ. Յաղագս աշացն թէ ցաւի կամ սպիտակի:

Դուռն ՅԳ. Յաղագս զղերոյն թէ ցաւի կամ ուռենայ:

Դուռն ՅԴ. Վասն խոցտուկի:

Դուռն ՅԵ. Յաղագս թորացաւի:

Դուռն ՅԶ. Վասն այն ցաւերուն, որ շլինին յերեան:

Դուռն ՅԷ. Յաղագս գոզարդելի:

Դուռն ՅԸ. Յաղագս արիւն գոզելոյ ձիոյ:

Դուռն ՅԹ. Վասն ձիոյ, որ ողն տեսի:

Դ. Ալիշանը, որ 1877 թ. իրականացրել է «Գիրք վաստակոցի» հրատարակությունը, հայերեն թարգմանության ժամանակը զնում է 13-րդ դարից ոչ ուշ՝ «Վաղագոյն քան թէ անազան»³², Ալիշանի կարծիքն ընդունելի է եղել բոլոր այն հեղինակների համար, որոնք այս կամ այն առիթով անդրադարձել են «Գիրք վաստակոցին», միայն բանասիր Կ. Բրոքելմանն է, որ 1896 թ. «Byzantinische Zeitschrift» հանդեսում (հ. 6, էջ 385—409) ինչինչ փաստերից ելնելով՝ «Գիրք վաստակոցի» թարգմանության վայրը համարում է Լեհաստանը, իսկ ժամանակը՝ ուշ միջնադար: Բրոքելմանի փաստարկները հիմնավորապես մերժված են 1900 թ.

32 Անդ, էջ ժե:

«Բազմավեպում» տպագրված Ա. Սարյանի հոդվածում³³, թանասեր Գ. Անդրիկյանը թարգմանության ժամանակը զնում է «ԺԲ դարուն մեջ և ապահովապես 1160 թվականին վերջ»³⁴, իսկ թարգմանիշ համարում է Մխիթար Հերացուն: Անդրիկյանը իր եղրակացությունը բխեցնում է «Զերմանց մխիթարութլառ» և «Գիրք վաստակոցի» մեջ առկա մի քանի բառերի ընդհանրությունից, այսպիս՝ Մխիթար Հերացին մի անգամ գործածել է դուռն «գլուխ» իմաստով, այն դեպքում, երբ «Գիրք վաստակոցը» գրքի բոլոր բաժանումները «գուռն» է անվանում, Հերացին գործածում է հովովի թիր խոտի անունը, «Գիրք վաստակոցը» նույնպես հաճախ հիշատակում է այդ խոտը, Հերացին ունի հոռոմ ձեր, նույնը նաև «Գիրք վաստակոցը», Հերացին գործածում է տանու («ընտանի»), նույնը նաև «Գիրք վաստակոցը» և նման մի երկու այլ զուգահեռներ ևս:

Հավանաբար այսպիսի այլ ընդհանրություններ կարելի է գտնել Մխիթարի, ինչպես նաև 13-րդ դարի այլ հեղինակների գործերում, բայց սրանք թույլ փաստարկներ են որևէ հուշարձանի ժամանակը ճշտելու համար: Մինչդեռ «Գիրք վաստակոցի» և քննության առարկա «Բժշկարանի» բառապաշտների մեջ եղած բազմաթիվ ընդհանրությունները (տե՛ս բառարան) զալիս են հաստատելու, որ այս երկու երկերի թարգմանությունները արտացոլում են համարյա նույն ժամանակաշրջանի լեզվական իրողությունները, և ճիշտ է եղել Դ. Ալիշանը «Գիրք վաստակոցի» թարգմանության ժամանակը զնելով ոչ ուշ քան 13-րդ դարը:

2. «Վասն ձիոյ պայթարնման»—1263 թ. Հեթում Ա.-ի հրամանով Ստեփանոս սարկավագի կողմից թարգմանված ձիադարմանական երկն է, որ մեզ չի հասել (տե՛ս էջ 22):

Պրոֆ. Լ. Հովհաննիսյանն իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» ոռուսերեն աշխատության մեջ միջնադարյան հայկական ձիարուժարանները թվարկելիս հիշատակում է նաև արարերենից հայերեն թարգմանված մի երկ, որի հեղինակն իրը իրն ալ-Բեյտարն է³⁵: Վերջինս հայտնի միշատարան է եղել. սակայն

33 ՏԵ՛ս Ա. Սարյան, Կ. Պոռքելմանը և «Գիրք վաստակոց»-ի հայերենն թարգմանությունը: «Բազմավեպ», 1900, էջ 4-7, 52-58:

34 ՏԵ՛ս Գ. Անդրիկյան, Վաստակոց գրքին թարգմանիչը, «Բազմավեպ», 1906, էջ 439:

35 ՏԵ՛ս Լ. Ա. Օգանեսյան, История медицины в Армении с древнейших времен до наших дней, ч. II, Ереван, 1946, стр. 171.

Նրա վերաբերյալ եղած հանրահայտ գրականության մեջ նման որևէ աշխատություն չի հիշատակված։ Այստեղ պրոֆ. Հովհաննիսյանն ինչ-որ բան չփոթել է. թերևս նրան թյուրիմացության մեջ է զցել այս երկի վերնագիրը՝ «Վասն ձիոյ պայրարնման»։ պայրաց (պայտար) կամ բեյտար արաբերեն հասարակ անուն է և նշանակում է «անասնաբույժ»։

3. «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ».—1296—98 թթ. Սմբատ Գ-ի հրամանով բժիշկ Ֆարազի կազմած, մեր քննության առարկա ձիաբուժական ձեռնարկն է. (մանրամասն նկարագրությունը տե՛ս էջ 31—32)։

4. «Ի գրաստու բժշկարանէն փոխած».—Զեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում, 5 էջից բաղկացած պակասավոր մի բնագիր է (ունի Ա.-ԺԹ, Խթ.-Լ գլուխները)։ Հրապարակված է 1867 թ. «Բազմավեպում»։ Հրատարակիչը՝ Հ. Հ. Թ., այս կապակցությամբ գրում է. «Թերևս ուրիշ մշակյալ լեզուների շատ վար չմնար մեր լեզուն ալ բուսաբանության, կենդանաբանության, մարդակազմության և մանավանդ բժշկության բառերու կողմանե, որոնք հարյուրով, հազարով կը գտնվին միայն բժշկարաններուն մեջ... կիսակատար ծանոթությամբ զոր ունինք լեզուներնուս բովանդակ հարստությանը՝ շատ անգամ իզուր կը հոգնինք նորանոր բառեր ստեղծելու (որոնց ստեղ կը պակիսի ալ արվեստը և վայելլությունը), մինչդեռ նախնիք արդեն մեզմե առաջ անվանած և բացատրած են զանոնք, ոչ եթե մեկ, այլ երեսն նաև երկու երեք զանազան բառերով»³⁵ա։ Հ. Հ. Թ. հիմք ընդունելով բնագրի մեջ առկա մի քանի ֆրանսերեն բառերը (որոնք արդյունք են խաչակրաց արշավանքների հետևանքով հայերի ու լատինների սերտ շփումների), հնթագրում է, թե այն «գաղիներնէն թարգմանուած է», մինչդեռ սրա առաջին իսկ համեմատությունը բժիշկ Ֆարազի «Բժշկարանի» հետ ցույց է տալիս, որ այն վերջինիս մի քանի հատվածների խիստ համառոտությունն է³⁶. այստեղ պահպանված

35ա «Բազմավեպ», 1867, էջ 354։

36 Պրոֆ. Լ. Հովհաննիսյանն իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության մեջ, ձեռքի տակ չունենալով Ֆարազի կազմած «Բժշկարանը» և միայն օգտվելով Հը. Աճառյանի նկարագրությունից, այս երկու բնագրերը տարբեր աշխատանքներ է համարել. տե՛ս Լ. Ա. Օգանեսյան, Իстория медицины

են թե՛ կիլիկյան միջին հայերենին բնորոշ հատկանիշները, և թե՛ արաբական փոխառությունները: Հետևյալ զուգագրությունն իսկ ցույց է տալիս երկու բնագրերի ընդհանրությունը:

Բժշկարան ձիոյ...

Ի գրաստուն բժշկարանէն

Ս. Յաղագս ցաւուն, որ կոչի Բ.՝ Յաղագս ֆընտուի
համբ

Նշանքն այս է. որ է ֆըն-
տու, հեվայ գրաստոն խիստ, և
լարի պինչքն, ու թուլնայ
զլուխն և ամէն զաւդվածքն և
փայտնայ ոտվին, և կտրի ի կե-
րոյ, և ի սկիզբն այս ցաւու՝ ինչ-
վի յերեք աւրն, լինի շունչն
տաք, և հետ երեք աւուրն պաղ
լինի շունչն ու այլընդի, ու
խփի աշվին, ու խիստ դժար
շարժի զամէն զաւդվածքն, ու
տքալով զողէ, և շկարէ քայլ
փոխել քանձ խիստ դժար, և
երբ ընկնի՝ դժար ելնէ յոտն, ու
լինի, որ քրտնի անդմունքն:

Դեղ գայլցաւու, եր ուժով
լինի.

Առ բողքի հունդ ճանկ մի,
լիսէ ու մաղէ, ու դիր զինք ի
պտուկ մի, ու լից ի վրայ նա-
րընչի ծաղկի ջուր՝ նուկի երեք,
ու եփէ զինք քաջ, ու առ ի
վայր, որ եղկնայ, ու լից ի յիր-
մէ բաժին մի ընդ փողքն ի
վայր, ու բաժին մի դիր հոռոմ

Գրաստ որ ֆընտու լինի՝ հեայ
խիստ և լարի պինչքն, թուլ-
նայ զլուխն և ամէն զօդված-
քքն, փայտնայ ոտվին, կտրի ի
կերոյ և ի սկիզբն մինչև յերեք
օրն շունչն տաք լինի և ապա
պաղէ շունչն այլընդի, աշվին
խփի և դժար շարժի ամէն զօդ-
վածքն, և տքալով զողէ և
դժար քայլ փոխէ, և թէ ընկնի
դժար ելնէ ի յոտն. և լինի որ
քրտնէ անդմունքն:

Բժշկութիւնն է այս ցաւու...

в Армении с древнейших времен до наших дней, ч. II, Ереван, 1946,
стр. 171—174.

դեղ և առ ի երակ ու հան յա-
րենէն աղէկ մի, և ապա կապէ
դերկնին ամուր քթեթով, ու առ
քացախ և ջրխոնէ ջրով և շող-
ցոյ, և լից ի վրայ այլ մարմ-
նոյն. և լինի ջրին շակրն
լիտր ինն, և քացիսին լիտր ու
կէս, ու լից ի վրա ուսացն, որ իշ-
նի հետի հետ ի վրայ բազկացն,
ու չորս աւր գարի մի տար զրաս-
տուն, որ ուտէ, ու հետ չորս ա-
ւուրն կանգնեցոյ զինք երեք աւր
ի գնացք չուր, որ թաղվի ոտքն
ինչվի քովքն ի չուրն ու չէ
պարու կանգնեցնել քանձ երեք
աւրն այլ աւելի ի չուրն: Եւ յա-
մէն աւր տարպա մի հան զինք
ի ջրէն ու աւծնէ զինք անպակ
զինով ու հոռոմ ձիթով աղէկ
շատ, ու մարձէ դէպ ի վայր:
երբ տեսնուս, որ ոտվին աղէկ-
նա ու թուլնայ ու բայլէ աղէկ,
դու զինք մտոյ այլ վայր ի
չուրն ու հան այլ վայր, ու աւծ-
նէ ու անցմնեցոյ:

երակն(“), և չորս օր շուտեցնել
զարի, յետ չորս աւուրն կանգ-
նեցնել զինք երեք օր ի գնացք
չուր, որ թաղվի ինչվի քովքն ի
չուրն, ու յամէն օր տարպա մի
հանն ի ջրէն և օծնեն ամպակ
զինով և հոռօմ ձիթով աղէկ,
ու մարձն դէպ ի վայր. եթ
ոտվին կակղնա ու լաւնա որ
աղէկ բայլէ՝ նա անցմնեցնեն
ու արծեն:

(«Բազմավիպ», 1867,
էջ 355)

Հիմք օրինակում Ծ զլուխը դեռևս շարունակվում է և հիշված
հիվանդության համար երեք այլ բուժումներ է առաջարկվում,
մինչդեռ համառոտ օրինակի Բ զլուխը այս բնագրով իսկ ավարտ-
վում է:

Համառոտ տարբերակի զլուխների համեմատությունը Յարա-
շի «Բժշկաբանի» հետ հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ա. Յաղագս կաղնալոյ	=	«Բժշկաբան» զլիս. Խէ
Բ. Յաղագս ֆընտոփի	=	» զլիս. Ս
Գ. Յաղագս քամոյ և ուսեցի, որ չկարէ թրբել և դողել =		«Բժշկաբան» զլիս. ՍԱ

Դ. Յաղագս	թթի,	որ լինի ի գրաստում տոշն կամ ի ձուքն =	
		«Բժշկաբան» գլխ. Կ	
Ե. Յաղագս	կոլընջի	=	» զլիս. ԿԴ
Զ. Յաղագս	քածպարի	=	» զլիս. ԿԲ
Է. Յաղագս	մկնատմերոյ	=	» զլիս. Հ
Ը. Յաղագս	ըռամատիսի	=	» զլիս. ՀԲ
Թ. Յաղագս	ֆարսնի	=	» զլիս. ՀԳ
Ժ. Յաղագս	գայլցափի	=	» զլիս. ՀԴ
Իթ. Յաղագս	սրոսի	=	» շիք
Լ. Յաղագս	նշանաց ճանաչելոյ	վլաւ գրաստն ու զլատթարն =	
		«Բժշկաբան» գլխ. Բ	

5. Բժիշկ Ֆարաջի «Բժշկաբանի» մի եռկրորդ ընդօրինակություն կամ խմբագրություն պիտի լինի հավանաբար այն օրինակը, որ հիմք է հանդիսացել վրացերեն թարգմանության համար: «Բժշկաբանի» վրացերեն թարգմանությունը կատարվել է 1788 թ. վրաց Գեորգի Հերակլյան արքայազնի պատվերով: Թարգմանությունը իրականացրել են Հովհան Օսեսձե և Հայազգի Տեր-Պետրոս քահանաները՝ Փիլիպոս Ղայթմազյանի և նրա որդի Տեր-Սամվելի մասնակցությամբ³⁷:

Պ. Մուրադյանը իր վերոհիշյալ հոդվածում նշել է, որ Հայերեն բնագրի հիշատակարանը որոշ կրճատումներով ու աղավաղումներով փոխանցվել է վրացերենին. այսպես՝ գրչության վարը՝ Արմար, փոխարինված է Սեբաստիայով, ժամանակը՝ 1296—98 թվականների փոխարեն 953 թվական (1504 թ.): Կարծում ենք, որ այս տվյալները աղավաղման արդյունք չեն կարող լինել. դրանք, ամենայն հավանականությամբ, բխել են Հայերեն հիմք բնագրից և իրավունք են տալիս ենթադրելու, որ գոյություն է ունեցել Ֆարաջի «Բժշկաբանի» մի երկրորդ ընդօրինակություն կամ խմբագրություն, որ գրչագրվել է Սեբաստիայում 1504 թվականին:

Այս հնիթագրությունը ավելի հիմնավորվում է, եթե Համեմատում ենք մեր բնագիրը վրացերենի հետ³⁸: Վերջինս երկու

37 Տե՛ս «Սովորական Հայաստան», 1968, հովիսի 24, № 171 և Լ. Մելիք-սեպ-բեկ. Հայերը վրաց գրականության մեջ, «Գեղարվեստ», 1921, № 7, էջ 48:

38 Հայերեն բնագիրը վրացերենի հետ համեմատել ենք երիտասարդ վրացեկտ Պ. Չորբանյանի սիրահութար օժանդակությամբ:

մեծ բաժնից է բաղկացած, առաջինը բաժինը ունի 56 գլուխ, իսկ երկրորդը՝ 224³⁹, այն դեպքում, եթե մեր հայերեն տարրերակը մի ամբողջություն է՝ 182 գլխից բաղկացած։ Հիմնականում գլուխների բովանդակությունը ձիշտ է թարգմանված, միայն թարգմանչին անհասկանալի արարական տերմինների տեղերը բաց են թողնված՝ հավանաբար հետազյում լրացնելու նպատակով։

6. «Բժշկաբան վասն ձիու և զորոյ և կամ իշու, որ Խոսրով արքա զգուել ետ»։—մի փոքրածավալ բնագիր է, որ զրված է 1696 թ. Վանա Հոգոց վանքում Դաղար Ամբեցու ձեռքով, պահպում է Մաշտոցյան Մատենադարանում (ձեռագիր № 459, էջ 104ր—114ր)⁴⁰։ Այս բնագրից փոքրիկ նմուշներ հրապարակված են պրոֆ. Ալ. Տեր-Պողոսյանի «Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում» աշխատության մեջ (Երևան, 1960, էջ 334)։

Պրոֆ. Տեր-Պողոսյանը այս ձիաբուժարանի գրվելու ժամանակի մասին հետևյալ մտորումներն է անում. «Մեր նախնիք,—գրում է նա, —բժշկական պրակտիկ խնդիրներով մեծ թափով զբանագիր են սկսել և ժողովրդական լեզվով գրել՝ հայկական Կիլիկիայում։ Այս բժշկաբանն էլ հավանորեն կիլիկյան շրջանի արդյունք պետք է նկատել, իսկ Խոսրով թագավորին օտար ազդի մեջ որոնելու Այնուհետև անվանի կենսաբանը հավանական է համարում, որ հիշատակված Խոսրովը կարող է VII դարի պարսից արքա Խոսրով Պարվիզը լինել, իսկ բժշկաբանի բնագիրը՝ պարսկերնն, որ հետագա դարերում հավանաբար թարգմանվել է արաբերեն և ապա դրանից փոխադրվել հայերենի⁴¹։

Պրոֆ. Տեր-Պողոսյանը, ցավոք, իր ենթադրությունները լեզ-

³⁹ Վրաց ձեռագրի առաջին նկարագրող թաղայշվիլիի («Описание рукописей», էջ 693) ուշադրությունից զրիալն է առաջին հատվածը, ուստի և ձեռագրի նկարագրության վերջում գլուխների բանակը 224 է նշելու Զեռագրի նկարագրությունը սիրահոժար մեզ է տրամադրել լենինգրադարնակ դոկ. Կ. Յուզյանը։

⁴⁰ Զեռագրի նկարագրությունը տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հ. Ա. կազմեցին Օ. Եղանյան, Ա. Զեթյունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965, էջ 324։

⁴¹ Ալ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1969, էջ 335։

վական փաստերով շի հիմնավորում: Իրականում այս ձիաբուժառանի լեզուն, առաջին իսկ հայացքից, ենթադրել է տալիս ավելի ուշ ժամանակները. այստեղ շատ սակավ են արաբական բժշկական փոխառյալ տերմինները, մի երկույթ, որ այնքան բնորոշ է կիլիկյան դիտական աշխատասիրություններին, և ավելի շատ են թուրքերին փոխառությունները. Ճեռարկի լեզուն պարզ է և չունի կիլիկյան միջին հայերենի առանձնահատկությունները:

Որոշակի տվյալներ շունենալով ձիաբուժական այս երկի հեղինակի կամ հիմք-բնագրի մասին, ենելով միայն լեզվա-ոճական տվյալներից, կարելի է հավանական համարել, որ այն ինքնուրույն գործ լինի. թերևս ձևոնացիր գործնական նպատակներով կազմել է ինչ-որ ձիաբույժ: Չի բացավում, որ կազմողը կարող էր ձեռքի տակ ունենալ նաև այլալեզու ձիագիտարաններ, որոնցից և մեկը կրել է Խոսրով արքայի (^(*)) անունը:

Ձիաբուժական այս փոքր երկը ֆարազի «Բժշկաբանի» հետ առնչվում է հիմնականում առանձին տերմինների ընդհանրությամբ, որոշ հիվանդությունների նկարագրության մասնակի նմանությամբ, որ կարող է արդյունք լինել տվյալ հիվանդության հանրահայտ ախտանիշների նկարագրության. այսպիս օրինակ.

Բժշկաբան ձիոյ

Բժշկաբան վասն ձիոյ և չորոյ

ՀԲ. Յաղաց ուամատիսի

Վասն որ ուամատիս լինի

Նշանքն այս է. իշնի ընդ Այս է նշանն. զականչուն քիթն չուրն ու լինի հոտած և թափթիէ և յերակ չուր երթափարայ և արցվէ աշխն: ի քնթէն:

Բժշկութիւնն այս է...

7. «Յաղաց ձիոյ մարազի (իմա՝ հիվանդության) և ուռեցքի».—Մեկ թերթանոց բնագիր է, պահպանված Մաշտոցյան Մատենադարանի № 550 բժշկական ձեռագրում (էջ 18—19), գրված է ԺՇ դարում (1710-ից հետո), գրչության վայրը անհայտ է: Ծատ համառոտակի տրված են ձիերի մի քանի հիվանդությունների բուժման եղանակները⁴²:

42 Զեռագրի նկարագրությունը տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 346:

Բնագիրը բաղկացած է հետևյալ 5 հատվածներից.

1. Վասն ձիոյ սօլուղանի;
2. Յաղագս ձիոյ ույսուղի, որ է քոս:
3. Յաղագս ձիոյ սօլուղանի:
4. Յաղագս ձիոյ բզրդանի և սիրաշի դեղ:
5. Յաղագս ձիոյ հազի և սօլուղանի:

«Բժշկարան ձիոյ և առնասարակ գրաստնոյ» ձեռնարկը.—
Հայ մշակութի պատմության համար կարեոր ժամանակաշրջան է
13-րդ դարը, երբ գրականության ու արվեստի ծաղկմանը համըն-
թաց վերելք են ապրում նաև գործնական դիտությունները: Բա-
վական է հիշել, որ միայն 1263 թ., ինչպես տեղեկանում ենք
Փարիզի Ազգային գրադարանում պահվող «Գիրք արտեստի քի-
միական» խորագիրը կրող հայերեն մի ձեռագրում՝ պահվող հի-
շտափառություններից⁴³, Հայոց Հեթում Ա թագավորի հանձնա-
րարությամբ հայերեն են թարգմանվել պողպատաձուկության,
ծիադարմանության, թրագործության և աստղագիտության վերա-
բերյալ գրքեր, որոնք, գժբախտաբար, մեզ չեն հասել. «Եւ այս
իրատնիս,—ասված է քիմիաբանության այդ ձեռագրում,— այս ի
հետ պողպատ շինելուն և մուխ տալուն էր գրած ի նոյն իմաստա-
սիրացն պարսից զոր թարբմանեց Հեթում թագաւորն հայոց յոր-
ժամ գնաց ԺԼՌ (18.000) հեծելով ի վերայ թշնամոյն սուլտանին
և կոտորեաց և սպառեաց զամենեսին և գնաց մեծաւ պատվով
ի Պաղտատ առ Նսոր խալիֆայն և մեծ պարգևոք դարձաւ: Եւ
իմաստասէր ոմն սարկաւագ Ստեփանոս անոն գտեալ առ կայ-
սրոն, որ այնչափ ազգ ազգի գիր և լեզու ուսեալ՝ նման առաջի
փիլիսոփայիցն և ոչ կայր գիր որ առ նմայ ոչ գտանէր. և նա սի-
րեցեալ եղեւ ի հայոց թագաւորէն վասն հզօր գիտութեան և խըն-
դրեաց յարբայէն և ետ թարգմանել երեք գիրս վասն ձիոյ պայ-
թարնման և վասն թրի շինելոյ և վասն արեգական և լուսնի ար-
վեստին և բերեալ ի հայոց աշխարհ⁴⁴:

⁴³ ՏԵ՛Ռ Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale par F. Macler, Paris, 1908, p. 130 (MS 248).

⁴⁴ «Բաղմավեպ», 1867, էջ 354: Գ. Զարդիանալյան, Հայկական թարգմա-
նութիւնը նախնեաց, էջ 558: Տաք. Վանրամ Հ. Թուրզումյան, Հայ բժշկական
ձեռագիրը ս. Ղաղարու վանքին, «Բաղմավեպ», 1924, էջ 387—388:

Գիտության տարբեր բնագավառներին վերաբերող երկերի ստեղծումը կիլիկյան թագավորության մեջ պատահական չէր. Հայկական պետականությունը ամրապնդվել էր երկրում, ընդարձակվել էին նրա քաղաքական ու տնտեսական կապերը Հարեւան ու Հեռավոր շատ պետությունների ցւ իշխանությունների հետ, ժողովուրդն ապրում էր Համեմատաբար ավելի խաղաղ պայմաններում: Երկրի քաղաքական ու ռազմական հղորությունն ամրապնդելու, ուժեղացող արտաքին վտանգին դիմագրավելու համար Հայ իշխանագործները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեին երկրի տնտեսությանը, մասնագորաբար գյուղատնտեսության զարգացմանը, արտաքին ու ներքին առևտորի ծավալմանը:

Քննության առարկա «Բժշկարանը», ինչպես ասվեց վերը, Սմբատ Գ Ռազմագորի (1296—1298) Հրամանով, Կրիզորիս կաթողիկոսի օրոր, կաղմել է Ֆարազ անունով մի ասորի բժիշկ՝ Հայաղդի Թորոս քահանայի օժանդակությամբ: Վերջինս էլ եղել է ձեռադրի զրիշը.

«Բժշկարանի» ձեռագրի հիշատակարանում բժիշկ Ֆարազը պատմում է, որ այդ ձեռնարկը «Մարգմանել» է «ի յարագ գրէ ի Հայ բառ»:

Հայ բժշկության պատմության լավագույց զիտակ պրոֆ. Լ. Հովհաննիսյանը զրում է, որ միջնադարում բժշկական գրականության մեջ թարգմանություն ասելով ավելի հաճախ հասկանում էին օտար ազբյուրների օտարագործումով կազմված աշխատանք⁴⁵: Այս առումով և պիտի ընկալել Ֆարազի «Մարգմանեցի» նշումը:

Հայերն սույն ձիամատյանի Համեմատությունը մեզ մատչելի արարսերն ու պարսկերն ձիագիտական մի քանի ձեռնարկիների հետ⁴⁶ ցույց է տալիս նրանց կառուցվածքի ու բովանդակության որոշ ընդհանրություն, բայց կան և բացահայտ տարբերություններ ու հեղինակային միջամտություններ, մի հանգամանք, որ խորհել է տալիս, թե բժիշկ Ֆարազը, թերևս հետեւելով արարսկան ձիամատյաններին, որոնք «ասացեալ են» «ի բազում իմաստասիրաց՝ ծընայ և Ապի Ուսուփին և Բոայշիտայ և այլ բազում հնդկաց և Պաղտըտայ իմաստասիրացն» և դրանց երկերի նմա-

45 Տե՛ս Լ. Ա. Օցանը, նշվ. աշխ., էջ 173:

46 Տե՛ս սույն գրի էջ 10—13:

Նությամբ, բայց ոչ այդ ձեռնարկների բարդությամբ ու մանրամասնությամբ, կազմել է պարզ ու համառոտ շարադրված իր ձիամատյանը⁴⁷:

Հիրավի, պետք է ընդգծել նմանատիպ արաբերեն և պարսկերեն միջնադարյան երկերի շարադրանքի բարդությունը և շափազանց մանրամասն բնույթը, մասնավորաբար ձիերի դրական և բացասական հատկությունների ճանաչման համար նրանց գույներին և անորսալի երանգներին տրվող մեծ նշանակությունը, որով խճողվում է շարադրանքը, դժվարանում նյութի ընկալումը, այնինչ ձիերի հիվանդությունների ու բուժման եղանակների նկարագրությունը համեմատաբար ավելի փոքր տեղ է զրավում: Ի հավելումն սրա, պետք է ասել, որ պարսկական ձիամատյաններում, գույնի նկատմամբ սնոտի նախապաշարումից դրդված, տասնյակ էջեր նվիրվում են Մոհամեդ մարգարեի և նրա հետնորդների կյանքի դրվագներին՝ շեշտելով պատերազմների ժամանակ տարբեր գույների նժույգների վրա նրանց նստած լինելու «բախտորոշ» նշանակությունը: Մեր հուշարձանում բժիշկ Ֆարազը ձիերի գույների և երանգների նկարագրությանը փոքր տեղ է հատկացրել և, ընդհակառակը, լայնորեն լուսաբանել է ձիերի խնամքին, հիվանդություններին և բուժմանը վերաբերող հարցերը:

Բժիշկ Ֆարազի «Բժշկաբանի»՝ ինքնուրույն երկ լինելու փաստարկ պետք է դիտել նաև առաջին գլուխը, որը փոքրիկ առաջարանի բնույթ ունի, շարադրված է քրիստոնյա մարդու աշխարհատեսությամբ, ավելին՝ այն կրում է հայերեն լեզվամտածողության որոշակի հետք. ձի բառը մեկնաբանված է ժողովրդական ստուգաբանությամբ, այն է՝ «ձիկ ընթացող և արագ արշաւող». Ձիերի խարանանշանների (դադերի) մեջ կան նաև հայկական տառաձեկեր, «տլւմների» հատվածում բերված է հայերեն տառանիշերով մի թալիսման: Բժիշկ Ֆարազը, որ, ինչպես ինքն է զրում, բազում տարիներ «ի մեծն Պաղտատ», հմտացել և վարժվել էր բժշկության մեջ, հաճախ իր փորձի մասին ակնարկներ է անուո՞ւ

47 Հավանաբար պրոֆ. Աճառյանն այս հանգամանքը նկատի ունենալով է, որ «Բժշկաբանի» ձեռագրի նկարագրության մեջ բժիշկ Ֆարազին և Թորոս քահանային համարել է «զբքիս հեղինակներ»: Թե՛ս Հ. Աճառյան, Ցուցակ ձեռագրաց Թավրիզի, էջ 137:

Հաստատելով այս կամ այն բուժման դրական արդյունքը կամ առաջարկելով մի այլ բուժում⁴⁸:

Բժիշկ Ֆարազի ինքնության մասին առաջժմ ոչինչ հայտնի չէ: Պրոֆ. Լ. Հովհաննիսյանն իր «Հայ բժշկության պատմության» մեջ գրում է. «Քննարկվող ժամանակաշրջանի բիշ թե շատ հայտնի արար բժշկների մեջ մենք չենք կարողացել տեղեկություններ գտնել Ֆարազ անունով բժշկի կամ անասնաբույժի վերաբերյալ»⁴⁹:

«Բժշկաբանը» բաղկացած է 182 գլուխներից. ինչպես ասվեց, Ա գլուխը փոքր առաջարանի բնույթ ունի, Բ-Դ գլուխները նվիրված են ձիաճանաշությանը, ԺԵ-ԺԸ գլուխները՝ ձիերի հզիությանն ու ծննդաբերությանը, ԺԶ-ԽԱ գլուխները՝ գույներին, նշաններին ու մազաղորբներին (ձիան մարմնի վրա ոլորածե աճած մազերի զասավորությանը), ԽԲ-ԼԱ գլուխները՝ խնամքին, ԼԲ-ԽԵ գլուխները՝ մարմնի տարբեր մասերի արատներին, իսկ ԽԸ—ԾԸ գլուխներն ամբողջությամբ վերաբերում են ձիերի ալեւայլ հիվանդություններին ու դրանց բուժմանը:

Երկի՞ վերը բերված խորագիրը, պետք է ասել, ճշտորեն չի արտացոլում բովանդակությունը, որն իրականում զերաբերում է ձիագիտության և ձիաբուժության հարցերին: Խնդիրն այն է, որ միշին դարերում, ինչպես հաստատում են մասնագետները⁵⁰, արարական գիտության մեջ և, որա հատեսականությամբ, սույն մատյանում, ձիագիտությունը (hippology) տարբերակված չէ անասնաբուժությունից (veterinary): Սրանով իսկ պիտի բացարձել, որ պրոֆ. Անապյանը այս երկը վերնագրել է ընդհանրապես «Անասնաբուժություն»⁵¹:

Բժիշկ Ֆարազն իր առջև դրված խնդիրն ի կատար է աժել մասնագետի ամենայն բարեխղճությամբ. ինչպես Մխիթար Հերա-

48 Տե՛ս բնագրի էջ 78 «Եւ շատ ենք այս կերպովս դրաստղնի զորդել և հանել ի հարունթենէ», էջ 84 «Եւ ես, որ զգիրըս փոխեցի, ասեմ, զայն ֆառայիս գնեն ի վրայ Պաղտառայ աշխարհուցն է ասցել և ի Ծամբին տանե, նաև ի Մըսրայ, այլ ի մեր աշխարհու, որ անուանել կոչի Կիլիկէ. նա զգրաստն ի ֆառայ գնեն ի սպիկի և յաղկէ ախոռ և ինք մէն», էջ 87 «Եւ եր յերկրէ (իմա՞ երկարէ) առվյաժին տայն ու լինի դահ, նայ առ իս այդ լաւ է», նաև էջը 102, 103, 129:

49 Ա. Օգանեսյան, նշվ. աշխա., էջ 173:

50 Տե՛ս The Encyclopaedia of Islam, vol. II, 1965, p. 786.

51 Տե՛ս Հր. Անապյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց թավրիզի, էջ 137:

ցին, նա ևս վկայակոչում է իր աղբյուրները՝ հանվանե հիշատակելով դրանց հեղինակներին թե՛ հիշատակարանում և թե՛ բնագրում, անգամ մատյանի սկզբում դրել է հնդիկ ծնա իմաստունի գծանկարը։ Զեռնարկը զյուրբմբռնելի դարձնելու նպատակով Ֆարաջը վարպետությամբ նկարել է նաև մի ձի՝ մարմնի յուրաքանչյուր անդամի մոտ գրելով նրա դրական և մերժելի հատկությունները. այս կապակցությամբ նա գրում է. «Այնոք, որ չէին գիտաւղք և ճանաշողք զաւդվածոց և կերպարանաց ձիոյ, մեք հանար զիկոյն կերպն ու գրեցաք ի խէլ ամէն զաւդվածի զիր որպիսութիւնն, զաղէկն և զպեղծն» (տե՛ս ներդիր նկարը՝ էջ 58թ):

«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» երկի լեզուն. — Լեզվական իր ատաղծով Ֆարաջի կազմած սույն «Բժշկարանը» համահունչ է 13-րդ դարի Կիլիկիայում ստեղծված այնպիսի հանրահայտ հուշարձանների հետ, ինչորիսիք են Սմբատ Գունդստարլի «Դատաստանագիրը», Քրանսերենից թարգմանված «Անսիպք Անտիօքայ» օրենքների ժողովածուն, Քրիզորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» բժշկագիտական երկը և, մասնավորապես, արաբերենից թարգմանված «Դիրք վաստակոց» պատմատնտեսական ձեռնարկը։

Անասնաբուժության զարգացման ներկա ժամանակաշրջանում, երբ մեծ ուշադրություն է դարձվում անցյալի փորձին, միջնադարյան ու ժողովրդական բժշկությանը, անկասկած հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև հայկական միջնադարյան բժշկական ձեռնարկները՝ լինեն դրանք թարգմանական թե ինքնուրույն։ Հայտնի է, որ մինչև ուշ միջնադար մարդկանց և անասունների բժշկությամբ կարող էր զբաղվել բժիշկ անունը իր վրա կրող յուրաքանչյուր անձնավորություն. թե՛ մարդաբուժության և թե՛ անասնաբուժության մեջ հիվանդությունների անունները և գեղամիջոցները գրեթե նույնն էին, միայն տարբեր էին դեղամիջոցների համամասնությունները։

Հրապարակվող «Բժշկարանը» տվյալ դեպքում արժեքավորվելով որպես միջնադարյան Հայաստանի մշակութային մի կարևոր երևույթ, աշխատասիրողի կողմից քննարկվում է որպես միջին հայերենի հուշարձան, ինչպես 12-րդ դարում հայ բժշկության մեծագույն ներկայացուցիչ Մխիթար Հերացին իր «Ձերմանց միի-

թարութիւնը» գրել է «գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց», այնպես և հետագա՝ 13-րդ դարի գործնական նշանակություն ունեցող մի շարք երկեր («Գիրք վաստակոց», «Թիմիաբանություն» ևն), այդ թվում և Ֆարազի «Բժշշկարանը» շարադրված են ժողովրդին հասկանալի խոսակցական լեզվով։ Սրանով պետք է բացատրել մեր բառարաններին անծանօթ բազմաթիվ հայերեն բարդությունների (105 բառ) և օտար, հիմնականում արաբերեն և իրանական ծագում ունեցող, անգամ ֆրանսերեն մի բանի բառերի ու ձիադիտական տերմինների (146 բառ) առկայությունը «Բժշկարանում»։

Հայերեն բարդություններից կարելի է հիշատակել արօտկան «արտավայր», բենիաս, թենցաւ, հովամուտ, մազբերան «ճարթ բացվածք», նեղինել «սեղմել, ճնշել», պախրեցաւ, սմբակբերան, բաշտել «Ճիան փորբաշի հարած տեղը և այլն, փոխառյալ արմատներով կազմված հայերեն բառերից՝ արդապել «Ճուկ, կորացնել», գանձնալ «թուլանալ, հիվանդանալ», նիկ «չուլով ծածկել», մազբալել «Ճղկել, փայլեցնել», յայսել «արատավորել», արաբերեն փոխառություններից՝ ահսափ «սպի», այսամ «Ճիկ կամ երկու ոտքը սպիտակ Ճի», տուալայ «մկան», զիար «լանջապանի և ողնաշարի միջև գտնվող առասանը կամ թոկը», խարտաս «կոկված թուղթ» (հնում ունենք հունարենից փոխառյալ ժարտէն Ճեռվ), խոր «առվույտ», հատ «սահման», հարուն «կամակոր Ճի», հարս «թիկնոսկրի ցավ», մուտլայ «ռուկնույն, ոսկեցօծ», մեռու «ընդեղենների և հնզուկների լափ», յան «փղի ժանիք, փղոսկր», նասայ «նստատեղալին շիղ», սամանդ «սև բաշով և պոշով Ճի», տաինին «քունչութի Ճեթ», պարսկերեն փոխառություններից զարք «դեղին», ծնուր (պարսկ. զնուր) «արյուն ծծելու սպակեն խողովակ», ռախիուտ «Ճարիր», ո՛չէպ «ասպանդակ», սուսանի «կապտավուն», թիթ «աշբի թիր» և այլն։

Առանձին դեպքերում մի բանի օտար բառերին ու տերմիններին գուգահեռ «Բժշկարանում» տրվում են դրանց հայերեն ճշգրիտ թարգմանությունները կամ համարժեք տերմինները. այսպես՝

«Ընթիշարն, որ թարթմանի ցրիլն ու մէկնիլն» (էջ 98).

«Յատափի, որ թարգմանի իր սպնախայտ» (իմա՝ ոսպնախայտ) (էջ 59).

«Ներափ, որ թարգմանի բէճցաւ» (էջ 101).

«Նուժախ, որ թարգմանի փութք» (էջ 100).

«Շուտնախ, որ է քացարարն» (էջ 117).

«Յաղագս տարդիքայի, որ է զարկը ի յաշբն» (էջ 149) և այլն:

Պետք է հավանական համարել, որ հայերեն բարդություններն ու փոխառյալ բառերի մի մասը, հատկապես իրանական ձևերը, վաղուց ի վեր գործածական են եղել խոսակցական լեզվում, սակայն չեն զրանցվել մեր մատենագրության մեջ:

Խոսակցական լեզվի արդյունք են նաև «Բժշկարանում» առկա մի քանի ժողովրդական ասուլիներ, ինչպես, օրինակ՝

«Նա որ շատ ջանայ՝ նա շատ դիտենայ» (էջ 75).

«Զիկ(բ) լաւ էր բեզ, թէ մայրն զբեզ չէր բերել» (էջ 76).

«Աղվոր բաժնելն՝ ի ձիոյն աժէ զաղվոր ի վրայ կենալն» (էջ 76).

«Բերդ ամուր է և զարկնաւղն բմբերելի» (էջ 77).

«Թէ ձիաւոր ես՝ նա քո ձիովն ես» (էջ 77):

«Բժշկարանի» ձիավարժության հատվածում նկարագրված հետեւյալ խաղը ժամանակի հայոց մարզական կյանքից մեղ ավանդված մի թանկարժեք բնեկոր է և ազգագրական կարևոր նշանակություն ունի.

«Այը ոմն ձիաւոր... զրամ մի մէկ ոտին ներքեւ զներ և զրամ մի մէկայլին ի հեծելնին, և խաղայր, և շատ մի ըուլմբնի (իմա՞նիզակներ) կոտըրտէր և պուհուրտէր (*), ու եթ տեսնուին նա հաւան կայր ի տեղին՝ զրամն անխախտ ներքեւ ոտինն» (էջ 77):

Ուշադրության արժանի են «Բժշկարանում» հիշատակված դեղաբույսերի անունները, որոնց քանակը հասնում է մի քանի տասնյակի: Հայտնի է, որ հայ միջնադարյան բժշկական զրականությունը X—XI դարերից արդեն օգտագործում էր «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանը, իսկ մեր «Բժշկարանի» ստեղծման ժամանակներում՝ 13-րդ դարի վերջերին, ավելի ստույգ 1294 թ., արդեն մեր ձեռագրերում ընդօրինակվում էր «Թարգմանութիւն անուանց դեղոց» վերնագրով՝ զեղաբանական-բժշկական բառարանը⁵²: Գուցե բժիշկ Ֆարաջն ու Թորոս քահանան այս և

52 Այս բառարանների մասին մանրամասն տե՛ս Խ. Հ. Մելիք-Փաթոսադանյան, Համառոտ տեղեկություններ մեղ հասած հայ ամենահին բժշկական բառարանի մասին, «Աշխատություններ հայ բժշկության և բիուզիայի պատմության

նման այլ բառարաններ ունեցել են ձեռքի տակ և օգտվել են դրանցից, բայց և անհրաժեշտ է ասել, որ նրանց կազմած ձիամատյանում կան մի քանի գեղարույսերի անուններ, որոնք մեր բառարաններում չկան և մեր մատենագրության մեջ հանդիպում են առաջին անգամ. այդպիսիք են՝ զում, մօրուր, սպոնգուր, ֆախտ և այլն:

«Բժշկարանում» պահպանված են ժամանակի Կիլիկյան Հայաստանում օգտագործվող լափ ու կշոր մի քանի անուններ, որոնք հետաքրքիր են Կիլիկիայի տնտեսական կյանքի ուսումնասիրման տևանկյունից. դրանք են՝ պաղտացի (=պաղտացի) կանգուն (էջ 68), որ, ինչպես ասված է «Բժշկարանում», հավասար է «Հայոց երկրին կանկնովն՝ զէդ երեք հարիւր կանկուն» (էջ 68), լիսր պաղտացի (=պաղտացի), որ հավասար է «Հարիւր ու երեսուն դրամակշեռ» (էջ 66), մեռի (էջ 65), նուկի (էջ 103), կուտ (139), դրամ (114), բուղը (104), դանգ (139):

Հետաքրքիր է նաև հուշարձանի ուղղագրությունը. թե՛ թարգմանիչը և թե՛ ընդորինակող գրիչը, ուշագրություն շղարձնելով ուղղագրությանը, հաճախ տալիս են գրության կրկնակ ձեւեր, դրանով իսկ հնարավորություն տալով մերօրյա ուսումնասիրողին ավելի հստակ պատկերացնել ժամանակի հայերենի հնչյունական համակարգը:

Այս բոլորը և ձեռադրիս մեջ արտացոլված լեզվական բազմաթիվ այլ երեսություններ հարստացնում են մեր զիտելիքները միշտն հայերենի վերաբերյալ և հաստատում վաստակաշատ զիտնականի եղբակացությունը, որ հիրավի մեր առջև ունենք «նյութով և գրությամբ սրատվական» մի հուշարձան:

սեկտորի», հ. 2. Երևան, 1949, էջ 67—74; Հ. Ամալյան. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (X—XV դդ.), Երևան, 1966, էջ 179—208; և. Մելիք-Փարսադանյանն իր հոդվածում վերը հիշված երկու բառարանները նույնացրել է, մինչդեռ Հ. Ամալյանը, թեն ձեռքի տակ չի ունեցել «Գագիկ-Հեթումյան» բժշկարանի բառարանը և միայն օգտվել է վ. Թորգոմյանի հոդվածից («Բազմավեպ», 1923), մանրամասն համեմատությունից եկել է այն եղբակացության, որ դրանք տարբեր բառարաններ են: Վենետիկի Միխիթարյան մատենադարանում պահվող «Գագիկ-Հեթումյան» կոչվող ձեռագիր բժշկարանի բառարանի լուսանկարների օգտագործումով մենք ևս գտնում ենք, որ դրանք տարբեր բառարաններ են:

Հիշին հայերենի իրողությունները համակողմանի բննված են անվանի հայագետներ Ա. Այտընյանի, Դ. Հովնանյանի, Յ. Կարստի, Մ. Արելյանի, Հր. Աճառյանի, Ս. Ղազարյանի, Ա. Արրահամյանի և Գ. Զահուկյանի ուսումնասիրություններում⁵³: Այս բնագավառում նոր առաջընթաց քայլ են Հայկ. ՍՍՀ դիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան ինստիտուտի վերջին տարիներս (1972 և 1975) հրապարակած «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» Ա. և Բ. հատորները, որտեղ հեղինակները (Հ. Գ. Մուրադյան, Մ. Հ. Մուրադյան, Ս. Մ. Անթոսյան, Լ. Ս. Հովսեփյան, Պ. Կ. Վարդապետյան, Լ. Լ. Կարապետյան), ի մի բերելով միջին հայերենի ուսումնասիրման բնագավառում ձեռք բերված արդյունքները, միաժամանակ վերջին տասնամյակներում լույս տեսած նոր սկզբնաղբյուրների հիման վրա վերանայել են տեսական որոշ լրույթներ ու եղրակացություններ և ամբողջացրել միջին հայերենի ուսումնասիրության հարցերը:

Հրատարակվող «Բժշկարանը» նոր տվյալներով հաստատում է ուսումնասիրողների հիմնական եղրակացությունները և հնարավորություն է ընձեռում բացահայտելու լեզվական առանձին նոր իրողություններ ու փաստեր: Մասնավորաբար ընդունելի է հուշարձանիս բառապաշարը: Միջին հայերենի բառաքննությանը նպաստելու համար աշխատասիրողը «Բժշկարանին» կցել է բառարան, որտեղ մի խումբ դժվարհասկանալի բառերի հետ տրված են մեր բառարաններին անձանոթ հայերեն նոր բարդություններն ու փոխառյալ բառերը՝ ստուգաբանությամբ՝ հանդերձ: Բառարանույն միաժամանակ բերված են հուշարձանում՝ հանդիպող մի շարք բա-

53 Ա. Այտընյան, Քննական բերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866: Պ. Հովնանյան, Հետազոտութիւնք նախնեաց ումկորէնի վրայ. տետր Ա. Վիեննա, 1897: J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901. Մ. Արելյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, «ՀՍԽՀ Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 1927, № 2-3, Հր. Անառյան, Հայոց լեզվի պատմություն, Հ. 2-րդ, Երևան, 1951, Ա. Արքանամյան, Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953: Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները Երևան, 1954: Ս. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք Ա., Երևան, 1960:

ուր, որոնց ծագումն այլ բառարաններում լուծված չէ, ինչպես
նաև այն բառերը, որոնք գրավոր հնագույն վկայություններ են
մեր մատենագրության մեջ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԹԵՎԳԻՐԵՐԻ ԶԵՌԱԳԻՐԵՐԸ

1. Սույն հրատարակության համար հիմք է ընդունվել «Բժշշ-
կարանի» այն միակ ձեռագիրը, որ ներկայումս պահպամ է կոս
Անջելոս քաղաքում (ԱՄՆ) բնակվող Զարեհ Սարաչյանի մոտ: Զե-
ռուագրի մանրաժամկեցնը՝ 1972 թ. աշխատասիրողը շնորհակալու-
թյամբ ստացել է Կալիֆորնիայի համալսարանի Մերձավոր արե-
վելյան երկրների բաժնի վարիչ պրոֆ. Ա. Սանջյանից:

Զեռագրի նկարագրությունը.

Եւ այսպէս ծառայէ, որպէս ասցաք, և աւր քանց աւր յնելցնէ ի հալածն, որ յեւելնայ քրտինքն, որ ճրագուն պակսէ ու փորն սոթի: Եւ թէ թոլլութիւն ընկնի ի գրաստն վասն հալծնացն, դու հանգոյ զինք աւր մի երկուք ի գահելոյ, ապա զանցմնեցնելն մի կտրել յիրմէ ու ի յերեքշաբթին ու ի յուրբաթն պատրաստ կալ զինք ի հալծելոյ:

Քաւէլ մաւտեցել լինի գրաւուն պոմանն կամ այլ պիտի նա պակսեցնել ի դիրութենէն:

||(44բ) Եւ այսպէս ծառայէ ու հալծեցոյ, որպէս նախ ասցաք, ինչվի գայ ճրագուն ու հատնի ու մնա պինդ միսն և անուշնա շունչն:

Եւ հետ այսոր առ ու գահէ զինք սուր աւելի, քանձ զայլ աւրերն, ու տես, թէ աւելի չէ ի շնչատել կամ աւելի ուժ ի լինք հասնել, նա առել է զաղվղութեան հնդամն:

Եւ թէ աւելի շնչառէ ու թունայ պնչերն, դու հանգոյ զինք աւր մի ու ի յանցմնցելոյ մի կտրել, և զնոյն ծառայէ ու գահեցոյ մէկայն աւրն որպէս յիշեցաք, ինչվի որ տեսնուս, որ առել լինի զաղվղութեան հնդամն||(45ա) և գահելոյն շակքն, որ գահես զինք յամէն աւր հինգ հարիւր կանկուն պաղտացի, որ է Հայոց երկրին կանկնովն՝ զէդ երեք հարիւր կանկուն:

Եւ պատեհ է, որ ծառութրարն ձիոյն, որ հայնց ծառայէ զինք, որ սիրէ զինք, զի ավղցնելն չէ հայնց, որ քաղցեցնէ կամ ծարվեցնէ կամ պեղծ ծառայէ, որ ավղնայ, քանձ որ կուշտ պահէ ու աղէկ ծառայէ ու հալծելովն ավղցնէ:

Եւ զիտացաք, որ զձիոյն յեշաւն շկտրէ, քանձ հանդիստ պահելն ու շհալծեցնելն, ու զճրագուն շհանէ, քանց քրտինքն:

||(45բ) Եւ զայս ավղութիւնս վանց այնոր ասցաք, որ զճրագուն թեթեցնէ ու զպինդ միսն պահէ:

Եւ մի արտորալ յավղցնելն, քանց ի հետ ու ի հետ ու հանա-

* Զեռ. կրկնված է՝ որ գահես:

պազ զոտվին տես ու մտիկ դիր, որ շիջնու չուր կամ արոյն կամ այլ ցաւ բնակի յինք:

Եւ թէ պէտ շայնես մենակ, նայ ավիրի գրաստն, և թէ ճրագուն հալել է ու առել է զավղութեան հնդամն ու այս ցաւս պատահի: Նա կան ի պարոնացն, որ շեն ի քննել, կու յիշվեցնեն, ու թէ բնակի այս ցաւս յինք, զու մի հալծեր զինք, ապա աղեկցոյ: Եւ կանգնեցնելն ի շուրն այս ցաւու աղէկ է: ||(46ա) Ապա բաղդոցավ կու բաղդեն պինդ զուրն ու կու յիշվեցնեն: Եւ մէկ ոտքն լինի կամ մէկ ձեռքն ցաւոտ՝ նա զու բաղդէ զառողջ ոտքն: Զի յորժամ ցաւի խանկրած ոտքն, նա պիտի ի վրայ մէկայլին հաստի: Եւ այս վնաս է:

Եւ թէ պատահի քեզ աղէկ ձի, որ շլինի խիստ քրտնկոտ, զու յեվելցոյ զճերն ու զծածկոցինն (=զծածկոցնին) ի վրայն, քանձ զոր ասցաք, և այլ աւելի հալծեցոյ, քանձ զայլդ, ինչվի զայ ու քրտինքն զորդի ու առնու զավղութեան հնդամն, և թէ արգիլի քրտինքն ու չյորդի չուրն, զու առ|||(46բ) խմոր ու արորէ ի շուրն ու խմցոյ զինք ու տուր հնդի ուկուզայ, որ ուտէ, և քիչ մի դալար հացմամեմ (=հացհամեմ). նա յորդ<ր>ի քրտինք:

Եւ թէ պաղցնես հայնց գրաստ, որ ճարտար գայ քրտինքն, զիտացիր, որ ինք է բուն ու շնոփոր ու աղէկ ձին, ու պատրաստ, որ շհալծեցնես զինք. այսպէս յիշեցաք: Եւ մի աւելի ճլեր ճգես ի վրայն, որ աւելի շքրտնի ու վատուժի ու ի յուժէ կտրի: Ու նշանքն այս է, որ երր տեսնուս, որ մազին փայլը քն ու աշիցն նուազել է, և տեսնուս զմազն որպէս ի շուր լուացած և փակման ի վրայ կաշոյն: ||(47ա): Երբ զայս նշաննիս տեսնուս, նա պարս է քեզ աղէկ ծառայել ու հանգցնել, ու ալկին ու զրին խմելոյն մտիկ դնել:

Եւ թէ հետ այս նշանոյս տեսնիս, որ թոյլ կենայ գրաստն ու մնացնէ յալկէն, նա զու գիտացիր, որ ցաւ է բնակել ի յինք: Դու մտիկ դիր այն ցաւուն ու այն ցաւովն զինք ծառայէ: Եւ յորժամ ողջնայ՝ տեսնուս որ կայտըցաւ, որ կամենաս ավղցնել, նա զու պատրաստ ու պարկեշտ հալծեցոյ ու թեթէ ճլով կալ՝ ինչվի առնու զավղութեան հնդամն, ու պատրաստ կալ, որ շընկնի ի բարակցաւ, զի երբ ի յայս|||(47բ) պիսի ցաւս ընկնի գրաստն, նա դժար կարէ ողջնալ:

Եւ հնար է, որ գաւկես թեթէ տղայ ի վրայ գրաստուն, զի խիստ զարմանալի է այս գործս: Ու գիտացիր, որ աղէկ ձին ի

յաղէկ ձիոյն, եթ իր տէրն երեք լիտր աւելի լինի, նա երևնայ, և թեթև հեծմանն լաւէ, քանձ ժանդր հեծմանն: Եւ ես զայս փորձել եմ: Եւ հեծնաւղն պարտ է, որ գիտենայ զձիոյն բնութիւնն, և իր բնութենովն զինք յեշվեցնէ:

Եւ այն ձին, որ սարել ես յեշվեցնելոյ, դու թեթև լկամ դիր իր ու կարճ, զի յերկայն ու ծանդր լկամն սակվեցնէ զյեշաւն:

||(48ա) Եւ դու հանապազ ջանայ, որ քաշան Ախնի, զի թէ քաշան լինի, նա դ[ու] ոչինչ ազգ հնարաւը շկարենայ զայն զորդել զինք. և թեթև թամբք ու թոյլ քաշիկ, որ աղէկ յեշվէ:

Կ. [ՅԱՂԱԳՍ] ՀԱԼՆԱՑ, ՈՐ ՂԱՐԴԻ ԶԴՐԱՍՏՆ, ՈՐ ՊԵՂԾ
ԲՆՈՒԹԵՆ[Ն]ԵՐ ԶԱԲՆՈՒ

Գիտացիր, որ ամենայն ազգ զրաստ չզորդի և ոչ առնու աղէկ բնութեններ: Առաւել այն զրաստն, որ բնութենով ուննայ զպեղծն, նա ոչ որ ազգ հեծելվոր շկարենայ զայն զորդել ի յի բնութենէն:

Ապա որ ուզենա, որ ձի զորդէ, նա ընտրէ ու տեսնու աղէկ ազգ ձի աղկիկ և անարատ իր զաւդվածաւքն, զի այն զրաստն, որ իր զաւդ||(48բ)վածքն չինի հաւսար ու կամաթք և լինի շնիքն ու զլուխն ու խամծենին այնպէս, որպէս նախ յիշեցաք, որ առնու զլկամըն, և դու կարենաս լկամովն ի համանք կալնուս որպէս ուզես, նա կարես զորդել զինք ու ի կամք պահել, բայց թէ չուննայ հաւսար զիր զաւդվածքն, որ պակաս լինի նա զայն, զոր աստուած չէ զորդել զինք, նա դու ի՞նչ ցեղ կարես զորդել: Եւ գիտացիր, որ հարուն, որ ի բնութենէ լինի, ու ճինար ու խրչան, կայ որ զորդի քշիկ քշիկ և կայ որ շղորդի:

Ապա այն ձին, որ աղէկ ձի լինի, ու առնուս ու հալծես, ու չանասս||(49ա), որ յաղէկ բնութիւն ձգես զինք, և այն, որ ի ծեծելոյ կամ ի լկամին քշտելոյ և կամ յայս ցեղ իրացս հարուն լինի կամ այլ ազգ պեղծ բնութիւն առնու, նա այլ լաւ կարես զորդել զինք, քանձ զաղէկ ազգ ձին: Այն, որ վլախզոյն լինի ձին և ի յորդելն պեղծ բնութիւն առնու, նա այլ լաւ կարես զորդել:

Ճնոյն ու աղէկ ազգ ձին, որ զաղէկ բնութիւն առնու, նա յայն բնութենէն բնաւ շենէ:

վասն այսոր պարտ է, որ հեծելվորն զիտուն լինի, որ թէ
ուզէ ի վրայ ըռըմբի զորդէ, թէ ուզէ ի վրայ թրի, թէ ուզէ ի վրայ
նհտելոյ, թէ ուզէ ի վրայ պուհուրակոյլով, ||(49բ) որ զինչ ուզենայ,
նա յայնոր վերայ զորդէ: Եւ ամենայն երվեստ զորդելոյն այն է,
որ կամաւք զորդէ: Եւ գիտացիր, որ հալծեցնելն զրաստուն իր
պոմնի ունի, որ լինի զրաստն ուժով և արիական և լինի քաղ-
ցած:

Եւ հեծնելոյն ժամն առաւատուն է, բանի հով կենայ և ընդիր
ի կացրն, և զիշերն, զի զրաստն զիշերն հանդիլ է ու զիմացել է իր
մարմինն: Եւ հովուն յորժամ հալծեցնես զինք, նա բանայ զի-
րակրն ու հալէ զեկելվածն ու հանէ յիրմէ, և այլոր զիշերն հայ-
հանդէ՝ նա շոնչն ժողով լինի զրաստուն, և հեծնողն ||(50ա) այլ
արի լինի:

Թբ. ՏԱՂԱԳՍ ՀԵՄՆՎՈՐԻՆ. Թէ ՈՐՊԵՍ ՀԵՄՆՈՒ ՈՒ ԴՈՒԹԷ ԶՁԽՆ

Յորժամ կամենաս, որ զրաստ հեծնուս ու զորդես, զու զիր
տակ թաղին կակուզ արայ, որ զողն սպիկի պահես, և տես աղէկ
սայլեառ(՞) որ ոչ նեղ լինի և ոչ արձակ:

Եւ բանձ ամէն զլկամնին սայլեառն(՞) աղէկ է, զի եր սայլե-
վուավն(՞) զորդես, նա ամէն ազդի հկամով կարես զորդեկ:

Եւ բոնէ զգրաստն ու հեծիր և եր հեծնիս, նա պահիկ մի իւանկ
առ իրովն, ու մենակ մի գահել, որ շառնու սովորութիւն, որ զէդ
հեծնուս՝ նա դուրս վազէ ||(50բ), զի պարոնացն ու թագաւորացն
ի պետք է, որ երբ հեծնի՝ նա պահ մի կանկնի, և ամենայն մար-
դոյ, զի երբ հեծելվորն ինք մէն լինի ու հագած լինի ու կամենայ
զիր ծին հեծնուլ ու լինի ուսել զայն, որ երբ հեծնու՝ նա պահ մի
կանկ առնու՝ նա ի դուրս վազէ ու շկարենա հեծնուլ. ամ պատ-
րաստ, որ դայտ ցեղ բնութիւնդ շուսնի զրաստն, զի եր դայտ
բնութիւնդ առնու, նա խիստ պեղծ խասիաթ է, ու դժար կարես
կտրել:

Եւ յորժամ հեծնուս ի վրայ, նա սոթթէ զհալավդ, որ հայհան-
դի զրաստն, և ի կամուց վերայ յուշիկ յուշիկ գահէ, ոչ ||(51ա)
հայնց, որ խամճնես կամ մահմիզես, ապա յուշիկ յուշիկ հալծես
զինք: Եւ յորժամ ի մարդայնի մաւտ տանիս զինք կամ ի դասն

մտել ու ելնել, նա պատրաստ ի կամուց վերայ տար, որ շիրչի ի մարդկացն ու առնու զայն բնութիւնն ու ի վրայ այնոր կենար:

Եւ գիտացիր, որ այն, որ պահ պահ հեծնուս ղինք ի մէջ մարդկացն բնութիւնն ու պահ պահ թողուս, նա չէ աղէկ, քանձ ի յամէն ժամ հալծէ զինք: Ու բուն ու մեծ վնասն այն է, որ յորժամ զորդես, նա ի հեծման կանկնիս ու ընդ մարդ զրուցես, զի առնու զայն բնութիւնն, որ քանի մարդ տեսնի՝ նա կանգնի:

|| (51բ) Եւ յորժամ կամենաս, որ զգրաստն կանգնեցնես, դու զըռքէպքդ լարէ ու կանգնեցոյ:

Եւ յորժամ կենաս ու հալծեցնես յաղազս զորդելոյ, դու հանապահ ջանայ, որ ի վրայ ձախ ոտիցդ հաստիս, զի ձախ ոտիցն հաստելն աղէկ բովորութիւն է, որ զրաստն սովորի առաւել վասն նետելոյ: Եւ քո ամէն ջանքն այն թող լինի, որ զերսնակն բոլոր բոնես ու ի համանք կալնուս զգրաստն, զի կշռէքն ինքն է: Եւ գիտացիր, որ ի զնա<ն>ցքն զրաստուն բնութեն[ն]եր կայ. կայ, որ զյշալին աղէկ ուննայ, կայ որ կալափցնելն, և կայ որ ի դուրս վազելն ||(52ա) ու ի պորտքալն, և կայ ի գորգպալն, և կայ որ ի քայլելն և ի մանար զնացքն: Ամ տես ու մտիկ զիր զրաստուն, թէ զոր զնացք աղէկ ունի և իր բնութիւնն ի յոր կու քաշէ: Զոր յիշեցաք՝ դու ի վրայ այնոր զորդէ զինք աւրեր մի, որ ինչվի ամրնայ իր գործքն ի վրայ այնոր ու պնդի:

Եւ կապէ ի յիր կամն պլուզ ծրաբոց ակ մի աղ, որ հանապահ ծամէ ու անուշնայ:

Եւ յորժամ հաստատի ի յիր բնական գնացուցն ի վրայ, դու ի յարձակ ու ի կակուզ տեղի հալծէ զինք, ու ոլլէ զերսնակն ու բոլոր կալափցոյ, որ աւր քանձ ||(52բ) աւր նեղցոյ զբոլորն. նա ժամ մի ի յաջի ոլլէ զբոլոր երսնակն ու կալափցոյ. ու ժամ մի ի ձախսի, ու մի զարկներ զբերանն լկամաւին, որ բերնվախ լինի, քանձ զամէնն ի կամուց վերա զերսնակն կալ և ապա զորդէ, որ ընդդէմ զահնս ու զերսնակն առնուս, որ կանկ առնուս: Եւ այսպէս արայ, որ կանկնեցնես մարդ ընդ դէմդ՝ հագած, ու առնու իր յերկայն վարոց նա ու մէկ դու, ու զահնս, ու տֆընտէ դու իր ու կանկ առ: Ու զորդէ ի վրայ այտոր:

Եւ հետ աւրերոյ գահէ ի վրայն, որ ինք քեղ տֆընտէ, ու դու զերսնակն ոլլս յայն զեհն ու ի յայնու ||(53ա) փախչիս ի յիրմէ: Եւ զորդես ի վրայ այտ զնացուցդ այլ, և ապա դարձիր. և գահե-

ցէք մէկ ի մէկ և անցիք: Եւ այսպէս զորդէ, քանի իսկի կարես վասն պատերազմի զնետելն ու զշալիշելն: [Ե]ւ երբ ի վրայ այտոր զորդես զինք, դու աւուրք մի ի վրայ այտոր տար, որ հաստատի:

Յետ այնոր զնայ յարձակ տեղի ու տուր այնել ի յինք խանդրկնի՝ մէկ ի մէկէ հեռու զէղ բան կանգուն: Եւ զորդէ, որ գայ ու վազէ ի վրայ այն խանդինոյն: Եւ աւուրք մի ի վրայ այտոր պահէ դինք, զի ամէն մարդ ի յիր գրաստնի կարիք է ի յայտ տեղու:

Եւ կինայ ի գրաստն շատ յայտեր (=յայպեր), որպէս զիսրչին և զքթահը|| (53բ) ելն և ծառ կանգնելն և փախչելն: Զի այս յալլապերս ի յոտվին է, կարէ լինել, որ զորդես. զանք դիր ամէնին: Ապա խրչելն պատեհ է ու ի հետ վախցնես փայտովն և ոչ խիստ ծեծես, թէ չի յեվելցնես ի յայպն: Եւ պարտ է քեզ սովորեցնելն ընդ նեղ զուկակնի ու փողոցնի ի յանցմնցեցելն ու ի մէջ մարդկաց ու ընդ դռան մտել ու ելնել, զի հանապազ այտ ի պէտք է գրաստուն:

ԽԵ. ՅԱՂԱԳՍ ԱՐՄՈՒՀԻ ԳՐԱՍՏԱՆՅ

Յորժամ կամենաս հեծնուկ արմուհի գրաստ, դու խափ տուր ու զլկամն ի զլուխն դիր: Զնոյն ու զթամքն ողքնաւք ու ի կամկ|| (54ա) եկ կամկեկ ի վրայն դիր՝ ոչ սրտելնելով կամ հանց որ քշտես:

Եւ յորժամ հեծնուա զլկամն մի՛ քաշել, ապա ի յինք թող ու վարէ սերտ՝ քանի իսկի կարես, ու ստաւդ իր մի՛ քշտեր, ապա վարոցով քշտէ իր ու զորդէ. ու զվարելն նախ յիշել ենք, թէ որպէս գահես: Ու զքո ամէն ջանքն դիր, որ շատ գահես ու յերկար ու հավեցնես: Եւ յորժամ ուզենաս, որ արգելցնես զքուռակն, նա մի՛ բռնես զերսնակն ու սերտ ի քեզ քաշես, ապա բռնէ ի կամկեկ կամկեկ պաղցաւքն ու արգելցոյ, զի թէ պինդ բռնես, նա պիտի որ աւիրես զքուռակն ու բերնվախ լինի:

||(54բ) Եւ կրկնակի կու պնդեմ, որ պինդ շկանուս զլկամն ու քաշես, թէ չի կշիկ աւիրն ես զքուռակն: Եւ թէ այլ ցեղ այնես, քանց զոր ասցել ենք, ու պինդ բռնես զլկամն, նա ոչ ի գիտնակութենէ և ոչ ի յաղէկ հեծելվորութենէ, զի պիտի որ յեվելցնես ի յիր արմուհութիւնն

Եւ երբ այլ մարդ կենայ ու հեծնու, նա բնաւ այլ մարդ շկարենայ արգելել, զի պիտի որ քաշան լինի: Ամ զայս բարակ տեսս ի միտ կալ, զի ես այտով շատ մարդ ամաւթերես եմ այրել առօք խալիթայնոյ ու պարոնաց: Առաւել այն գրաստն, որ բնութեամբ զկամն ատէ, դու քանի խելի կարես, ողքնաւք զինք մզէ:

||(55ա) Եւ մտոյ ի մէջ մարդկաց և ի շուկայնոյ և ի փողոցնին և կանկնէ հետէն ու զրուցէ ընդ մարդիկ:

Եւ այլ ի յեռաջն գրել ենք և ապիգովել ու խուռել, որ զխաս ձին շկանկնեցնեն ու զրուցեն ընդ մարդ, զի պիտի աւիրի: Եւ այս ազգ ձիս, որ վլախոզյն ձի է, նա աղէկ է, զի ընդելնալ մարդն և ընդ կանկնելն՝վ ընդ գնալն ու գալն, և կոտրի սիրտն և իշնու: Եւ նշանքն այս է, որ սիրտն իշել է ու կու առնու զկամն, որ յորժամ առնուս զկամն ու արգելես, նա չը ծաւճտար:

Եւ առաջի ուսումն, որ ուսցնես՝ նա զկալաւիցնելն ուսոյ և շատ աւուրբ ի վրայ այնոր կալ զինք և զկամն թոյլ կալ ի յինք ||(55բ), որ բնական առնու առ ինք զկալաւիկելն և մոռնա զկամին շառնուկն: Եւ հանապազ զինք ի խալապայի և ի ժողով ի շատ մարդկաց մէջ տար, որ ընդելնայ, որ եթ հանդիպի ի պատերազմն ու աղլուտ լինի, նա շառնու զիր առջի բնութիւնն ու վախէ կամ խրչի ու ի սիրտ ենէ ու զելն ուզենայ:

Եւ այն քուսակն, որ բնութենով ուննայ զխամբութիւն, նա շկայ ճարակ, որ կարենայ մարդ զինք զորդել կամ հանել ի յիր բնութենէն: Եւ զիտացիր, որ ով ի յիր երգնստն շփորձէ ու այնէ քն[ն]ութիւն ի յամէն բարակ տեսողութիւնն, նա շկարէ ի կատարումն գալ:

||(56ա) Եւ պարտ է, որ հանապազ մտիկ զնես գրաստուն իր զաւդվոցն ու ի կերպարանացն ու իր ստեղծուածոցն ու այնես քննողութիւն ի յիր ազգն, զի ոչ կարենայ տեսանելովն մէն ճանշենալ զգրաստն:

Ապա քո ամէն զգայրանաւրբդ տես ու մտիկ արա գրաստուն: Եւ ապա իմանաս զիր գործն, թէ որպէս է, և ի վրայ այն գործոյն զորդէ զայն ձին:

Եւ զիտացիր, որ զգրաստուն զգիտութիւնն և զգործն ոք շկարէ իր ի կատարումն հասնել, որ զիր ամէն բնութիւն[ն]երն և զայպերն և զցաւերն, որ փոփոխի ի յիր մարմինն, նա կարէ կատարել զիտենալ այլ զոր կարէ չանալ ի բարագ ||(56բ) մտիկ զնել մտաւք

և փորձելով. նա որ շատ ջանայ՝ նա շատ գիտենայ, զի մեր պատքն հայնց են այրել ու չանցել ու այսպիսի են գտել ու այսոր հասել:

Եւ գիտացիր, որ սկիզբն հեծնելուն հաստատելն է և մեկնելն անդացն և յերկայնցնելն և անդմաւքն բռնես ամուր, զի այն, որ հեծնու զգաստն, նա չէ պատեհ, որ ժամի ի դեհաց դեհ ու թոյլ կենայ ի վրայ ձիոյն առանց պատճնաց, որ ի կարիք է, զի աղէկ հեծնուլն հայնց կարէ զորդել զիր ձին, որ թէ խաւսի ընդ ձին, ու հնայր կայր, որ խաւսէր, նա պացնուն այնէր իր: Կամ ակ, որ թէ իր ժամ ||(57ա) ժելովն, որ ժամէ զձեռքն ու կամ զանդամն ու կամ զաւուած մի այլ, նա սովորութիւն առնու իր բնական, որ ի յորժամ ժամէ զայն զաւուածն, նա զիտենայ ու զայն բռնէ ու զգործն այնէ. ի յոր զործոյ վերայ զորդես զինք, նա դու աղէկ զինք ի յայն պահէ, որ հաստատէ առ ինք, ու ապայ ի յայլ զործոյ վերայ զորդէ զինք: Զի թէ ճարտար ի զործէ ի զորդ զնես զինք, նա զու որ շառնու հաստատուն, որ ի վրայ այնոր երթայ՝ գրաստն ավիրի:

Եւ գրաստ, զոր կամննաս զորդել, նա դուն հայնց այնես, որ <յ> ի սկզբանէ ի վեր ձգիս զինք ի յաղէկ ||(57բ) բնութեն[ն] երու վերայ ու զորդես, ու մի՛ թողով, ոռ այլ մարդ հեծնու ու աւիրէ զոր դու զորդել ես:

Եւ մի՛ թողուր, որ հայնց լինի, որ երբ կենաս ի վրայ ձիոյն, նա ուզնաս, որ զդրաւչակդ բռնես և կա՞ զորդես, և թէ վարոց ի ձեռքդ առնուս, նա խրչի. ապա հայնց արայ, որ ամէն զործով մզես զձին:

Եւ զոված է, որ ի հայհանդ տեղի զգրաստն զորդեն, որ առնու բնութիւն աղէկ, ու ապա ի մարդայն մտցնեն:

Եւ յորժամ նեղէ զրաստն զքեզ, որ չկարենաս զինք ի յիր պեղծ կամուցն հանիկ, նա դու հետ պատի և կամ հետ լերին տակուց անցմնցեցոյ զինք:

||(58ա) Եւ գիտուն հեծելվորքն զովել են, որ անդամաւքն բռնէ ու զըռքէավքն լարէ, որպէս թէ ի կանկուն կայ ի վրայ ձիոյն:

Եւ գիտացի՛ր, որ սկիզբն հեծնէլոյն կատարումն ըռքէավքն է, որ զանդմունքն ամուր ու անշարժ պահէ ի թամէն, ու ի ծնկացն ի վայր հեծնելնաւքն այնէ զիր շարժվածքն ի հնդամն ու ի տարպն և զմահմեղացն հասցնելն ի ձին ի շակք և ի կարիքն, մի զէդ ի

պատ լուր սկսուս ու ծեծես, թէ չի գիտացիր, որ բուն ու աղէկ ձին, որ յաշխարհս կայ ի մէկ նետքնէց, տեղին հայնց դադրէ, որ լուր կանկնի, թէ զիր ամէն երս||(58բ)նակն ուննայ և զանպատեհ խոռամճին և կամ զմահմեզըն, ապա ձիոյն և մարդոյն գաւզանն երսնակն է և զոռն անխախտ ի թամբքն ի անժած ի միջացն ի վայր և ի միջացդ ի վեր, երբ սնկիս՝ ցածցիր, ու երբ ուզես յանկարիք՝ նա աղվոր ի յոտն և զմէկ ըսքէափտ զամէն ի լար, ու երբ դազրէ փոխէ ի մէկալն, որ յանկասկած շնորհ ձին կամ քթահրի, և զքեղ աղփուրթ գտնու ի թամբքն և ձգէ զքեղ կամ աղփրթէ, թէ շիլ լաւ էր քեղ թէ մայրն զքեղ շէր բերել:

Եւ տե՛ս որդեակ և գիտացի՛ր, զի ոմանք, որ նստին ի ձին և են, որ հեծնին, և այսոք ուրիշ||(59ա) են ի միմեանց նստելն և հեծնուկն, զի վաճուկըներն և շինակներ և արեղայք նստին ի ձին: Եւ հայնց, որ երբ ի դուրք վազէ, նա զէդ նստած զգետինն զիպի: Եւ հեծնաւզն, որ հեծնի, նա հայնց ամուր կենայ, որ քաւել ձին ընկնի, որ ինք զըլըմփի:

Եւ այլ ասեն լաւ ձիաւորքն ի յիրենց խրատն, թէ աղվոր բաժնելն ի ձիոյն աժէ զաղվոր ի վրայ կենալն, այս ինքն է՝ երբ ձին անկածնի, նա դուն ի յետ վազէ կամ ի յետ ընկիր ի ձիոյն առջուցն, որ շգայ ի վրայդ ու կոտրտէ զքեղ: Եւ այս է, որ անմոռաց պահես ի մտացդ զամէն, քանզի ի հեծման կենաս կամ իրք վարես զանկածնելն և զերսնակ ի լար:

||(59բ) Եւ այլոր եր յասպար ու ի յոռումք ընթանաս, նա դու զորդ գիտացիր ամ պահէ զքեղ, շբանայ և ի քո մարմինդ քշտէ և վնասէ, մանաւանդ յերեսդ, և դուն սուր աշաւք և անըմբերելի մտաւք զքո շարկամն աշէ և որսայ, որ բանաս զինք և զինք աւերես կամ պրկես: Եւ եր քշտես ի պինդ զոռումքն, և մի՛ իշցներ զարմունկդ, որ կոտրի ըսումբքն, ապա զորդ նշանէ և զարկիր՝ ի տեղի քո աղվոր ծածկելովդ: Եւ զինք բանալովն հայնց զարկք, ող յիմնա, թէ ի մարդկէ ելաւ այն զարկքն: {Ել զամէն զասպարն բազկովտ առջես ի քենէ ի զատ պահէ և մի՛ ցածցներ զգլուխդ ներքե աս||(60ա)պրին, ապա զասպարն վերոյ և ծածկէ զերեսդ, որ թէ ի վրայ ասպրին ուժով զարկք զիպի, նա շգտնու զասպարն ի վրայ մարմնոյդ, որ զարկքն անձնտ առնուս Ապա ի յետ, որ ինչվի զբազուկդ տահրկէ զարկքն ու ի քեղ հաստեցնես, նա զարկքն ու ըսումբքն շարկմուն թափահրել լինի: Ու մի՛ զիտենար

փոքր զարկը զծիոյն կամ զըսրմբին զարկըն, ապա մեծ տես և լաւ պատրաստէ յիրմէ՝ զէդ ի բարեգարէ, և լաւ ծածկէ զքեղ քո ասպրովն և լաւ զարկ, զի թէ շծածկ] վիս՝ նա դուն զայն ամէն տախտակին ինչ կու շալկես շնովըդ և կու գումարեցնես զքեզ: Ռ' մարդ, լաւ է քեղ բալէ||(60թ) անասպար լինել, որ շալկելոյն հալածն մնա քեզ, և միշտ զըսրէպրտ և զանդմունքտ և զոռդ ի թամբքն հազոյ, որ անխախտ մնայ, [զ]էդ այր ոմն ձիաւոր, որ էր որ դրամ մի մէկ ոտինն ներքե դնէր և դրամ մի մէկայլին ի հեծնելին, և խաղայր, և շատ մի ըսրմբնի կոտըրտէր և պուհուրտէր, ու եր տեսնովին նա հաւն կայր ի տեղին՝ դրամն անխախտ ներքն ոտինն:

{Բ} յայց ի՞նչ ասեմ, եր ձիաւորն լինի ուժով ու հասուկ ու սրտով ու ուննայ աղէկ ձի ըստ իր կամացն, նա կատարեալ է: Պատրաստ կեցի՛ր յիրմէ ու յետ ի յիր առջուցն՝ թէ ինձ լսես, զի բերդ ամուր է և զարկնաւ||(61ա) զն ըմբերելի:

Եւ արդ պատեհէ է, որ գիտենայր, որ հեծելվորն զիր ձին քանձ զիր անձն լաւ պահէ և ըստ իր անձինն սազէ և զորդէ և շթողու, որ հեծնի զինք անգէտ ծովուկ կամ տղայ և սազթրփէ ու աւիրէ, և ոչ զիր լկամն փոխփոխէ, [ք]անձ ի մէկ լկամի վերա զինչ զորդէ ու մէկ ըորիպուց ի տաճկինակն ու ի մահ[մ]էզն, ի դոյրն և ի դաշտն և ի լեռն և ի մատներն, ի հետ որսոյ, ի փուշն, և ի խարձերն, ի գետերն և ի խանդինին և յամէն տեղ ըստ քո կամաց, զի թէ ձիաւոր ես, նա քո ձիովն ես և աւդնականն տէր աստուած է, որ պահէ զքեզ:

ԵԶ. ՅԱՂԱԴՍ ՀԱՐՈՒՆ ԳՐԱՍՏՈՒ

Գիտ||(61թ) ացիք, որ կայ գրաստ, որ ի հեծնուզն և կամ ի քաշկեն սոսկայ, և անգէտ հեծնաւզն հայնց գիտէնայ, թէ այն հարուն է: Եւ այնպէս շէ հարուն: Առաւել Խորասնա գրաստոնին ուննայ զայս բնութիւնս ընդ առաւել սրտութիւնէն և զառն բնութիւնէն: Եւ առաւել ալիրի գրաստն, որ զայտ բնութիւնդ ուննայ, եր մերկիկ հեծնուն և երբ առաւել պինդ քաշկեն: Եւ այն գրաստն, որ ի մերկիկ հեծնելոյն առնու զայս սովորութիւնս, նա ձգեն ի վրայն ճուկ և այնով հեծնուն: Նա թողու զայն բնութիւնն: Եւ այն ձին, որ ի թամբուցն սոսկայ, նա դու երբ հեծնուս՝ պահ մի կանկ առ ի

վրալ ||(62ա). նա թողու զայն բնութիւնն եւ թէ հայնց է, որ պզմի ու շերթայ, ու կանկնեցոյ մարդիկ ընդդէմն և ասա, որ այն մարդիքն երթան. նա ինքն այլ ըզզվի ու երթայ եւ այս աղէկ ու գոված հնարք է:

Եւ այն հարունն, որ ի բնութենէ ուննայ զհարունն, նա չկարես զինք իսկի յայնոր հանել և նշանն այն է, որ ի բնութենէ լինի հարուն, որ եթ փայտովն վախցնես որ երթայ, նա զոտովին ի գետինն քշտէ: ու ոռ ի յեց երթայ և թէ պատ կհնայ ի հաւն՝ երթայ դիպի. և այդ է զորդ հարուն: [Ե]ւ այտոր հնար չկայ, որ կարես դորդել:

Եւ հարունին աղգեր են.

Կայ, որ եթ հեծնու յախոռոչն ու մենակ ||(62բ) դառնայ այլ վայր, ի յախոռն իջնու, նա սովորի զայն սովորութիւնն ու ի յախոռոյն չելնէ:

Եւ կայ, որ հանէ յախոռոյն ու հեծնու ու չկարենայ զատել յախոռոյն ու արդիլի ու առնու զայն իր բնութիւն:

[Ե]ւ կայ, որ յախոռն ուղիրել լինի ի զրասա: ու սիրենայ զընկերն, և յորժամ հանեն յախոռոյն, նա շերթա ու զընկերն ու զենայ. ու զայն իր բնութիւն առնու:

Եւ կայ, որ հեծնուն ու երթան ի պարոնացն ի դարպասն ու ի խել շատ զրասանոյ իջնու, նա եթ կամենայ որ հեծնու՝ նա ճորտն քաշէ որ հեծնու, նա շուղենայ, որ ի զրասանոյն ի յետ ելնէ ու բռնէ զայն իր սովորութիւնն:

||(63ա) Եւ կայ, որ ի տղայոց հեծնելոյն ու ի ծեծելոյն ու ընդ վայր ընդ վայր գահելոյն լինի հարուն:

Եւ այս աղգերս կարէ լինալ, որ հանդարտութենով խալսի և ելնէ յայն բնութենին:

[Ե]ւ տբնութիւն, որ տքնեցնես զգրաստն ի յայն տեղն, որ հարուն այնէ, նա այսպէս լինի, որ կանզնեցնես զինքն ի տեղն թամբած ու լկամած ու մէկն հեծնու ու մէկն իջնու*: Եւ շատ ենք այս կերպովս զրասաընի զորդել և հանել ի հարուն]թենէ. այս ծառութեամբս, զոր յիշեցաք և զոր կու զորդէի, ես զշատն գիշերն ի ժուռ կու տայի ածել, ինչվի կու թողոյր զայն բնութիւնն:

||(63բ) Եւ կայ, որ ծեծեն վարոցնով և կանչեն ի վրայն ու վախնեն, նա կու զորդի:

* Զեռ. կրկնված է՝ մէկն հեծնու ու մէկն իջնու:

Եւ շատն, որ ի հեծնելոյն կու լինի պեղծ հարուն, որ բնաւ շղրդի, որպէս նախ յիշեցաք, և զայն, որ ասցել են, որ եփ հարուն այնէ ու ի յայն տեղն խարեն զինք, նա ելնէ ի յայն տեղացն, նա սուտ են, զի տեսել եմ թագաւորը. որ այն ձին, որ հեծել է, նա հարուն է այրել, նա ի վայր է իշեալ ու այրել է տվել կրակով, նա բնաւ չէ աւկտել Ռւ տեսել եմ, որ երբ հարուն է այրել, նա ի վայր է իշել ու ըռըմբովն զարկել ի վրայ անդմանցն, որ անցել է դեհաց դեհ. նա իրը չէ աժեցել:

Խէ. ՅԱՂԱԿՍ ԴՈՒԹՅԱՆ ԵԲ ՔԱՅԱԼԱ Դ|| (64ա) ԲԱՍՏՈԽՆ

Կան ոմանք մի, որ ի վլ այ գորգան գրաստուն ի յետ տայ թամբել, որ շատն ի վրայ գաւկին լինի ծանդը, ու հեծնեն ու ասեն, թէ աղէկ է: Եւ այն պեղծ սովորութիւն է, և ես զայն պատեհ չեմ ի տեսնուլ, զի յորժամ իսկի քթահրի՝ նա տէրն շդադրի ի վրայ թամբուցն, և եր խումբնա գրաստն, նա այլ առաւել զազնայ: Եւ զայս տակլուրնին կու այնեն, զի յորժամ ծանդրանայ ի վրայ գաւկին, նա պիտի որ վրայ յերջի ոտացն հաստի ու ժմուն ծայր մի լաւ երթայ: Եւ այս առ իս ոչինչ գործ չէ, քանձ զորդ հեծնուլն, որպէս նախ յիշեցաք, զի յորժամ չինի|| (64բ) հեծնաւզն հաստատել ի վրայ իր գրաստուն ի ներքնն յզորդ հեծնուլն, կամ ձիաւորն ի յիր անձն հարկ ձգէ վանց ձիոյն, և կամ զձին ի հարկ զնէ վանց իր, նա չէ զորդ հեծելվորութիւն: Զի եփ հեծնաւզն զէդ աղէկ հեծնաւզ հեծնուլ ու զձին ի յիր զորդ գնացուցն ի վրայ հեծնու, նա կատարել երենայ հեծնաւզին գործքն և գրաստուն, և հեծնաւզն անհօգք կենայ գրաստուն, սիրտն ամուր լինի և զիր գործքն, զոր խսկի կամ ենայ այնել, նա անվախ այնէ: Զի եփ ուլնյնայ զայն կարիքն, թէ զձիս ծուռ եմ հեծել կամ ի վրայ գաւկին, կամ ի վրայ շնեացն, կամ ի յայլ ազգ հարկ զնել զձին, || (65ա) նա երկու տիրանց շկարէ ծառայել. կամ կամ ենայ ի յիր անձինն ի հոգքն դէմ պատահման, թէ ի պատերազմ մտէ, որ յաղագս գահելոյ թրի կամ ըռըմբի ընդդէմ թշնամոյն, կամ զգրաստն ուննայ պատրաստ, որ ի գրաստեն շգայ իր պատահումն, զի որպէս սովորեցնիս զգրաստն, նա պիտի որ ի յայն սովորութիւնն կենայ զէդ որ հեծնու զինք: Եւ թէ անդէտ հեծնաւզ հեծնու զձին մինակ յիմացութիւն լինի առ գրաստն, որ զիտենայ զմարդոյն թուկութիւնն ու անդի-

տութիւն, առաւել թէ սովորած լինի աղէկ հեծնաւղի, և հեծնու անքչտ հեծնաւղ: Եւ երբ սկսուս ի հեծնուզ ||(65բ) զգրաստն և հալծել, դու յամէն աւր հեծիր և մի նեղել ի յիր վերայ աւելի, որ չկտրես զիր արիութիւնն, զի թէ կտրէ զիր արիութիւնն՝ նա ըլմի աղէկ ու շգայ ի յասլ ու շկենայ հաստատուն ներքեն:

Եւ յորժամ զորդես զգրաստն, դուն հայնց հեծիր, որ հաստատես զիր գնացքն: Եւ եր աղէկ հաստատէ, դու աւր մի հեծիր ու թող զինք երեք աւր, և ապա հեծնուս և մի՛ աւելի հալծես, զի աւելի հալծելն աւիրէ զգրաստն ու թուլցնէ:

[Ե]ւ թէ կամենաս, որ զգրաստն զէր պահես, դու աւր մի հեծիր ու աւր մի մի՛ հեծնուր. և զայտ իր սկիզբն այնես: Եւ կամ հեծնուս երկու աւր ||(66ա) ու թողուս երեք աւր, նա յեկենայ ճրագուն: Եւ թէ զիրնա աւելի, որ ենէ ի հնդամէ, դու հեծիր ու յեկելցոյ ի հալծելն, որ աւըղնայ ու նստի ճրագուն, զի միսն ու ճրագուն յորժամ յեկենայ, նա զահլցնէ ու աւիրէ զգրաստն:

Եւ կան ի զրաստնին, որ լինի քայլան. և ասէ իր յարապն հմլայճ: Եւ կայ, որ զորդզայ ու զշլիքն զլխովն ի հետ ի գեհաց դեհ ձգէ. և ասէ իր յարապն մղայնեն:

[Ե]ւ կան քուոկնի և կան վլախնի և քայլանք և աղէկ ազգ ձիանք, նա պարտ է քեզ զամէն ազգ զրաստու բնութիւն ուրիշ ուրիշ գիտենալ: Եւ յոր աղդէ ուղես, նա մտիկ զիր իր զաւզվածացն ||(66բ) և իր կերպերոյն և իր կտորին, թէ ի յինչ շակր զրաստ է. և յայնկից կարես ճանչել: Զի տեսել եմ ոմանք մի, որ ձի այն է որ ասէն, որ լինի ամուր ու զիմակաց և ուննայ աղէկ գնացք: Եւ ասեն, թէ հեծնելոյ ձի այն է, որ լինի շորս ոտաւըն հաստատուն և գաւակնի լի և փորն արձակ և աղէկ բնութիւնն, որ ճարտար զորդես ի յաղէկ զնացուց վերայ: Եւ կենայ ի ձիանն, որ լինի սրտով ու աղէկ կերպ ու սուր և չորս ոտքն յերկայն լինի և բարձր: [Ե]ւ այս նշաննիս երբ խառնի յիրար, նա աղէկ ձի է: Եւ քանի պակսի ի յայս նշաննոյս, նա պակաս լինի յաղէկութենէն, և քո ամէն ||(67ա) տեսնոյն, որ մտիկ զնես ի ձին, նա յայն թող լինի, որ ի յիր կտորն հայիս և ի յայլ նշաննին, զոր ի յայս զիրքս յիշեցաք:

[Ե]ւ յորժամ ուղես, որ ուննաս քայլան ձի, դու զքուակն փնդուս յաղէկ աղդէ:

Եւ գիտացիք, որ ժամանելն ի հետ աղէկ գնացուցն, և որ լինի ուժով բազկունքն ու կողքն, նա աղէկ է և լինի քթահրկոտ:

Եւ այս կերպ ձիս լինի դիմակաց քայլան, որ շժամցնէ զվիզն, զի այն, որ զվիզն կու ժամցնէ, նա ի զորգալոյ աղգէ է:

[Ե]ւ այն քայլայն ձին, որ քաշէ զբարձր դեհն ու ժամցնէ զներքի դեհն ի յաջ դեհն ու ի ձախ, նա եփ փոքր լինի՝ նա լինի դիմացկոտ: ||(67բ) Եւ թէ ի բնութենէն լինի քայլան, նա պիտի զորգայ. ու բուն ու հեշտն գորգալն է զրաստուն, զի ի հանգիստ կենայ զրաստն և պատեհէ է ի վրայ աղէկ տես մարդոյն, որ մտիկ զնէ աղէկ տեսոյն և շնչին համբենը բնութեանն զրաստուն, զի շատ զնալն և յեշվին քայլան ձիոյն չէ՝ թեզգեն մեկնելովն լինի, ապա պարտ է, որ զուավին ի բաց ձգէ ու հալծի, զի թէ շայնէ այսպէս՝ նա խալտենայ ի զնացքն:

[Ե]ւ գիտացիք, որ աղէկն ի քայլան ձիոյն, երբ աւաղ ու վատուժ լինի, նա շերենայ իր զնացքն, և թե պեղծ լինի քայլանն, այլ աղէկ զնացք ունացլ|||(68ա), զի իր ուժովն ու մարմնովն ջանա ի զնալն: Եւ աղէկ ձին քայլան, եր վատուժ լինի, նա ջանա սըրտովն, ապա ի զնացքն խալտենայ:

[Ե]ւ այս տեղեռտնոյս մտիկ դիր, որ զրաստն ի յաղէկն ու ի պեղծն ճանչենաս: Իւ եր ձին ընդ քայլան ընդ գորգանի մէջ լինի, որպէս թէ քուուակն ի յայս երկու աղգէս լինի ծնել, ու մտիկ դիր իր զնացուցն՝ թէ զոր աղդ բնութիւն է առել, և յայնոր վերա զորդէ զինք, զոր իր բնութիւնն կու քաշէ: Զի թէ ջանաս, որ ի յայն բնութենէն հանես և այլ աղդ զնացք ուսցնես զինք, զուն զայն չկարես ուսցնել, և զոր գիտենայ՝ զայն այլ|||(68բ) մոռնայ. որպէս թէ զաղէկ աղդ ձին բեռին սովորեցնես, նա աւիրես զինքն ու լինի բեռին, զի կոտրի սիրան ու թուլայ զաւդվածքն ու ելնէ յաղէկ ձիութենէ: Եւ զայն, որ բեռին ձի է ու ի բեռն զնես, նա աւր քաւր աղէկնայ ու ամբանայ զաւդվածքն, զի ամէն զրաստ ի յիր ստեղծուածոցն ի վրայ ու ի յիր բնութեանն, զոր տված է՝ պիտի որ յայնոր վերայ երթայ, զի յորժամ զիտենաս զիր շինուածքն զներքսէ և զդրացէ և զիր երակքն և զիր զաւդվածքն զիտենաս, որ ի վրայ այն շինուածոցն, որ ինք է ստեղծած, չկարենաս զայն բնութիւնն ի յիր|||(69ա)մէ զատել, զի նախ յիշեցաք ի գիրքս զաւդվածացն կերպերն թէ որպէս է, զի այն զաւդվածովքն ուննայ զիր զնացքն:

Եւ այն ազգ գրաստն, որ ասացաք, թէ մղայնիս ասեն իր, նա
նշանքն այն է, որ ի գնացքն զէդ գորգան լինի ու տուբէթն ու
ակնջվին ու շնին ի հետ շարժի ու զերկու առջի ոտքն կամաթք ձգէ:

Եւ կան ի յղորդ գորգանքն, որ դիւրաւ գորգայ, թվենայ թէ
զէդ ել և էջ կու երթայ:

[Ե]ւ կայ ի պարոնայքն, որ այլ բարձրագոյն կալնուն զայս,
քան զբայլանքն:

Եւ պեղծ գորգան այն է, որ վերնայ վատուժ ու դիպի ուժով
ընդ գետինն, և հետ[|(69բ)] այսոր անգէտ երթայ:

Եւ յորժամ ուղենաս, որ զվլախ ձին գնացք ուսցնես, որ ճար-
տար ու սուր երթայ ու կակղնայ շնիքն ու զաւդվածքն, զու ել ի
զոյր տեղի մի ու զինք բոլոր ի շուրջ ած, որ լինի արձկութիւնն
որպէս տասն կանկուն պալտատցի ու հանապաղ զզլուխն բարձր
կալ, որ ի վրայ ձեռվոյն աւելի լինի հալածն: [Ե]ւ աւր քան զաւր
փոքրցո զբոլորն, որ մնայ զէդ երկու կանգուն կամ երեք՝ մէջն: Եւ
հետ այնոր դարձոյ ի մէկ այլ դեհին վերա ու սկսիր և աւր քանձ
զաւր բարձկցոյ, որ զիետի ոտվոյն գնացքն առնու. և այսով կարես
զորդել, ||(70ա) թէ ուննայ բնութիւն գրաստն:

Ի՞ն. ՅԱՂԱԳՄ ԱԼԿԵԼՈՅ ԳԱՐՈՅ ԵՒ ԱԹՎՈՅՏԻ ԵՒ ՅԱՌԱՅԻ, ՈՐ ՏԱՆ
ԳՐԱՍՏՈՒՆ ԵՒ ԱՅԼ ՈՒՏԵԼՈՅՆ ԸՆՁԻՑ

Յորժամ տաս զֆառայն կամ զառվոյտն, զու թասլեցոյ զձին
յամէն պահու Ու տեղն, որ ֆառայ գնես, նա թող լինի արձակ,
զի զորդ ֆառային ու առվոյտին տեղն այն է, որ զնեն, որ լինի ի
զաշտ տեղ, և եր կամենայն որ գարի տալ, նա զլակիքն գարոյն, որ-
պէս զրած է ի գիրքն, որ մքուք մի լինի, ու քշիկ մի աղ իր հետ, ու
թող, ու (=որ) գարին աղէկ սպիկիկ լինի ու ընտրած ի քարէ ու զգայ
ի յիրմէ մզլահոտ, և սպրկիկ խթ, որ է առվոյտին հունդն: ||(70բ) Եւ
ոմանք մի ասցել են շոր առվոյտն է քսան լիտր ինչվի քսանուհինգ
լիտրն. և թէ ուտէ՝ այլ զու տուր, զի խութն շահոկէ, և այլ միջակ
գրաստուն՝ մքուք մի, ու խթ խոտ՝ լիտր տասն, ու յերդ՝ լիտր
քսան, և հեծնելոյ զորհստնոյն՝ նոյնպէս, և բեռին զորհստնոյն՝
մքուք մի գարի, և խոտ՝ լիտր հինգ, և յերդ՝ լիտր քսան, և իշվոյն՝
գարի՝ կէս մքուք, և խոտ՝ լիտր հինգ, և յերդ՝ լիտր տասնուհինգ:

Եւ զայս ամէն գրաստու մի՛ այնես, ապա ի վրայ գրաստուն հայցը. թէ կարէ հալել՝ նա դու տուր, ու թէ շկարէ հալել՝ նա ի վրայ այնոր տուր: Եւ թէ լինի մեծ կտոր գրաստ, դու ինչվիլ|(71ա) մքուք ու կէսն տուր: Եւ զորդ խառնելն, որ խառնէ զյերդն ու զգարին ու զխոտն, նա լինի կէս խոտ ու կէսն յէրդ ու անարատ գարի, ու եր դա զրել լինի, նա ո՛չ գարի մի տաս և ո՛չ ջուր, զի ֆնտու այնէ:

[Ե]ւ գիտացիք, որ խիստ է գոված, որ խոտ մէն տան գրաստուն: Ու ընդ գէր գրաստուն ալկեն շատ տեսութիւն կայ, զի աւաղ գրաստն ուտէ շատ և շնալէ, նա վասն այսոր պարտ է կշռել ու տալ, և յիմնայ, որ զոր կարէ հալել, նա զայն տայ, զի խիստ աւաղն կարէ լիննալ, որ ուտէ քառսուն լիտր պաղտացի: Եւ քշիկն, որ տան ի գարոյն, տասն լիտր է, ու խթ' ութ լիտր է, և թէ այլ՝ քշիկ|(71բ) տաս: Եփ կապած լինի գրաստն՝ նա աճոկէ, զարդել որ ի ճամբա՞ն չէ պիզդ:

Եւ հեծնելոյ չորեստանն, թէ յեկելցնես ի յիր գարին, նա չէ պիզդ:

Եւ զամէն գրաստ, որ ի խթէ կտրես, նա խիստ պիզդ է, և քանի կանգնած լինի ու յեկելցնես ի խթն քանի գարին, նա աղէկ է: Ու հանապաղ պատրաստ կալ ի գարոյ և ի ջրէ, որ ֆնտու Ախնի:

[Ե]ւ յորժամ իջնուս ի գրաստվէն ու տեսնուս, ու(=որ) կննայ ու փաշխափի, նա դու ի շուրջած մի՛ կանգնեցներ:

Եւ եր զֆառայն կամննաս տալ, նա ի մատղաշն տուր, ապա լինի ժամն հով' դու համբերցոյ: Եւ յորժամ որ տաս՝ նա հայնց շանայ, որ զմատղաշն տաս ի յիրմէ, ||(72ա) զի զֆառայն վանց այնոր տան, որ զգրաստն սրբէ, և յորժամ դահնայ, նա զէդ յէրդ է, և զոր իսկի կարես՝ դու տուր ի յիրմէ:

Եւ կան ոմանք մի, որ շարաթ մի տան զֆառայն և այն ոչինչ ազգ աւկտութիւն շայնէ և կամ երկու շարաթ. այլ պարտ է տալ զֆառայն վեց շարաթ ինչվի և (40) աւրն: Եվ պարտ է զֆառայն ցանել ի յառջի ամիսն ի ձմռան: Եւ զոր ի յերջի ցան լինի, նա չէ պատեհ տալ, զի չէ աղէկ՝ վատուժ լինի, ու զսերմն, որ ցանեն, նա սպիտակ գարի թող լինի: [Ե]ւ թող լինի ֆառայն մատղայշ ու յերկայն, զի այլ ուժով լինի: Եւ այն, որ կարճ լինի, աւեր է. մի՛ տար ի յայնոր գրաստու: Եւ տե՛ս||(72բ), որ ի յայն ֆա-

ուայնէ շտաս, որ հասկնած լինի, զի խոշքցնէ զփողքն և այնէ հազ և շաւգտէ իր:

Եւ ի տեղի, որ ի ֆառայ դնես, նա կապէ, որ ուտէ կանգուն մի, ու հետ ի հետ, կանգուն կանգուն տեղէ փոխէ և կամ կապէ զինք ի յարձակ շուր տեղ ու հետէն քշիկ քշիկ ձգէ զֆառայն ու յամէն ժամ ջուր տուր, զի եթ ի ֆառայ դրել լինիւ, նա ոչ կարես զիտենալ, թե ի յորժամ ծարվենայ: Եւ ծառութրարն, որ կենայ ու ծառայէ, նա պարտ է, որ զամէն տեսնու, որ առջեկ կոթինք շկենայ, զի երբ կոթինք կենայ՝ նա աշքն լցվի ու շկարենայ ուտել:

[Ե]ւ մէկ ծառութրար թող շկել|(73ա)նայ այն գրաստուն, որ ի ֆառայ լինի դրած, ապա երկուր և կամ երեք, որ շանձրանան ու շծառայվի աղէկ:

Եւ ես, որ զգիրքս փոխեցի, ասեմ, զայն ֆառայիս դնելն ի վրայ Պաղտտայ աշխարհուցն է ասցել և ի Շամբին տանն, նաև ի Մորայ, այլ ի մեր աշխարհս, որ անուանել կոչի Կիլիկէ. նա զգրաստն ի ֆառայ դնեն ի սպիրիկ և յաղէկ ախոռ և ինք մէն:

Եւ այլ գրաստ, որ զնոյն ի ֆառայ լինի դրած, և կալնուն զլուսամտերն, որ լինի մութն, ու կալնուն պարտակ դէմ դռանն, և ծածկեն ճլաւլ ու կալնուն պատրաստ ի հովէ, և շմը|(73բ)տէ ի վրայ գրաստուն այլ մարդ, քանձ միայն ծառութրարն:

Եւ ի յախոռն, որ կանզնի գրաստն, նա այնեն խոր ու փոս ու զնէ ի վրայ հաստատուն փայտեր, կազնի զողեր ու շարէ ի վերայ այն փոսին զէդ մատունք ի կարգն ու լնու ի վրայ աւղի խիճ և ապա լնու ի վրայ այն խճին մանդր աւազ զէդ շորս մատն, որ կակուլ ու ցամաք կենայ ներքն գրաստուն, և զոր զողէ՝ նա ծծէ ու ի վայր ի փոսն իշնու:

[Ե]ւ ծառութրարն արիական կենայ, որ եթ գրաստն ի վայր լինի կտրել, նա սրբէ ներքեն ու ձգէ ի դուրս ի յախոռոյն, որ շկենայ ի յախոռն ու հոտէ. ու զհոտն առնու ու ||(74ա) ահոկէ գրաստուն:

Եւ զնուն եթ թացվի, նա փոխէ, և ճուլ մի այլ ձգէ ի վրայ գրաստուն: Եւ յայն ժամն, եթ գրաստն ի վայր լինի կտրել, նա պատրաստ կալ ի հովէ և չեր կալ: Ու եթ կենայ ու կապի փորն, դու աւելի չեր մի պահեր և զայլ ծառութիւնն՝ որպէս ի յայս գիրզս է գրած:

Եւ ասէ զիրքս այս, թէ առջն, որ ի ֆառայն դնես, եթէ առորք մի հեծնուա զինք և ապա ի ֆառայն դնես, նա այլ լաւ է. մէկ որ աղէկ դիմէ ի ֆառայն և մէկ այլ վանց յերկար կանգնելոյն:

Եւ թէ ի գրասան բոր կամ կիծ կենայք զու ի յիր գողէն ու ի յիր թրբէն, եր ի վայր լինի կտրել, նա զու առ ու ի վրա շփէ³ (74բ) աւկտէ: Եւ [եր] թափլի, զու մի՛ թողուր, որ շաղախն ի վրայն չոր-նայ, զի շմարսէ զկիրակուրն: Եւ հանապազ զկոճքերանն զոտվոյն ու զձեռվոյն սրբէ: Եւ թէ կարես, որ հանապազ ներքեն սրբես ու աւազ ձգես՝ նա աղէկ է, զի զողն ու թրիքն խիստ ահոկէ և ափրէ զդրաստուն ոտքն, ու հանապազ ցամաք կալ ներքեւ գրաստուն:

Եւ յորժամ զֆառայն ընձես, նա մենակ այն առվատուցն վերոյ, որ արեգակն ի վրայ շցայթէ ու թառմի: Եւ զֆառայն ի հայնց տեղի զիր, որ ո՛չ արեգակն կայ ի վրայ իր և ո՛չ հողմ ծեծէ և աւիրէ:

[Ե]ւ զառվոյտն տուր, եր հով է զիշերն: Եւ տես զառ||(75ա)-վոյտն, որ միջակ լինի, որ ո՛չ զահ լինի և ո՛չ մատղայշ, և լինի տարեց հին ցանած: Եւ զկանազն և զաղվորն ընծէ ու տուր: Եւ մի՛ տար զայն, որ տարովն է ցանած:

Եւ պատրաստ կալ ի զիշերուն հովէն և ի յորեկվան ի շողոյն, առաւել ի յառվոյտն. նա այտով կարես զգրաստն աղէկ ծառայել և յելեցնես ի յղուղն և զաւդվածքն աղեկցնես ու ամրցնես. ու քա-նի յերկար տաս զառվոյտն, նա կարիք չկայ:

Եւ այլ ծառութիւն, թէ որպէս ծառայես, նա այնպէս է որպէս յիշեցաք ի ֆառայն: Եւ ի յարաւտկահն, որ արծես, զու մի՛ հալ-ծել զդրաստն: Կամակ թէ գահեն և կամ շարշեն, առ||(75բ)աւել թէ լինի զրասան գէր և կամ լինի խմել շատ ջուր, նա խիստ ա-հոկէ:

Եւ կան ոմանք մի, որ զդրաստն լուսնել տան, երբ առվոյտ տան: Ու պատրաստ <ութիւն>, որ շարի սմբակն ի գողէն ու ի թրբէն. և չէ այտ ոչինչ իրաց աւկտակար, այլ ջանայ, որ ներքես ոտվոյն ցամաք ուննաս: Եւ թէ զայտ հայնց շայնես, նա առվոյտն այլ շմարսէ իր:

Եւ զայն տեղն, որ յառվոյտն դնես, նա տես, որ սրտբաց տեղ լինի ու հովամուտ: Ու պատրաստ, որ ի պեղծ տեղ շղնես ի յառվոյտ և կամ ի ֆառայ. առ աւելի ի յառվոյտն խիստ վնասի:

Եւ ջանայ, որ զախոռն սալրկած այնեն, թէ շկա||(76ա)քնաս՝
դու շոր մաղած թրիք ձգէ ներքեն կամ մանդր աւաղ, զի այն լաւ
է, քանձ թրիքն: Եւ հանապազ ի յա խոռն քարկոփ լից, որ հող շինի
ու ծխէ ի հողէն գողէն (=գողին) հոտն ու գետնին ծուխն ու պու-
խարն ու ահոկէ սմբակին: Եւ գրաստն քանի յաւզին վերա կան-
գուն լինի, շահոկէ սմբակին և այլ դիւրաւ գայ իր:

[Ա]լիկ, որ զաւաղ գրաստն գիրցնէ: Կտրէ մանտր խոտ և
աղա գարի իբրև զկորկոտ և լից զիսըթն ի թաղառ մի ու վրայ
չուր, և թող զինք զէդ երկու պահ: Եւ զիր ի մսուրն թաղառ մի և
առ երկու ափկից ի յայն խըթէն ու լից ի ներս, և առ ի յաղցած
գարոյն զէդ ի խթին||(76բ) երեք ակն կամ շորեք ակն և ցանէ ի
վրայ ան խթին: Եւ քանի ուտէ զայն, նա զայս շակրս քշիկ քշիկ
տուր, որ ուտէ, զի աղցած գարին այլ քշիկ ահոկրար է, քանձ զա-
նարատ գարին, զի աղցած կարես մէկ ու կէս տալ, քանձ մէկ մի
անարատ:

Եւ եր կամենաս գարի տալ, նա ի հետ թացած խոթի (=խու-
թի) տուր: Եւ քուոկին մի՛ տայք յայսոր գիշերն ու ցորեկն, զի
քուոկինին շալեն աղէկ:

Եւ զայս ալիկս, որ ասցաք, նա ձմեռն լաւ է, յորժամ չգովի
(=չգտվի) առվոյտն: [Ա]պա թէ առվոյտ կամ ֆառայ գտվի՝
նա այլ աղէկ է, քան զայնս: Եւ կան, որ վլախ ձիաննոյն կու տան
զայս ալիկս, եր աւաղ լինի:

|| (77ա) Եւ յորժամ վերնայ վիառայն յառաջ քանձ որ խիստ
շողէ, նա չէ աղէկ ի շողն: Վանց այսոր չէ պարտ զգարին քան
զբան լիտր աւելի տալ՝ քանձ պարտ է, որ քանի գարին լինի ու
քանի խթն խառնած ընդ իրար, որ շահոկէ իր:

Եւ այն ալիկն, որ անուանեն իր տրաշթայք (""), նա առնուն
զիսոթըն (=զիսութն) ու կտրեն մանտր մանտր. զնոյնն կամ ֆա-
ռայ կամ առվոյտ: Եւ եր կամենան խառնել ընդ իրար, նա առնուն
ափկից մի խըթ ու ափկից մի առվոյտ կամ ֆառայ. ու թէ ուղե-
նայ՝ երկու երկու ափկից <ու> ձգէ առջև գրաստուն, և շտայ
շատ, որ ուտէ. և առնու զգարին ու լուա||(77բ)նա ու դնէ, որ քամի
շուրն, ու շողու աւելի ի ջուրն, որ շքացիսի, և առնու ափկից մի ի
յայս գարոյս ու ափկից մի թացած խթ՝ կտրած մանտր, ու խառնէ
յիրար ու տայ գրաստուն, որ ուտէ: Եւ մի՛ դնել տաւպրակ, որ

ՀՀողուէ գրաստն: Այս է տարեշթալքն(“), որ յետև առվոյտին տան կամ ի ֆառայէն հանեն՝ նա տան:

Եւ այն ալիկն, որ տան իր յամմիր. նա կտրէ զֆառայն ու զառվոյտն ընդ իրար մանար ու տա, որ ուտէ: Եւ տարեշթալքն(“) լաւ է, քանձ զայս, զի ի հետ առվոյտին զարի չէ աղէկ, ու (=որ) տան, զի ահոկրար է: Թաւէլ թէ լրնի առվոյտն||78ա) շոր ու լուացած և թաժայն ու կանանջն՝ լաւ է, քան զգարին:

Եւ ոմանք մի զգարին տան հետ առվոյտին: Եւ եթ յերկրէ առվոյտին տալն ու լինի դահ, նայ առ իս ալդ լաւ է: [Ա]պա հետ յխուն կամ վաթսուն աւուրն առուրն, ապա այս պոմնովս տուր, որ զարին լինի թրչած:

Եւ խոտն աղջի աղջի են. յամէն երկիր աղջ մի են: Նա մտիկ դիր ու տես, թէ որ կու աւկտէ գրասաւն ի յայն երկիրն, նա ճանշենաս իր անուամբն, աղջ մի, որ երկուր ու Գ (երեք) և ի յայն խոտէն դնես զմատղաշն ու զուժովն, զի կայ ի խոտերոյն, որ շաւկտէ գրաստուն, և կայ խոտ, որ բնաւ չուտէ զինք գրաստն, և կա, որ ահոկէ, և կայ, որ սպաննէ զինք: Եւ արծեն ի յինք ի յայս ||(78բ) խոտս իշվի և զորհստան: Եւ կայ ի յայս խոտէս, որ արծեն պախորէք և ոշխարք: Ամ դու փնդոէ, որ զաղէկն տեսնուր, քչիկ քշիկ, բուռն բուռն ձգէ, որ ուտէ: Եւ զառվոյտն ու զֆառայն աւելի ձգէ ու զգարին թաց վազն ու յիրիկունն, ու տուր, որ ուտէ: Եւ թէ հեծնուս ի հետ այս ալկիս, նա շահոկէ իր, ապա մի՛ աւելի հալծես զինքն, զի թեթև և աղէկ ալիկէ, առաւել ի յայն աշխարքն, որ կոշի Յարախ: Եւ ամառն առվոյտ բնաւ մի տալ, զի շէ աղէկ:

Եւ տակշուրնին առնուն զաւաղ գրաստնին և ալկեն այսպէս, զոր նախ յիշած է ի զիրքս, զի ճարտար զիրնայ ու լցուի ոսկորքն, առաւել թէ ի սրտաց տեղ ու ի հովամուտ տեղ կապեն||79ա) ու շրցնեն ներքին:

Եւ կան ոմանք մի ի տակշուրնին, որ աղընձեն զգարին ու այնեն որպէս փոխինդ ու տան գրաստուն. Նա ճարտար զիրցնէ: Եւ զայս ի յայնժամն այնեն, եր շգտնուն կանայշ խոտ:

[Ե]ւ կան ոմանք մի, որ խառնեն հետ զարոյն քիշ մի հացամեմ ու տան գրաստուն. նա պայծոցնէ զգոյնն:

[Ա]յլ աղդ ուտելիք, զոր պատեհն է. Նա տան զխին ու զգարին ու զյերդն ու զառվոյտն ու զֆառայն և զայն. Երբ կանայշ

տան, որ ուսէ, նա ի յայն ժամն տան, և աւր մի տան ու աւր մի շտան, և քանձ երեք աւրն աւելի շանցնէ, որ շտա զաղն, և թէ խիստ լիմէ, նա ի շաբաթն աւր մի տուր բահրակ՝ թէ հանգիստ կենաց գրաստն:

[Ե]ւ կան ոմանք մի ի||(79բ) Խորասանա յաշխարհն, որ առնուն կտոր մի աղ ու ձգեն ի մսուրն, որ հանապազ լիզէ, և թէ հայնց որ շովը ի լեզեն, նա առնուն ծայր մի աղ ու լնուն ի բերանն ու կալնուն զգլուխն ի վեր: Եւ եր ի ֆառայն դնես զգրաստն կամ ի յառվոյտն, նա հանապազ զպախուցքն փնդոէ, որ պախուցքն չհարու զպախուցեղն, զի զայն տեղն, որ հարու, նա բնաւ մազ շզայ. և թէ զայ, նա յայլ դոյն մազ զայ: Ամ քանի կարես կակուղ արա զպախուցքն և թէ կարես ի յաւրն շատ տարպայնի վրայ քո զրաստուն հայիս, նա պատեհ է, զի խաւրանք շունի, ծառայէ առանց լեզու ու չկարէ զիր ցան զանկտել: Եւ քանի կարես զզուրն ցցոյ իր, զի ջրին||(80ա) խմելն շատ ակտութիւն է իր, հովցնէ զփորոքն, հահընդցնէ զտաքութիւնն, զիճացնէ զկաշին և արձկցնէ զսաղրին, պնդէ զմիսն և յելելցնէ ի յարաւոն: Եւ յորժամ հալծես զգրաստն, դու մի՛ մէնակ զուր տուր կամ զարի. և պատրաստ ի յաւելի զարոյ, զի ֆնտուն այնէ ու աւիրէ զսմբակըն և այնէ քամի ու զըռտատէ աղիքն և այլ ազգ շատ ցաւէր:

Խթ. ՅԱՂԱԿԻ ՃԼԵԼՈՅ ԳՐԱՍՏՈՒՆ

Յորժամ տանիս զգրաստն ի զուրն, դու զզուրն ի յագէտակն զարկ աղէկ, զի զիճացնէ և հովցնէ ի վրայ զրաստուն զագթանն, ապա զաշիցն||(80բ) տեղն արձակ, որ չհարու զալըն, և զմուլն կակուղ արայ և կրծաւք, որ զկուրծքն աղէկ պահէ: Եւ զվլախ զրաստուն ճուլն մազէ արար: Զմեռն ի վրայ ճլին քիսէ անցոյ, որ քիսէն վիրել լինի, և ամառն՝ առանց քիսէի, զի զմաղն պաղ պահէ զգրաստուն և զմաղն պայծառ:

Եւ մազէ ճուլ մի՛ ձղեր ի վրայ մատակ ձիաննոյն և ո՛չ ի վրայ շրիստանոյն, որ կիծ շայնէ, ու պնդէ զծուլուկն, որ զմատակ ձին ու զմատակ չորոյն յելըն խիստ շքերէ, որ կիծ շայնէ:

[Ե]ւ ամառն ընդ իրիկացքն զմլերն ի յետ առնու ի զրաստէն և ի գոլերն աշվոյն վերև շվաննի կապէ, որ զմանձն քշէ: Եւ զգրաս-

տրն թափլեցո|| (81ա) և յարձակ տեղի տար, որ թափլի, որ չկենաց քար, ու կամ հողային ու գիճային տեղ լինի, և այլ ի յաւզի կամ ի չոր թրբի վերայ թապլեցոյ, որ գարի կերել լինի, զի այն թրիքն, որ յերդի լինի, նա այն ձին, որ թափլի ի վրայ, նա աւերի ի կաշին, և ոչ ի հայնց տեղաց վերայ, որ անձրև լինի եկել և ոչ ի յեղման վերայ, որ ձմեռն կու գայ: Եւ եր թափլեցնես՝ նա սովորեցոյ, որ կալաւալէ պահ մի, զի արձկցնէ զկաշին: Մի՛ թողուր զձին, որ աւելի խայտայ, զի ի շատ խայլաց շրջի յանկասկած աղիքն ու այնէ հատուած ու սովորի և խածնան լինի:

Լ. ՅԱՂԱԳՍ ՅՈՒԽՆԵԼՈՅ ԳՐԱՍՏՈՒ

||(81բ) Յառաջ ասեմ, որ ի յամենայն գրաստ զսմբակն աւելի շտաշին, զի թէ յանկասկած ընկնի լուսինն ի գրաստվէն, նա աւուրբ մի դիմնայ. որ թէ այլ լուսին զնէ ի վրայ, նա կարէ լուսնել, և թէ բենորն առվել է, նա կարենա այլ վայր քշտել:

Եւ լուսնաւզն պարտ է, որ մտիկ դնէ սմբակին որպէսութեանն. և թէ յոտն է սմբակըն՝ նա զառչի բենուտին մեծ քշտէ ու զյետինն* փոքր, և թէ կակուղ լինի սմբակըն՝ դու զառչինն ու զյետինն փոքր արայ: Եւ կայ, որ լինի գրաստուն սմբակըն զորդ, և կա, որ լինի ծուռ: Եւ ծուռթին կայ, որ ներքսնէ լինի, և ասեն իր ահնաֆ: Եւ կայ, որ զրուցել լինի, և ասեն իր աստաֆ:

||(82ա) Եւ կայ, որ գորտն սմբակին ոլոր լինի առել. ամ ի յոր դեհի վերա ծուռ լինի սմբակն, նա զլուսինն ի մէկայլ դեհին վերայ հակեցոյ քիշ մի: Եւ գորտն, որ ոլոր լինի առել, նա տաշէ յայն դեհէն և յայն ինչվի զորդի:

Եւ գրաստ, որ նաւսրսմբակը է, դու խուլ լուսնով լուսնէ զինք, և կամ, որ քիշ մի լինի բացած լուսինն ի սմբակըներանն, և շորս բենուն աղէկ է. և երեքն այլ աղէկ է ի ձեռվին: Եվ կայ, որ նաւսրսմբակ լինի, կամենայ ցաւի սմբակն, դու առ մազաղաթ կտոր մի և կամ սեկ կտոր մի ու դիր ներքն լուսնին ու լուսնէ. զի այտ խիստ աղէկ է և զոված է ի յայս տեղու: Եւ կայ, որ թաղաւր կու լուսնեն. և ես զայն պատեհ չեմ||(82բ) ի տեսնուլ, զի չուր առնու

* Զեռ. զյերշինն. Ռողում ենք հաշորդ նախադասուրյան նիման վրա:

թաղիքն, Եւ զայս ցեղ սմբակ գրաստու շաղփով լուսնեն և զբեկատին խիստ բարակ այնեն, զի այլ թիթե է, և այլ անհոգք ի վրայ սմբակին և քչիկն ի յերկթէն շատ է: Եւ քանի երկաթն կակուղ լինի, նա աղէկ է, ու սմբակին այլ ախորժէ: Եւ բեկուսին թող ծուռ լինի, որ ընդ կուղունծն ի ներս երթայ, որ եր բեկուղի՝ նա թաղվի յինք, զի թէ զորդ լինի բեկոն, նա զորդ երթայ ընդ սմբակն ու բեկուսա այնէ:

Եւ երբ գրաստն գորտնփոխ լինի, նա դնեն ներքեւ լուսնին սեկ ու լուսնեն ու թողուն աւելի ի կրծնկանն ի գեցն զէդ չորս մատն, որ կապեն շուանով վերև մաղբերնին, որ առնու այն աւելի սեկն ի վրայ ||(83ա) գորտանն, ու ծառային, որ երբ երթայ, նա քար շղիպի ու աւիրի:

Եւ կայ կաշէ կաւշիկ կու շինէ գրաստուն և կու հաղցնէ ու կու ծառայէ: Ու թէ շթողու գրաստն, որ լուսնեն, զու հնար է, որ առնուս շուան ու ձգես ի վիզն ու խեղզես խորասնցնակ որովէս խեղզեն զֆնտուն, հայնց որ կամենայն զգետինն զիպել, և տարպայնի արայ, նա սիրտն կոտրի ու թողու, որ լուսնեն:

[Ե]ւ թէ լինի գրաստուն սմբակն խիստ նաւար ու ուզենաս, որ աղեկցնես զսմբակն, զու շինէ լուսին խիստ նաւար ու խիստ բարակ, որ լայնքն լինի զէդ մատն մի, և զբեկունին բարակ և զբեկուլինին այլ փոքր, քան զլուսնին լայնքն, որ բռնէ զղունկն ||(83բ), որ ոչ թողու, որ աղջոյրն կոտրտի, և ներքեւ ձգէ աւազ մանտր խղճով (=խիճով), որ ի վրայ կանգնի. նա աղեկնայ սըմբակն:

Ա. ՅԱՂԱԳՍ ՆՇԴՐԱԿԻ, ՈՐ Ի ԳՈՐԾ ՏԱՆԻ

Պարտ է շինել պատուելոյ նշղրակ, որ լինի գլուխն լայն և երկին, սրծայր ու նաւար ու սուր:

Եւ յորժամ ուզես, որ երակ առնուս, զու բռնէ ի նշղրակն ու թող ի ծայրէն ի զուրս զէդ կէս զունգն, Եւ թէ կամիս ի վերի զեցն առնուլ երակ, նա զգլուխն բարձր կալ և մի ատորակ, ինչուր աղէկ զերակն գտնուս, և շքելէ ու զիր զիար, և առ երակ և զիր ի փողքն շուան, որ երկնին ամէնն լարին ու երկնայ, և առ զերակն Եւ ճտացն երկնին խիստ վնաս տեղ է, հայնց որ ||(84ա) եթէ երկթեն շառնու ի լինք և ի յայլ տեղ առնու խեց իր, նա սպաննէ զզրաստն:

Եւ թէ կամենաս խողիթէ հանել, որ կայ խոյլ ընդ ականջաբոռն և ընդ փողքն ի մէջ, նա ճեղքէ, որ երևնայ շեղն, և մտոյ զնշդրակն ու քերէ զայն խուլն պահ մի. նա ելնէ ի վրայ նշդրկին զէդ հաւկութի դեղնուց. դու հան զինք զայն խուլն ու մաղտէ նշդրկին ծայրովն ի վրայ լեղուին և ի վրայ ակընչվոյն. թէ ուղենաս՝ նա արցնաւոք առնուս զինք:

ՂԲ. ՅԱՂԱԳՍ ՏԱՅՊԵՐՈՅ, ՈՐ ԿԵՆԱՅ Ի ԳՐԱՍՏՆ

Գիտացիք, որ զոր գովեցաք ի գրաստուն զաւդվածքըն, թէ սիրած է յերկայնն՝ նա կարճ լինի, և կամ թէ սիրած է կարճն՝ նա յերկայն լիլ(84բ)նի, և կամ թէ լինի լայն՝ նա լինի նուրբ, և կամ թէ նուրբ լինի՝ նա լինի լայն, եւ կամ, զոր սիրած է հաստ՝ նա լինի բարակ, և կամ զլորը սիրած է բարակ՝ նա լինի հաստ: Եւ զոր զաւդված, որ յիշեցաք ի յիր կերպն թէ գոված է, նա լինի այն (=այլ) կերպովն, նա յայոլ է կոշած, և չկայ կարիք, որ կրկնակ զայն անուանել:

Զաւդվածքն, զոր ասացաք, նա այլ վայր յիշենք, զի կարդայ զայն և ի միտ կալ, նա կարես յայնկից ճանշենալ զայտերն, զոր ասցաք, նա մենք այլ վայր յիշենք:

Եւ զոր իսկի հնար կայր վանց ճանշվորութեան, նա զամէնն յիշեցաք, և զոր զոված էր ի յաղէկ ազգ ձին զնոյնն. և այն կերպարանաւոք ճանշենան և զվլախ ||(85ա) ձին. և մասն մի յիշել հնք վասն չորեստնոյն:

ՂԲ. ՅԱՂԱԳՍ ՏՈՒԹԵԹԻՆ ՅԱՅՊԵՐՈՅ ՆՇԱՆՔ ԵՒ ԳԱՎԹԱՆ

Թէ տուրէթն փոքր լինի և կամ ծայրքն մազին սպիտակ փայլկտուկ լինի, որ վառք ուննա և կամ բնաւ խազ չկինայ, նա ապիզոված է:

Եւ դագթանն փոքրութիւն ապիզոված է:

ՂԲ. ՅԱՂԱԳՍ ԱԿԸՆՁՎՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Ցորժամ տեսնիս զգրաստուն ականջն դէպ ի յետ ի ցից և յորժամ ձենիս նա լսէ, նա զիտացիք, որ խուլ է. և շատն ի սիսլախն լինի: Եւ թոյլութիւն ակընչվոյն կամ ուննայ պտոյտ ի ճակատն, նա ատած է:

Եւ յերկալն ակընջվին և ի կախ՝ որպէս կովու, նա յայպած է, և կոշին իր կաշկաւ:

Եւ այն, որ լինի|| (85բ) մէկ ականչն յերկալն ու մէկն կարճ, նա ատած է:

Եւ հեռվութիւնն, որ լինի ի մէկ ակընջէն ի մէկ այլն, նա ատած է:

Ա. ՅԱՂԱԳՍ ԱՉԻՑ ՅԱՅՊԵՐՈՅ

Կապոյտ աշվին յայպած է, զի խտիստի աշքն դէմ արեղակտնն ու դէմ սպիտակ իրաց, և եր հայի՝ զնոյն: Եւ թէ մէկ աշքն լինի կապոյտ և կամ շիլ, և աշիցն կոպքն իր սպիտակ լինի և կամ շուրջ, նա ատած է. և այն լինի ի խիստ ցրտոյն և կամ յարեգակնէն և և կամ ի ձոյնէն: Եւ հաւկոյրն զնոյնն: Եւ որ լինի խորու աշվին և գորովին մհծնայ. և այս իրվիս յայպած է: Եւ յայն, որ լինի աշիցն սպիտկուցն շատ և պտուզն փոքր, առանց այնոր լինի կապոյտ և կամ շիլ, նա յայպած է:

|| (86ա) Ա. ՅԱՂԱԳՍ ԵՐԵՍԱՑՆ ԵՒ ՔԹԻՆ ԱՅՊԵՐՈՅ

Նշանք. Խոյայթիթն և այն, որ քթին ծայրն տափակ լինի և տափթիթն և գէր երևսն, նա յայպած է:

Ա. ՅԱՂԱԳՍ ԹԵՐԵՎԻՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Թոյլ սլոկնին, որ եր յիշվեցնես՝ նա զիրար դիսի և դարձար այնէ, եւ յերկայնութիւն ակռայուցն, և աւելի ակռայն, և կարճ լեզուն, և մունչն, որ խրիսնճէ. այս բամէնս յայպեր են:

Ա. ՅԱՂԱԳՍ ՇԼՆԵՑՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Նախ յիշել ենք զիր զաւդվածքն եւ զնոյն յիշել ենք, զոր զոված է: Եւ զոր այլ ցեղ լինի, նա ապիզոված է:

Եւ զոր պարտ է յիշել բաժին մի, մենք ասենք՝ շնէտակն եր դարտակ լինի ի մսէ, նա յայպ է և բշիկ յիշվէ: Եւ եր|| (86բ) յիշվէ, նա զգլուխն բարձր պահէ ու շտեսնու, թէ ինչ կայ առաջին, և այն որ մէջ շնէցն էջ լինի. նա յայպ է:

Եւ բէջքն, որ ցից լինի, նա յայպած է:

Ա. ՅԱՂԱԳՍ ՄԻԶԱՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Յերկայն մէջքն ու կակուղն ու թոյլն յայպ է:

Թամբուցն տեղն, եր ցած լինի, և նքթէպն խիստ բարձր լինի, նա յայպ է:

Զնոյն և այն ողնաշարն ու գաւակն ցած լինի, նա յայպ է:

Եւ կզութիւնն և այն կուղն, որ թամբուցն տեղն բարձր լինի, նա յայպած է:

Նաւսրութիւն փորոյն և բարձրութիւն քովացն և քաշքանն առած է:

Խ. ՅԱՂԱԳՍ ԳԱԼԻԿԻՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Սուր|| (87ա) գաւակն և դէպ ի յադէտակն ցած <է> և եղնդաւակն յայպած է:

Եւ այն, որ լինի մէկ դէհ գաւկին բարձր և մէկ դէհն ցած, և այս կամ լինի ի ստեղծուածէ և կամ լինի, որ քուռակն ի մատզըշութիւնն մտել է ընդ նեղ տեղի ի ներս, նա հարուել է մէկ դէհն, և կամ հանապազ ընդ ծառ և կամ ընդ պատ շփէ, և կամ լինի տոել զարկը ի վրա գաւկին, նա յայպած է:

Յերկայն գաւակն և թոյլն ու փոքր գաւակն ատած է:

Եւ փոքրութիւն պճկոուացն և զորդ լինի բազկունքն ու կարճ, նա յայպած է:

ԽԱ. ՅԱՂԱԳՍ ԿՐԾՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Նեղ կուրծքն, որ ամէն կուրծքն լինի նեղ, և կրծոցն մկունքն մեծ լինի, որ մէկն|| (87բ) փոքր, և կամ մէկն ի դուրս և կամ մէկն ի ներս, նա ապիդոված է:

ԽԲ. ՅԱՂԱԳՍ ԶԵԽՎՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Յերկայն ոտվին և կարճ ձեռվին և, որ լինի գաւակն բարձր, քան զառաջքն, նա յայպած է, զի հանապազ զթամբքն ի վրայ շլնեցն ձգէ:

Եւ յերկայն կոճքն ու թոյլ չեղն և այն, որ զծնկվին յիրար ածէ, զի զորդ լինի ծնկվին. նա այսոք ամէնս յայպած է:

Եւ այն, որ սատափ կոշեն իր, զոր զրած է ի զիրքս, նա լինի սմբակքն դէպ ի դուրս ու ծունկքն կէպ ի ներս և կոճացն լայնքն դէպ ի ներս և սրութիւնն ի վրայ սմբակին, նա ապիդոված է:

Եւ այն, որ զկոճքն ընդ իրար ծեծէ և կամ ի յափէ է և կամ ի ձանձրա ||(88ա) նալոյ. այս ապիգոված է:

Եւ հանաֆն, որ լինի ի սմբակքն ի մաւտ դէպ ի ներս, որ հակառակն է սատափին, է այն, որ լինի սմբակքն կոճքն զորդ և չլինի կրունկն դէպ ի փորն, և այն, որ եր երթայ, նա ձեռվին ընդ իրար բաղդէ, և այն, որ լինի ի կանկուն ամէն ձեռվին ու բազկունքն զորդ, նա յայպած է. և այս լինի ի շղին ի կարճութենէն, զի խիստ քթահրան լինի և իր աւելի քթահրելն ի կանգնեցելոյն լինի:

ԽԴ. ՅԱՂԱԳՍ ՍՄՐԱԿԻՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Նշանքն է. խիստ փոքր սմբակն ու նեղն որպէս զկծիկ և ի յուն լինի, նա յայպ է, զի խիստ քթահրկոտ լինի:

Եւ նաւար սմբակն և արձակն պեղծ է:

||(88բ) Եւ չորն, որ հանապազ պատուտի ու փշրի ու շղաղրի լինք բնեռ, նա այտ է <ու> բուն ու պեղծն, ոռ իսկի լիլ է:

Եւ կակուզ սմբակքն, որ լինի առջնոյն խիստ նաւար և մէջըն փշրի, նայ խիստ յայպած է:

ԽԴ. ՅԱՂԱԳՍ ՈՏՎՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Նշանքն է. այն, որ լինի կոճքն հեռու մէկ ի մէկէ, նա յայպած է. առաւել ի մատակն և ճարատն ի ծննդոյ:

Եւ զարկնելն կոճացն յիրար և թոյլութիւն կոճացն, և փոքր անդամն, և զորդն, և կարճ սրունքն ապիգոված է, զի վատուժութիւն է:

Եւ այն, որ չկարէ կանգնել հանապազ ի վրայ ոտացն ու հանդցնէ դեհաց դեհէ, և ավղութիւն անդմացն, և այն, որ մէկ ||(89ա) ձեռք ուննայ, նա ամէնտ յայպած է.

ԽԵ. ՅԱՂԱԳՍ ԱԴՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Այն, որ ճանէ զագին, և այն, որ եր գահէ զձին՝ նա ինք զագին արզպէ ի վրայ գաւկին ի մէկ գհհի վերա, և սպիտակ ագին, և այն, որ բաժին մի սպիտակ և այլ այլ գոյն. և զայս երկուքս յարապն յայպել է, և առ իս չէ ապիգոված:

Կուրովինը, յառաջ, որ փնդուս զինք, որու ճանշենաս զինք, թէ կոյք է, թէ չէ. եթ կաղած լինի զրաստն, նա նեղու ու ձգէ զձեռվին ու դուսվին, և եթ գահէ նա աղսիրաղս եբթայ:

Եւ կորած լեզուն յալպ է, զի չկարէ զգարին աղէկ ուտել, շողէ, թըթիւ զինք և քշկցնէ զըրին խմ||(89թ)ելն: Եւ շատն ի յայնոր լինի, եթք լըկամն լեզվեռվ լինի ու զերսնակն ի թամբըն ձգես, պատրաստ կալ, զի խիստ պեղծ է ինք:

Եւ ակռայ պակասն ատած է, զի կոպիտ է ու շողիքն իշնու, և լինի քաշան և արոյն ի չնրանն:

Եւ հարունն, որ եկամուտ լինի ի զրաստն, նա լինի ի պեղծ հեծնողէն, և լինի յայնոր, որ հեծնու յախռույն ու դառնայ ճարտար յախռոն, և ի յանդատեն հեծնելո, և յայնոր, որ ի մէշ զրաստնոյ թողու զգրաստն և խածնան լինի ի ծառութրուն (=ծառութրարուն) շատ ծեծելոյն ու առաւել ի թամբըն և ի հանգստութենէ տեղեստնոյն:

Եւ կայ, որ կատղենայ ի պեղծ յարոյնէ և ի սուր մաղէ||(90ա) յաւելվածէ:

Եւ այն ձին, եթք գահեն, նա ելնէ յուավնէն, նա կոչէ յարապն իր ոռողան. նա լինի ի պեղծ հեծնողէն, որ թողու, որ ի հետ իր կամացն երթայ և շատ ծեծէ ի մէկ զեհի վերայ:

Եւ այն, որ շթողու, որ թամբեն և կամ լկամեն, և ճինարէ, և կամ շթողու, որ հեծնուս զինք, նա լինի ի շատ մկնատմերոյն, որ ելնէ ի թամբուցն ի տեղն, և կամ ի տեսներոյ, որ լինի յայն տեղն, և կամ ի քաշտեղն և կամ յողն, և յառաջ, որ ողջնայ և հաստատի՝ նա թամբեն նա շթողու, և ճինարէ ընդ ցաւէն, և եթ ողջանա՝ նա մնայ այն իր սովորութիւնն զնոյն ու ի հեծնուկն շթողու:

Եւ որ զլկամն շթողու, նա ի յայնոր է, որ բերնվախ|| (90թ) է արած և կամ լինի եղել նեղ լկամն և կամ ծանդը և կամ զբերանն շատ ծեծէ:

Եւ այն, որ շթողու զականչն, որ զլկամն գլուխն ի ներս անցնեն, նա լինի յայնոր, որ լինի հարել աւղինն և կամ փորն և կամ ի զիարէն վախէ նա. և այն իր սովորութիւնն մնայ:

Եւ այն, որ ձեռվավն քշտէ, նա պեղծ ընութիւն է ի զրաստն:

Եւ կայ, որ ի զիարէն լինի, նա ձեռվավն քշտէ և երթայ սովորի:

Եւ կայ, որ զիարն ի պռու[ն]գն շթողու, որ դնէ, նա զնոյն ոտաւքն քշտէ. ու զայն իր սովորութիւն առնու:

Եւ այն, որ ի սրտէն պառոյտ առնու ու կանչէ, նա լինի ի շատ ծեծելոյն ու ի յերսնկին ի շատ բաշելոյն. նա սովորի զայն, որ ի շուրջ գայ և կանչէ:

Եւ այն, որ շտա|| (91ա) լուս[ն]ելն, նա լինի յայնոր, որ բեեռ գտնու և կամ ի շատ տաշելոյն. նա ցաւի ու վախէ յայնկից. և այն մնայ իր բնութիւն:

Եւ խրտշիլն լինի ի սրտին վատուժութենէն, և լինի ի խրտութենէն և ընդ խումբութենէն, և որ լինի անցմնցեցոցած ի փողոցնի և ի նեղ զուզաղնի և ի մարդայն տեղեստան: Եւ խիստ պեղծ խրշիլն այն է, որ յղտոյն խրտշի, և այն բնաւ շղորդի:

Խե. ՅԱՂԱԳՍ ԿԱՂԱՎՈՅ, ՈՐ Ի ՄԱՍԻՒԿ ԿԱՂԱՅ, ԵԽ ՈՐ Ի ԲԱՅ ԿԱՂԱՅ,
ԵԽ ԶԵՐ ՓՆԴՈՒՆԵԼՎ ԹԷ ՈՐՊէՍ ԶԻՆՔ ՃԱՆՉԵՆԱՍ

Գիտացիր, որ կաղնալն մէկ ոտիցն ի զլխոյն ճանչիլի: Եւ առէկ զորդ ճանշենալն կալաւիցնելն է, որ հալծեցնես ու բերես կանգնեցնես և սեղմես ձեռ|| (91բ)աւքդ. նա որ տեղի ցաւի՝ նա պիտի որ երևնայ:

Եւ զորդ փնդուելն՝ եթ կամենաս փնդուել. որ ի հետ հալծնացն կանգնեցնես ու ալկես ի մսուրն և թողուս, որ պաղի ու ուտէ ու հանգչի, և հետ այնոր առնուս զպախուցքն ու յուշկիկ յուշկիկ բաշես՝ առանց այնոր, որ զարկնես ու կամ նեղես. նա եր կենայ՝ յինք ծածուկ կաղութիւն նա պիտի երևնայ:

Եւ թէ ուզիս, որ յիմնաս, թէ ի սմբակէն է կաղութիւնն և կամ ի կոճէն, զու առ զգրաստն ու ի վրայ դոյր բարուտ գետնի կալաւիցոյ*. նա թէ ի սմբակէն է՝ թէ կենա՝ ցաւի յուաքն: Որ լինի ի սմբակէն, զու ընդ դար ի վեր զէդ սանդղմատներ ի վեր տար զգրաստն. նա|| (92ա) պիտի երևնայ, զի եր դնէ զձեռն ի սանդղմատն, նա պիտի մնայ ուսպին ի ցած տեղն և ի վրայ բազկացն հաստի, և ապա փոխէ զոտքն. նա թէ կենայ կաղութիւն՝ նա երենայ և հանապազ ի կալաւիցնելն**:

* Զեռ. այլ ձեռագրով բառի վրա՝ կալեցու

** Զեռ. այլ ձեռագրով բառի վրա՝ կալեցնելն:

Եւ ի յանցմնցեցնելն գլխոյն մտիկ դիր և յերկարցոյ զմիտքդ ի յիր տեսն ու կշռէ դիր գնացքն, զի պիտի դիր ուժն ի վրայ ողջ ձեռացն դնէ ու զգլուխն ի հետ հնազանդէ և զայն, որ ցաւն կայ, թոյլ ի հետ տանի: Այտով կարես ճանչենալ զծածուկ յայպն և զայն, որ յայտնի է և ի բաց յայպ, նա մենակ պիտի որ ճանչենաս:

Եւ թէ յոտվին լինի այպն, որու զնոյն մտիկ դիր, նա պիտի որ ի յողջ ոտիինն ի վրա հաստի ու մէկ դէ՛ս գաւկին իշ||(92թ)նու: Եւ այն ոտքն, որ ցաւն կայ, նա պիտի ոտքն ի հետն ի քաշ երթա և ի դար ի վերն և ի կալավիցնելն* աւելի պիտի ցուցէ: Եթե խիստ ի ծածուկ լինի այսպն, որ ի յերջի ոտքն լինի, նա որու տար զգրաստն, որ թապլի ի տեղի: նա ի թափլելն պիտի որ առաւել ցաւն ուժվորէ: Նա որու տար զծեռքդ ու փնդոնէ, նա պիտի որ երկնայ:

Եւ թէ կամենաս յիմնալ, թէ ի սրաւնքն և կամ ի բազուկն և կամ ի կոճքն է ցաւն, որու զգրաստն բոլոր ի շուրջ ած յուշկիկ յուշկիկ. նա թէ յայպ կենայ, նա շկարէ ազլոր զէդ սպրկիկ գրաստըն զանձն ի հետն ի շուրջ ածել, որու տար զծեռքդ ի վերսէ ի վայր||(93ա) ու փնդոէ: նա ուր խսկի կայ ցաւն՝ նա պիտի որ երկնայ:

Եւ թէ ուզես, որ յիմանաս, թէ ի կուրծքն է և կամ թէ ի բէճքն և կամ թէ այլ ի վեր է ցաւն, որու զգրաստն յանկասկած ոլլէ** ի յետ ի մէկ զեհի վերա, նա պիտի ձեռվին ընդ իրար բադդի: նա ուր կայ ցաւնի՝ պիտի երկնա: նա որու ձեռաւրդ տար ու փնդոէ:

Եւ թէ լինի յայպն յերկու ձեռքն, նա շկարես ի զլուխն ճանչենալ, ապա իո նշանն այս է, որ եր կենա ու երթայ, նա զերկու ձեռքն պատրաստ հետ իրաց ձգէ, ու ապա հաստի ի վրայ երկու ոտացն ու քաշէ յառաջ, և պատրաստանաւք զգլուխն ու զկուրծքն վերցնէ: Եւ թէ յայպն ի ցաւէ լինի, նա ի|| (93թ) հետ ցաւերոյն զինք յիշենք:

Եւ քթահրելն, որ ի յամէն ժամ քթահրի, նա լինի ի յոտվոյն վատուժութենէ և ընդ թուլլսրտութենէն, և լինի քթահրելն, եր ծնկվին զիրար ձեծէ ու կամ կոճքն, և կամ լինի զեղն կարճ, նա ի

* Զես. այլ ձեռագրավ բառի վրա՝ բալեցելն:

** Զես. այլ ձեռագրով բառի վրա՝ ոլորէ:

յայտոց քթահրի: Եւ այն, որ յանկասկած ոտքն ի փոս տեղի ընկնի կամ ընդ քար զիպի ու քթահրի, նա չէ յայպ:

Եւ սրաւան կայ, որ յանկասկած գրաստուն ոտքն ի ծագ քար ընկնի և կամ ի քարի մէջ և կամ շքելացն փայտն հարէ զոտքն, նա թուլցնէ զոսկորն և աճէ և ի դուրս դայ ու լինի ծածկ[տ]ած, որպէս զծուծոսկոր. և այսոր կոչի սրաւան:

Եւ կայ, որ լինի ի սրաւանացն ի լայնք. և այդ քշիկ վը||(94ա)-նասէ:

Եւ կայ, որ լինի ի ծունկքն և ի խալիկն. և ինքն է բռն ու պեղծն, և կարէ լինալ, որ աւիրէ զգրաստն:

Եւ կայ, որ լինի ի զաւդվածն ի ծնկացն երկու դեհն ի ներքսել և ընդ դրացէ. և այն, որ շկայ բնաւ բժշկութիւն:

Եւ տեսել եմ, որ խիստ զաւրաւորն ի յիրմէս, եթ լինի պեղծ տեղն, որ է զաւդվածին խաղն, նա բնաւ չէ ողջցէլ: Եւ զոր փոքր ելել է, նա ի վրայ սրաւանացն ելել է, նա սրբել է:

Եւ կայ, որ լինի ելունդ ի վրայ սրաւանացն կակուղ, որպես զխոյլ, և եթ զնես զմատըտ ի վրայ, նա երթայ ու դայ: Եւ կայ, որ լինի կակուղ, և կայ, որ լինի պինդ, և կայ, որ լինի ի վրայ սրաւանացն, և այլ ի վեր քան զսրաւնքն ու այլ ի վայր քան||(94բ) զսրաւնքն, և յառօշի ոտպին ու ի վերջի ոտպին:

Ընթիշարն, որ թարքմանի ցրբիլն և մէկնելն, որ լինի ի զղերն ի յառօշի ոտացն ու վերջի, ու իր սկիզբն ընդ շատ զահելոյն ու ընդ հալծեցնելոյն լինի, նա ուռենայ առաջքն գրաստուն ու կամ ի վերջըն, նա լարվի ու ցրբի երկնին ու զղերն յիրացմէ ի յետ:

Եւ կայ, որ պատահի իր այս ցաւա, ու ինքն ի կանկուն կենայ, նա զձեռքն վերցնէ ու ծեծէ զգետինն և զիպի ի մսուրն ու այլ շկարէ վերցնել: Եւ չէ այս ցաւա վնասակար, այլ թէ պէտ այնես՝ նայ ճարտար ողջնայ, ու լինի, որ ուռենա ի վերի դեհն չղին սկիզբն և ի շուրջ դայ: Եւ յորժամ բռնես մատամբտ^{*}||(95ա) նա ճանշենաս, որ լինի սպրկիկ: Եւ յորժամ ուղենաս, որ յիմնաս, որ սպրկիկ լինի, նա տեսնուս զինք ի լար^{*} ներքն մատինդ^{*} եթ տանիս զձեռք: Եւ անծանաւթ մարդիկն չի ճանշենան դայս: Այսպէս զտնուս զերակքն ի լար^{*}, որպէս զուռեցած, նա զիտացիր, որ չէ սպրկիկ:

* Զեռ. այլ ձեռագրով ավելացված՝ ած (=լարած):

Որ է տաքութիւն, որ կենայ ի շորս ոտքն, և առաւել այս, որ ի յոտվին կենայ դէս ի վեր և քանի երթայ՝ նա աճէ ու արձկնայ: Եւ թէ ի գէչէ լինի, նայ ելնէ յիրմէ թարախ, և թէ ի շորէ լինի, նա ելնէ յիրմէ որպէս զծկան խորիս: Եւ քանի լինի, որ ի ծունկըն լինի և ի ձեռվին:

Եւ կայ, որ խլի բազկին ճաղն||(95թ): Եւ ոմանք մի ասցել են, թէ չէ այն բազկին ճաղն, ապա այն երակ է ու ի դուրս կու դայ: Եւ ոմանք մի ասցել են, թէ երկնոյն ծայրքն է ու ի դուրս կու գա: Եւ ես կու ասեմ, որ հայնց է, զի ոսկորն, որ ի սրունքն կայ, նա ի յիր տեղացնմէն գայ ի դուրս: Եւ այս ցաւս կայ, որ կու գայ ի դրուցեէ: Եւ կայ, որ ի ներքսենէ: Եւ թէ ճաղներն յայն տեղն ելնէր, ուր ճաղն կայր, և ինքս պեղծ ցաւ է, և յոտքն այլ պեղծ ցաւ է, քան ի ձեռքն: Եւ յևելվածերն ցաւ է ի կոճքն, որ հաստնայ ի կոճացն ու ինչվի ծունկըն, և յորժամ զմատնդ դնես, նա պիտի լինի որպէս զոսկոր: Եւ կայ, որ լինի զէդ ընկոյզ ու այլ մեծ, և զոր ընդ ներքսենէ աճէ ու մեծանայ՝ նայ այլ պեղզ||(96ա) ծ է, զի հանապաղ ընդ իրար դիպի ոտվին ու թթահրի ու ափրի ոտվին. և զոր ի դրուցեէ լինի, նա կարէ դիմնալ զրաստն, և եթ յոտվին ու ի ձեռվին լինի, նա շինի այն ցաւս, զոր ասցաք ընթիշար:

Եւ տայխաւնն, որ լինի յոտքն ու ի ձեռքն, որ է ցաւ, որ ի կոճին մէջն լինի յևելված՝ իրրկ զկատու կամ այլ մեծ, և թէ ներքսենէ լինի, որ յուշ երենայ, այլ պեղծ է, քան թէ ի դրուցէ լինի:

Եւ խիշիփարն, որ լինի յոտքն <ու> 'վ ի ձեռքն, նշան է, որ լինի ի դրուց՝ ի դեհն ի խալկին: Եւ քանի երթայ, մեծնայ ու պինդ լինի, որ շորցնէ զիսալիկըն: Եւ թէ յոտքն լինի՝ այլ հեշտ է, քան թէ ի ձեռքն:

[Ե]ւ ֆասխն, որ լինի յոտքն և ի ձեռքն, ||(96թ) նշանն այս է, որ քաշվի զղերն ու յերկայնայ՝ ինչվի թունայ զաւղվածքն ու ելնէ ի տեղացն. և այսոր ոչ կայ բժշկութիւն:

Եւ ձերատն, որ է մնացական այլպ ոտիցն, կայ, որ լինի ի ծննդոյ, և կայ, որ լինի ի ցաւէ. և ինք յևելված է, որ լինի ի ծընկացն ի զղերն: Եւ այն, որ ի ծննդենէ լինի, նա յերկայնզոյն լինի: Եւ այն, որ ի ցաւէ լինի, բոլոր որպէս ընկոյզ, և քանի երթայ՝

մեծնայ, որ աւիրէ զաւդվածքն, որ ոչ կարէ ծալել: Եւ կայ ի նմանի սրաւան, ապա չէ սրաւան: Եւ այն, որ ի ծնէ լինի, նա ի ջղին յերկայքն լինի, որպէս զպախրի, զի զինչ պախրէ կայ՝ նա ամէնն ճարատ լինի: Եւ այն, որ ի ծնէ լինի ճարատ, նա չի կաղայ: Եւ այլ ||(97ա) լավէ է, բան զայն, որ ի ցաւէ լինի, զի որ ի ցաւէ [է] եղել՝ նա իսկի շեմ տեսել ողջցել է:

Եւ կայ ցաւ, որ ասեն իր ըռքապի, որ թարգմանի ի հայն քամախ յևելված, որ իշնու ի յակն ի ծնկացն հաստ, նման է ի սրաւսըն, լինի ի զարկուց կամ ի քթահրելոյ. Ա կայ, որ դիակի է:

Եւ շուկակն լինի ի տաքութենէ և ի շորութենէ. և կամ, որ գրաստն ի ջրէն՝ հանեն ամառն ի վրայ շող աւզի կամ ի շող մոխրի, նա պատուէ զովտյըն, նա լինի շուկակ: Եւ կայ, որ որդնի: Եւ այն, որ կոճբխի իջուվածք է, որ իշնու ի մէջ կոճին որպէս ոսկոր, և շքելին տեղն յերկու դեհն, եւ եթ կենայ ու երթայ գրաստն, նա ցաւ տայ: Առաւել պեղծ լինի, եթ հալծի գրաստն, ||(97բ) և եթ սկիզբն լինի, որ տանիս զձեռքդ, նա երենայ իբրև զնուշ: Եւ շատն ի մսրցի գրաստնին լինի յնրկու ոտքն:

Եւ կայ ցաւ, որ ասեն իր նուփախ, որ թարգմանի փուքք, որ ուռեցվոր լինի ի ծնկացն, ի ներքի ջեղն կակուղ, և լինի ի մէկ ոտքն, և լինի յերկու ոտքն, և լինի ի մէջ ուռեցին և մէջ կաշոյն, զեղին չուր ելնէ՝ զէդ հաւուկթի սպիտկուց. ու լինի այս ցաւս քանձ ի յայն ջեղն, որ ասցար: Եւ բմանք մի զայս ցաւս շընդունին. և ես կասիմ, որ բուն ու պեղծ ցաւն այս ցաւս է:

Եւ ֆախատն ցաւ է, որ բաշվի կոճացն չեղն ու կարճնայ ու բաշէ զսմբակն ու ի մէկ դէհն ոլլէ*:

Եւ ցաւն, որ կոչի յախալ, որ լինի յետի ոտքն ||(98ա) ջեղն, որ կայ յանդմանցն ի վեր ի խաղն, նա եթ կենայ գրաստն ու երթայ, նա զոտքն բաշէ ի վեր դէա ի փորն ու կծկէ ու այլ վայր թողու. և ինք պեղծ յայպ է: Ապա թէ պէտ այնէն, նա ճարտար ողջնայ: Եւ կայ, որ առանց պէտ այնելոյ կու ողջնայ:

Եւ ցաւն, որ կոչեն իր զըմըն, նշանն այս է, որ յորժամ կենայ գրաստն ու երթայ, նա պայթուտէ խալիկն, ու արիւն կենայ ու երթայ յիրմէ:

* Զեռ. այլ ձեռագրով ուղղված է՝ ուսորէ.

[Ե]ւ ցամ, որ կոչի մոլահն, ներքեւ ծնկացն լինի ուռէց՝ զէդ կէս խիարի, յերկայն ու պինդ և կամ այլ փոքր, և տաք լինի՝ երբունես: Եւ թէ ի բուռակ ելնէ այս ցաւս՝ նա սպաննէ: Եւ որ կատարել ձի լինի, նա չկաղազ յիրմէ:

Եւ խումահն ուռէց է, որ իշնու ի ծնկացն||(98բ) ի բարակ դեհն, և քշիկ յայպ է:

[Ե]ւ ներթափն, որ թարգմանի բէջաւ, որ ուլի* բիճզիսին, վանց կարճութեան նրթէպին. և բուն ու պեղծ յայպն, որ կենայ յողնն:

Եւ հարտքն, որ նրթէպցամ է, յորժամ ցաւ դիպի զնքթէպն ի տեսէ և ի զարկուց՝ նա աւիրի ոսկորն ու ելէ յիրմէ կտոր մի ոսկոր: Եւ բնաւ չզայ այլ ոսկոր յայն տեղն. և ի պեղծ յայպերոյն է:

Եւ պաճարն**, որ է հատուածն, որ լինի ի զրաստնուն պորտն, և չկարէ զրաստն այլ յիշվել յերկար դէդ առջե:

Եւ աղոյն ոսկորին կոտրելն լինի ի պատահմանէ, որ կոտրի և այլ չկարէ ցցել:

Եւ յազրն սովորութիւն է, որ զրաստն հանապազ ի մէկ դեհի վրայ դնէ և||(99ա) յիշվէ:

[Ե]ւ մրջմոցն ցաւ է, որ լինի ի սմբակքն և յայլ տեղեստան, և առաւել լինի յիշվին, և ի չոր ու ի պեղծ սմբակնին: Եւ յորժամ ելնէ ի կոճքն և ի միւս՝ նա խոցոի, ու ելնէ ի յիրմէ թարախ ու աւիրի սմբակքն: Եւ զոր գայ սմբակ՝ նա պեղծ գայ: Եւ ցամ, որ ի զրաստուն սմբակքն ելնէ, ի յիրմէ ի յերկայնքն տաշեղ տաշել, առաւել եր կենայ ու երթայ՝ նա կեղեկի ու արոյն ելնէ: Եւ լինի ինք ի սմբակին յերկու դեհն: Եւ շատն յառջի ոտպին լինի, զի առաւել չոր է: Եւ լինի, որ զրաստուն ոտքն դիպի ի վրայ քարի և այլ յԱնելնայ ցաւս: Եւ լինի ի շատ գարոյն ուտելոյն և ի շատ կանգնելոյն: Եւ հատվածն ի յոտպին լինի ի կըրընգնին||(99բ) ու լինի ի գորտն, և լինի ի լայնքն ընդ կոճքն և ընդ սմբակնի մէջ, հայնց որ աճէ ու բոլոր առնու զսմբակքն: Եւ տեսել եմ, որ զրաստն զոտքն ի կախ կու թողու, որ պատի հատվածն և ողջնայ սմբակն, պիղծ ողջնալ է, զի ելնէ ի յիրմէ հանապազ արոյն և թարախ: Եւ կայ, որ ընկնի սմբակն:

* Զեռ. այլ ձեռագրով ավելացված է և (=ուլին):

** Զեռ. բարի վրա այլ ձեռագրով սխալ ուղղում է կատարված՝ առ (=պատարն):

Եւ խոյլըն, որ ելնէ ի լողնն և ի յայլ տեղեստան, լինի ի թամբուցն ի կոխելոյն: Գայ (=կայ), որ կապի ու լինի ելունդ և չկհնայ իր ճարակ, զի պնդ յայտ է: Եւ թէ աւելի ոսկոր կհնայ ի յայն տեղն, նա բնաւ շողնայ:

[Ե]ւ յասամն ցաւ է, որ քաշվի ձեռացն ջեղն ու շրջի սմբակն և աւիրի վերի սմբակն, լինի որ ի պեղծ ծառութենէ է, որ հանապազ ոտքն ի վրայ թրքին||*(100ա)* և գողին կհնայ. նա նաւարնա սմբակքն ու բորբոսի ու աւիրի:

Եւ իրթէհաշմն, որ է ցաւ, լինի ի ձեռացն և ի ջղացն ի թուզութենէն, և կամ ի շատ հալծնաց, նա դողայ ձեռքն և դիպի յիրար: Եւ զնոյն ու լինի ի յետի ոտվին:

Այսոք հն յայպերն և ցաւերն, որ զէդ յայովեր է, զոր կարցի գտնով: Նա ես գտայ և ճանչեցի: Եւ կան ի ցաւերն, որ լինան յայպեր: Եւ ցաւերն շատ են, և մենք, զոր կարենք, յիշել ենք ի յայս դիրքս ու ցուցուցել զայպերն ու զցաւերն: Եւ հանենք զձին այլ ու գրենք խէլ ամէն զաւդվածի զիր յայպերն*:

Եւ ասցել է յարապն, թէ զրաստ, որ պարտ է պահել ու կապել, նա մէկն ուղտն է և ի շնորհոր, և զաղէկն ի յիր||*(100բ)*մէ բառնան հարիւր լիտր: Եւ աղէկ ձին ընդ իր հեծնաւզն ու ընդ մարդոյն ու զրաստոն ու ընդ իր ոռոմքն, առաւել եք նշանակ կենայ ու հողմ աւը լինի, նա տընտղած է, որ հարիւր լիտր լինի և յիշվէ սուր: Եւ այնով զիսացաք, որ այն այլ աւելի ուժով է, քան զուղոն: Եւ վասն այսոր զմտու ածելով հալծեցաք և զտաք զիր աղէկ ու սիրած զաւդվածն ու զպիդն ու զատապձն:

Եւ հետ այս բանիս հանենք զհիւանդ ձին ու գրենք զիր ամէն ցաւերն ու զայպերն ու զդեղապետեալն*:

Եւ յառաջքն հանել ենք զաղէկ ձին ու գրել ենք զիր ամէն զաւդվածք, թէ որմէ զոված է և սիրուն և որմէ ապիզոված**:

||*(101ա)* Խթ. ՅԱՂԱԿՍ ՅԱՒՈՅ ԳՐԱՍՏՆՈՅ. ՎԱՍՆ ԽՌԻՆԱՆԻ

Առաջինքն ասացեալ են, թէ խունանն շորս ազգ են՝ չոր և գէջ և այն, որ ներքն ոսկորին լինի. Եւ հայնց տեսան, որ չորն ու գէջն ի յաւելվածէ լինի. և այն, որ ներքն կաշոյն:

Եւ ես ասեմ, որ խունանն ազգ մի է ի ցաւոցն և են երկու

* Բնագրում նիշված այս նկարը չկա:

** Տե՛ս էջ 58թ:

ազգ, որ է շորն և գէջն; Եւ այս տեղեստանն, որ խունանն ի լինք լինի, շատ հն; Կարէ լինել, որ այն յաւելվածն, որ բորբսի, նա ուր և բնակի՝ խունան այնէ; Ապա թէ իջնի յանդմացն ի վերի զաւդվածն, նա թուղցնէ զդրաստն ու վատուժցնէ ու կտրէ յուտելոյ ու ՚ի խմելոյ; Եւ ասեն այս ազգիս անուն՝ անդմաց խունան, ու եր ||(101բ) իջնի յայլ զաւդվածքն, նա կոչի զաւդվածաց խունան, և եր ճռվի ի սիրտն պեղծ յաւելված՝ կոչի սրտի խունան; Եւ այս ազգս սպաննէ խիստ ճարտար զգրաստն; Եւ ես, զոր փորձել եմ, նա կու ասեմ, որ շատն ի յայս ազգ ցաւոցս եր հաստատի՝ դժար բժշկի, և քչիկ գրաստ խալսի յիրմէ; Այլ մենք գրել ենք զմեր շանքս ի յայս ցաւուս ծառութիւնն, զոր իսկի կարցաք մեք փորձեցաք ի մենէ և յառաջնոցն և գրեցաք.

[Ն]շանքն այս է զոր խունանին. աւըզնայ գրաստն զէդ բարակցաւու, և փորոյն ջղերն քաշվի դէպ ի ներս, և ձկտի ամէն կաշին և խոշրնայ և հաստնա. և եր զարկնես ձեռաւքի||(102ա) ի վերայ քովայ<ն>ցն, նա զէդ նազար ձայն տայ և ջանա, որ հազայ, և շկարէ հատալ, և թվենայ, թէ ոսկոր է կլել ու կու հարու զինք; Եւ եր այս նշաննիս մաւտեցել լինի, նա շկարէ զերծանել ի մահուանէ, ապա թէ յառաջքն կարես ճանչել, դու արա գեղ զայս.

Դեղ, որ բանայ և սրբէ զշոր խունանն, որ չուն[ն]ա հոտ:

Առ Գ(3) հաւուկիթ հում, ծակէ և հան զամէն մէջն ու լից զԴ(3) յաման մի, ու շափէ երկութովն մեղր, ու մեկովն աղէկ մորէ ու խառնէ հետ հաւուկթին հոռոմ ձէթ և կամ մրտի ձէթ կամ մանուշկի, զոր հանդիպի, յայս շաբս զոր ասցաք, և խառնէ ի հետ լիսած պղպեղ հինդ մթխալ և յայն գեղէն,||(102բ) որ ասեն իր ֆարխութզին՝ մրտի տակ, հինդ մթխալ: Ամէնս լիսած և մաղած խառնէ հետ այն հաւուկթին, որ այլ նիւթն ի հետ կայ, ու ի յիրմէս բաժին մի լից ընկ գրաստուն փողքն ի վայր ու բաժին մի փշէ ընդ քիթն ի վեր և կապէ զգլուխն բարձր՝ զէդ կէս պահ, և ապա արձելէ և բայլեցոյ՝ զէդ հինդ վից քայլ, և ապա կապէ զպախուցքն ի ճեռքն ի շքելեացն ի տեղն, որ ցածցնէ զգլուխն. եթէ քաշէ զգլուխն, նա պիտի ևլնէ ամէն գիճութիւնն ընդ քիթն, եւ արա զայս Գ(3) աւր հետ իրաց այսպէս: Եւ թէ շիջնու գիջութիւն, դու առ ջանդիանէ, ունանդ, կամայի ւտուղ, յամէն մեկէ երկու ||(103ա) մթխալ, մեղրջուր՝ նուկի ու կէս, և լիսէ զգեղերն ու խառ-

նէ հետ մեղրջրին. և լից ի յիրմէ բաժին մի ընդ փողքն ի վայր և բաժին մի ընդ քիթն: Եւ արա զայս տարպայնիս ինչվի այլողնայ: Եւ թէ հոտ շգայ ու այլողնայ այս ծառութեամբս, նա խունանն դեռ չէ խոցուել:

Այլ դեղ այս շոր խունանիս.

Առ հաղըի ունդ նուկի մէկ, անմեռկի բազկի ջուր՝ նուկի մէկ, վարթի ձէթ՝ թուղթ մի, զաֆրան՝ թուղթ մէկ, խաշխաշի քամուկ՝ կէս թուղթ, կաւզայի հունդ՝ թուղթ մի, թաժալ աւշընդրի ջուր՝ թուղթ մի: Լեսէ զդէղերս ու խառնէ ընդ ջրերն և լից զինք յարճինէ աման և պահէ, և եթ ի կարիք լինիս, առ ի յիրմէ մթխալ Գ(3) և խառնէ կէս||(103բ) թուղթ վարդի ձէթ և ընդ նուկի մի մեղրջուր, և լից Գ(3) աւր ընդ գրաստուն փողքն ի վայր, ու տուր իր խոտ, որ ուտէ յայն աւուրքն, որ կու ծառայիս զինք այս դեղովս, ու կապէ զինք ի գետեղեր, և ժամ ժամ ի շուրջ ած: Եւ այս փորձած դեղ է:

Այլ դեղ շոր խունանին, այն ազգին, որ գայ ընդ քիթքն սպիտակ ջուր.

Քամէ զսպիտակ խաղողն և առ յիրմէ նուկի ու կէս և խառնէ ի յինք լեսած մուռ մթխալ Գ(3), ուեանդ՝ մթխալ Գ(4), լեսէ և մանդր աղայ և մաղէ, և խառնէ յայն ջուրն, և լից ընդ ձախս քթափողն ի վայր: Եւ արա զայս եւթն աւր: Եւ բռնէ զքիմքն, որ շնչարգելի քիլ մի: Եւ այսպիսի ծառութեամբ լինի, որ բժշկի||(104ա) շոր խունանն, քաշվի ջղերն և կոկվի դէսի ի ներս, և զայ ընդ քիթքն հոտած ջուր: Եւ այս վասն այնոր լինի, որ յղուզն խոց լինի և դժար բժշկի: Եւ կարէ լինել, որ ներքելք քմացն աւելի մսեր կենայ: Եւ շեմ ի տեսնուլ պատեհ այսոր ծառութեանս, այլ և զանք զնել պարտ է: Եւ յորժամ կտրի ի կերոյ, գիտացիր, որ ի սիրտն հասել է և ոչ բժշկի:

[Դ]եղ գէջ խունանին.

Առ մեղրջուր նուկի Ա(1), հոռոմ ձէթ՝ թուղթ Ա(1), խառնէ ընդ իրար ու լից ընդ քթափողն երեք աւր: Եւ թէ տեսնուս, որ իշնու զիջութիւնն հեշտ ընդ քիթքն, դու առ կաղամբ նուկի մէկ, խուպայդ՝ նուկի մէկ, քուաթ՝ նուկի Ա(1), հին խողտի՝ նուկի մէկ ||(104բ), խաշէ զբանջրնիտ ու բամէ, ու զիր ի հաւանն ու ծեծէ, ու խառնէ զխողտինի հետ: Եւ առ և արա զիրենքդ գէդ խողկաղնի

մեծ մեծ, ու ձգէ յիրմէ ընդ գրաստուն փողքն ի վայր հինգ կամ
եւթն: Եւ յորժամ կլնու՝ դու խմցոյ իր շարապ խընդիսոնի: Եւ
զայս արա երեք աւր: Եւ հետ երեք աւուրն խմցոյ իր հին զինի ու
սել մորհամ հանչաք մի, որ զիտենաս, որ կարէ առնուլ գրաստուն:
Նա բժշկի, թէ լինի խոցն սուր ու յիշվաւզ: Ու թէ լինի սուր և յիշ-
վաւզ՝ դու խմցոյ իր մեղքուր հետ շորբորդ դեղին, զոր և մեր զիրքս
մեր ենք յիշել զինք ու գրել:

Այլ դեղ այս ցաւուս.

Առ ֆարխութզին ու կիպեռիս, ու ճաւշիր, ու ||(105ա) զընճպիլ,
ու վայրի քրեֆսի հունդ, ու զոֆայ, ու աղվանաղի, ու քիթիրէ, ու
զաֆրան, մուռ, սապո, ալիխաւր, քլիմելէք, համամայ, յերկայն
զրեանդ, բարակ խանդարիուն՝ յամէն ոնկէ շորս մթխալ, լեսէ ու
մաղէ, ու լից ի ներս կէս նուկի մեղր ու շաղէ, և արա հայնցեղ
զէդ կաղնի՝ զամէն մէկ մթխալ երեք ու ձգէ ընդ փողքն ի վայր՝
յամէն աւր մէկ մի, ու ձմեռն հին զինի լից ընդ փողքն ի վայր՝
կթխա<մ> մի, ու ամառն ջրի զինի՝ վ ի հետ քիչ մի վարդի ձէթ:

Վասն խունանի, որ ի զաւղվածքն լինի: Նշանք. յաւենա ի
գրաստոն թմբրութիմ, ու թուզնայ զլուխն ու ականջըն դէպ ի վայր,
||(105բ) և իշնու ընդ քթափողն ժանգզուր, ու ավրդնայ ամէն
մարմինն, ու ուսենայ զաւղվածքն պինդ ուռէց, և լարի ագոյն
մաղերն և շորնայ, և կախվի արանքն, և հանգնէ զոտվին ի դեհէ
դեհ:

Սառութիւնն այսպէս արայ. շառտէ զբաղկունքն և խարէ
զաւղվածնին զայն տեղն, որ ուռէցն կենայ, զորդ վարոցնի, որ
իշնու ի յիրմէ ջուր: Եւ ապայ [առ] աղցած քունյախա նուկի մէկ,
և զիր զինք ի նոր պուտուկ, և լից ի վերա հին զինի՝ նուկի երեք,
եփէ՝ որ մնայ կէսն: Եւ առ յիրմէ յամէն աւր թուղթ մի և խառնէ
ընդ ինք ջրկոտիմն և հոռոմ ձէթ թուղթ Ա(1), ջաւշիր՝ մթխալ երեք,
և կանգնէ ||(106ա)ցոյ զգրաստոն ի ցուրտ տեղ, և թէ յամառն լինի՝
դու մտոյ ի ջուր և շփէ և քերէ: Եւ թէ կեղեկի ի խարանացն ու խո-
ցերոյն՝ տեղեստանն ու բացվի խոցերն, նա պարտ է դեղզրել որ-
պէս զայլ խոցերն:

{Դ}եղ խոցերոյ.

Առ ժանգառ և արջասպն և խլխտիս, լեսէ ու մաղէ և շինէ
մորհամ հոռոմ ձիթով, և աւծնէ իրովն զկաշին:

Այլ դեղ խունանի, որ ի զաւղվածքն լինի.

Առ սատանայի խիարի տակ ծեծած՝ նուկի Ա(1), նատրուն,
որ ազգ մի ի բուրակնոյն, թուղթ մէկ, թուղթ մէկ մուռ, սապո՞
թուղթ մէկ, համամտ (=համամայ)՝ կէս թուղթ, վայրի դաղձն՝
թուղթ մէկ, ծեծէ ու մաղէ և խառնէ յիրմէ մթխալ||(106բ) հինգ և
նուկի ու կէս ջուր ու քիչ մի ժանգառ, խմցոյ գրաստուն:

Այլ գեղ այս ցաւուս.

Առ մկնսոխ ու խորվէ ու կեղեկ, ու առ զմէշն ու կշոէ մըթ-
խալ Բ(2), մեղր՝ թուղթ մէկ, հոռոմ ձէթ՝ թուղթ մէկ: Մեծէ զմկըն-
սոխն ու խառնէ ընդ հոռոմ ձէթն ու ընդ մեղրն ու ձգէ ընդ գրաս-
տուն փողքն ի վայր, որ կլնու, ու արա զայս երեք աւր՝ յամէն աւր
երեք տարպա. նա բժշկի:

Այլ գեղ այս ցաւուս.

Առ ճոն, աղայ ու արայ ալոյր, ու խառնէ ի հոռոմ ձէթ ու զի-
նի ու ջուր ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր:

[Ա]յլ նշանք խունանի, որ շոյտ բժշկի: Նշանն այս է, որ եր-
թայ ընդ քիթքն գիջութիւն ու լինի հոտած, ու չքա|| (107ա) շվի
փորն խիստ ի ներբ[ս], ու դիմէ յուտելն խիստ:

Խաւսեր (=խուրսեր), որ տան գրաստուն, որ վախեն թէ խու-
նանն լինի, տան իր երեք շորս աւր հետ յրաց, նա լինի խունանն,
և աւգոէ զարմանալի աւկտութիւն. առ վայրի բրեֆս նուկի Ա(1),
զաֆրան՝ թուղթ մէկ, լեռին դաղձն՝ թուղթ մէկ, յաճի խարտուկք՝
թուղթ մէկ, լեսէ և մաղէ և շաղէ բարկ բացախով, ու շինէ խուրսեր
մթխալ մթխալ: Եւ առ յիրմէ խուրս մէկ և լեսէ և խառնէ ի սպիտակ
գինի. թէ բուլկի կամենաս տալ, նա լինի գինոյն շաքն կէս նուկի, և
թէ մեծ գրաստու, նա լինի գինոյն շաքն նուկի ու կէս: Եւ խմցոյ
գրաստուն ու կանգնեցոյ յարձակ տեղ :

||(107բ) Ս. ՅԱՂԱԳՅ ՑԱԽՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՀԱՄԲ

Նշանքն այս է, որ է ֆընտու, հեվայ գրաստու խիստ, և լարի
ալինշքն, ու թունա զլուխն և ամէն զաւդվածքն, և փայտնայ ոտ-
վին, և կարի ի կերոյ, և ի սկիզբն այս ցաւուս՝ ինչի յերեք աւրն՝
լինի շունչն տաք, և հետ երեք աւուրն պաղ լինի շունչն ու այլընդլի,
ու խիփի աշվին, ու խիստ դժար շարժէ դամէն զաւդվածքն, ու
տքալով գողէ, և շկարէ բայլ փոխել քանձ խիստ դժար, և երբ
ընկնի՝ դժար ելնէ յոտն, ու լինի, որ բրտնի անդմունքն:

[Դ]եղ գայլցաւու, եր ուժով լինի.

Առ բողիկ հունդ ճանկ մի, լիսէ ու մաղէ ու զիր զինք ի պտլ(108ա)ուկ մի, ու լից ի վրայ նարընչի ծաղկի ջուր՝ նուկի երեք, ու եփէ զինք քաջ, ու առ ի վայր, որ եղկնայ, ու լից ի յիրմէ բաժին մի ընդ փողըն ի վայր, ու բաժին մի զիր հոռոմ զեղ, և առ ի երակ ու հան յարենէն աղէկ մի, և ապա կապէ զերկնին ամուր թիթեթնով, ու առ քացախ և չըխունէ ջրով և շողցոյ, և լից ի վրայ այլ մարմնոյն. և լինի ջրին շակքն լիտր ինն, և քացխին՝ լիտր ու կէս, ու լից ի վրա ուսացն, որ իշնի հետ ի հետ ի վրայ բաղկացն, ու չորս աւր զարի մի՛ տար գրաստուն, որ ուտէ, ու հետ չորս աւուրն կանգնեցոյ զինք երեք աւր ի գնացք ջուր, որ թաղվի ոտքն ինչվի քովքն ի ջուրն, ու չէ պարտ կանլ(108բ)գնեցնել քանձ երեք աւրն այլ աւելի ի ջուրն: Եւ յամէն աւր տարպա մի հան զինք ի ջրէն ու աւծնէ զինք անպակ զինով ու հոռոմ ձիթով աղէկ շատ ու մարձէ դէպ ի վայր: Երբ տեսնուս, որ ոտվին աղէկնա ու թուլնայ ու քայլէ աղէկ, դու զինք մտոյ այլ վայր ի ջուրն ու հան այլ վայր, ու աւծնէ ու անցմնեցոյ: Ու երբ տեսնուս, որ զարձմորտէ, դու տուր իր զայն խոտն, որ ասեն իր անուն կոռի ազի և կու բուանի ի զաշտն և իր ծայրերն լինի կուկէո, զէթ կորի ազի, և վասն այսոր կոշի այս անունս իր: Եւ լինի այս ցաւս ի ջրին խմելոյն, ևս առաւեկ՝ եր կալնու զայն ցաւն, որ ասենլ(109ա) իր ըրիաւան: Եւ այս ցաւս վատուժ է. ճարտար հայընդի:

Այլ բժշկութիւն գայլցաւուն.

Թէ լինի ի զարոյ՝ տուր ցորեն, որ ուտէ: Եւ թէ լինի ի ցորենէ՝ դու տուր զարի, որ ուտէ:

Այլ բժշկութիւն այս ցաւուս.

Եր իշնի այս ցաւս ի մէջ սմբակացն և մնայ ի տեղն, դու ծառայէ այն ծառութեամբն, որ ասցել ենք ի սմբակաց ցաւութիւնն:

Այլ բժշկութիւն այս ցաւուս.

Առաջինքն են ասցել. առ սուղաէ, որ է խոտ, լիսէ և մաղէ, և առ զրամովն քանի զրամն, շալկէ երկու տարպայ և փչէ ընդ զրաստուն թթափողքն, և անցմնեցոյ զինք աւր մի և զիշեր մի, ու տես զջուրն, որ իշնու ի քթացն, թէլ(109բ) յիստակ լինի, նա ճար-

տար ողջնայ, ոռւ արծէ զինք կանաց խոտով, և թէ զեղին զարկնէ չուրն, որ իշնու ի քթացն, դու զիտացիր, որ գրաստն մահու է:

ՄԱ. ՅԱՂԱԳՍ ՈՒՌԵՑԻ Ի ՔԱՄՈՅ, ԵՒ ՈՐ ԶԿԱՐԷ ԹԸՐՔԵԼ, ԵՒ ԳՈԶԵԼ

Նշանքն այս է, որ քըթահրի ու ջանայ, որ նստի ու դառնայ, հայի դէպ ի յետ:

Բժշկութիւն այս ցաւուա.

Առ հին զինի երկու նուկի և տասն նուկի ջուր և լից ի վրայ: Եւ առ խոզտի նուկի մէկ և անգուժատ՝ դրամ տասն, ծեծէ զանգուժատն ու խառնէ ի հետ քիչ մի ալոյր, ու խառնէ ի ջրած զինին, ու եղկցոյ ու զիր հոռոմ զեղ, և ապա առ կանաց զնձի ջուր ||(110ա) նուկի մի և խմցոյ քիչ քիչ. նա աւգտէ:

ՄԲ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽՈԽՆ, ՈՐ ԿՈԶԻ ԿՈՏՐՏՈՒԿ*, ԵՒ ԱՅՆ ՔԱՄՈՅՆ,
ՈՐ Ի ՅԱՅՍ ՅԱԽԵՍ ԼԻՆԻ

Նշանքն այս է. եթ տեսնուս, որ գրաստն ուռենայ ու փրսի, որ քրտնէ, որ քիրտն ընդ ինք ի վայր իշնու ու կտրի գոզն ու թրիռն:

Բժշկութիւնն] այս է.

Առ ի յայն խոտէն, որ է ի տերեն զէդ ակներ ու սպիտկոյն և առնու հունդ և ուննա կուտ, ծեծէ ու քամէ զիր ջուրն ու խառնէ ընդ արդար եղն և խմցոյ գրաստուն:

ՄԳ. ՅԱՂԱԳՍ ՄԱՂՁԻՆ, ՈՐ ԶԱԽԵՆԱՅ

Նշանքն այս է. ձգի ոտվին ի կանգուն և խփէ զավլին, և զողն լինի կարմիր, հաստնայ ու ուռենայ զլուխն ու փողըն:

Բժշկութիւնն այս է.

||(110բ) Առ սպիտակ խարբախ և սղանձի տակ՝ յամէն մեկէ մասն մի, պարսիկ աղ՝ մասն և կէս, ծեծէ և մաղէ և փշէ ընդ քիթն, որ աշքն արցվէ: Ու եթ տեսնուս, որ աշքն արցվէ, դու զզլուխն ցած կապէ, որ իշնի այն չուրն, զոր յղուզն կենայ ի խոցէն: Եւ մէկայլ աւրն մի՛ տար իր ջուր: Եւ ապա առ երկու հաւու-

* Յանկում՝ կոտրտուս:

կիթ և կոտրէ յաման և խառնէ ընդ ինք շրիկ ձէթ՝ նուկի մէկ, և լից ընդ քթափողն ի վայր: Եւ արա զայս յերեք աւրն, որ այլ յառաջ չուր խմցնես, աւկտակար է աստուծով:

Վասն քամոյ, որ ի մաղձէ լինի, շորցնէ զոտվին:

Կորէ զինք ի կերոյ զիշեր մի: Եւ ապա առ քացախ և շրիկ ձէթ՝ յամէն մեկէ նուկի Բ(2), ||(111ա) նուշ՝ մթխալ հինգ, աւշնան և քրեփսի ունդ՝ յամէն մէկէ մթխաւ երեք, լեսէ և մաղէ և քշտէ, որ միամորթի ընդ ձէթն ու ընդ քացախն, և խմցոյ զրաստուն, նա աւկտէ:

ՍԴ. ՅԱՂԱԳՄ ՅԱՒՈԽՆ, ՈՐ ԿՈԶԻ ՔԱՐԱՔ

Նշանքն այս է. գրաստն գահըլնա ու ուռննայ կուրծքն, որ ի մէջ երկու ձեռացն պինդ ուռէց լինի ու բարձրաբոլորգոյն, ու քանի երթայ զարնա, ու հայնց կարէ լինել, որ ցրուի ուռէցն ի փորն ու ի յամէն մարմինն, ապա շատն այն լինի, որ ի կուրծքն լինի ու ի փորն, ու կարէ լինել, որ պատոի ու ելնէ յիրմէ թարախ խիստ շատ:

Բժշկութիւն այս ցաւուս.

Աւծնէ յամէն աւր արդար եղ||111թ)ով ու աղով և ած ի շուրջ յուշկիկ. թէ հայնց է, որ պատոի՝ նա եղաւ, ու թէ շպատոի՝ դու զիր ի վրայ զեղ զայս. առ սև ձոյթ նուկի Գ(3), շարհուտ՝ թուղթ մի, ճաւշիր՝ նուկի երկու, ջուհուտ մուղլ՝ նուկի մէկ, հալէ զամէնս ու զիր ի ներքս քիշ մի հոռոմ ձէթ: Ու թէ հինայի ձէթ զնես՝ նա լաւ է: Ու զիր ի վրայ և, թէ շպատոի, դու ճեղքէ ի ներքնէ, որ ելնէ ու ելնէ թարախն: Ու եր սրբի ամէն թարախն ու ելնէ, դու ծառայէ զտեղն որպէս զայլ խոցերն, որ սահմանած է:

ՍԵ. ՅԱՂԱԳՄ ՅԱՒՈԽՆ, ՈՐ ԸՆԴ ՆԵՐՔՍԵԽԻ* ՈԽՆ[Ն]ԱՅ

Իշնու ընդ քիթն թարախ քիթքին և չուննայ հոտ, որ արց-||112ա)վէ աշվին ու զալիկն ուրդէ ի լման:

Բժշկութիւնն այս է.

Առ զմրտին ծաղիկն ու չորցոյ և կշռէ յիրմէ մասն մի, պըզ-պեղ՝ կէս մասն, մեղք՝ զայն շակքն, զոր յինք շաղլէ, շամիշ ի կտէն հանած՝ քանի [մի], մեղրն՝ երկուք, ծեծէ զամէնն ու միամորթէ ու առ յիրմէ քանի հաւուկիթ մի, ու տրորէ յանպակ զի-

* Յանկում՝ ...որ ընդ փորքացն ներքուն է:

նին, ու լից ի ներս քիչ մի հոռոմ ձեթ, ու լից ընդ գրաստուն փողըն ի վայր: Եւ այս բժշկէ զամէն ցաւ, որ ի գրաստուն փորոք լինի: Այլ բժշկութիւն այս ցաւու:

Առ ցորեն սպկիկ ընդրած ու թրջէ ի հին գինի գիշեր մի: Ու ալկէ զինք իրովն յամէն յիրիկուն կէս մարծալան: Տասնուշորս ||(112բ) գիշեր հետ իրաց. նա բժշկի:

Այլ բժշկութիւն այս ցաւու:

Առ արդար եղ նուկի Բ(2), սինապ ծեծած՝ կէս նուկի, խառնէ ընդ իրար ու ձգէ ընդ փողըն ի վայր՝ յամէն երիկուն քանի հաւուկիթ մի:

ԵԶ. ՅԱՂԱԳՍ ՑԱԽՈՒՆ, ՈՐ Ի ՍԱԼՏԱՅԷ ՎԻՆ

Նշանքն է. խոշրնայ կաշին, որ եր շաւափինս՝ նա շոր ցուցնէ, ու կտրի ի կերոյ, ու ուռենա կուրծքն, լարի պնչերն, կարճնայ շունչն, ու շկարէ խմել ջուր, ու լինի մարմինն շող, ու փորն աւելի տաք լինի, քանձ զայլ մարմինն, ու նըգայ ի թրքելն:

Բժշկութիւնն] այս է.

Առ հոռոմ ձեթ ու հացի բուրակ, ու մեղք ու եղի ջուր, ու շինէ հոռոմ դեղ և դիր կոտոշով ||(113ա), ու դալար խոտ տուր, որ ուտէ: Ու թէ դարալ (=դալար) խոտ շկենայ, զու զշոր խոտն թաց ի մեղքուրն ու ցանէ ի վրայ բիշ մի բուրակ ու տուր, որ ուտէ: Ու տուր իր ուտելոյ ի ժմէ ժամ ճակընդզի բազուկ: Ու փորնթացոյ զինք անպակ գինով: Եթ տեսնուս, որ քշկնայ փորոյն տաքութիւնն ու գոզէ ու բբթէ (=թրքէ) ու շնըգայ, ու լինի թրիքն սպկիկ, դու գիտացիր, որ բժշկել է:

Այլ բժշկութիւն.

Առ քահրապա գրամ երեք, պապունիճ՝ դրամ չորս, լեսէ և խառնէ ի տղայի գոզ և լից ընդ գրաստուն փողքն ի վայր, նա բժշկի աստուծով:

ԵՒ. ՅԱՂԱԳՍ ՑԱԽՈՒՆ, ՈՐ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ԳԼԽՈՅՆ ՂՈԽԸՆ ՎԻՆ

[Եթէ ի] ձմեռն [լինի՛]||(113բ) նշանքն այս է. ձգէ զզլուխն ի դեհէ դեհ ու մթընայ աշվին:

Եթէ յամառն լինի՝ նշանքն այս է. որ այլընդլի գրաստն և շախէ զզլուխն, դողա բազկունքն, թունայ ակընջվին, մթնայ աշքն, շունչն պաղ լինի:

Բժշկութիւն այս ցաւուն, որ ի ձմեռն լինի.

Առ շայերեն(“) դրամ տասն, սնֆուլ, հայխունկ՝ հինգ հինգ
դրամ, ճաւշիր՝ դրամ երեք, խախուլայ՝ դրամ չորս, ղեղինխունկ ու
կամ զաֆրան՝ դրամ չորս, շաբար տապարգի՝ դրամ տասն, ֆրան-
ճիլ մուշկի ունդ՝ դրամ ՛ասն, լիսէ ու մաղէ ու դիր ի պուտուկ
մի, ու լից ի վրայ չուր նուկի ԺԲ(12) ու եփէ, որ մնայ չորեք
ակն: ||(114ա) Ու առ յիրմէ ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր՝
յամէն աւր նուկի երեք:

Այլ բժշկութիւն այս ցաւուս. փորձած:

Առ մրտի տակ նուկի երկուք ու լից ի վրայ չուր լիտր մէկ,
ու եփէ, որ մնայ կէսն: Եւ ապա առ բաշխտակ և զրեանդ՝ յամէն
մէկէ չորս դրամ, զաֆրան, ֆռանկի մուշկի հունդ, յերկայն պըղ-
պեղ՝ յամէն մեկէ դրամ չորս, լիսէ ու մաղէ ու լից ի յայն չուրն,
ու դիր ի յինք քիչ մի շաբար ու շրիկ ձլթ նուկի մէկ, ու զարկ
ընդ իրար, ու արայ զինք երեք բաժին, ու խմցոյ զինք յամէն աւր
բաժին մի:

Այլ բժշկութիւն այս ցաւուս.

Կտրէ զդրաստն ի կերոյ ի կէս զիշերմնէ ի վեր և առ հին
զինք ||(114բ) նուկի վեց, չուր՝ նուկի չորս, չրխոնէ, ու առ պղպեղ՝
հատ յիսոն, շաման և ցրդոյ պտուղ՝ յամէն մէկէ դրամ չորս, լիսէ
և մաղէ, ու խառնէ ի յայն չրխոնած զինքն, ու կոտրէ ի վրայ իր
հաւուկիթ հինգ, ու զարկ ընդ իրար ու լից ընդ գրաստուն փողքն ի
վայր, և ած ի շուրջ յուշկիկ յուշկիկ, ու կանգնեցոյ զինք ի ջըր-
տեղ: Եւ հետ երեք աւուրն զինէ խոչքոր մի, ու առ զարիւնն յա-
ման մի, ու լից ի վրայ իր հինք զինք նուկի երեք, չուր՝ նուկի
երկուք, և կոտրէ ի վրայ հինգ հաւուկիթ: Եւ առ խոզի գումն և
պատոէ ի ներս, և դիր ի յինք քիչ մի շաման, ու խառնէ ընդ այս
ջր ||(115ա) խոնած զինիս ու ի յարոյնս ու լից ընդ գրաստուն
փողքն ի վայր, ու կտրէ զինք ի յուտելոյ՝ ինչվի յերկու պահն
ցերեկուն, ու զինք ի յես կապէ յայլ գրաստվէ:

Բժշկութիւն այս ցաւուս, որ յամառն լինի.

Խարէ յակընջթոռքն երկու խարանք, ու դիր խարանք ի
յանթքն ու ի փորոյն վերայ խաչք. և թէ մատակ լինի՝ յարգանդն
այլ: Թէ տեսնուս, որ աշքն ի լոյս գայ ու զարձվորտէ ու շուզնա
շունչն ու բարձրնայ ականջն, դու այլ մի՛ ծառայել, զի շէ ի սնիկ,

և կտրէ զինք ի գարոյ հինգ աւր ու առւր իր առվոյտ ու յերդ կռմ առվոյտի ուն[տ], որ ուտէր թէ աջողցաւ աւրհնել է աստուած, և թէ||(115բ) ոչ՝ դու առ զեղէզն, այրէ ու առ ի յիր այրած մախրէն զրավլ երեք և ծրարէ զինք ի սերտ քթեթ ու կապէ պինդ, ու զիր զինք ի ջուրն, և առ զեղնխունկ լիսած կէս նուկի ու հինգ հաւուկթի դեղնուց, շրիկ ձեթ՝ նուկի մէկ: Եւ լից զամէնն յայն ջուրն ու զարկ, որ միամորթի, ու լից ընդ փողքն ի վայր: Առ առ ի յայն փշէն, որ ասեն իր մաւրմուր, հան ի յիրմէ երկու փոքր տակ ու եփէ. յերկու նուկի ջուր քաջ եփէ ու խառնէ ու քամէ: Եւ խառնէ ի ներս արդար եղ կամ հինայի չէթ ու զարկ, որ միամորթի, ու մտոյ զձեռքդ ընդ զրաստուն ոռաղին ու սրբէ: Եւ զիր զայս զեղերս իր հոռոմ դեղ:

||(116ա) Ս. ՅԱՂԱԿԻ ԽՈՒՄՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍՏՈՒ

Նշանքն այս է, որ այլընդայլի զրաստն և լարվի պնչերն, կախէ զգլուխն և իշանայ, չկանգնի ի մէկ տեղ, կտրի ի կերոյ: Բժշկութիւն է.

Որ առնուս բվի զուզ ու զիր լեղին ու արծվոյ ճրագու մթխալ մէկ ու խառնէ ընդ իրար, ու խառնէ ի կարմիր ործ խոզի զոզ ու լից ընդ քիթքն ի վայր, որ փոքրնքտայ. և այս զեղովս մարդիքն այլ բժշկութիւն:

Ա. ՅԱՂԱԿԻ ՅԱԼՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՊԱԽԹԵՑԱՆ

Նշանքնայս է. տեսնուս զզոզն, որ գոզէ զէդ պտտոր (=պըղտոր) ջուր, ու քշիկ փրշի յայս ցաւէս:

Իր բժշկութիւնն այս է.

Առ զարի ու թրջէ ի քացախն ու խառնէ ի հետ աղտոր||(116բ) ու ալկէ զինք իրովն:

Այլ բժշկութիւն.

Առ ալոյր ու մորմենոյ տերեւ շոր՝ լիսած ու խառնէ ընդ զարի փոխինդ, ու շաղդէ ջրով, ու շինէ խուրսեր, ու ջրխոնէ զքացախն, ու տրորէ յինք խուրս մի, ու տուր, որ խմէ:

Այլ բժշկութիւն.

Լեսէ զմորմենոյ տերեն ու զիր ի ջուրն, որ խըմէ: Ու առ խցաւ զժար է, ու չէ ի թուել ինձ, թէ զրաստ կարէ յայսոր փրշել:

Նշանքն այս է*: իր բժշկութիւն.

Քաշէ ձար մի յիր ագոյն ու կապէ զթըթին տակն պինդ ու թող զինք հինգ աւր, ու ծխէ ներքեն անծրութ. նա կտրի ու ընկնի ու բժշկի:

Այլ բժշկու||(117ա)թիւն.

Ի յորտեղ որ ենէ ի մարմինն թութ, առ խիմաղիա կաւ, լեռէ, մանտրէ ու խառնէ մրտենի ձիթով, ու աւծնէ. բժշկի:

ԿԱ. ՅԱՂԱԳՍ ՈՒՌԵՑԻ, ՈՐ ՎԻՆԻ ՅԱՐԱՆՔՆ ԵՒ Ի ԶՈՒՔՆ

Նշանքն այս է. կենայ ուռէցն յարանքն ու ի ձուքն, ու կենայ զամէն աւաղ:

Բժշկութիւն[ն] այս է.

Կանգնեցոյ զինք ի գնացք ջուր, որ դար ի վայր լինի, հայնց, որ եր դիպի ջուրն ի յոտքն, նա իշչէ զոտքն:

Այլ դեղ: Առ պախրի ճրագու ու մոմ ու բուրակ, եփէ ու շինէ մորհամ ու աւծնէ զարանքն ու ձուքն, ու լից ի վրա իր խիստ պաղ ջուր: Ու թէ ծովու ջուր լինի՝ նա այլ աղէկ է:

Այլ դեղ: Խոթէ բարակ ասղաւմ ||(117բ) ի տոշփողն ու ապա ծփէ բարկ բացախով: Եւ կայ, որ եղճով կու քշտէ ի ջրփողն, նա կու բժշկի:

Այլ դեղ: Առ շաման ու բակլայի ալոյր ու շամիչ ի կտէն հանած՝ յամէն մէկէ շակը մի, ծեծէ ընդ իրար, որ միամորթի, ու աւծնէ: Եւ թէ ուռէցն ուժով լինի, խարկէ զինք շող հոռոմ ձիթով:

ԿԲ. ՅԱՂԱԳՍ ՑԱԽՈԽՆ, ՈՐ ԹՈՒՆԱՅ ԱՐԱՆՔՆ ՈՒ ԶՈՒՔՆ

Բժշկութիւնն այս է.

Առ վարդի ձէթ և հոռոմ ձէթ ու խառնէ ընդ իրար, ու լից ընդ փողքն ի վայր:

Այլ դեղ: Առ կաթն նուկի Ա(1) ու խառնէ յինք շաքար, որ քաղցրնա, ու լից է(7) աւր ընդ փողքն ի վայր: Թէ շրժշկի՝ դու արա ինչվի տասնուերկու աւրն:

* Զեռագրում բացակայում է այս հիվանդուրյան նշանների նկարագրուրյանը:

Այլ գեղ: Առ շիրիկ ձեթ*...

||(118ա)...ար խոտ և թէ ինք արծի՝ նա բարոյ նշան է: Եւ թէ չգտվի իսոտ, դու թաց զիր ալիկն ջրով և տուր, որ ուտէ:

Այլ զեղ ելընդի, որ կոչի տուպիայ, որ եր պատոէ բայտարն, նա ենէ յիրմէ յիստակ ջուր ու թանայ զտաւպրակն. առ որթոյ թրիք շող շող, զիր ի վրայ պատռած տեղացն. նա աւկտէ: Ու տես, որ այլ արոյն շթողուս յայլ տեղաց, քանձ ի ճտէն: Եւ թէ յայլ տեղաց հանես՝ նա ահօկէ իր: Եւ պարտ է լուծիլ զփորն բուրկով և սատանայի սեղկով: Եւ թէ այս ելունդս ենէ՝ յակնջթոռքն պատոէ, և ծառայէ պաղլեղով և մեղրով:

Այլ գեղ այս ելընդիս, որ ենէ խէլ երկի և շժմնէ ճարտար ու հանէ:

Բժշկու(118բ)թիւնն] այս է.

Մտոյ զձին ի բաղանիս և ծփէ զայն ելունդն, և թէ պատոի ի դրուցեէ, նա բժշկի: Եւ թէ ի ներքսուէ պատոի, նա դժար է: Առաւել թէ շելնէ ի քիթքն իրը, նա զիափի ընդ ինք լուծումն և կտրի ի կերոյ, զի այն ուռեցն ի ստամոքն վարէ զյեկլվածն ու ուռենայ փորն և խոշրնա կաշին: Եւ երբ այսայէս լինի իր, հնանայ ցաւն, նա չբժժշշկի: Եւ թէ նոր լինի ցաւն, նա ծառայվի այսայէս. առ խնկի փոշի դրամ մէկ, լիսէ և խառնէ յամպակ զինին՝ նուկի երկուք, ու փոքնքտացո. իրովն բժշկի:

Այլ գեղ այս ցաւու և այն, որ ուտիճ կոչվի: Առ գնդին զառիկ ու կարմիր զառիկ՝ յամէն մէկէ զրամ տասն: Եւ առ ի յայն բարէն, որ զտ||(119ա)վի և կրին մէջն, որ լինի այրած, լուայ և թնջրով <հ> առ յիրմէ քառսուն զրամ, լիսէ և մաղէ և լից ի վրայ բարկ բացախ, որ ծածկէ զինք: Եւ բաննի խմէ զքացախն՝ դուն այլ լից երեք շորս տարպայ, ու խառնէ զինք երեք աւր հետ իրաց, և քանի խմէ զքացախն՝ դուն այլ լից և շորցոյ, և լիսէ և մաղէ ի նաշէ մաղ, և եր սնկիս՝ դու առ յիրմէ ու լուա բարկ բացիով ու շորցոյ ու ցանէ ի վրա խոցին. բժշկի կարողութեամբն աստուծոյ:

ԿԳ. ՅԱՂԱԳՍ ՈՉՅԻ

Եր բնակի ի զրաստն, նա պիտի զայ մաղն ի վայր և խոշրնայ կաշին:

* Զեռագրի ժ պրակի վերջին թերք բնկած է: Էշանամարները դրվել են այս թերքի բացակայության ժամանակ:

Բժշկութիւնն այս է:

Առ զմարեմա տակն, լեսէ և մաղէ ա խառնէ ընդ հոռոմ ձէթն,
ու աւծնէ զգրասոն: Եւ մէկայլն աւրն լուայ շող||(119ր) շրով և
մախրով. և այսովէս ծառայել զգրաստն աւրեր, որ բժշկի:

Այլ դեղ: Առ սնդիկ ու կոտրէ և աւծնէ զգրաստն զայն տեղաս-
տանն, որ մազն փետեալ է, և խառնէ յիր գարին յամէն ափկից
երեք շորս հատ կանիփայտիղ:

Այլ դեղ: Առ պաղեղ թուղթ մի, զպիալճակէ՛ կէս նուկի, լեսէ
և մաղէ: Եւ կանգնեցոյ զգրաստ յարեգակն և շփէ յինք զդեղաւ:

Այլ դեղ: Եփէ զթրմուզն ու զիր ջուրն ու լուայ իրովն զգրաս-
տըն և թող, որ ցամքի: Եւ ապա եռցոյ զան ձոյթն ու զհոռոմ ձէ-
թըն ընդ իրար և աւծնէ իրովն:

ԿԵ. ՅԱՂԱԳՍ ԿՈԼԻՆԶ ՑԱԽԱԽ

Նշանքն այս է, որ թուղնայ շնիքն ու բոքնվի զաւդվածքն ու
դողայ||(120ա), նստի ու թասլտի, ու ելնէ ի բերնէն փրփուր:

Բժշկութիւնն այս է.

Առ թառանգոյն դրամ տասն ու արծկէ զինք յերեք նուկի շող
չուր ու լից ընդ փողքն ի վայր, և անցմնցեցոյ:

Այլ դեղ: Առ դեղին հլելիմ հանած ի կտէն դրամ տասնուշինգ,
մրտի տակ՝ դրամ երեք, ծեծէ, որ մանտրի, ու լից ի վրա ջուր՝
նուկի տասն, եփէ, որ մնայ նուկի երկուք, եւ քամէ ու զիր հոռոմ
գեղ, ու կտրէ զգրաստն ի կերոյ, և անցմնցեցոյ: Եւ այս դեղս
աւկտէ ոչխարաց և պախրէաց:

Այլ դեղ: Թաթիսէ զձեռքդ ի մեղքն և ի ձէթն, ու մտոյ ի
գրաստուն որովայնն ու սրբէ: Եւ առ մեղք և եփէ, որ թանձրանայ,
ու խառնէ յինք սակամունի՝ դրամ մէկ, և ամբրաւ շաղղծոյ՝
դրամ||(120ր) երեք, ու շինէ զինք զէթ հաւուկիթ մի ու զիր ի
գրաստուն որովայնն:

ԿԵ. ՅԱՂԱԳՍ ՄԿԱՏԱԽՈՒԹԵԱՆ

Նշանքն այս է. քրտնէ ագէտակն և ապա այլ մարմինն, թուղ-
նայ զլուխն, շանթնայ աշվին, ովոյ ել ու ելէ, որ վազէ, ու շկարէ
վաղել, և թէ ձգեն յականչն խիճ մի, նեւ շյիմնա, որ թախթիէ, ու
ձգէ ու կտրի ի ջրէ:

Բժշկութիւնն այս է.

Կապէ ներքեւ ականջթոռացն խէլ փողացն ու պատռէ շուրջանիկէ ու լից աղ ի պատռածն ու շփէ սերտ, և ապա խարէ զպատռածն:

Այլ դեղ: Ճեղքէ յականջթոռքն, և առ մուշք դրամ մէկ, և աղայ զինք հին զինով, և լից ընդ քթափողն ի վայր, որ փոքնքտայ:

|| (121ա) ԿԶ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԴՐԱՍՏՆ ԿԱՆԱԶ ՏՈՒՂՏ ՈՒՏԷ

Նշանքն այս է. թուլնայ զաւդվածքն, առաւել՝ պոտնզն:
Բժշկութիւնն այս է.

Առ ուսան ու եփէ ու առ զջուրն ու լից ի ներք քան ի զինք
հին զինի ու խմցոյ զրաստուն: Եւ առ բուրակ զրամ տասն,
լիսէ ու յերոյ զինք քացիսով ու դիր ի յինք քիչ մի շաքար և
զարկ, որ միամորթի, ու աւծնէ զգրաստուն ամէն մարմինն, զար-
դի բաղկացն, և աւծնէ արդւր եղով զպոկունքն:

Այլ ուժով դեղ: Առ լիսած զնճպիլ մթխալ տասն ու եփէ
զինք յարդար եղ, որ լինի թուղթ մի, և աւծնէ իրովն զգրաստուն
պոկունքն:

ԿԷ. ՅԱՂԱԳՍ ՈՒՏԻՉ ՑԱԽԱԽ

Նշ|| (121բ) անքն այս է, որ խոցն աւր ըստ աւրէ ուտիլի ու
լինի խոց հոտած, ու կարէ լինել, որ լինի ի զրաստուն ագէտակն,
նա կարմրի ու ուտիլի: Ու թէ պէտ չայնեն՝ նա կտրի ու ադին
ընկնի:

Բժշկութիւն, զոր ասցել է Ուսուֆն. փորձած:

Առ կարմիր զառեկ ու դեղին զառեկ ու կալէքար ու խախիայ՝
յամէն մէկէ թուղթ մէկ, սպիտակ աւշնան և ապակ կիր՝ յամէն մէ-
կէ թուղթ մէկ, լիսէ զամէնն ու մաղէ, ու շաղղէ զինք զինով ու
դիր յարեգակն, որ չորնայ, ու աղա զինք ու պահէ, ու եթ սնկիս՝
առ մուշացն ու թաթխէ զինք ի ջուրն ու թաթխէ ի դեղն ու դիր ի
վրայ խոցին՝ յերիկնէն ի վեր ինչվի լոյսն, ու վաղն հան ու սըր-
բէ: Եւ|| (122ա) <վ> այլ վայր դիր ինչվի աջողնայ: Եւ թէ լինի
տեղն հայնց, որ շկարես դնել մուշախայով ու կապել, դու ցանէ
զդեղն ի վրայ ու դիր ի վրայ կաղըմբի տերեն, ու ծածկտէ զտերեն
երկու երեք տեղ, և դիր ի վրայ մուշախայ:

Այլ դեղ այս ցաւուս. առ մաքոյ պճեղն և այրէ ու լիսէ, ու
խառնէ ի մեղքն, ու դիր ի վրայ խոցին:

Այլ դեղ ուտչի և այլ խոցերոյ: Առ բամբկի կտի մէջ, լեսէ
ու մաղէ, ու ցանէ ի վրայ խոցին:

ԿԲ. ՅԱՂԱԳՍ ՇՈՒԽՆԱԽԻ, ՈՐ Է ՔԱՅՊԱՐՆ

Եւ նշանքն այս է. նման է այս ցաւս ի շուկակն, ու շառնու
զամէն ձեռն, և ելնէ յիրմէ դիմութիւն և թարախ:

Բժշկութիւնն է:

Գիտացիր, որ իշվածքն, որ իշնու ի շորս ոտքն ու*||(122բ)
իշնու ի բաղկացն ի խորու տեղեստանն, նմանէ ի շուկակն, ելնէ
ի յիրմէ ջուր և թարախ ու կծկի ոտքն: Եւ այս ցաւս, երբ բնակի ի
գրաստն, նա վինի ի զաւդվածաց խոռնան: Եւ աստուած է ճշմար-
տագէտն:

Առ զբուրակն և յերոյ շող ջրով, և աւծնյէ իրովն զբածպարն,
ու թող երեք պահ, և ապա առ ժանգառ ու մոմ ու հոռոմ ձէթ, ու
շինէ աւծնելիք, ու աւծնէ յամէն աւր երեք տարպայ: Եւ առ
երակ ի բաղուկն ընդ ներքսէ և ընդ դրացէ, ու շառտէ զբած-
պարն, ու լուայ զինք անպակ գինով, ու լեսէ զխախիայն, ու շփէ
զինք ինչվի հաստնայ ու թանձննա շառտուկքն, ու լեսէ զխախիայն
ու||(123ա) խառնէ ընդ սկ ձոյթն, ու ցանէ ու շփէ զինք ի վրայ:
Եւ ի ջրոյ մտցնելոյ պատրաստ կալ:

Այլ դեղ. փորձած: Լուայ զբածպարն շող ջրով սպկիկ, ու թող,
որ ցամքի: Ու առ մեղր դրամ քսան ու դդմի կտոր ու այրէ, որ լի-
նի գործելի, լեսէ և խառնէ հետ մեղրին, և աւծնէ զբածպարն, ու
կապէ քթեթով՝ երեք աւր հետ իրաց: Եւ հետ երեք աւուրն արծէէ
ու տես թէ աշողցաւ: Ու թէ շաջողցաւ՝ դու աւծնէ երկու երեք հետ
այլ՝ ինչուր աջողնայ:

Այլ դեղ: Առ քուշնայի ալոյդ, խառնէ ի զինին ու ի մեղրն,
ու աւծնէ իրովն, հայնցու թէ առնուս զբակլայի ալոյդն:

Այլ դեղ: Առ զինովին շոր ազբն ու եփէ ի չուրն, ու||(123բ)
յերոյ զինք քացխով ու աւծնէ:

Այլ դեղ: Լեսէ զզխթորն ու ցանէ ի վրայ. բժշկի:

Այլ դեղ. փորձած: Առ հոռոմ ձիթի մրուր ու պինդ զինի,
զարկ ընդ իրար, ու լից ի յինք քիչ մի հինայ, ու դիր ի վրայ քած-
պարին:

* Զեռ. կրկնված է՝ իշնու ի շորս ոտքն ու

Այլ դեղ: Հեսէ զքար մարտսանքն, որ լինի զէղ ծարոյր, ու լից ի ներք բարկ բացախ քիչ մի ու հոռոմ ձէթ, ու շինէ հավնդեղ ու աւծնէ:

Այլ դեղ, որ ի ձեռվին լինի: Առ սև թուզ հատ տասն ու թրչէ զիշեր մի ի բացախն, ու հան ու ծեծէ, ու դիր ի վրայ ու կապէ:

Եւ զայս դեղերս, զոր ասցաք, յառաջ լուայ զիսոցն ու թող, որ ցամքի, և ապա դիր ի վրայ զդեղն:

|| (124ա) ԿԹ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽՈԽՆ, ՈՐ ԿՈԶԻ ՊԱՏԽՈԽՆԱՄ

Նշանքն այս է. զրաստուն ոտքն ուռենայ հետէն ու հետէն նստի. և կարէ լինել, որ ելնէ ի յիրմէ զեղին չուր:

Բժշկութիւնն } է.

Առ տղափ տակ և ճեղբէ ու հան զմէջն, լեսէ ու աղայ ու խառնէ ընդ խողափ, որ թաժայ լինի, ու հան զինք ի վրայ քթեթի, ու դիր ի վրայ խոցին:

Այլ դեղ: Առ զդեղն, որ կոշի ֆախրի* հութ, զրամ ութ, փիճոյ խէժ՝ զրամ շորս, շարհոտ՝ զրամ ութ, աղայ ու շինէ <ու> հոռոմ ձիթով ու մոմով մորհամ ու աւծնէ իրովն զուռէցն:

Այլ դեղ, Ապի Ռւսութին ասցած: Առ զշահմիհանդալի թուփն իր տակովն, եփէ ու ծեծէ ու դիր ի վրայ ուռէցին ու կապէ|| (124բ), և ապա ածելէ զինք ու թող յինք տզրուկ: Եթ թողու տղրուկն, զու առ մանզր աղ ու շփէ զտեղն խիստ քաշ՝ թէ ուժով լինի զրաստն, զու խայծղնէ զինք ու դիր ի յինք զճիճին, որ կոշի յիշոցք, ու պաղլեղ, ու շողոյ ու աւծնէ զինք տասն աւր հետ իրաց: Եւ ապա աւծնէ զիսոցերն, որ լինի յետն, վարդի ձիթով: Եւ եթ խոցնայ, զու ծառայէ զէղ այլ խոցերն:

Հ. ՅԱՂԱԳՍ ՄԿՆԱՏՄԵՐՈՅ

Նշանքն այս է. եթ ելնէ մկնատամն ու թամբեն զզրաստն, նա խոցնայ:

Բժշկութիւնն է.

Եփէ զաւշնանն ի շուրն ու լուայ զինք սպրկիկ, ու թող որ ցամքի, ու աւծնէ զինք բաղցր կարգով յաւրն երկու տարապայ ու մի՛ թամբեր|| (125ա) ու մի՛ հեծնուր, ինչպի աղէկ աջողնայ:

* Զեռ. բ-ի վրա սխալ կերպով ավելացված է լ.

ՀԱ. ՅԱՂԱԳՍ ՅԱԼՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՀԱՅՈՒԹ, ՈՐ ՎԻՆԻ ՅԱԿԱՆՁՆ Ի ԳՐԱՍՏՈՒՆ

Նշանքն այս է. իր ելունդն նման է ի հեղինակ ու ցաւի ու մեծացաւի:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ [ն] է.

Առ զարէ ալոյր ու բարկ քացախ ու շինէ լանթակ, ու զիր ի վրայ ելընդին յաւրն երկու տարպայ. նա պիտի կակղցնէ զինք: Ու երբ կակղնայ, դու կարէ զինք ի տակն ածելով ու ցանէ ի վրայ տեղացն մանար աղ, ու զիր ի վրայ այն գեղէն տարպայ մի, ու լուայ զինք վաղն շող ջրով, և ցանէ ի վրայ քուշնայի ալոյրն ու զմեղըն ընդ իրար, և շաղղէ զբուշնայի ալոյրն ու զմեղըն ընդ իրար, և հաւու թեռվ աւճնէ զինք: որ (=ու) տես, որ մատաւմբա չհասցնես, զի աճոկէ:

|| (125r) ՀԱ. ՅԱՂԱԳՍ ՌԱՄՄԱՏԻՒՆ

Նշանքն այս է. իշնի ընդ քիթն ջուրն ու շինի հոտած, և փառայ և արցվէ աշքն:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ այս է.

Լից ընդ քիթն ի վայր մանիշկի ձէթ երեք աւր, որ փոընքտայ, ու խաշէ զաղի ձուկն ու լից զիր ջուրն ընդ քիթն ի վայր, որ փըռնքտայ, ու ծխէ ներքեն յատպէ ու խունկ, ու ծածկէ զգլուխն, ու ծուխն ընդ քիթն ելնէ:

Այլ գեղ: Առ զայն ջուրն, որ ելնէ ի սահնէչն, որ կու շինվի մանր ձկաւմ, մասն մի, արդար եղ՝ կէս մասն, խառնէ ընդ իրար ու լից ընդ ամէն թթափողն քուռճայ մի: Ու մի՛ թողուր, որ ցածցնէ զգլուխն, որ վայթէ, ու մի՛ խիստ բարձր կալնուր, որ չհասնի յղուղն: Ու ինչվայն արայ ինչվի ձգէ||(126ա) ընդ քիթն կտորնի խլինք: Ու թէ մէկ աւրն ձգէ ընդ քիթն, դու ծառայէ այլ վայր՝ ինչվի ձգէ, ու հանգոյ զինք աւր մի: Եւ փոընքտացոյ զինք արդար եղով: Եւ ձգէ ընդ փողըն ի վայր կարագ:

ՀԳ. ՅԱՂԱԳՍ ՎԻՐԱՅ, ՈՐ Ի ՖՐԱՅԻՆՆ*, ՈՐ ԿՈՉԻ ԶԻԱԽՈՑ

Ելնէ ելընդին ի զրաստուն երեսն ու ի բաղկունքն և ապա հաւարի ի յամէն մարմինն:

Նշանքն այս է. լինի բոլոր, ու բացվի ակներ, ու լինի շոր շոր, ու քիշ մի զիճութիւն իշնու ընդ ինք:

* Ֆանկում՝ Ֆարցին:

Բժշկութիւնն այս է.

Առ սպիտակ կղիմիտր, որ չինի հասել յինք չուր, եւ զայն ակներն աղէկ շփէվ վաղն ու յերիկունն եւ լուայ դինք պախրէի գողով. նա պիտի որ ենէ յիրմէ զէդ կորեկի հատեր: Եւ առ աղէկ կալէբար, լեսէ||(126թ) ու մաղէ, ու ի վրայ ցանէ, ու լըվայ զիսոցերն այլ վայրին պախրէի գողով՝ վաղն ու յերիկունն. նա բժշկի:

ՀԴ. ՅԱՂԱԿՍ ԳԱՅԼՅԱԽԻ

Նշանքն. լարի շնիքն և ակընջվին և քաշվի աշիցն սկսուցն, որ սպիտակուցն շատ երենայ, և փայտնայ շնիքն, որ շհանի ի գետինն և կտրի յալէկ և ի ջրէ: Պատճառքն լինի ի հովէ և ի քրտննլոյ, որ դիպի ի յինք քամի ու պաղի, և ի խոցէ. որ յարեգակն կապեն, նա ի յայս ցաւս ընկնի. և է դժար ցաւ:

Բժշկութիւնն այս է.

Գիտացիր, որ այս ցաւս խիստ պեղծ ցաւ է, և պարտ է աղէկ ծառայել: Կապէ զգրաստն ի մութն տուն մի և առ մաքի ու զենէ ու քերթէ, ու առ զմորթին||(127ա) ու շող շող հագոյ ի վրայ զիսոյն ու շնեցն, որ հասնի, և զրուրդն ի գուրս արայ: Հետ այնոր առ արդար եղ ու շողցոյ, և լից ընդ ականջն ի վայր, և աւծնէ զամէն կռնակն ու զողն ու զբովքն, ու տուր առվոյտ, որ տոտէ, և հանապազ ի խելչն կեցիր ու բարձր կապէ, որ չնստի, ու զմոշին ու զիննին փոշին ծիսէ ներքեն, և վառէ զմոշոյն փայտ ի խելչն. և թէ շկենայ մոշոյ փայտ, նայ հայնց փայտ վառէ, որ մուխ շայնէ: Եւ լից ընդ փողքն ի վայր խանդիխուոնի շարապ: Եւ զայս շարապս բժշկապետերն գիտեն:

Այլ դեղ: Առ խոզտի և փիճոյ խէժ, և բնկի խէժ ու հոռոմ ձէթ, ու շինէ զինքս աւծնելիք, ու աւծնէ զգրաստուն ամէն մարմինն||(127թ) մաղ ի վէր:

Այլ դեղ: Առ քուշնա ու գարի, եփէ, ու առ դզուրն ու լից ի վրայ զիսոյն շող. ակտէ:

Այլ դեղ, զոր առաջինքն ասցել: Գրաստ, որու լինի ու բնակի յինք այս ցաւս, նա առնէին և թաղէին զինք ի յաղըն ու զգլուխն ի դուրս, որ շունչն ելնէր, մինչև գայր և քրտնէր: Հետ այնոր հանէին ու ծածկէին ջեր, ու մտցնէին ի ջեր տուն, և առնուին խողտի ու հոռոմ ձէթ ու եղոցնէին ընդ իրար, ու լնուին ընդ փողքն ի վայր

Հայնց շաք շող, որ շայրէր, և առնուին զջուհուտ մուղլն և հալէին ի խլին ձէթն, որ է մնթուրն, և շինէին աւծնելիք, ու աւծնէին զդրաստն. նա բժշկէր:

Այլ դեղ: Առ խողտի երկու նուկի ու կէս, ||(128ա) առ այծու ճրագու երկու նուկի ու կէս, բենկի խէժ՝ նուկի մէկ, վայրի մրտի ձէթ՝ թուղթ մէկ, հին հոռոմ ձէթ՝ նուկի շորս, առ զամէն դեղերս ու լից ի վրայ անպակ գինի՝ մէկ նուկի, և աղ՝ թուղթ մէկ, շինէ աւծնելիք և աւծնէ զամէն զաւդվածքն զրաստոն շող շող, և տուր զսիսեռն և զամէն հննդանք, որ ուտէ, զարդի բակլայէ: Եւ զիր ի յեղկ չուրն բուրակ ու տուր զրաստոն, որ խմէ, և հանապազ աւծնելաւք ու ճերով, որ չեր ուննա<ս>, ու ծխելաւք կալ, մինչև գայ, որ քրտնի, զի այս ցաւս ի յայնոր լինի ի զրաստն, որ քրտնի ու պաղէ ջղերն, ու շատն, որ բնակի նա ի զլուխն ու շլնիքն ու ի յակնչվին, ու քանի զրաս ||(128բ)տուն սիրտն տաք կենայ, նա ապրի զրաստն, և յորժամ պաղի, նա մեռնի:

Այլ դեղ: Առ պղպեղ քանի հատ և բուրակ՝ մթխալ մէկ, ճաւշիր՝ քանի, բակլա՝ հատ մի, անգուժատ՝ քանի, բակլա՝ հատ մի. լիսէ ու մաղէ ու լից ի վրայ անպակ գինի ու հոռոմ ձէթ, զայն շակքն, որ շաղէ զինք: Ու արայ զինք երեք բաժին ու լից ընդ քիթն ի վայր զմէկ բաժինն: Ու հայնց կեցիր պահ մի ու զմէկ այլ բաժինն լից: Եւ հետինն աւորն զնոյն դեղս արայ. բժշկի:

Եւ ասցել են, թէ քաւշի արոյն լից ընդ քիթն ի վայր ու գահէ զինք. զայն պահն բժշկի:

Այլ դեղ: Առ խնկի փոշի երեք մթխալ և լից ի վրայ անպակ գինի զիր շակքն, և լինի դեղ ||(129ա)երս լիսած և մաղած, և զիր ի վրայ կրակին ու եղցոյ ու եղկցոյ ու լից ընդ քիթն ի վայր ու փորնքտացոյ, և աւծնէ զլուխն հոռոմ ձիթով ու ամբակ գինով, բուկաւ, մազն ի վեր շփէ ու աճոէ. շատ աւգտէ:

ՀԵ. ՅԱՂԱԳՍ ԳՐԱՍՏՈՒ, ՈՐ ԿԻՇ ՈՒՆՆԱՅ

Շփլի ու ելնէ ընդ քիթն արոյն: Առ կամփէ շուան ու կապէ զաղէտակն պինդ. նա կարի արոյնն:

ՀԶ. ՅԱՂԱԳՍ ԳՐԱՍՏՈՒ ՑԱԽՈՒ, ՈՐ Է ՌԵՊՈՒ

Նշանն է. յորժամ շնչայ, նա տայ քովացն, որ թուենայ, թէ կողքն յիրացմէ կու բաժնի, և թէ ցաւն թեթև լինի ու շկարես ճան-

շել, դու խմցոյ ջուր ու թապլեցոյ, նայ ուժվորնայ ցան ու հաղայ:

|| (129բ) Բժշկութիւնն է: Առ զաֆրան դրամ երեք, մատուտակ՝ դրամ վեց, պղպեղ՝ դրամ երեք, մեկը՝ կէս նուկի, շամիչ ի կտէն հանած՝ կէս թուղթ, սաւնապարի կուտ՝ ութ դրամ, լևսէ զամենն ու խառնէ ընդ մեղրն, ու ձգէ ընդ փողքն ի վայր՝ զէտ երկու հատուկիթ: Եւ թէ ուժով լինի ցան՝ դու առ մրվայ գինի ու հոռոմ ձէթ, ու խառնէ յայս գեղս ու լից ընդ փողքն [ի] վայր:

Այլ դեղ: Առ անպակ գինի ու խառնէ ընդ մեղրն, առանց այլ դեղի, ու լից ընդ փողքն ի վայր: Եւ թէ ուսէց կենայ ի քովքն ու շունչն կարճ ենչ, դու մի տար իր գինի, ապա առ զաֆրան կէս մթխալ ու լից ընդ ձախ|| (130ա) քթափողքն ի վայր, որ փողնքուայ:

Այլ դեղ: Առ հայխունկ երկու մթխալ, լևսէ և խառնէ յանպակ գինին ու ի մեղրն ու լից ընդ քթափողն ի վայր, որ փողնքուայ, և մի՛ հեծնուլ զգրաստն ու պահէ ջեր: Ու զջուրն, որ խմցնես, նա բուրակ խառնէ, և տուր իր լուծման գեղեր:

Այլ դեղ այս ցաւուա: Առ եղրդկան ժաղկի հունդ ափկից երկու, լևսէ և մաղէ, ու խառնէ ի հետ լիստ մի սպիտակ շաքարու պենիթ, ու լից ծայր մի ջուր ու շաղդէ, ու լից ընդ փողքն ի վայր:

Այլ դեղ: Ասեմ, որ երբ ընակի այս ցաւու, նա դժար ողջնայ: Եւ իր աղէկ դեղն այն է, որ հեծնուլ ու անցմնցիցէ զինք, ապա || (130բ) լցնչվեցնէ և ոչ կալաւփցնէ: Եւ առ գարի լուացած ու լից ի թաղառ մի ճանդ մի, ու առ եղէքն ու այրէ, և լից զմափիրն ի ներս, ու ի վրայ ջուր խառնէ ի թաղառն, ու ձգէ ի ներս ծայր մի շոր գինձ, ու հանապազ ի. յայտ ջրէտ տուր, որ խմէ. նա աւկտէ առտուծուլ:

Այլ դեղ: Տակշուրնին գիտեն, որ կապք կու այնեն յառվոյտն և կու տան զառվոյտն, որ կու ուտէ: Եւ զայն վանց այնոր կու այնեն, որ առ ժամն ողջնայ. ու ի ձեռվոյն հանեն ու զկատարածն չեն ի ըննել:

Այլ դեղ: Եփէ զմատուտակն ու խմցնել տուր զջուրն իր երեք աւր:

Այլ դեղ: Առ սամդ յարապի կէս նուկի, քթիրայ՝ կէս նուկի, երեք|| (131ա) դրամ ուսանդ, լևսէ զղեղերս ու մաղէ: Եւ առ Բ(2) նուկի կաթն, շողցոյ ու լից զղեղերն ի ներս, ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր երեք աւր:

Նշանք, որ հանապաղ զգլուխն խոնարհած կալնու, ու զգլուխն շկարէ ի վեր կալնով, ու անցի ի վրայ աշխցն զէդ զլխադիր, և հանապաղ արցունքն երթայ, և շկարէ զաշքն խփել, որ կոպերն թանձրցել լինի, և կտրի յալկէ, ու շկարենայ քայլ փոխել յաւժար, և աշխցն երակբն լըցվի արոյնով:

Բժշկութիւն է. Ցուսուֆին ասցած.

Առ կտաւատ նուկի մէկ, վայրի քրէֆս՝ կէս նուկի, եփած քուութի ջուր՝ թուղթ մի, և ամպակ զինի ու ||(131բ) հոռոմ ձէթ՝ նուկի ու թուղթ մի: Եփէ զամէնն ու քամէ ու լից ընդ փողքն ի վայր, և անցմնցոյ զինք աղէկ ու հանգոյ աղէկ ժամ մի, հետ այնոր զարկ զինք ի պաղ ջուրն. նա բժշկի:

Եւ լինի, որ ի յայտ ցաւէս սպիտկի աշքն: Դու առ զըռզիանի ջուրն ու զմեղըն ու խառնէ յիրար ու լից յաշքն: Նա բժշկի աստուծով:

Այլ դեղ: Առ սպիտկդեղ Դ(3) նուկի և լից ի վրայ ջուր, որ թրջի՝ աւր մի ու զիշեր մի, ու առ քամէ զջուրն և առ ու լից ի հաւանն: Եւ առ մոմ ու հալէ ու լից ի ներս ու աղայ, ու շինէ մորհամ, ու խառնէ ի հետ մեղը ու հոռոմ ձէթ: Եւ աւծնէ այս մորհամովս զբունքն:

Այլ դեղ: Առ երակ յերեսն, և առ ||(132ա) զրկոտիմն նուկի մի, քուութ՝ նուկի ու թուղթ մի, ու լից ի վրայ յիստակ ջուր երկու նուկի, զինի՝ նուկի մի, հոռոմ ձէթ՝ կէս նուկի, եւ եփէ ու քամէ ու լից ընդ փողքն ի վայր:

ՀԵ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՅ, ՈՐ ԸՆԴ ՆԵՐՔՍէ ՓՈՐՈՔՍՁՆ ԻՐՔ ՎԻՆԻ ԿՏՐԵԼ
ԶԵԴ ՃՐԱԿԴՈՒ ԿԱՄ ԱՊԻՔ, ԿԱՄ Ի ԱՅԼ ՓՈՐՈՏԵԱՁՆ

Նշանքն այս է. յորժամ զքաշիկն արծկէս, նա զգետինն դիպի: Բժշկութիւնն այս է.

Առ տղայի գոզ ու կապնդեղ, ծեծէ ու խառնէ ի ներս ու ի վրա լից հին զինի, եփէ ու լից ընդ զրաստոն փողքն ի վայր:

Եւ առ տախտակ մի և շինէ զայս զրես ի վրայ տախտկին ու դիր ի վրայ գետնին, որ քայլ փոխէ գրաստոն ի վրա. նա բժշկի:

Հաշիւ է ||(132բ) տլիսմն և կերպն այս է (տե՛ս հաջորդ էջի նկարը):

ապահովութեան

5	1	2
3	0	1
2	6	0

հայութեան

4	1	0
2	3	1
1	7	4

հայութեան

2	0	5
4	6	2
1	0	7

4	2	5	2	8
9	8	9	3	5
8	2	5	5	9

Եղանակ առ ամենու հայութեան
ու զարգացն յաջութեան է տարին.
ամբողջ թ - առ ամեն յաջութեան
ու զարգացն յաջութեան է տարին.
ամբողջ թ - առ ամեն յաջութեան
ու զարգացն յաջութեան է տարին.
ամբողջ թ - առ ամեն յաջութեան
ու զարգացն յաջութեան է տարին.
ամբողջ թ - առ ամեն յաջութեան
ու զարգացն յաջութեան է տարին.
ամբողջ թ - առ ամեն յաջութեան
ու զարգացն յաջութեան է տարին.

պաղ տեղ, և տուր կանաց խոտ, որ ուտէ, ու պաղ ջուր խմցոյ ճիճն, և թէ շխմցէ զջուրն, դու բաց զբերանն ու ձեռաւրտ զպաղ ջուրն ի ներս քշտէ, որ պաղէ: Եւ եթ փարատի տաքութիւնն, նա հետ երեք աւուրն տուր իր գարի:

ԶԱՂԱԳՍ ՑԱԽՈՅ, ՈՐ ԿՈՉԻ ԸՆՏԱՅԱ

Նշանքն է. ցաւ, որ բնակի ի յետի կիցքն ի գաւակի, զի յորժամ||(134բ) հանես ի յախոռոյն՝ նա զյետի կիցքն ի հետև ի քաշտանի ինչվի աղէկ երթայ ու ապա ղորդի:

Բժշկութիւնն] է:

Աւծնէ զանդմացն զաւդվածքն սպիտակ նաւղով. նա բժշկի:

Այլ դեղ: Առ ֆարավիուն թուղթ մի, աղ՝ թուղթ մի, ձէթ և սկ ձոյթ՝ նուկի մի, ու խառնէ զձէթն ու զամէնս ընդ իրար, ու եփէ, ու աւծնէ զծնկվին ու զանդմացն վերի զաւդվածքն: Եւ թէ շրժշկի՝ նա խարէ զիսնծորքն:

Այլ դեղ: Առ զյիշոցքն ու զիսայծանն, խառնէ ընդ իրար, և աւծնէ զանդմացն զաւդվածքն:

ԶԱՂԱԳՍ ԼԵՐԴԱՅԱԽՈՅՆ

Նշանքն այս է. հանապազ ծմայ||(135ա) ու զզլումն ի լերդին դեհն դարձցնէ՝ յաջ դեհի վրա, ուր ցաւն կայ: Եւ լինի լեղուն չոր և խոշոր, ուսեցած: Եւ կայ, որ ուսենայ աջ քովն և պիղծ շնչայ: Եւ եթ դեհն զձեռքդ ի յաջ քովին վերայ, նա զիտենաս, որ ցաւ կուտայ իր:

Բժշկութիւնն է:

Անցմնցեցո զգրաստն կամկեկ, և կենայ ծածկած: Եւ առ հոռոմ ձէթ ու զինի և աւծնէ զմարմինն, Եւ արայ եղկ ջուր և դիր ի ներս բուրակ ու խմցոյ զրաստուն:

Այլ դեղ: Առ խունկ, ողկուզուկ ու եփէ ի զինին և լից ընդ զրաստուն փողքն ի վայր և ի յաջ բթափողքն այլ, ու փողնբացոյ եաւին աւր:

Այլ դեղ: Առ մատուտակ ու եփէ ջրով ու լից ի յաջ բթափողքն, ու||(135բ) փողնբացոյ է(?) աւր:

Այլ դեղ. փորձած: Առ մեղք նուկի մէկ, բուրակ՝ կէս նուկի, զինի՝ նուկի մէկ, ջուր՝ նուկի մէկ, շփէ և կաթեցոյ յաջ բթափողքն,

ու փոքրտացոյ հինգ աւր: Եւ թէ ողջնայ դրաստն, դու առ իր երակի բազկունքն, ու թէ չողջնայ, դու համբռէ յաջ դեհին վերա Գ(3) կող ու խարէ ի վրայ. նա աղեկնայ կամաւրն աստուծոյ: Եւ տուր ուտելոյ կանաչ խոտ: Եւ զաղվանեղին եփէ ի ջուրն ու խմցոյ դրաստուն:

ԶԱՂԱԳՍ ՔԱՄՈՅ, ՈՐ ՅԵՌՋՔՆ ՈՒՆ[Ն]ԱՅ

Յասացելոց ապի Ռւառովին:

Նշանքն է. ցաւ, որ բնակի յետի կիցքն ի դրաստուն, և եփ ուժվորնայ այս քամիս, նա կանգնի երկու ձեռքն||(136ա) ու ընկնի յետի կիցքն, ու բնաւ չկարենայ կանգնել:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Առ բողկի հունդ ափկից մի, դիր ի պտուկ մի, ու լից ի վրայ վեց նուկի ջուր ու եփէ ուժով, ու թող աղէկնայ այս քամիս, ու առ յերեք բաժնէն զմէկն ու լից ընդ փողքն ի վայր: Ու զայլ մնացորդն դիր հոռոմ դէղ տկճորով ի յորովայնն, ու աւրեր այս-պէս ծառայէ:

Այլ դեղ: Առ կասլայի պտուղ ու շաման՝ յամէն մէկէ մասն մի, ու դեղին ծծում ու շարհոտ՝ յամէն մէկէ երեք մասն, բերեկի խէժ ու հոռոմ ձէթ՝ յամէն մէկէ Գ(3) նուկի, շինէ աւծնելիք ու աւծնէ զմէջքն ու զայն տեղն, որ ուռեցել է:

Այլ դեղ: Առ մոմ նուկի մէկ ու ճաւշիր՝ նուկի||(136բ) մէկ, հոռոմ ձէթ՝ նուկի մէկ, շինէ աւծնելիք ու լից ի վրայ թիշ մի քա-ցախ, ու միամորթէ ընդ իրար ու աւծնէ զմէջքն:

ԶԱՂԱԳՍ ՄՐՏԱՑԱԽՈՒՆ

Նշանքն այս է. յորժամ կանգուն լինի, նա դողայ ու դիպի ի վրայ երեսացն, ու հաստի ի պատն և քո, ոնէ, ու սկսնու քրտինքն ի ձախ անթէն, ու կախէ զգլուխն ի ժմէ ժամ, եր ուղենայ, որ կանգնի, նա դողայ ձեռվին, որսկէս զֆնտու և կամ զէդ բոկիկ դրաստ, և կախէ զտոշն, և կարէ լինաւ, որ լինի դողարգել:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Առ աղվանեղի լոսած, քանի բակլայ մի, և մեղր դրամ հինգ, բուրակ՝ թուղթ մի, ջուր՝ երեք նուկի ու կէս,||(137ա) քացախ՝ նուկի մէկ ու կէս, եփէ և լից ընդ փողքն ի վայր, ու ճէէ, և ած

զինք ի շուրջ: Եւ աւեր զայս դեղս խմցոյ: Եւ տուր առվոյտ, որ
ուտէ, կամ սէղ: Եւ թէ շրժշկէ զինք այս դեղերս, դու առ երակ
յերկու բազուկն, զայն մեծ երկու երակն, որ կա անդմացն ներքսե,
որ ասէ յարապն իր անսայ, նա առ ի համ այլ երակ. նա բժշկի:

Այլ դեղ: Առ կասլայի պտուղ ու հայխունկ՝ յամէն մէկէ մասն
մի, և խառնէ յամբակ զինին և ի հոռոմ ձէթն ու լից ի յիրմէ ընդ
քթափողքն ի վայր և փողնքտացոյ:

Այլ դեղ: Առ հայխունկ նուկի մի, մուռ՝ նուկի մէկ, և
խառնէ ընդ իրար և լից ընդ փողքն ի վայր, և պահէ զինք ճլաւվ
|| (137բ) ի չեր ախոռ, ու ձգէ ներքեն անուշահոտ իրք, զէդ կաս-
լայի տերեն, ու թող, որ պառփկի ու հանկչի ի տեղն: Եւ որ զայս
դեղս է ասցել, նա կու ասէ, թէ երակ մի՛ առնուա, զի թէ երակ
առնուա, նա պաղի մարմինն և բարկնայ: Եւ յորժամ տիսնիս, որ
թեթևնայ ցաւն ի յիրմէ, նայ տուր, որ ուտէ շոր խոտ: Եւ թէ լինի
ձմեռն կամ մաւտ ի ձմեռն, դու վառէ շոր փայտ, որ մուխ շայնէ:

ԶԳ. ՏԱՂԱԳՍ ՓԱՅՄԱՆ ՑԱԽԹԻ

Նշանքն այս է, որ ուտենայ փորն և ձախ դեհն աւելի ուտենայ,
և թէ երթայ և թէ ի կանգուն լինի՝ աւելի հեվա, և կարճ լինի շուն-
չըն և յոյլ լինի ի գնալն:

Բժշկութիւնն այս է.

|| (138ա) Առ պանի պտղի քամուքը նուկի մի, քացախ ու շուր՝
նուկի մի ու կէս, և խառնէ ընդ իրար ու լից ընդ գրաստուն
փողքն ի վայր: Եւ թէ գտնուս պանի պտուղ, դու առ մոշոյ ցախ
ու լից ի վրայ շուր ու եփէ, որ մնայ կէս ջրին, ու լից ի ներս
քացախ քիշ մի ու լից ընդ փողքն ի վայր տարապայնի: Եւ առ կաւ
ու ձէթ ու շփէ ի վրայ փայծղանն: Այլ որ պինդ լինի փայծղաղն
(=փայծղան) դեղ, առ պանի ծառի տակ ու լից ի ներս քացախ ու
շուր ու եփէ, որ մնայ յերեքն մէկն, ու լից ընդ փողքն ի վայր:

ԶԵ. ՏԱՂԱԳՍ ԳՈԶԱՐԴԵԼԻ

Նշանքն այս է. խածտէ զիր մարմինն ու շկարէ գոզել ու նստի
ու ելնէ:

|| (138բ) Բժշկութիւնն այս է.

Առ կաղամբի ջուր ու հոռոմ ձէթ և ամպակ գինի, խառնէ ընդ
իրար ու լից ընդ գրաստուն ձախ քթափողն ի վայր:

Այլ դեղի լինի, որ գողարգելն ի Հիճոյ լինի, որ ի փորն կե-
նայ, և կամ ի բզեզնոյ. գուն առ պղրղայտուն նուկի մէկ, բենեկ՝
նուկի կէս, կասլայի մատղաշ տիրեկ՝ նուկի կէս, խառնէ ընդ իրար
լեսած: Նա թէ ի յայս ցաւէս լինի գողարգելն, նա լից ընդ քթա-
փողն ի վայր, ու փորնքտացոյ. նա բժշկի:

Ասցել են ոմանք մի վասն գողարգելեացն, թէ զնեն յորովայն
սոխ և կամ սխտոր, նա ահոկէ և աւիրէ զփաղաբուշտն: Եւ մեք
փորձեցաք ու գտաք, որ խիստ|| (139ա) աւկտակար է, առաւել թէ ի
հովութենէ լինի և կամ ի յշշվեցնելոյ, կամ ի յաղեացն ի նեղու-
թենէն, և կամ բարցել լինի թրիքն ի փորն, յորոյ ու լինի՝ նա
ծառայէ այսպէս. Եոցո զջուրն մհծ պղընծով մի և առ շող հոռոմ
ձէթ և աւծնէ ի միջացն ու ինչպի յագէտակն, ու մտոյ զգրաստն ի
մութն տուն մի, որ այլ մարդ չկենայ, ու լից զայս շող ջուրս ի
վրայն՝ ինչպի գայ ու զտոշն կախէ: Եւ առ հետ այնոր քաղցր ամ-
պակ գինի ու լից ընդ քթափողքն ի վայր, ու փորնքտացոյ. նա ի
յայն պահն գողէ:

Զ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՈՐՈՎԱՅՆ Ի ԳՈՒՐՍ ԳԱՅ

Նշանն այս է. յայտնի իր ցաւուն:

Բժշկութիւնն է.

Զոր աւել|| (139բ) միս ի դուրս կենայ, նա կտրէ. խիստ պատ-
րաստ որ ի յորովայնին բոլորն շնասնի: Եւ առ քացախ ու ջուր ու
եղիցոյ և կամ ազոխուր ու լից ընդ քթափողքն ի վայր ու
փորնքտացոյ, ու յիրմէ լից ընդ փողքն ի վայր:

Զ. ՅԱՂԱԳՍ ԳՈՒՍԱՅԻ, ՈՐ Է ԱԶԳ ՄԻ Ի ԳԱՅԼՅԱԽԻՆ

Նշանքն է. մեկնի շլնիքն որպէս փայտ, կանգի ակընչվին,
արցէ աշվին, բերանն զայ յիրար ու չկարէ բանալ, զլեզուն չկա-
րէ շարժել, և ոչ ուսէ և ոչ խմէ, ու չկարէ զշլնիքն դարձնել, ու եթ
կենայ ու երթայ՝ նա զոտվին ի քաշ տանի, և ամէն տեղի յինք շոր-
նայ, և չկարէ գողել, և ի յերթալն|| (140ա) ի յետի ոտացն ի վրայ
հաստի, և եթ նստի՝ նա ի կէզն նստի, և թունայ մէկ ձուքն ու

մէկն ի վեր քաշվի: Եւ եթ այս նշաննիս կենայ, նա դժար կարէ բժշկել. ապա ոռու զջանքն դիր:

Բժշկութիւնն] է.

Առ քաւշի ճրագու ու սագու ճրագու, բեկի խէժ ու հոռոմ ձէթ և անպակ զինի, զայն չակըն, որ զիրենք շաղղէ ու հալէ ընդ իրար, ու աւծնէ զամէն մարմինն մազ ի վեր:

Այլ դեղ: Առ քուշնայ ու գարի ու եփէ, և առ դջուրն ու շող շող ծփէ զգլուխն:

Այլ դեղ, փորնքտալիք: Առ խունկ թուղթ մի ու հին զինի թուղթ մի, ու լեսէ զխունկ ու խառնէ յիրար, ու դիր ի ներս հոռոմ ձէթ ու բուրակ|| (140բ), ու լից ընդ քթափողքն ի վայր, ու փորնգտացոյ:

Այլ դեղ: Առ պախրէի ճրագու ու բեպբեկի խէժ՝ յամէն մեկի թուխթ մի, հոռոմ ձէթ՝ նուկի մի, խառնէ ի հետ քշիկ մի աղ և ամպակ զինի, ու շինէ աւծնելիք: Եւ ածնէ զամէն մարմինն շող շող: Եւ խառնէ զգարին ու զսիսեռն ընդ իրար ու տուր, որ ուտէ: Ու զջուրն, որ խմցնես, նա բուրակ դիր ի ներս: Ու ի չեր տեղ կանգնեցո ու ծածկէ ճլերով:

ԶԱՂԱԳՍ ՄԿՐԻՍԻ (= ԽԿՐԻՍԻ)

Նշանքն այս է, որ ծանդրանայ ոտվին որպէս զֆնտու և շկարենայ աղէկ քայլել, և շուտէ աղէկ, քաշվի մէկ ձուքն ու կախվի մէկայլն, և եր|| (141ա) կանգնի, նա ձեռաւքն քաշէ զթրիքն, նա փակչի ի սմբակն ի տաքութենէն, և կախվի տոշն:

Բժշկութիւնն է.

Առ չուր ու հոռոմ ձէթ և շողցոյ ու ծփէ զոտվին: Եւ արամեղքուր ու դիր ի ներս բուրակ: Եւ դիր հոռոմ դեղ: Եւ թէ լբժշկի այսովն նա կտրէ, որ բժշկի:

Այլ դեղ: Առ կաղամբ, խաշէ չըռով ու շող շող դիր ի վրան ոտիցն:

Այլ դեղ: Առ ոսպն, լեսէ ու մաղէ ու դիր ի յինք վարդի ձէթ ու քացախ, ու աղա ու շինէ տիմէտ, ու դիր ի վրայ ոտացն, եւ պատեհ է, որ անցմնցեցնեն զգրաստն, որ քրտնէ: Եւ առ երակ ի յերեսն և հետ եալթն աւուրն առ երակ ի յերկու ձեռքն|| (141բ) և առ ի յանդամացն ի յայն երկու մեծ երկնին, որ կոչի անսայ, և

զայս, զոր յիշեցաք, ի ցաւուն սկիզբն արայ: Եւ զջուրն եղկցոյ ու դիր
ի ներս ցորենի ալոյր ու բուրակ, ու տուր, որ խմէ: Եւ փողնքտա-
ցոյ զինք հայիսնկով և ամպակ զինով երեք աւր՝ յամէն աւր թուղթ մի:
Եւ առ զսաւսին ծառի կեղևն ու ճակընդեղ ու հոռոմ ձէթ, եփէ ու լից
ընդ փողքն ի վայր: Եւ քանի կարես զգրաստն ի լոյժ պահէ, զի
լուծումն իր աղէկ է, ու խոտ տուր, որ ուսէ, և թէ շընկնի խոտ,
դու զինչ տաս ուտելոյ՝ նա բուրակ ու չուր ցանէ և վրայ:

ԶԲ. ՅԱՂԱԳՍ ՌԱՅՍԱՅԻ*, ՈՐ Է ԲԵՒԵԲ|| (142ա) ՀԱՅՆ

Նշանք այս է, որ շկարենա զսմբակն դոյր ի վրայ գետնին դնել:
Բժշկութիւնն է:

Տաշէ զսմբակն մինչև ունէ ի յիրմէ թարախ և կամ ջուր. և
եթ ելնէ ամէնն ու որրի, դու առ աղ ու քացախ ու ջուր, լուայ իրովն
զսմբակն: Ու առ սոխ ու սխտոր ու ճրագու, ծեծէ ընդ իրար ու
դիր ի վրայ սմբակին. ու սխտորն թող աւելի լինի:

Այլ դեղ: Յորժամ բացվի վերև սմբակին, խել կոճացն ու կամ
յայլ տեղ, դու առ պախրէի թաժայ թրիք ու լեռին այրած դաղձն,
ու քացախն ու աղ ու հոռոմ ձէթ, ու շինէ տիմէտ ու դիր ի վրայ այն
տեղացն, զի պիտի քաշէ զգիճութիւնն: Եւ մէկայլն աւրն հա-
|| (142բ) լէ ճրագու ու փիճոյ խէժ ու լից ի յայն ծակն, որ ներքն
կայ: Եւ եթ քիշ մի աղէկնայ, նա շինէ զայս կակղցաւղ դեղերս: Եւ
եթ լինի այս ցաւս և շատն ի յոտվոյն, նայ ընդ խիստ ցաւէն ոչ
ուտէ և ոչ խմէ ու պիտի պառիկի ու թմբրի: Դու առ քացախ, որ
լինի խիստ զաղան, ու խառնէ ի ներս աղվեսու արոյն, ու լից ընդ
փողքն ի վայր, և աւծնէ զգութիւն կղբու ձուով. նա տղնայ:

Ապայ շգտնուս զսմբակն ու ոչ զբնեռն, դու առ թեփ ու սխտո-
րի կեղև ու լից ի վրայ ջուր, ու եփէ ու հան շողշող, լից ի քիսէ
կտոր մի և կապէ ի վրայ սմբակին: Տարպայնի զայս արայ, զէդ
խարկելիք, նա երենայ տե|| (143ա) դին, ուր կայ խոցն: Դուն բաց ու
հան ի յիրմէ զինչ զտնուս, և առ աղ ու հոռոմ ձէթ ու մուշախայ,
ու դիր ի վրայ, ու հայնցու յերկու աւրն զայս արայ, և յերեք աւրն
ցանէ ի վրայ ծակուն արջասպն. նա աւկտէ աստուծով:

* Ցանկում՝ ասահար:

Նշանքն է. Երթայ ընդ բերանն արոյն՝ քանի ի փողքն կենա, և եթ իջնու ի վորն, նա հալի ու մաշի գրաստն ու մեռնի:

Բժշկութիւնն է.

Թէ յերեան լինի, որ կարես զձեռքդ մտցնել ու հանել, դու առ թզենոյ տերն և կամ խոշոր քթեթ ու այնով առ Ռւ թէ ի վայր լինի ու շկարենաս հանել, նա զինչ խսկի խմելիք կու տան գրաստուն, նա ամէն կու||(143բ) ահոկէ գրաստուն ու չէ ի սպանել ու ի հանել զտղրուկն:

Ապա զրուն ու զաղէկն ու զաւկտակարն, որ զովիլ եմ ես. նա առնու զնոռում ձէթն ու լու ընդ գրաստուն փողքն ի վայր: Նա յորժամ ձէթն ի յինք հասնի, նա պիտի խլի ի տեղացն ու սատկի:

Եւ այս է հնարքն, որ գրաստն տղրուկ շառնու.

Ի տեղի, որ զգրաստն ի ջուրն տանիս ու զիտնաս, որ տղրուկ կենայ, նա զարտակ տաւպրակ ի գլուխն դիր ու այնով ջուր տուր, որ խմէ: Եւ թէ զտղրուկն տեսնուս, որ փակել է ի փողքն կամ ի լեզուն, նա դու ծայր մի մանդր աղ հասոյ ի տղրուկն, ընկնի:

ԱԱ. ՅԱՂԱԳՍ ԽՌՑՏԿԻ*

Նշանքն այս է. ||(144ա) Յուլնայ շլնիքն, բոնվի զաւդվածքն, ու դողայ ու փրփրայ բերանն:

Բժշկութիւնն այս է.

Առ հոռոմ ձէթ ու զինի ու դիր իր հոռոմ դեղ, և աւծնէ զձեռքդ հոռոմ ձիթով ու մտոյ պատրաստ ի յորովայնն ու սրբէ ու հան զագոն ու զշորութիւնն զինչ գտնուս:

Եւ առ նատիֆ ու սակամունի ու շինէ զէդ հաւուկիթ մի ու դիր ի յորովայնն:

Եւ առ զինի նուկի մէկ ու հոռոմ ձէթ՝ կէս թուղթ ու կաղամբի ջուր՝ նուկի մէկ, ու լից ի յիրմէ ընդ ձախ քթափողն ի վայր:

Եւ յորժամ շատնայ խոցտուկն ու յեւենայ ելնելն ու նստելն, դու առ պղրղատուն ծեծած՝ թուղթ մի, ճաւ||(144բ)շիր՝ կէս թուղթ, եղին աղջոյրի խիզարուկը՝ թուղթ կէս, ու դիր ի հետ մեղր ու անն-

* Ցանկում՝ խոստկի:

իսի ջուր՝ թուղթ մի, ու կասլայի ծառի մատղաշ ծլերն, և եփէ ու լից ընդ փողքն ի վայր: Ու աղէկ պէտ արայ, որ շճգէ ի գոզարգելն: Ու խմցոյ իր քաղցր հոռոմ ձէթ ու եփած քաղցու, որ հաւիճնով լինի: Եւ այսպէս ծառայէ. նա ողջնայ:

ՂԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԱԽՉՆ ԽԱՅԹԷ

Նշանքն այս է, որ փշանայ մազն ու ուռենայ պոկունքն ու աշ-
վին և բերանն խփի ու մազն ի վայր գայ:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ այս է.

Առ սպիտակ պղպեղ կ(30) հատ, և թէ չդտվի սպիտակ՝ դռ
առ սև կ(60) հատ, ||(145ա) լեսէ ու խառնէ ի թուխ անպակ գինի
ու լից ի գրաստուն բերանն ի վայր:

Այլ գեղ: Առ հաշար ու բարձվենեկ՝ յամէն մեկէ նուկի մէկ ու
լից ի վրայ շորս նուկի գինի և եփէ, որ մնայ երեք ակն ու լից
ընդ գրաստուն փողքն ի վայր:

ՂԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԿՈՐՆ ԼԻՆԻ ԽԱՅԹԵԼ

Նշանքն է. փոխի մազին գոյնն, ու կտրի յուտելոյն, և երթայ
ընդ քիթքն ջուր, և կենայ ու երթայ ու քթահրի, ու կարէ լինել, որ
զագին ի վեր կալու:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Առ թրակէս ու տրորէ յամպակ գինին ու լից ընդ փողքն ի
վայր:

ՂԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՆ ՀԵՏ ԽՈՏԻ ՍԱՐԴՈՍՏԵՆ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն ||(145բ) այս է. ուռենայ աշվին, ու պտղնին ի ներս
երթայ, ու կտրի յուտելոյ:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Խարէ զգրաստն և խմցոյ իր խանդիկոնի շարապ, ու կամ
խառնէ յայտ շարապտ եղին խախաց:

ՂԵ. ՅԱՂԱԳՍ ՓՈՂՑԻՈՆ

Նշանքն է, որ քնատեղացն երեակըն զայրնայ, և լարի ամէն
երակըն զլխոյն ու աշվոյն, ու կալվի ստուգն, որ շկարէ ուտել և
ոչ խմել:

Բժշկութիւնն] է.

Առ ամպակ գինի ու հին հոռոմ ձէթ ու լից ընդ քթափողքն ի վայր ու փորնգտացոյ:

Եւ ասցած է, թէ եփէ զխնձորն և առ զիր ջուրն և խառնէ յինք բուրակ ու լից ընդ փողքն ի վայր. նա աւկտէ:

||(146ա) Եւ առ զջուհուտ մուզն և հալէ ի հոռոմ ձէթն, և աւծնէ զզլուխն ու զխամծեկքն, ու եթ հահընդի ցաւն, դիմէ զրաստն ի կերն, դու տուր իր դալար խոտի: Թէ արծես՝ նա այլ լաւ է: Եւ թէ շինի ժամանակն կանաց խոտի, դու թաց զշոր խոտն ու ցանէ ի վրայ բուրակ: Նոյն զգարին հայնց արաւ: Եւ թէ ի ճիտքն երակ առնուս, աւկտէ իր: Եւ յայլ տեղ մի՛ առնուկ երակ: Եւ հետ մէկայլ աւտրն առ սատանայի խիարուկն ու զբուրակն, եփէ զրով ու լից ի փողքն ի վայր, նա լուծէ զինք և բժշկի:

ՊԶ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽՈՒ, ՈՐ ԴՈՂԱՅԻ ԶԱՄԻԳՎԱՆԱՑՆ

Նշանքն է, որ դողայ ձեռվին ու պոկներն: Եւ այս ցաւ է ||(146բ), որ յզուղն կենայ, զի քաշվի զաւդվածնին ու դողայ ու փրփրայ բերանն: Եւ այս պեղծ ցաւ է, յանկասկած սպաննէ զգրաստն:

Բժշկութիւնն է.

Առ սատանայի խիարուկ և բուրակ, եփէ ու լից ընդ փողքն ի վայր, նա լուծէ զինք, և այլ շառնու զինք այս ցաւս, քանձ խիստ սակաւ:

Եւ ասցել են ոմանք մի, թէ առ զծովու կրիայի արոյնն ու հոռոմ ձէթ ու լից ընդ փողքն ի վայր. նա հահընդի ցամ: Եւ կան ոմանք մի, որ խառնեն հետ այս արոյնիս քացախ ու զինի ու անգուժատ ու լոսուն ընդ քթափողքն ի վայր ու փորնդտացնեն:

Եւ զորդ ծառութիւն այս ցաւս, որ լուծես զբը ||(147ա) նութիւնն եաւթն աւր այն դեղերովն, զոր նախ յիշեցաք ի յայս ցաւս, [և] մեղրջով: Եւ հետ այնոր առ հոռոմ ձէթ ու զզինին և աւծնէ զայն զաւդվածն:

ԱԷ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽՈՒ, ՈՐ ՎԱՅՐԻ ԿԱՂԱՄԲ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն այս է, որ թունայ ոտվին ու չկարէ երթալ:
Բժշկութիւնն է.

Առ տանոյ կաղամբ, ծեծէ ու հան զջուրն, և եփէ զթուղն, և
առ զիր ջուրն, ու խառնէ ընդ իրար զջրերն, ու լից ի ներս այծու
կաթն, և խմցոյ, ու յիրմէ լից ի քիթն ու փողնգտացոյ. նա աչող-
նալ:

ՊԲ. ՅԱՂԱԳՍ ՃԽՁՈՅ, ՈՐ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ՓՈՐՆ ԿԵՆԱՅ

Նշանքն է. շփէ զագետակն ի պատն, և ճիճին հետ ի հետ
|| (147բ) երենալ:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ Է.

Աւծնէ զձեռքդ ձիթով և մտոյ ի յորովայնն և հան զինչ գտնուս
ճիճի ի հետ ու հետ:

Եւ առ ճաւշիր և անպակ զինի և հոռոմ ձէթ, խառնէ ընդ իրար,
ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր, նա լուծէ զինք և հանէ
զճիճին:

Եւ առ դաղձն և պղրդայտուն և աղ, և լեսէ ու խառնէ ընդ իրար,
ու ցանէ ի վրայ խոտին ու տուր գրաստուն, որ ուտէ:

ՊԲ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽՈԽՆ, ՈՐ ԳԵՂԾ ԽՈՏ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն է. թուլնայ զաւդվածքն ու դժար կանգնի և շանայ, որ
արծի, նա զոտվին ի հետն ի քաշ տանի:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ Է.

Առ քուռթի ջուր շորս դրամ, || (148ա) քացախ՝ նուկի Բ(2),
խառնէ ընդ իրար, և արայ երեք բաժին, և յամէն բաժին մի լից
ընդ փողքն ի վայր:

Այլ դեղէ Առ ամբրաւ կէս նուկի, մրտի տակ՝ կէս թուղթ, լից ի
վրայ շորս լիտր ջուր, ու ձգէ ի ներս գարի ալոյր՝ ճանկ մի, եփէ
ու քամէ ու լից ընդ փողքն ի վայր:

Ճ. ՅԱՂԱԳՍ ՍՏԱՄՈՔՅՈՒՆ

Նշանքն է, որ պահէ զգլուխն ի կախ, և տոշն ու ձուքն ուռե-
նալ, և կարի յուտելոյ:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ Է.

Առ մազտարէ մէկ մասն, աննխի հունդ՝ կէս մասն, խառնէ
ընդ իրար ու լից ի վրա ջուր, եփէ ու լից ընդ փողքն ի վայր: Իւ

թէ շրժակի՝ դու առ բենեկ և սպիտակ պղպեղ ու լից ընդ փողքն ի||(148բ) վայր։ Եւ գոզին մտիկ արայ, թէ զաֆրնի գոյնով լինի՝ աղէկ է, և թէ ոչ որ այս գունովս լինի, դու զայս դեղս խմցոյ երեք աւր։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ վարդ շորս դրամ, սաւնուպար՝ երեք դրամ, լեսէ ու խառնէ ի մեղրն, և տրորէ շող ջրով ու լից ի փողքն ի վայր. աւկտակար է կամաւքն աստուծոյ։

ՃԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՀԱԽՈՒ ՆԵՐՏ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ ԳՐԱՍՏՆ

Նշանքն է, որ թուզնայ գրաստն ու կարմիր գողէ։
Իր ստածումն այս է։

Առ սպիտակ հաւու ծիրտ շոր, էսէ ու խառնէ յանպակ գինին ու տուր, որ խմէ գրաստն։

Այլ գեղ։ Առ գարի փոխինդ և ամբրաւ, տրորէ, և անպակ ||(149ա) գինի, ու լից ընդ փողքն ի վայր եաւթն աւր։

ՃԲ. ՅԱՂԱԳՍ ԹՌՔՑԻՈՒ

Նշանքն է. այս ցաւս առաւել ի գարնան աւորքն լինի, ապա գրաստն վատուժնայ և հաղայ հայնց, որ կարծես թէ ոսկոր է կլել, և իշուու խլնիքն պաղ պաղ ընդ քիթն ի վայր, և ուննայ ծարաւ ու խմէ ջուր շատ, և հեայ զատուժ, ու տանի զբերանն ու խածնէ զբովքն, և հաղա ու ձգէ մաղձ կամ թարախ, և կամ ձգէ զէդ այն կեղևն, որ ի վրայ խոցի գենայ, և այն լինի ի խոցերոյ, որ ի թոքն կենայ։ Ու կայ, որ զբերանն բանայ ու հելայ, նա քովքն լարի ու պեղծ հայեցք ուննայ, և կամ||(149բ) որ եր ծամէ զկերն, նա թացվի ու ձգէ, նայ երբ հոտտան՝ նա հոտած հոտ գայ, և որ կտրել լինի ի թոքն, նա ծանդր շնչայ և ելնէ յիրմէ սուր ու շող շունչ։

Բժշկութիւն է թոքցւուն այն աղզին, որ եր ծամէ ու ձգէ, նա հոտած հոտ գայ։

Առ կասւայի պտուղ շոր և բեակեկի խէժ՝ յամէն մեկէ մասն մի, մեղրջուր զայն լակըն, որ շաղղէ զինք, և լից ի յինք սակաւ մի քացախ, ու լից յերկու քթափողքն։ Նա թէ գողէ արոյնխառն կամ թարախխառն, դու առ սամիթ մթխալ մէկ, բուրակ՝ մթխալ

մէկ, մեղրջուր՝ շակք մի, լեսէ ու խառնէ զղեղերն ի ներս ու լից ընդ փողքն ի վայր երեք աւր|| (150ա): Եւ հետ այսոր խմցոյ իր գ (3) աւր մեղրջուր ու տուր իր խոտ, որ ուտէ:

Բժշկութիւնն է այն ազգ ցաւուն, որ հազայ ու գէդ խոցի կեղէ ձգէ, և այն ի գանէ լինի, որ թորն կենայ.

Առ անմեռկի հնդի ջուր և վարդի ձէթ, խառնէ ընդ իրար, ու խմցոյ երեք աւր կամ հինգ աւր կամ եաւթն աւր: Եւ հետ այսոր առ թթիրայ և աղվանաղի, և թրջէ ի քաղցր զինին և խառնէ ի հետն կաթն, ու թէ չկենայ կաթն՝ դու [առ] գարէջուր և խմցոյ իր եաւթն աւր:

Եւ թէ ցաւն ուժով լինի, որ զոր փաղղայ ու ձգէ, նա հոտած լինի, դու տուր իր զայս ղեղս. առ կաւստ կէս նուկի, սալիխսա՝ կէս նուկի, լիսէ|| (150բ) և խառնէ ի գինին կամ ի շամշին ջուրն, և լից ընդ փողքն ի վայր և հանգո զգրաստն:

Եւ թէ ի թոքէն տեղ լինի կարել, դու առ այծու կաթն ու գարէջուր ու թրմզի ջուր, ու լից ընդ փողքն ի վայր: Ու թէ շինի կաթին ժամ, դու առ զխողին ոտվին ու զատալայնին ու եփէ, ու առ զիր ջուրն ու լից ընդ փողքն ի վայր:

Եւ թէ ձմեռն լինի, նա դուն լից ի յիր ջուրն ալոյր ու տուր, որ խմէ, ու թէ ամառն լինի, դու գարէ ալոյր տուր:

Ճ. ՏԱՂԱԳՍ ԳՐԱՍՏՈՒ, ՈՐ ԽՈԶՔ ՈՒԽԱՅ

Եւ այս ցաւս շատն ի քուռկնին լինի և կուշի քուռկցաւ:

Նշանքն այս է. լինի այս ցաւս ի քուռկնին և ի մեծ գրաստնին, ելունդնի|| (151ա) է պինդ, որ լիննայ ի ներքն խամծեկացն, և թէ պէտ շայնեն՝ պատոի, և երթայ գիճութիւն ընդ քիթն, և ձգէ զինք ի խունանն կամ ի յոփան: Եւ է ցաւս սպաննող, թէ պէտ շայնեն,

Բժշկութիւնն է.

Բննէ աքցնաւքն ու ճեղքէ նշղրկովն բոլոր, որ կարես հանել զխողքն ոյցրութեամբ, և մտոյ զմատնդ ու քաշէ ի վերևէ, և ապա ած զմատդ ի շուրջ ու խլէ զինք ընդ ամէն ղեհաց, ու շանայ, որ անարատ հանես զինք, զի աղէկն այն է: Եւ թէ շելնէ անարատ, որ կտրտի, դու շանայ, որ զամէնն սրբես, որ խսկի շմնայ իրք, զի թէ մնայ, նա այլ վայր ընծայի ու մեծնայ, և այլ պեղծ լինի, քանձ առջև: Եւ երբ սրբես ու հանես, դու || (151բ) զրխոնած քացխով

լուայ զինք, ու լուայ ու ծառայէ զէդ խոց մին այլ: Ու քո ամէն չանքն այն է, որ շթողուս, որ շատ երթայ արոյնն: Եւ առ բուրդ ու թաթիսէ ի բարկ քացախն ու ցամքցոյ զխոցին բերանն ու աւծնէ զինք շող ձիթով ու մոմով: Ու թէ կտրի արիւն՝ դու սև ձոյթ հալէ ու ի վրայ շփէ: Եւ ի բուռնին այս հեշտ ելնէ և ի մեծ մեծն դժար:

Ճ. ՅԱՂԱԳՍ ԽՈՅԻ, ՈՐ Ի ՅԱՂԻՔՆ ԼԻՆԻ Ի ԳՐԱՍՏՈՒՆ

Նշանքն է, որ արիւնախառն թրքէ և գայ որովայնն ի դուրք: Բժշկութիւնն է.

Կտրէ զայն աւել միսն. պատրաստ, որ յորովայնին բոլորն շխոռես: Զի թէ խոռես զորովայնին բոլորն՝ մեռնի զրաստն: Ապա եր!!(152ա) կտրես զայն աւել միսն, որ որովայնն անարատ մնաւ, դու առ երեք նուկի քացախն ու ջուր, ու դիր ի ներս նուան կեղեւ, ու եփէ ու լից ընդ փողքն ի վայր: Եւ առ զղթոր մի ու լիսէ, ու շաղղէ քացխով ու ջրով, և արայ զինք կլաւրակ մի, ու ձգէ ընդ զրաստուն փողքն ի վայր. նա բժշկի:

Ճ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՏՈՇՆ ԿԱՆԳՆԻ ԵՒ ԱՅԼ ԶՆՍՏԻ

Եւ այսոր նշանքն յայտնի է: Բժշկութիւնն է.

Մտոյ զինք ի գետ մի, որ ուժով լինի և զարք ունենայ: Եւ առ բուրակ ու խոզտի ու մոմ ու շինէ աւծնելիք, ու սերտ աւծնէ զտոշն, ու լից ի վրայն շատ պաղ ջուր: Ու թէ ծով կենայ ի սահմանքն՝ դու աղ լից ի ջուրն:

Եւ այլ աղէկ դեղ այն է!!(152բ), որ բարակ ասղաւմ խոթէն ի տոշզլուխն: Ու լից ի վրայ իրննն քացախ. նա բժշկի:

Եւ հոռոմ դեղ այս ցաւուս: Առ թ(2) կուտ մուշկ և երկու կուտ կղբու ձու ու լից ի վրա անպակ զինի, ու տրորէ, ու լից ի փոքր տկճորակ, ու դիր ի տոշփողն. նա բժշկի:

Ճ. ՅԱՂԱԳՍ ԱԲԾՎԵՑ[ԱԽՈՒ]

Նշանքն է. ուռենայ փորն և ոտվին ու ձուերն, և եր դնես զմատդ ի վրայ ուռեցին և սեղմես, նա փոսնայ ի յոտվին: Բժշկութիւնն է.

Ճլէ զգրաստն շատ ճկերով ու կանգնեցոյ յարեգակն, որ քրտնի, և շփէ զինք մաղ ի վեր, և տուր, որ ուսէ զբողկին տերևն ու զբրեֆսն և այլ տաք խոտեր՝ զէդ ստեպղնի տերև կամ առվոյտ: Եւ||(153ա) թէ չգտվի կանաչ խոտ, որ թրջէ զսեսեռն ի ջուրն ու տուր, որ ուսէ: Եւ հետ աւրերոյ հետ պորտոյն շափէ երեք մատն ու ծակէ, ու դիր ի յինք եղէզն մի՝ զէդ լոււայ, որ ջուրն վազէ, և զծակն փոքր արա՝ զէդ որ մատդ մտէ, կամ այլ փոքր: Եւ եր ելնէ ջուրն, որ ծառայէ զծակն զէդ խոց մի այլ: Եւ եր թարխոի խոցն՝ դու հեծիր զինք, որ քրտնի, ու ենէ այլ յելերվծերն: Ու եր ջուր տաս՝ դու լկամովն տուր, որ սակաւ խմէ: նա բժշկի:

Ճ. ՅԱՂԱԳՍ ՍՊԻՏԱԿ ՑԱԽՈՒՆ

Նշանքն այս է. սպիտակութիւն: որ չկենա ի մարմինն, և յետոյ լինի ի տեղոց տեղ, ու ի պակոնքն աւելի, ու ի յաշվին||(153բ). և կայ, որ ճապղի յամէն մարմինն որպէս:

Բժշկութիւնն է, որ շառտէ զտեղն և ասղնով ծակտէ.

Եւ առ հացի մէջ ու լից ի շառուտուրն: Եւ զայս շատ տարպայնի արա, նաև սենա: Եւ յաշքն թէ կենայ, որ առ քուրթի ջուր ու խառնէ ի հետ շաքար ու ծայրորէ զաշքն այսով:

Այլ դեղ, որ եր ի շնչիքն լինի կամ ի յայլ տեղ: Առ խիշիքրի ճրագու ու լսսէ, աւշնան և մեղր և աղ, խառնէ ընդ իրար: Եւ թէ յաշքն է՝ դու ծայրորէ, և թէ յայլ տեղ՝ դու աւծնէ:

Այլ դեղ: Առ անձրութ դրամ մէկ, կարֆու լեղի՝ դրամ երեկութ, շաքար՝ դրամ երկութ, մամիրան ու քաֆուր ու սպիտակ պղպեղ ու յիրկայն պղպեղ՝||(154ա) յամէն մէկէ դանկ մի, լսսէ ու մաղէ ու ծայրորէ իրովն զաշքն: Եւ թէ սպիտակ կենայ ի յաշքն, զայն այլ տանի:

Այլ դեղ: Առ արդար եղ և գարէ փոխինդ, խառնէ ընդ իրար ու դիր ի վրայ աշխցն, ու կապէ հինդ աւր: Եւ հետ հինդ աւուրն հան զայն դեղ: Եւ առ զընճպիլ ու զաֆրան ու պենիթ յամէն մէկէ դրամ մէկ, մուշկ՝ շորս կուտ, խառնէ և լսսէ և մաղէ և ձգէ յիրմէն ի յաշքն, ու կապէ քթեթով, ու թող հինդ աւր: Ու հետ հինդ աւուրն արծկէ ու դիր զմէկայլ դեղն, ու կապէ երեք աւր, և արծկէ ու դիր զայս մէկայլ դեղս, ու կապէ երեք աւր: Եւ արծկէ ու տես, թէ աշքն խոցուել է, որ երեք աւր||(154բ) հետ իրաց պաղ ջուր քշտէ ի յաշքն, և հետ երեք աւուրն դէղ գրէ կովուց եղով. նա բժշկի:

Ճ. ՅԱՂԱԳՍ ԽԵԾԽԻ, ՈՐ Ի ՓՈՂՔՆ ԵԼՆԿ

Նշանք. ուռենայ ներքե խամծեկացն՝ խել փողիցն մէկ ելունդ:
Եւ լինի, որ ի յիրմէ բախսի և ընդ բիթն երթայ:

Բժշկութիւնն է.

Շողցոյ զգմակն և կապէ ի վրայն տարպայնի, ինչուր փլշի: Եւ
թէ կակղնայ ու չփլշի՝ դու պատոէ, և ծառայէ զէդ այլ խոցեր. և
բժշկի աստուծով:

Ճ. ՅԱՂԱԳՍ ԲԱՐԱԿԱՏԱՌԻ, ՈՐ Ի ԹՈՔ<Է>Ն ԼԻՆԵ

Նշանքն այս է, որ ուտէ զալի<ք>կն կատարեալ, ու բանի եր-
թայ՝ նա աւրղնայ հայնց, որ ի հալ ու ի մաշն ձգէ, և փաքայ, և հեայ,
և կտրի ||(155ա) աշվին:

Բժշկութիւնն է.

Առ վեց հաւուկիթ, կոտրէ ի յաման մի և զիր ի վրայ վարդի
ձէթ՝ կէս նուկի, կովուց եղ՝ կէս նուկի, խառնէ ընդ իրար, և արայ
երեք բաժին, ու յամէն աւր բաժին մի ընդ փողքն ի վայր լից:

Այլ դեղ:

Առ թուզ նուկի մէկ ու զիր ի պտուկ մի ու լից ի վրայ ջուր՝
նուկի մէկ ու կէս, և եփէ, որ մնայ յերեք բաժնէն մէկն: Եւ հան
զթուզն ու զիր հաւանն ու ծեծէ ու լից ի վրայ գարէջուր, ու կոտրէ
ի ներս երեք հաւուկիթ ու միամորթէ, որ զէդ տայհին դառնայ, ու
լից ընդ գրաստուն փողքն ի վայր: Եւ զայս տարպայնի արա: Եւ
աւրեր տուր իր գարէջուր: Հաւուկիթ||(155թ) ի ներս կոտրած աւկ-
տակար է կամաւըն աստուծոյ:

Ճ. ՅԱՂԱԳՍ ՑԱԽՈՒ, ՈՐ ԿՈԶԻ ԹԱՎԱՍՈՒՅՑ

Նշանքն. ցաւս այս նման է ի շուկակ և լինի ի կոճքն ու շաճի
ի բազուկն:

Բժշկութիւնն է.

Առ ի յայն ջրէն, որ ձիթապտուզն է ի ներս սնուցած, և լուայ
այն ջրովն զկոճքն, և քթեթ մի, ու թաթիսէ ի հոռոմ ձէթն և ի
շուրըն, և բաղդէ զկոճքն, ուր ցաւն կայ: Եւ առ չոր թուզ, թրչէ ի
բացախսն աւր մի և զիշեր մի, և մէկայլն աւրն հան ու զիր ի հա-
ւանն ու ծեծէ, որ զէդ մորհամ լինի: Եւ դարձեալ առ զայն բա-
ցախսն, որ թուզն էր ի ներս թրջած, ու լուայ զկոճքն ու զսմբակն,

ու||(156ա) դիր զայն թուզն ի վրայ ու կապէ. ու թէ թուզն հայնց լինի, որ խակ ի ծառէն ի վայր լինի ընկ<ն>ել ու չորցել, նա այլ աւկտակար է:

ՃԺԱ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽՈՒ, ՈՐ ԿԱՏՐԻ ՈՍԿՈՐՆ ՈՒ ՄՈՒՌ ԼԻՆԻ ԿՑԵԼ

Նա ղեղերն այսպէս է. կապէ զգրաստն բարձր, որ չկարէ շարժել, և առ զտուղտն ու քշտէ, ու հան ի քթան քթեթ ի վերայ ու փակոյ ի վրայ այն տեղացն, որ ծուռ լինի կցել. նա քաշէ զբամին: Եւ թող զինք այսպէս հաւին աւր ի կախ, որ նստի, ու ծածկէ զեր, և հետ հաւին աւուրն արծկէ:

ՃԺԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՔԹԱՀՐԻԾ ԱԽԻ ԳՐԱՍՏՆ ՈՒ ՅԱԽ ԼԻՆԵԼ (=ԼԻՆԻ) ՏՎԵԼ

Նշանքն է, որ կամ լինի ի քթահրելոյ||(156բ) և կամ ընդ նեղ դուռն ի դուրս լինի ելել և ուսքն դիպել, կամ պառիկել լինի՝ նա յանկարծ կանչեն ի վրայն՝ նա յոտն ենէ, ու ուսքն ի մասուրն դիպի քամբար, ընկնի ի վրայն: Եւ այսպէս ի պատահմունքն, որ լինի:

ԲԺՀԿՈՒԹիւնն է.

Առ երակ յերեսքն, և առ զայն արոյնն ու խառնէ ընդ իրար, և արայ տիմէտ ու դիր շող ի վրայ:

Առ հոռոմ ձէթ և երեք հաւուկիթ և զինի և լովիաս ու սիսեռն՝ յամէն մէկէ շաք մի, զոր լեսելոյ է լեսէ ու խառնէ ընդ իրար, և արա տիմէտ, և դիր շող ի վրայ այն տեղացն, ու թող աւր մի: Եւ մէկայլն աւրն հան ու աճոէ ձեռաւքդ պինդ, որ թուզնայ կայշին ի մսէն||(157ա), եւ թէ խոց կենայ ի յայն տեղն, զու դիր ի յինք եղէզնէ լուզայ մի, ու շփէ, որ վերնայ կաշին, և դիր ի վրայ իր աղ և քացախ այն աւրն, և հան զայն ու ծփէ շող շրով երկու աւր հետ իրաց, և հետ երկու աւուրն աւծնէ հոռոմ ձիթով. աւկտէ աստուծով:

ՃԺԳ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԿԱՏՐԻ ՈՍԿՈՐ ԿԱՄ ԹԱՓԻ ԶԱԽԳԱՍ

Նշանքն այս է. ի քայշ տանի զոտքն կամ զձեռքն և բնաւ շաշողնայ, զի գրաստուն ոսկորն, երբ կոտրի՝ շաջողնայ և ոչ կ<ո>ցի:

Նշանքն այս է. եթ կենաց ու ելնէ գրաստն յախոռոյն, նա զէդ փաշխտած ելնէ, և երբ պահ մի երթայ, ապա դորդի գնալն, և շոյտ աջողնա|| (157բ), երբ ի գարոյ կտրեն:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Առ հին խողմիս ու խորվէ ընդ դէմ կրակին, որ չորնայ, և լինի, ու շաղղէ անպակ գինով և աւծնէ զկուրծքն:

Այլ դեղ: Ծփէ շող ջրով և առ ի բազկունքն երակ:

ՃՃԸ. ՅԱՂԱԳՍ ՑԱԽՈԽՆ, ՈՐ Ի ՍՄՐԱԿԲԵՐԱՆՆ ՎԻՆԻ

Նշանքն է, որ եթ տանիս զձեռքտ ի սմբակրերանն, նա շող լինի, և եթ յիրար տաս, նա զձեռքն ի վեր կալնու:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Առ զտղտին տակքն ու եփէ ի ջուրն, ու ծփէ ի ջուրն իրովն աւերն զսմբակքն, որ գայ ու կակղնայ, ու պընդի ի ներքնէ:

Եւ հետ այնոր առ հին հրագու և սխտոր, հայէ զճրագում, ու|| (158ա) ծեծէ զսխտորն ու խառնէ ի հետ, ու դիր ի ներքն սմբակին ու կապէ: Եւ մանդր չոր թրիթ դնեն ի ներքն սմբակին, որ կակուղ կենայ, և կանգնեցնեն ինն աւր անշարժ:

Այլ դեղ յասացելոց Ասփի Ռւսուֆին: Առ հոռոմ ձէթ ու սխտոր ու ծեծէ, ու շողցոյ ու դիր ի վրայ սմբակին ու կապէ:

Այլ դեղ: Առ զմակ ու խայծղան և լեղի նշի ձէթ, միամորթէ ընդ իրար ու դիր շող ի վրայ սմբակին. աւկտէ:

ՃՃԸ. ՅԱՂԱԳՍ ՍՄՐԱԿԱՑԱԽՈԽՆ, ԵԽ ՈՐ Ի ՍՄՐԱԿԲԵՐԱՆՆ ՎԻՆԻ

Նշանքն, որ լինի նաւար սմբակ ու պեղծ, նայ յորժամ ի վրայ քարի կոխսէ, նա ընդ ներքսէ արոյնի: Եւ թէ չկարես ճանչել|| (158բ) դու ի վրայ խճերոյ անցմնցեցոյ՝ նա քթահրի:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Առ սև նաւթ և աւծնէ աւրեր զայն տեղն, հետ այնոր զմակեղ խառնէ և աւծնէ զայն տեղն, ու կամ կապէ զդմակն ի վրայ. նա աւկտէ աստուծով:

Զսմբակցաւուն դեղերս մեկ են վասն սմբակբերնին: Եւ վասն սմբակի ցաւուն զթ(2)ն արայ:

Նշանքն. խոց է, որ լինի ներքև սմբակին ի մէջն, և երթայ յիրմէ ազո, և քանի երթայ՝ մեծնայ:

Բժշկութիւննէ.

Կտրէ և խարէ, և շող խայժդղան կաթեցոյ ի վրայն աւրեր, և ցանէ ի վրայ կիպուաւսցի արջասապն, և ի ջուր մի՛ մտցներ:

||(159ա) ՃՇԽ. ՅԱՂԱԳՍ ԱԶԱՅԻՈՒ, ՈՐ ԿՈՉԻ ՔԱՄՆԱՅ

Նշանքն է, որ գրաստն յառջնն մէն տեսնու:

Բժշկութիւնն է.

Առ գարէ ալոյրի խմոր, չորցոյ և այրէ ու խառնէ յոզիանին շուրն բուրակ ու մեղր. և գեղղրէ զաշըն.

ՃՇԽ. ՅԱՂԱԳՍ ԻՌՅԻ, ՈՐ ԳԱԶՆԻ ԽԱՆԱՍ ԼԻՆԻ

Նշանքն է*.

Բժշկութիւնն է].

Ջինչ իսկի գազնի առած լինի ի յամառն և ի ձմեռն՝ լուայ պաղ շրով, և առ շան զլուխն ու հան զլեզուն և այրէ ու խառնէ ընդ արջասապն՝ քանի զինք ի յիր շակրն, ու ցանէ ի վրայ խոցին:

Այլ դեղ, որ ունծն լինի առել: Առ գորտն և ճեղքէ զփորն ու դիր ի վրայ. աւկտէ:

Այլ դեղ զարկուց, որ երկթով լինի քշտած: Առ բոլոր զրեանդ, լիսէ և||(159բ) մաղէ ու շաղղէ մեղրով ու դից (=դիր) ի խոցն:

Այլ դեղ այս ցաւուս: Առ զնշղարենի ծառին կեղեն, զներքինն այրէ ու մաղէ ու լից ի խոցն. ցան լիթ, որ կտրէ զարոյնն ի խոցոյն:

Եւ այս շատ լինի, որ ի զարկուց կտրի երակ և երթայ արոյնն, մեռնի գրաստն՝ թէ շարգելեն զարոյնն: Առ նո ոսփունկառ^(*), թաթղէ զինք ի սև ձոյթն և այրէ: Եւ առ զայրուկրն և լիսէ ու ցանէ ի յայն տեղն ու կապէ:

Այլ արիւնակապք: Առ զառիկ և կիր և արջասապն՝ յամէն մէկէ մասն մի, լիսէ ու մաղէ ու ցանէ ի խոցն. աւկտէ աստուծով:

* Զեռագրում բացակայում է նշանների նկարագրությունը:

Ճ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽԻ, ՈՐ ՅՈՐՈՎԱՅՆ ԼԻՆԻ

Կայ, որ ելնէ յորովայնէն ճիճի: Առ խարբախ ու կիր, որ ի չուր շինի||*(160ա)* հասել, և արջասան, լեսէ ու ցանէ ի յորվայնն, նա մեռնի ճիճին:

Այլ դեղ, որ սրբէ զորովայնն: Առ վայրի կանափ և մորմենոյ տակ և քուշնայի ալոյր՝ յամէն մէկէ մասն մի, լեսէ ու մաղէ ու շաղղէ մեղրով ու դիր յորովայնն. աւգտէ:

Ճ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՇՈՂ ԼԻՆԻ ԱՌԵԼ ԳՐԱՍՏՆ

Նշանքն է, որ ավղնայ զրաստն ու քովքն երթայ ի ներս, կտրի ի կերոյ և հեայ ուժով: Եւ այս պեղծ նշանք է, որ մեռնէ զգրաստն:

[ԲԺՀԿՈՎՄԻՒՆ] է.

Առ ճաւշիր և քապրցախ, լեսէ ու մաղէ ու լից ի քիթքն, որ փողնգտայ:

Եւ առ շիրիկ ձէթ և հին դինի՝ յամէն մէկէ երկու նուկի, ամբաւ չորս նուկի, եփէ զամբրաւն և առ զջուրն և խառնէ||*(160բ)* հետ գինոյն և ձիթին: Եւ առ ցրդոյ պտուղ ու շաման՝ յամէն մէկէ *b(5)* դրամ, աղ՝ երկու դրամ և կէս, լեսէ ու մաղէ: Եւ առ երկու հաւուկիթ և կոտրէ յաման մի, ու լից զայս դեղերս ի վրայ, ու խառնէ զայն շրերն ի ներս, ու հոռոմ դեղ շինէ. աւգտէ:

Եւ առ կաւ ու թրջէ ջրով ու դիր ի գլուխն և թող երեք ակր
Եւ եփէ գարէջուր ու խմցոյ զրաստուն:

Ճ. ՅԱՂԱԳՍ ՈՒԽԵՅԻ, ՈՐ ՅԱՏՎԻՆ ԼԻՆԻ Ի ԳՐԱՍՏՈՒՆ,

ԵՒ ՈՐ ՉՈՒՔՆ ՔՈՒԼՆԱՅ ՈՒ ԹԵՐԱՆՆ ՀՈՏԻ

Եւ այսոր նշանն յայտնի է:

[ԲԺՀԿՈՎՄԻՒՆ] է.

Եթէ ձուրն ուսենայ, առ դարէ ալոյր և կտրածու աղ՝ յամէն մէկէ մասն մի, այրած խարտաս՝ կէս մասն, խառնէ ի գինի և ի մեղը,||*(161ա)* բաժին մի դիր ի վրայ ոտվոյն և բաժին մի խմցոյ զրաստուն:

Այլ դեղ, որ ուսենայ տոշն և ձուրն: Առ շաման ու բակլայ և ալոյր ու շամիչ՝ հանած ի կտէն, ծեծէ զամէնն, և քան ի դամէնն խառնէ ի հետ մեղը ու հոռոմ ձէթ, ու շինէ տլէ, ու դիր ի վրայ:

Այլ դեղ, որ ոտվին լինի ուռուցել: Առ տուղտ և շահմիհանդալ,
լեսէ և մաղէ ու խառնէ ի խոզտին ու դիր ի վրայ ուռեցին:

Այլ դեղ, որ թէ ի բերանն խոցեր լինի ելել ու հոտել: Առ ար-
շասպն, լեսէ ու խառնէ ի մեղքն ու շփէ ի բերանն:

ՃԻԳ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԱԶՔՆ ՍՊԻՏԿԻ ԳՐԱՍՏՈՒՆ

Նշանքն այսոր յայտնի են:

[ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ Է].

Առ սպիտակ պղպեղ կէս նուկի, սկ|| (161բ) պղպեղ՝ կէս նու-
կի, կտրածոյ աղ՝ շորս մթխալ, մուռ՝ երկու մթխալ, զա<ը>ֆրան՝
երեք մթխալ, ծովու խիշիփար՝ երեք մթխալ, պալասանի ձէթ՝
զայն շաքն, որ զղեղերն շաղղէ, լեսէ զղեղերն ու մաղէ ու շաղղէ
պալասանի ձիթով ու դիր ի յաշքն:

Այլ դեղ, որ թանձրացել լինի սպիտակն ի յաշքն: Առ սպի-
տակ պղպեղ ու հիլիճ ու յերկայն պղպեղ, նշատիր, ոսկի խլիմիայ
և արծթի, հնդկցի թութիայ և անծակ մարգրիտ, զաֆրան, քա-
ֆուր՝ ամէն մէկէ զրամ երկուք, լեսէ ու մաղէ մանդր ու դիր ի
յաշքն:

Այլ դեղ: Առ խիստ հին եղէգն, կտրէ և զոստերն ձգէ ու զե-
ղէգն լեսէ խիստ մանդր|| (162ա) ու ձգէ յաշքն:

Այլ դեղ: Առ սակաւ մի պղպեղ ու զաֆրան, լեսէ և մաղէ ու
ձգէ յաշքն:

Այլ դեղ: Առ խիշիփար ու չորցոյ ի շուքն, լեսէ և մաղէ ու ձգէ
յաշքն:

Այլ դեղ: Առ հաւկթի խեճեպ, լեսէ մանդր և խառնէ ի հետն
սերկելի կուտ, լեսէ և մաղէ ու ձգէ յաշքն:

Այլ դեղ: Առ զկտրածոյ աղն, լեսէ և ծամէ և թուք ի յաշքն:

Այլ դեղ: Առ խալիզոն, շորցոյ ու մաղէ ու դիր ի յաշքն:

Այլ դեղ: Առ զտորվանտակն, չորցոյ, լեսէ ու մաղէ ու դիր ի
յաշքն:

Այլ դեղ: Առ մուռ երկու նուկի, հայխունկ՝ երկու նուկի,
ժանգառ՝ կէս թուղթ, աղայ ու լից ի վրայ Բ(2) դրգալ գինի ու
աղայ ու դիր ի յաշքն:

Այլ դեղ:|| (162բ) Առ ախլիմիայ թուխթ մի, սպիտակ ար-

շասպն՝ կէս թուխմթ, սև պղպեղ՝ թուխմթ մի, ժանդառ՝ կէս թուխմթ, լեսէ ու մաղէ ու շափ արայ ու դիր ի յաշբն:

Այլ գեղ, Առ զաֆրան կէս թուխմթ, հացհամեմ՝ թուխմթ մի, մոռո՛ կէս թուխմթ, պղպեղ՝ կէս թուխմթ, լեսէ ու մաղէ ու շաղղէ մեղրով ու դիր ի յաշբն:

ՃԽ. ՅԱՂԱԿՍ ԱՄԷՆ ԱԶԴ ՀԱԶԻ*

Նշանքն է. եթէ ի հովութենէ լինի, նա քանի աւթքն պաղի՝ հազն շատնայ: Եւ թէ ի տաքութենէ լինի, նա ի փողիցն հազայ ու շունչն շող լինի:

Եւ թէ փետուր լինի կլել, նա խորու հաղայ ի կրծացն: Եւ քուկնին հազան ի քամոյ, զի քանի լինին լկամ||(163ա)ած՝ նա զբերնին շբանան խիստ, և եփ լկամեն՝ զբերնին բանան, նա մտէ քամին ի ներս ու հազ շարժէ:

Եւ լինի հազն ի պղտոր ջրէ և ի մախրէ, որ հետ ալկին ուտէ, և յարոյնէ՝ եթ խոնճեցել լինի, և ի փոշոյ, և ի թոքցաւերոյն, և ի կրծոց ցաւերոյն, և ի խոշակին խոշորութենէն. և բաժին մի յայտոց զամէն մէկ ի յիր տեղն յիշել ենք:

Բժշկութիւնն] է.

Գիտացիք, որ փորձել եմ շատ դեղեր հազին և չեմ գտել աւկտակար գեղ հազի, քանձ զայս, զոր յիշել կամիմ:

Առ խարտեղ շամիշ, հանած ի կտէն, կէս նուկի, կասլայի պտուղ՝ կէս թուխմթ**, մարտակուշի հունդ՝ կէս թուխմթ, հին ճրագու, որ||(163թ) լինի աղած, կէս նուկի, սխտոր այրած՝ կէս թուխմթ. այրէ զլոր դեղերն ու ծեծէ զայլն և խառնէ ընդ իրար և արա երեք բաժին. և առ յամէն ավո բաժին մի և դիր մեղրութի հետ, ու արա քուռճայ մի ու լից ընդ փողքն ի վայր: Եւ երեք աւր այսպէս արա, նա զարմանաս ի յիր զործոյն:

Այլ գեղ հազի, որ ի հովութենէ լինի: Առ սխտոր ու շամիշ, կոտման հունդ, ցրտի պտուղ, շաման՝ յամէն մէկէ կէս թուխմթ, լեսէ ու մաղէ, ծեծէ զսխտորն ի հետ, ու լից ի վրայ շրիկ ծէթ, որ զէդ տահին լինի, և արայ հաւթն բաժին: Եւ եթ կամենաս զզրաստն դեղդրել, դու կտրէ ի կերոյ ի կէս զիշերգէն (164ա) ի վեր, ինչ-

* Ցանկում՝ փաքալոյ:

** Զեռ. նուկի. լաւանցքում ուղղված է թուխմթ.

վի արեգակն ցայթէ, և լից ի յայս դեղէս բաժին մի ընդ փողքն ի վայր: Եւ լից ի հետ այնոր հին դինի երկու նուկի՝ ընդ փողքն ի վայր: Եւ այսպէս արայ եաւթն աւր, մինչեւ բժշկի:

Այլ դեղ, որ ի հովութենէ լինի: Առ տասնեհինգ գդթոր, այրէ և լեսէ ու խառնէ ընդ անդուժատ հինգ զրամ, և լից ի ներս հոռոմ ձէթ՝ երկու նուկի, և կոտրէ վից հաւուկիթ և խառնէ ընդ իրար ու լից ընդ փողքն ի վայր: Եւ եր տեսնուս, որ կու սակվէ հազն ու կու մատենայ ի յաղեկնալ՝ առ շամիշ և հան զկուտն, ու ծեծէ ու խառնէ ի հետ ողիանի հունդ՝ լիսած, ու դիր ի ներս մեղը սակաւ մի, ու միամորթէ ի հաւանն ||(164բ), ու շինէ զէդ ընկուզնի, ու ձգէ փողքն ի վայր երկու երեք մի: Եւ առ շամիշ ու հան ի կտէն ու տուր, որ ուտէ յամէն աւր նուկի մի: Եւ թէ լրժշկի, ուռ խմցոյ իր խոզի արոյն շող շող: նա բժշկի աստուծով:

Այլ դեղ հազի, որ ի բամոյ լինի կամ ի շողոյ: Առ երեք հաւուկիթ ու զիր ի քացախ: որ նաւարանայ կեղեն և կակզնայ, ու ձգէ յամէն աւր երեք հաւուկիթ ընդ փողքն ի վայր և խմցոյ իր գարէջուր:

Այլ դեղ, որ ի բամոյ լինի ու թեթև հազայ: Զգէ ընդ փողքն կարագ՝ աւրեր. նա բժշկի:

Այլ դեղ հազի, որ խիստ ուժով լինի, և անյուսել լինիս ի բժշկելոյ: Առ տիփիխ թուղթ մէկ, խառնէ ի հետ հոռոմ|| (165ա) ձէթ՝ թուխթ մի, ու հալէ զ[տ]իփին ի ձէթն, ու լից ի վրայ անպակ զինի՝ նուկի մէկ ու կէս ու լից ընդ փողքն ի վայր:

ՃԽԵ. ՅԱՂԱԳՍ ԳԼԵՑԻՈՒ, ՈՐ ԿՈՉԻ ՊՐՍԱՄ

Նշանքն է. ուռենայ աշվին և խփշի, և ուռենայ ամէն գլուխն, և յորժամ այց ուսն բարձրնայ՝ դռւ զիտացիր, որ շապրի: Եւ այս դժար ցաւ է, զի թէ ողջնայ, նա կարէ լինել, որ կուրնայ:

Բժշկութիւնն] է.

Տուր ուռենլոյ դալար խոտ՝ զէդ սէզ ու մատղայշ գարոյ հասկ կամ բոյս և հինդպէ կամ կուղայ և յամէն ազդ հով խոտէ: Եւ կան ոմանք մի, որ կու փորնքատացնեն այս դեղովս. առ բաշխտակ ու քաֆուր ու աղա|| (165բ) վարդշրով, ու լնուն ընդ քիթն ի վայր ու փորնքտացնեն: Եւ կան ոմանք մի, որ խարեն զայս ցաւս, ու այն խիստ վնասէ, զի ի վրայ կրակին կրակ կու լնուն: Եւ ես կու ասեմ, որ այս ցաւուս բնաւ դեղ շկայ:

Նշանքն է. այս ցաւս երկու ազգ է. մէկ ազգն, որ ի տեղի մի ելնէ ու շարծի ի բերանն, և զայ ի բերնէն հոտած հոտ, և փրփրայ բերանն. և մէկ այլ ազգն՝ խոցեր ելնէ ի բերանն, ու շգայ յիրմէ հոտած հոտ և ոչ փրփուր:

Բժշկութիւնն է.

Այս ցաւս ի գրաստուն դահութենէն լինի: Եւ դեղն այն ազգին, որ հոտած հոտ զայ ի յիրմէ, այս է. առ կիր, լիսէ մանտր, ||(166 ա) և թաթիսէ քթան քթեթ ու շփէ ընդ առաստախքն, ու թող պահ մի զգլուխն ի կախ և լուայ ջրով: Եւ վեց աւր այսպէս ծառայէ. աւկտէ:

Այլ դեղ մէկ այլ ազգին, որ շտեր ելնէ ի բերանն ու շգայ հոտ. առ ձիթենոյ տերե, լիսէ ու մաղէ, և առ քթան քթեթ ու թաթիսէ, ու ամէն բերանն շփէ, և թող աղէկ պահ մի, ու լուայ: Եւ վեց աւր այսպէս արա. նա բժշկի աստուծով:

ՃԻՔ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՏՈՇՆ ԿԵՂԵՒԻ

Նշանքն այս է. ցաւ, որ բնակի ի գրաստուն տոշն և պատճառն լինի, որ ի մատկին ամաւթզն կենայ իրրկ զբոր, նա որձն յորժամ ի վրայ վաղէ, կեղեսի տոշն: Եւ թէ այս ցաւս որ||(166բ)-ձոյն լինի ու վաղէ ի վրայ մատկին, նա որձն աջողնայ ու ի մատակն փոխի:

Բժշկութիւնն] է.

Առ շրիկ ձէթ ու հոռոմ ձէթ ու պաղ ջուր, խառնէ ընդ իրար և լուայ զգրաստուն տոշն: Ու թէ լըժշկի, դու վազցոյ ի վրայ մատկին. նա աղեկնայ:

ՃԻՔ. ՅԱՂԱԳՍ ԱԿԱՆՁՅԱԽՈՒ

Նշանքն է. երթայ ընդ ականջն զիճութիւն որպէս մեղր:

Բժշկութիւնն] է.

Առ քուշնայի ալոյր և մեղր, խառնէ ընդ իրար ու արայ պատրոյդ, ու դիր յականջն: Եւ թէ հեռու լինի տեղն ու պատրոյդն շնասնի, առ քույն]թի ջուր ու խառնէ ի մեղրն և սակաւ մի քացախ, ու լից ընդ ականջն ի վայր:

Այլ դեղ: Առ պաղլեղ, լիսէ ու ||(167ա) խառնէ ընդ մեղրջուրն ու լից ընդ ականջն ի վայր:

ՃԻԹ. ՅԱՂԱԳՍ ՏԱՐՁԱՅԻ, ՈՐ Է ԶԱՐԿՔ Ի ՅԱԶՔՆ

Նշանքն է, որ խփչի աշքն ու շկարէ բանալ ու արտասուէ:
ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ] է.

Առ կտրածոյ աղ, ծամէ ու թուր ի յաշքն. բժշկի: Եւ [թէ]
ուժով լինի՝ առ լղացոր աղվնի ձագ մի, զենէ, և առ դարոյնն,
խառնէ ընդ բուռթին ջուրն ու լից ի յաշքն:

ՃԼ. ՅԱՂԱԳՍ ՍՊԻՏԿՈՒԹԵԱՆՆ, ՈՐ ԼԻՆԻ ՅՈՏՔՆ ԿԱՄ Ի ՉԵՌՔՆ

Եւ այսոր նշանքն յայտնի է:
ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ] է.

Խարէ ու ծեծէ զյիշոցքն, ու խառնէ ի խայժղանն, ու շփէ ի
վրայ: Եւ թէ շկենայ սպիտակ ու ուղես, որ սպիտակի, դու յամառն
ի շող||(167թ) ամիսն առ աւազ միս պախրի, որ յայն պահն լինի
զէնած, և կապէ և հինգ աւր թող ի վրայ, նա մազն գայ ի վայր,
ու սպիտակ բուսնի:

ՃԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՄՌԵԼ ԼԻՆԻ ԵԼՆԻՆ

Եւ այսոր նշանքն յայտնի են:

Պառիկցոյ զգրաստն ի ծուռ դեհին վերայ և սերտ մարձէ, որ
զաւդվածնին ի տեղ ընկնի: Եւ առ երեք մոշի փայտ շլնեցն յեր-
կայնաւքն ու ծակէ զբաշին (=զկաշին) ի վերի դեհն ու ի ներ-
քինն և անցոյ զփայտերն ի ներքեւ կաշոյն և աւծնէ հոռոմ ձիթով
զտեղն ու կապէ պինդ, և յամէն աւր աւծնէ քացիսով ու հոռոմ ձի-
թով, և թող ինչուր կտըրտի փայտն և ի վայր գայ: Եւ ծառայէ
զծակտին զէդ||(168ա) խոց մի այլ. նա բժշկի:

ՃԼ. ՅԱՂԱԳՍ ԹԸՐԻ ԵՒ ՏԱՅՐԱՅԻ (=ՏԱՐՁԱՅԻ), ՈՐ ԶԵԴ ԶԵՂ Ի ՅԱԶՔՆ
ԼԻՆԻ Ի ՎՐԱՅ ՍՊԻՏԿՈՒԹԵԱՆ

Նշանքն այս է. ելք, որ ելնէ ի յաշքն ու զէդ թութ լինի, և եր-
թայ յիրմէ աղու: Եւ բանի երթայ՝ մեծնայ, ինչուր ծածկէ զլոյսն:
ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ] է.

Կտրտէ մանտր զթութն և հան ի տեղացն: Ու ծառայէ մլհա-
մով զէդ խոց մի այլ:

Այլ դեղ տաֆրայի (=տարֆայի): Տուր բռնել զգրաստն ու

մտոյ ծնուրթայնի ու վերոյ. ու կտրէ բոլոր. Եւ եք կտրես դու,
քացիսով ու ջրով լուայ, ու կապէ զինք երեք աւր. Եւ հետ երեք
աւուրն ծառայէ այս զեղովս. առ զայն կավն, որ կոչի կիմուլիայ,
թուխթ մի, ||(168բ) թութիա՝ կէս թուխթ, մատուտակ՝ մթխալ եր-
կուք, լեսէ ու մաղէ և մեղրով շաղղէ ու դիր ի յաշքն:

ՃՂ. ՅԱՂԱԳՍ ՍԱՊԱԼԻ, ՈՐ Ի ՅԱԶՔՆ ԿԵՆԱՅ

Նշանքն է. քամի, որ լինի ի յաշքն, ու խփէ զմէկն ու բանայ
զմէկն, ու կարէ լինել, որ ուռենայ կոպքն:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ[Ն] է.

Առ ոսկոյ աղլիմիայ և արծաթոյ, անծրութ, սպիտակ պղպեղ,
և պղպեղ՝ յամէն մէկէ երկու դրամ, մարտսանգ, զաֆրան՝ յամէն
մեկէ երկու դրամ, լեսէ ու դիր ի յաշքն: Ու թէ մեղրով շաղղէս ու
դնես՝ նա աւկտէ:

ՃՂ. ՅԱՂԱԳՍ ՅԱՐԱՂԱՆԻ, ՈՐ Ի ՅԱԶՔՆ ԼԻՆԻ

Եւ այսոր նշանքն յայտնի է: Եւ թէ պէտ շայնեն՝ նա կուր-
նայ:

||(169ա) ԲԺՇԿՈՒԹԻՒՆ է.

Լից ի յաշքն ողիանի ջուր կամ վարդի ջուր:

ՃՂ. ՅԱՂԱԳՍ ԿՈՂՆՁԻ

Նշանք, որ նստի շատ և թապլի ու ոչ թրքէ ու ոչ գողէ, և
ծեծէ ոտաւքն ու ձեռաւքն, և քրտնի պնթքն, և հոտվայ ի թրիքն:
ԲԺՇԿՈՒԹԻՒՆ[Ն] է.

Առ բուրակ շուրս դրամ, լեղկի ունդ՝ տասն դրամ, տուղտ՝
ափկից մի, հոռոմ ձէթ՝ կէս նուկի, աղ՝ ճանկ մի, ծեծէ զլեղկին
հունդն ու լից ի վրայ ութ նուկի ջուր և եփէ, որ մնայ կէս նուկի,
քամէ ու խառնէ զայլ զեղերն ի հետ, ու դիր հոռոմ զեղ. Եւ թէ
շարծկի՝ դու առ սակաւ մի ճաւշիր ու երեք նուկի ամբրաւ, տրորէ
յայն եփած ջուրն, ու լից փողքն ի վայր. աւկտէ աստուծով:

||(169բ) Այլ դեղ: Առ հայխունկ կէս թուխթ, լեսէ ու մաղէ, և

* Ցանկում՝ արեխան:

առ մեղր շորս դրգալ, հին գինի՝ երեք նուկի, քացախ՝ հինգ դրգալ,
խառնէ ընդ իրար երեք բաժին ու լից յամէն աւր բաժին մի ընդ
փողքն ի վայր, և ծածկէ զեր, և ած ի շուրջ:

Ճ. ՅԱՂԱԳՍ ՀԵՐՔՈՅՆԻ

Նշանքն է. ցաւ է, որ լինի յոտվին ու յակընչվին ու քիթն՝ զէս
շուշկակ, և ծծմայ, ու երթայ ի յիրմէ չուր: Եւ աւուրբ մի յևելնայ և
աւուրբ մի սակվէ:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ] է.

Առ մարտսանգ կէս նուկի, շրիկ ձէթ՝ կէս թուխիթ, արծթի
քափշայ, ոսկոյ աղլիմիայ, սպիտակ ղեղ, ժանկառ, քաֆուր՝ յա-
մէն մեկէ կէս թուխիթ, շարճոտ և զաֆրան՝ յամէն մէկէ ողթ||(170ա)
մթխալ, լեղի նուշ, կարմիր սանդալ, այրած զառիկ, հինայ, անծ-
րութ՝ յամէն մէկէ կէս թուխիթ*, այրած խոընճող, գղթոր, պլելիճ,
սպիտակ մոմ՝ յամէն մէկէ կէս նուկի. լեսէ զղեղերն և մազէ, ու
լից ի վրայ քացախ, և աղայ ու հալէ զմոմն, և ի յայն չակքն
վարդի ձէթ, որ զինք շաղղէ, և արայ մորհամ. և ի բան տար: Եւ
մարդկաց այլ աւկտէ:

Ճ. ՅԱՂԱԳՍ ԽՐԻԱՄՆԱՅԱԽ

Նշանքն է, որ եր կենայ ու երթայ՝ զոտվին ի քաշ տանի և ծե-
ծէ զղետինն, և հաստի ի պատն, և գողէ զէդ արոյն այլ պղտոր:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ] է.

Խարէ զձվատակքն, ու առ վայրի քրեփսի հունդ և ասարաւն՝
յամէն մէկէ կէս թուխիթ, պղպեղ՝ սակաւ մի, և խանտիկոնի շա-
րապ. լիսէ||(170բ) զղեղերն ու խառնէ յայտ շարապու կամ հի-
լիաւնի, և լից ընդ փողքն ի վայր. նա աւկտէ աստուծով:

Ճ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՃԱՆԻ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն է. ուռենայ ոտվին ու երթայ շողիքն ընդ բնրանն:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ է.

Քերէ զմատուտակն և շանջխէ և եփէ, և տուր զջուրն, որ խմէ:

* Զեռ. հաջորդում է լեսէ, բայց վրան փոքր նշան է դրած, իսկ լուսանցքում՝
մի կետ. ըստ եւելուրին բառը ավելուր է, որովհետև նաջորդ նախադասաւրյանից
հետո է պահանջվում նշված դեղերը լիսել:

Ճ. ՅԱՂԱԳՍ ՄԱՏԿԻ, ՈՐ ԱՐԳԱՎԴԻՆ Ի ԴՈՒՐՍ ԼԻՆԻ ԵԿԵԼ

Եւ այսոր նշանքն յայտնի է, զնոյն, և թէ գիճութիւն երթայ ընդ քիթն:

Բժշկութիւնն է.

Պառիկցոյ զգրաստն ի վրայ ողինն՝ երեսք ի վեր, ու լից շող ջուր ի վրայ արգանդին շատ աղէկ՝ երկու պահ, և խոթէ յինք բարակ ասղաւմ: Եւ առ նուան կեղեւ ու գինի ու հոռոմ ձէթ, եփէ ու ծփէ իրովն||(171ա) զարգանդն, և մտոյ զարգանդն ի ներս և կարէ, ու թող տեղ, որ գոզն ելնէ: Եւ առ կասլայի պտուղ ու այրէ, և խառնէ յանպակ գինին, ու լից ի վրայ կարծին (=կուրծին) ու թող որ քամին ելնէ. նա բժշկի:

Ճ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՀԱԽԿՈՅՔ ԼԻՆԻ

Նշանքն է, որ եթ արեգակն մայրի, նա լոյս շտեսնի, և այլընդ դայլ ձգէ զուովին ու զձեռվին:

Բժշկութիւնն է.

Առ այժմնու լեղի և քուոթի ջուր և մեղր, խառնէ ընդ իրար ու դիր ի յաշքն:

Այլ գեղ: Առ քաւշի լերդ ու ցանէ ի վրայ պղպեղ, ու խորվէ դէմ կրակին: Ու առ զայն գիճութիւնն ու դիր ի գրաստուն յաշքն:

Ճ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՀՈՏԱՄ ՀՈՏ ԴԱՅ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ՄԱՐՄՆԵՆ

Եւ այնոր նշանքն յայտնի է:

Բժշկութիւնն է.

Առ գարէ ալոյր ու շաղղէ||(171բ) ի քացախն ու շփէ ի գրաստուն մարմինն:

Ճ. ՅԱՂԱԳՍ ԿՈՃԱՅՆ, ՈՐ ԹՈԽԵՆԱՅ

Նշանք, որ քթահարի, և եթ յիրար տաս զկոճքն, նա ցաւ տայ իր ու ի վեր կալնու:

Բժշկութիւնն է.

Աւծնէ սպիտակ նաւզով աւրեր, նա բժշկի: Եւ թէ խառնէս խայծղանի հետ, այլ աղէկ է:

Նշանքն] է, որ լինի յիստակ կարմիր և կենայ պղտորութիւն: Բժշկութիւնն է.

Լից վարդի ջուր ի յաշքն աւրեր կամ աղչքն (=աղչքան) մար կաթն՝ բժշկի:

Ճեղ. ՅԱՂԱԳՍ ԹՈՐՈՅ

Նշանքն է. կիծ է, որ ընկնի ի մարմինն և ելն[է] շտեր, և ի շատ քերելոյն մազն ի վայր գայ:

Բժշկութիւնն] է.

Բորն ի գրաստնին յերկու ազգ իրաց լինի ի մաղձէ և յարոյնէ, որ եփէ զինք աւտ||(172ա)ար տաքութիւնն, և ի դրուցէ մարմնոյն քշտէ:

Եւ առ գիտունքն խիստ հեշտ է այսոր բժշկութիւնն:

Եւ այս ցաւս ի յայն ցաւերոյն է, որ փոխի յայլ գրաստվէ: Պարտ է զատել զայն գրաստն ի յայլ գրաստնոյ և շծածկել բնաւ, և առնուլ իր երակ ի ճիտքն և ի քթացն յերակքն, որ յերեսն կայ, ի մէկ աւր, զի այս ցաւս ի մէկ զարկք ի դուրս կու փշէ, զի թէ զքթացն երակքն մէն առնուս, նա ընթանուր յԱելվածքն ի ներքի զաւդվածքն իջնու, և դժար կարես հանել: Եւ թէ զճիտքն մէն առնուս՝ նա յԱելվածն ամէնն ի սրտին դեհն իջնու և սպաննէ զգրաստըն: Վասն այնոր պարտ է զերկու երակն հետ իրաց կարել: Եւ հետ երկին [կտրելոյ] առ կրակաց մախրի ջուր և սև ձոյթ||(172բ), եփէ ընդ իրար ու աւծնէ զգրաստն, որ քաշէ զամէն յԱելվածն ի դուրս: Եւ հետ այսոր տուր գարէ ալոյր: Եւ լից ի վրայ ջուր և հոռոմ ձէթ ու եփէ ու աւծնէ զգրաստն, որ քաշէ զամէն յԱելված ի դուրս: Եւ հետ երեք աւուրն եփէ զկրակաց մախրին ջուրն ու լուայ զգրաստն իրովն, նա շրջի կաշին: Եւ առ մազեղէն ու շփէ ի վրայ: Եւ հետ այնոր շփէ զայս զեղերս ի վրայ: Առ սև ձոյթ և հոռոմ ձէթ և զիր մրուրն և զեղին ծծում՝ յամէն մեկէ նուկի մի, լեսէ և մաղէ և խառնէ ի ձէթն և աւծնէ զգրաստն: Եւ առ սատանայի սեխուկ, բուրակ՝ յամէն մեկէ երեք դրամ, լեսէ և մաղէ և խառնէ ի մեղրջուրն, ու տուր դահ գրաստուն թուփսթ մի* և մատղայշ գրաստուն, որ ինչվի

* Ձեռ. Խուկի լորս, սակայն դրանց վրա նշան է դրված և լուսանցքամ թուփսթ մի:

||(173ա) յերեք տարին լինի՝ կէս թուխթ, և քուռկին՝ կէս թիթի կէս:

Այլ դեղ բորոյ, որ ուժով լինի: Առ դմակ երեք նուկի, խայծ-դան՝ երկու նուկի, սև նաւթ՝ երկու նուկի, կաթն՝ երեք նուկի, սեռու ընդիկ՝ նուկի մի, ծծում՝ թուխթ մի, յիշոցք՝ երկու զրամ, աղ՝ ափկից մի, խառնէ զամէն ղեղերն ընդ իրար լեսած և մաղած, և խառնէ ի ձիթերն, ու աւծնէ զգրաստն, և թող վեց աւր, և հետ վեց աւուրն լուա շող ջրով և շփէ իր թրբով ու լուայ, որ ելնէ. բժշկի:

Այլ դեղ: Առ կասլայի ձէթ նուկի մի, յիշոցք՝ կէս թուխթ, սի-նապ՝ թուխթ մի, թուխթ մի՝ ցմխտակ, լից ձիթերն ի վրայ ու դիր ի շիշ մի, ու կախէ յարեղակն, որ սնանի: Եւ յորժամ սնկիս՝ դու առ յիրմէ||(173բ) նուկի մէկ, ու լից ի վրայ հոռոմ ձէթ նուկի մէկ, և առ ճանկ մի սեռու ընդիկ ու ճանկ մի աղ, լեսէ և խառնէ ի հետ և եփէ, որ եռ մի երկու եռայ, և առ ու աւծնէ զգրաստն, և կանգնեցոյ յարե-դակն յամէն աւր պահ մի: Ու դիր յառջեն ջուրն, որ թէ ուզենայ, նա խմէ: Ու հետ երեք աւուրն աւծնէ շրիկ ձիթով կամ դմակով ու լուայ. բժշկի:

Այլ դեղ, որ կիծ ուննա: Առ կասլայի ձէթ նուկի մէկ ու ձգէ ի ներս ճանկ մի սեռու ընդիկ լեսած, եփէ ու թող որ հովնայ, ու շփէ ուր կիծ կենայ. նա բժշկի աստուծով:

Ճեծ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԽՈՆՃԵՑԵԼ ԼԻՆԻ ԳՐԱՍՏՆ

Բժշկութիւն[ն] է.

Առ գինի և մեղր, խառնէ ընդ իրար ու լից քիթն ի վայր ու փոքնդտացոյ:

Եւ թէ ուսեց կենայ||(174ա) յաճուկն, դու զայտ դեղտ մի՛ այ-ներ, ապա առ զաֆրան և տրորէ յեղէ շուր և լից ի ձախ քթափողն և փոքնդտացոյ:

Եւ առ իր երակ և առ զարոյնն ու լից ի ներս եֆրատ ալոյր և շաղղէ, և հան ի վրայ քթեթի մի, և յորտեղ ուոէց կենայ՝ ի վրայ դիր:

Եւ առ թուղ և թրչէ ի քացախն: Եւ առ զայն քացախն ու ծփէ զոտվին; նա բժշկի:

Առ պենիթ և զընճպիլ՝ յամէն մէկէ դրամ տասն, և անգուժատ՝ դրամ վեց, աղ՝ մթխալ հինգ, շաման, ցրդի պտուղ, կոտման ունգ, նախսաւէ, ծայթրին՝ յամէն մէկէ դրամ հինգ, լեսէ ու մաղէ ու խառնէ յանպակ գինին՝ վեց նուկի, և թող աւր մի և գիշեր մի, մէկայլն աւրն քամէ ու խառնէ ի հետ չորս նուկի ջուր: ||(174բ) Եւ առ յիրմէ երեք նուկի ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր. նա բժշկի աստուծով:

Ճեզ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՈՒ ԶԳԱՐԻՆ ԱՆԱՐԱՏ ԱՆՑՆԵ*

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ[ն] է.

Առ գինի ու հոռոմ ձէթ և թաթխէ գձեռքդ ու մտոյ յորովայն և սրբէ: Եւ առ մեղք և խառնէ ի հետ սակամունի, և շինէ զէդ հաւուկիթ մի և դիր յորովայն:

Ճեզ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՈՒՆ ԱԳՈՅՆ ՄԱԶՆ Ի ՎԱՅՐ ԳԱՅ ԿԱՄ ԲԱԵՆ Ի ԿԾԵ

Առ տահին նուկի մէկ և ալոյր՝ թուլսթ մի, զաֆրան՝ կէս թուլսթ, յամբար՝ երեք կուտ և զայն խոտն, որ կոշեն իր փրփիլ՝ դրամ տասներկու, քաջու զունդն՝ թուլսթ մի, լեսէ և մաղէ և խառնէ ի տահինն ու շփէ ի գրաստն:

Այլ դեղ, որ յերկայնցնէ զմազն: ||(175ա) Լուայ մարդոյ գոռզով: Եւ առ զմլուխի տերեկին ջուրն և կաղամբի և տղտի ջուր և քիշ մի հոռոմ ձէթ և անպակ գինի, խառնէ ընդ իրար ու շփէ ի գրաստն:

Այլ դեղ: Առ աղուվեսու ճրագու և աւծնէ զադին և զբաշն՝ մազն զայ: Եւ փեղի ճրագուն այլ աւկտէ:

Այլ դեղ: Առ հացհամեմի ունդ և կտաւատ՝ մասն մի, և լից ի վրայ քացախ և եղցոյ, և աւծնէ զադին և զբաշն:

Այլ դեղ: Առ զի պտուղ, ծեծէ և հան զջուրն և աւծնէ զտեղն:

Այլ դեղ: Եփէ ճակընդեղն և առ զիր ջուրն ու լուայ զբաշն և զադին, և աւծնէ շրիկ ձիթով. նա աւկտէ:

* Յանկաւ՝ թթէ:

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ ՄԱՏԿԻ, ՈՐ ԶԳԷ ԶՔՈՒՌԱԿՆ

Առ թուզ երկու նուկի ու լից|| (175թ) ի վրայ շորս նուկի կաթն, եփէ և լից ի ներս լուացած գարի և թրչէ և տուր, որ ուտէ հաւթն աւր: Եւ թէ շբժշկի՝ դու տուր տասնուշորս աւր:

Այլ զեղ այս ցաւուս: Առ պղպեղ նուկի մի, զընճպիլ՝ կէս նուկի, զաֆրան՝ երեք դրամ, անգուժատ՝ մէկ դրամ, շաքար՝ կէս նուկի, թմբրհնդի՝ քսան դրամ, գարէ ալոյյը՝ ճանկ մի, եփէ, և առ ի յիրմէ և եփէ ի հետ խոզտի, և լից ի վրայ զինի և ջուր ու խառնէ, որ լինի զէտ տահին: Եւ յամէն աւր նուկի մի ընդ փողքն ի վայր լից:

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՄԱԶՆ ԹԱԼ ԼԻՆԻ ԵՒ ՈՒԶԵՍ, ՈՐ ՔԶԱՆԱՅ

Առ երկու ափկից սիսեռն, թրչէ ի ջուրն և խառնէ ի գարին ու տուր, որ ուտէ երսուն աւր:

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ ԿՈՅԼԵՐՈՅ, ՈՐ ԵԼՆԷ Ի ՓՈՐՆ

Առ||(176ա) երակ ի շնկիքն և ի կուրծքն: Եւ առ շարհոտ տասն դրամ, կովուց՝ եղ՝ կէս նուկի, անպակ զինի՝ կէս նուկի, խառնէ ընդ իրար ու հան ի վրա քթեթի և դիր ի վրայ փորոյն: Եւ հետ աւրերոյ առ զգարէ ալոյրն և լուայ, ու կոտրէ հաւուկիթ ի ներս, և աղայ, որ լինի զէդ մորհամ, ու շփէ ի վրայ խոյլերոյն:

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ. ՈՐ ԱՐՈՅՆ ԳԱՅ ԸՆԴ ՔԻԹՆ

Առ գորտներ, այրէ և խառնէ ի սև ձոյթն ու դիր պատրուզով ընդ քիթն ի վեր, նա կտրի արոյնն:

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ ԱԿՌԱՅԱՅՆ, ՈՐ ՇԱԲԺԻ

Առ սկուկ հնդիկ, աղընձէ և լիսէ ու աղայ քացիսով ու դիր յականչն, նա փակչի քարն՝ դու հան:

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՅԱԿԱՆՁՆ ՔԱՐ ԼԻՆԻ ԸՆԿԵԼ

Շինէ պատրոյդ և աւծնէ տփխով կամ||(176թ) բկեկի խիժով ու դիր յականչն, նա փակչի քարն՝ դու հան:

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԴՈՐ[Տ]Ն ԵԼՆԷ Ի ԲԵՐԱՆՆ

Առ սոյսր և լից ի վրայ ջուր ու աղայ և շփէ զբերանն. նա աւկտէ:

ՃՆԳ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԿԱՆԱՅՁ ԳՈՐԾՆ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն է, որ պիտի մազն ի վայր գայ ու այլընդլի գրաստնեց կութիմննէ.

Առ գորտներ և եփէ և լից ի ներս հոռոմ ձէթ ու դիր ի ներս հացի մէջ և տուր, որ ուտէ:

ՃՆԷ. ՅԱՂԱԳՍ ԱԽԵԼ ՄԱԶԻ, ՈՐ ԵԼՆԵ Ի ԿՈՊՔՆ

Առ խիշիփրի ճրագու և լեսէած աւշնան ու մեղր ու քիլ մի աղ, ծեծէ ընդ իրար, շինէ զէդ մորհամ ու խլէ զմազն ու դիր ի վրայ:

ՃՆԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՈՒՏՎԻ ԼԻՆԴՔՆ ԵՒ ԱԿԻԱ. (177ա) ՏԱԿՔՆ

Առ տոլոյ մկրատկներ և ազոխ և թթու նուռն և աննուխ, ծեծէ, և առ զամենին ջրերն, և բաղդէ քթեթ մի ի փայտն և թաթխէ ի ջրերն և քշտէ զլինդքն:

Առ կոր, այրէ և լեսէ, և շփէ յակուայքն և ի լինդքն:

ՃՆԹ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԼԻՆԴՔՆ ՈՒՌԵՆԱՅ

Առ քապրցախի տերն, լեսէ և խառնէ ի քացախն, և շփէ ի լինդքն:

Այլ դեղ, Մեծէ զխակ նուռն իր կեղեռվն, և առ զջուրն և խառնէ ի հետ աղոխչուր, ու շփէ ի լինդքն:

ՃՆՀ. ՅԱՂԱԳՍ ՆԱՍՈՒՐԻ

Յասացելոց Ապի Ուսուքին: Առ եղրդակն և ոսպն ու կիր՝ յամէն մէկէ մասն մի, լեսէ և մաղէ և խառնէ ընդ կովուց եղ, ու շինէ պատրոյդ, ու դիր ի նասուրն՝ ողջնայ:

ՃԿԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՅՈՐՈՎԱՅՆԻՆ ԿԱՄ Ի ՏՈՆԵՆ

|| (177բ) ԱՐՈՅՆ ԵԼՆԵ

Առ դալար ընկուզի կեղեն նուկի մէկ, ճուլինար՝ երկու նուկի, ալոյր՝ կէս նուկի. թէ ի հովութենէ լինի՞ զու գինով եփէ ու լից ընդ խրշակն ի վայր, և թէ ի տաքութենէ է՝ զու ջրով:

ՃԿԲ. ՅԱՂԱԳՍ ԿՄԻ, ՈՐ Ի ՍՄՐԱԿՔՆ ԿԵՆԱՅ

Եփէ զաւշնանն ու լուայ իր ջրովն զնտքն: Եւ առ խակ թուզ և թրչէ ի քացախն: Եւ լուայ այն քացխովն զսմբակքն: Եւ ծեծէ զթուզն, որ զէդ մորհամ լինի, և դիր ի վրայ ոտիցն ու կապէ:

ՃԿԳ. ՅԱՂԱԳՍ ԽԻԶԻՓՐԻ, ՈՐ ՆԵՐՔԵՒ ԱՆԴԱՄՈՅՆ ԼԻՆԻ ԿԱՄ Ի ՅԱՅՆ ՏԵՂ

Մտիկ գիր, որ յորժամ շարժի, նա առ գետուտի խիշիփար և
այրէ և խառնէ ի մեղրն կամ ի քացխի մրուր. և փողնքտացոյ:

Եւ առ սաւնաւպրի ծառի տերեւ ու մատուտակ|| (178ա) և շաֆ-
քաւրան և սատանայի սեխլի տակ, լեսէ ու մաղէ, և շաղղէ պաղ
ջրով, և դիր ի վրայ: Եւ թէ բացվել լինի՝ դու գինով շաղղէ, ու թէ ի
տեղ լինի խաչիփարն, որ կարես հանել, դու հան. և ծառայէ զէդ
խոց մի այլ:

ՃԿԳ. ՅԱՂԱԳՍ ՅԱԽՈՒ, ՈՐ ՅԱՃՈՒԿՆ ԼԻՆԻ ԶԵԴ ՈՒՌԵՑ ԿԱՄ ԻՇՎԱ

Հանգոյ զգրաստն աւրեր և ծփէ շող ջրով: Եւ առ ամպակ գի-
նի և եռցոյ, ու սպուկգոռով խարկէ զտեղն: Եւ առ մոմ ու ձեթ և
այծու ճրագու և անգուժատ ու քացախ, և շինէ աւծնելիք և աւծնէ:

ՃԿԵ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՇԱՏ ՀԱԼՄՆԱՅՆ ՆԱՏԻ ԵՒ ԶՈՏՎՈՒՆ Ի ՄԱԼ ՊԱՀԵ

Առ ամպակ գինի և ջրխոնէ, և լից ի քիմն ու փողնքտացոյ:
Եւ չեր պահէ զգրաստն ու զջուրն եղկ|| (178բ) տուր, որ խմէ, նա
աւկտէ:

ՃԿԶ. ՅԱՂԱԳՍ ԽՈԶՄԱՋԻ*, ՈՐ ՅԱԹԻՆ ԼԻՆԻ

Այս մազս յորժամ յագին ելնէ, զագին ի պատերն շփէ, նա
պարտ է զայն խոշոր մազերն փետել: Եւ ճեղքէ յագոյն ծայրէն
զէդ կէս թիզ: Եւ եփէ զթուզն, և լուայ այս ջրովս, և լից մանդր
աղ ի յայն տեղն, որ ճեղքեցեր, և թող աւր մի, և մէկայլն աւրն
լուայ թզի ջրով, և աւծնէ զտեղն պախրէի լեղով: Եւ տարպայնի
այսալէս ծառայէ:

ՃԿԷ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԱՐԻՒՆ ԳՈԶԵ

Առ անխոսն և բրեփսի ունդ, լեղի նուշ, աւշինդր՝ յամէն մէկէ
դրամ մէկ, լեսէ և մաղէ, և առ յիրմէ երեք դրամ և խառնէ ի մեղր-
ջուրն ու լից ի փողքն ի վայր:

* Ցանկում՝ մաղկեր:

Այլ դեղ այս ցաւուս: Առ զրևանդ յերկայն ||(179ա) երկու
մթխալ, եփէ ի ջուրն և լից ի փողքն ի վայր:

Ճնշ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՊՆՉԵՐԻ, ՅԻՐԱՐ ԳԱՅ

Որ դի որ քթահարի գրաստն և երթայ ի վրա քթացն և կոտրի
պինչն և շկարենայ հանապազ երթալ, զի արգելի շունչն: Եւ պիղծ
ցաւ է:

Բժշկութիւնն է.

Մփէ զինք շող ջրով և մարձէ, որ զորդի, և շողցոյ զգինին, և
սպունկզով խարկէ: Եւ առ քաւշի ճրագու և մոմ, հոռոմ ձէթ և
սակաւ մի քացախ, յարապիկ խէժ, շինէ աւծնելիք և աւծնէ
զքիթքն. նա աւկտէ:

Ճնշ. ՅԱՂԱԳՍ ԽՈՅԻ, ՈՐ ԿՈԶԻ ՄԵՂՐԱԳՈՅՆ

Այս խոց է, որ ելնէ ի զաւղվածնին ի գիշութենէ, և կապի այն
գիշութիւնն՝ և լինի զէդ մեղր: Եւ վասն այնորիկ կոշեցաւ անունս
այս իւր:

Բժշկութիւնն է.

Առ հոռոմ ||(179բ) ձէթ չորս նուկի, աւշակ՝ նուկի մէկ, սպիտկ-
դէղ ֆուակցի՝ նուկի մէկ, ուստուխտ՝ կէս թուղթ, ժանգառ՝ կէս
նուկի, լեսէ և շինէ մորհամ. և դեղդրէ զխոցն:

Այլ դեղ այս ցաւուս: Խարէ պղընձէ խարշնով զայս խոցս և
զամենայն շուտած խոցեր, պատրաստ, որ ի ջեղն շհասնի և կարճը-
նայ: Եւ ծառայէ այս դեղովս. առ սինապ, դեղին ծծում, աֆիոն,
ճֆնոյ տակ, լեսէ և մաղէ. և ծառայէ զէդ խոց մի այլ:

Ճ. ՅԱՂԱԳՍ ԹԸԹԻ, ՈՐ ՔԻԹՔՆ ԵԼՆԷ

Թէ յերևան լինի՝ դու կտրէ և շփէ արշասպով և քացխով շատ
տարպանայնի (=տարպայնի):

Այլ դեղ: Առ զրևանդ, եփէ ի հոռոմ ձիթի մրուրն և շփէ ի
կտրուրն, և թէ լինի յերևան՝ շկայ իր դեղ:

ՃՀԱ. ՅԱՂԱԿՍ ԽՈՒՄՐՈՒԹԵԱՆՆ ԵՒ ԿԱՏՂԵՆ...^{*}

[ՃՀԲ. ՎԱՍՆ ԱԿԿՏԱԱՐ ԼՈՒՄՄԱՆ ԳԵՂԻ]

[ՃՀԳ. ՎԱՍՆ ՈՐ ԶԱՄԷՆ ԱԶԴ ՊԻՆԴ ԵԼՈՒՆԴ ԿԱԿՂՑՆԵՆ]

...||(180ա) զու լեսէ ու մաղէ ու շաղղէ քացիսով ու դիր ի վրայ ելընդին:

ՃՀԴ. ՅԱՂԱԿԸ ՏԵՌԻ

Առ մնջանի տակ և փիճոյ խէժ, արոյն աղբրաց, անծրութ, խունկ, յամէն մէկէ մասն մի, լեսէ ու ցանէ ի վրայ տեղին:

Այլ դեղ: Առ սապո, մուռ, անծրութ, աղբրաց արոյն, խունկ աղտորի խէժ, փիճոյ խէժ, սաւնապրի խէժ, զընճուֆր, ժանդառ, քամբկի կտի մէջ, ճուղինար, լեսէ ու մաղէ և ի բան տար:

Այլ դեղ տեղի: Առ խախիայ, Մորի մտէտ՝ յամէն մէկէ մասն մի, շրէշ՝ երկու մասն, լեսէ և մաղէ և ի բան տար:

ՃՀԵ. ՅԱՂԱԿՍ ՍԵԽ ՄՈՐՉԱՄԻ

Առ սկ ձոյթ, բկեկի խէժ, անգուժատ, լից ի վրայ սկ ձոյթին հոռոմ ձէթ և արդար եղ||(180բ), որ ծածկէ զինք, և հալէ ու մորհամ արայ և ի բան տար:

Այլ մորհամ: Առ սկ ձոյթ տասն դրամ, անծրութ՝ երկու դրամ, խնկի փոշի՝ երկու դրամ, ժանդառ՝ երկու դրամ, չարհոտ՝ երկու դրամ, շրէշ՝ երկու դրամ, շրէշ և լից ի վրայ ձէթ ու մէշամ արայ, աւկտէ ամէն ազգ տեղի և փուտ մսի:

- ՃՀԶ. ՅԱՂԱԿՍ ԲԵԽԵՌՀԱՄԻ

Քաշէ զբեկոն և բաց: Եւ առ նրճէսի սոխ և ըղտու կուտկակ, ծեծէ ընդ իրար և դիր ի յայն տեղն, որ կակղնայ:

Այլ դեղ: Առ կտրածոյ աղ, լեսէ և մաղէ և խառնէ և դիր յարդար եղն, և դիր ի վրայ և ասայ բանք զայս.

Յանուն աստուծոյ հայհընդեաց, զաւրութեամբն աստուծոյ հահընդեաց, մեծութեամբն աստուծոյ հահընդեաց, կարողութեամբն աստուծոյ հահընդեաց:

* Զեռագրից բերք է ընկած: Էջանամարները դրվել են բերքի բացակայության ժամանակ: ՃՀԲ, ՃՀԳ գլուխների վերնագրերը բերվում են ըստ ցանկի:

||(181ա) Այլ դեղ: Թէ ծնկունքն լիննայ ուսեցել, առ սինապ, լեսէ և շաղղէ ճակընդղի ջրով ու դիր ի վրայ ծնկվոյն ու կապէ: Այլ դեղ այս ցաւուս: Առ Քրմանի բուրակ երկու դրամ, հընդղեցի աղ՝ երկու դրամ, լեսէ ու շաղղէ կովոց եղ և դիր ի վրայ ուսեցին. նա ցրվի աստուծով:

Այլ դեղ, որ զարկը կենայ ի չեղն, նա կարէ լինել, որ փաշխտի դրամտն և կակղնայ և լինի գէդ ֆնտու, և գայ ի մէկ տեղ, կապի և ոստոփի:

Եւ իր բժշկութիւնն այս է. առ սպիտակ թուզ՝ հասած, թրջէ ի քացախն երեք աւր, և քանի հնանայ ի քացախն՝ լաւ է, և առ յիրմէ, ծեծէ ու դիր ի վրայ ոստուծ ջղին ու կապէ, ու թող երկու աւր և հան ու փոխէ ու նոր դիր: Տարպանայնի (=տարպայնի) այսպէս արայ՝ նա բժշկի:

||(181Բ) ՃՃ. ՅԱՂԱԳԻ, ՈՐ ՄԱԶՆ ՈՏԻՑՆ Ի ՎԱՅՐ ԿԱՅ

Լուայ սապոնով երեք աւր և ցամքցոյ: Եւ առ անծրութ հինգ դրամ, հացհամիմ՝ հինգ դրամ, լեսէ ու մաղէ և դիր յերկթէ շերեփ մի ու լից ի վրայ կաթն ու եփէ, որ գայ ու կապի: Եւ շփէ ի յայս դեղէս ի վրայ, ու կապէ ու թող շորս [աւր] ի վրայ, և հետ շորս աւուրն արծէք ու հանգոյ աւր մի: Եւ այլ վայր զգեղն դիր ի վրայ շորս աւր. և այսպէս արտյ տարպայնի, ինչուր մազն բուսնի:

Այլ դեղ. Ապի Ռւսութին սասցեալ. փորձած: Առ կեղեած սիսոր և քան ի զինք զմակ, և դիր ի հաւանն ու ծեծէ, որ գէդ մորհամ լինի, ու լուայ սապոնով, ու դիր ի վրայ ու կապէ, որպէս զմէկայն, որ ասցար:

Այլ դեղ: Առ թակնի խնձոր հինգ դրամ||(182ա), բուրակ՝ տասն դրամ, հացհամիմ՝ տասն դրամ, լեսէ ու մաղէ և եփէ կաթաւմ ու դիր ի վրայ:

Այլ դեղ: Առ սոյրս (=սոյսր) երկու նուկի, գիսթոր՝ նուկի Ա(1), լեսէ ու շաղղէ մեղրով ու դիր ի վրայ:

Այլ դեղ, որ թէ ծնկացն մազն կամ արմնկացն ի վայր լինի եկել: Առ խնկենոյ տերեւ, ծեծէ ու դիր ի վրայ ու կապէ:

Այլ դեղ այս ցաւուս: Առ այգոյհաւաւ և այրէ, ու առ դիր մոխիրն ու խառնէ ի քացախն ու դիր ի վրայ:

ՃՀՅ. ՅԱՂԱԳՍ ԽՈՅԼԵՐՈՅ, ՈՐ ԵԼՆԷ Ի ԿՈԶԱՑՆ Ի ՄԷՋՆ

*Տես, որ բնաւ շխարես, զի թէ խարես՝ աւերէ, նա մեծ յայպ
մնայ:* Ապա առ զտարարիհն ու խայծղան ու դիր ի վրայ ու կապէ:

*Այլ դեղ: Մեծէ զսեռուկ հնդիկն ու քացխով շաղղէ ու դիր ի
վրայ:*

*Այլ դեղ: Առ մատուտա|| (182ր)կի տերե, լեսէ ու մաղէ և շաղ-
ղէ քացխով ու մեղրով ու դիր ի վրայ ու կապէ:*

ՃՀՅ. ՅԱՂԱԳՍ ՃԱՐԱՏԻ

Մեծէ զյիշոցքն և խառնէ ի քացախն ու շփէ ի ճարատն:

ՃՀՅ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՈՒԹԵՅ ՈՒՆՆԱՅ Ի ՇՈՒՆԿԻ

*Մեծէ զյիշոցքն և խառնէ ի խայծղանն ու դիր ի վրայ, և
պատրաստ կալ, որ ոտքն շղիսլի ի մսուրն՝ վասն ճանճալոյ:*

*Տմէտ, որ աւկտէ պինդ ուռէցի, որ ի ծունկն լինի: Առ քաւշի
ճրագու և ամբրաւ, ծհծէ, որ զէդ մորհամ լինի, ու դիր ի վրայ ու-
ռեցին և կապէ:*

ՃՀՅ. ՅԱՂԱԳՍ ՇՈՒԿԱԿԻ, ՈՐ ՈՒՆՆԱՅ ԳՐԱՏՆ

*Տես, որ բնաւ ի ջուր շմտցնես: Ապայ առ պախրէի միս ու դիր
ի քացախն աւր մի և գիշեր մի, և քրըզմէ զոտքն|| (183ա), և դիր
զմիսդ ի վրայ ու կապէ՝ զէդ երկու պահ, և արծկէ. նա ելնէ յիրմէ
մանտր որդներ և բժշկի:*

*Այլ դեղ: Լուայ շող ջրով և ճանկ մի հացհամհմի ունդ լեսէ և
եփէ կաթաւմ, դիր ի վրայ ու կապէ:*

*Այլ դեղ: Առ արապիկ խէժ և ռեանդ, չնսէ և լուայ զշուկակն
աւշնանով և ցանէ ի վրայ զդեղն ու կապէ:*

*Այլ դեղ: Քրըզմէ զոտքն և շաղղէ զբուրակն քացխով ու դիր
ի վրայ:*

*Այլ դեղ: Առ մոմ ու ձիթենոյ խէժ, հալէ ի հոռոմ ձէթն ու շինէ
զէդ մորհամ և ի բան տար. ակտէ աստուծով:*

Նշանք. Հանապաղ երթայ ագու ընդ աշքն և կարմրի աշքն:
Բժշկութիւնն է.

Առ անձրութ դրամ մէկ, ||(183ս) կարֆու լեղի՝ դրամ երկու,
շաբար՝ դրամ երկութ, մամիուան ու քաֆուր և սպիտակ պղպեղ ու
յերկայն պղպեղ, յամէն մէկէ՝ դանկ մի, լեսէ և մաղէ ու դեղզրէ
դաշըն. Բժշկի ասուծով:

* * *

Գիրքս այս Բժշկարան է ձիոյ և առհասարակ դրաստնոյ,
յաղացս դեղոց և նշանաց, որ ճանչենան զաղէկն ու պիղծն:

* * *

Փառք, պատիւ և երկրագութիւն հաւը և որգոյ և հոգույն
սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յափտենից. Ամէն:

Արդ գրեցաւ Բժշկարանս ձիոյ և առհասարակ դրաստնոյ, որ
ճանչենան զաղէկն և զպեղծն, հրավայնաւ թրիստոսայ|||(184ա)-
սէր արքային հայոց Սմբատայ իմասթյնո և մտախոհի և հանճա-
րաշատին և բարեպաշտի, որոյ աշն Քրիստոսի աստուծոյ միշտ
հովանասցի նորա փառաց ի փառս բարձրանալ նմայ, երկար
կենաւք. Ամէն: Եւ ի հայրապետութեան տեառն Գրիգորիոսի թարգ-
մանեցաւ զիրքս այս ի յարապ զրէ ի հայ բառ, որ է Բժշկարան
ձիոյ և այլհասարակ (=առհասարակ) գլաւաստնոյ, ի բաղում իմաս-
տասիրաց և ֆլիսութայից ձընայ և Ասպի Ռւսուֆին և Ըույշիտայ և
այլ բազում հնդկաց և Պաղտըտայ իմաստասիրացն ասացեալ, որոց
զանուանքն շենք աստ գրել:

Եւ արդ ես նուաստ բժիշկս՝ Ֆարայճս, հրամանաւ տեառն
իմոյ սուրբ արքային յանձն առի բաղում աշխատանաւք և թարգ-
մանեցի զսա զորդ և յստակ բառիւ, զի յոյժ|||(184բ) հմուտ էի և
վարժեալ յարուեստս բժշկութեան ի մեծն Պաղտատ բաղում ա-
մաւք: Եւ եմ ազգաւ և հաւատով ասորի, աստուածապաշտութեամբ
կատարեալ ուղղափառ: Եւ աշխատեցայ թարգմանել զրժշկական և
զիմաստասիրական զիրքս ի մայրաբաղաքս Միս:

* Զեռ. այլ հասարակ:

Արդ ես, Թորոս տրուալ քահանայ, տեսեալ զիս Ֆարաճ բժիշկս
այս, և յոյժ աղաշեաց զիս և շատ հարկեաց և բազում խոստմունս
խոստացաւ ինձ և բազում երդմունս երդուեալ ինձ կատարեալ ի
սուրբ և յընտրեալ արքայէն։ Եւ ես յորժամ լուայ զփափաքումն
սուրբ արքային վասն սորին, ես ապա յանձն առի և գրեցի ի
սաւն և ապա վերստին նորոգեցի և զրեցի մեծ զիր ի յարապ գրէ
ի հայ բառ, զորդ և յստակ... (Գեռազիրն ընդհատվում է):

Ի ԳՐԱՍՏՈՒՆ ԲԺՇԿԱՐԱՆԵՆ ՓՈԽԱԾ *

Ա. ՅԱՂԱԳՄ ԿԱՂՆԱԱՈՅ

Գրաստուն կաղալն երկու ցեղ է. է որ ի ծածռկ կաղայ և է որ յայտնի. և որ կամենա ճանաշել՝ այս է նշանքն. որ ի մէկ ոտիցն կաղայ՝ նա ի զլխոյն շարժելն ճանչուի և ի կալօփցնելն և յորժամ հալծեցնեն զձին և կանգնեցնեն որ պաղէ և ձեռօք փնդռեն յերին և ի ծունկըն և ի կոճըն և ի սմբակըն և ի յետի ոտիին՝ նա երևնայ թէ ուստի կու կաղայ, և յորժամ ի գոյր քարուտ գետին կալօփցնեն՝ նա թէ ի սմբակն կենա կաղութիւն նա երևնա, և թէ վիճին ի սմբակն՝ նա եր ընդ դար ի վեր հանեն կամ որ ի սանդղմատն կոխէ նա ի վերայ բազկացն վախ հաստի, և յորժամ թապլի գրաստն՝ նա առաւել յայտնի կաղութիւնն. և երբ յանկասկած ի շուռ ածեն զգրաստն ի մէկ զեհն ու ի մէկ այլն՝ նա թէ ի կուրժքն կամ ի բէճքն կենա կաղութիւնն նա երևնա:

Բ. ՅԱՂԱԳՄ ՖԸՆՏՈՒ

Գրաստ որ ֆընտու լինի՝ հեայ խիստ և լարի պինչքն, թուլնա դլուխն և ամէն զօդվածքն, փայտնայ ոտվին, կտրի ի կերոյ և ի սկիզբն մինչև յերեք օրն շունչն տար լինի և ապա պաղէ շունչն և այլընդլի. աշլին խփի և դժար շարժի ամէն զօդվածքն, և տքալով գողէ և դժար քայլ փոխէ, և թէ ընկնի դժար ելնէ ի յոտն, և լինի որ քրտնէ անդմոնքն:

Բժշկութիւնն է այս ցաւուս:— Երակն, որ շորս օր շուտեցնել դարի, յետ շորս աւուրն կանգնեցնել զինք երեք օր ի գնացք ջուր, որ թաղվի ինչվի քովքն ի ջուրն, ու յամէն օր տարպա մի հանեն ի չըէն և օծնեն ամպակ զինով և հոռօմ ձիթով աղէկ, ու մարձեն դէպ

* Տպագրվում է ըստ «Բաղմակեպի», 1867, էջ 354—357^ա առանց փոփոխության:

ի վայր եթ ոտպին կակղնա ու լաւնա որ աղէկ քայլէ՝ նա անցմընցեցնեն ու արժեն:

Գ. ՅԱՂԱԳՍ ՔԱՄՈՅ ԵՒ ՈՒԹԵՅԻ, ՈՐ ԶԿԱՐԷ ԹՐԹԻԼ ԵՒ ԳՈԶԵԼ

Նշանքն այս է: Գրաստն քթահրի ու ջանա որ նստի ու դառնա որ գէպ ի յետ հայի:

Բժշկութիւնն է: Առ հին գինի լիտր երկու և չորս լիտր տասն, լից ի վերայ և առ խոզտի լիտր մի և անգուժատ դրամ տասն, ծեծէ զանգուժատն և խառնէ ի հետ քշիկ մի ալոյր ու խառնէ ի շրած դինին ու եղկցոյ ու դիր հոռօմ դեղ, և ապա առ կանաչ զնձի շուր լիտր մի և կէս և խմցո քշիկ քշիկ:

Գ. ՅԱՂԱԳՍ ԹԹԻ ՈՐ ԼԽԻ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ՏՈՇՆ ԿԱՄ Ի ԶՈՒՔՆ

Քաշեն ձար մի յագոյն ու կապեն զթթին տաքն պինտ ու թողուն հինգ օր ու ծխեն ներքեւ անծրութ, նա կարի ու ընկնիւ—Այլ գեղ: Առնուն սօնօպրի կեղեւ դրամ հինգ, եփեն յամպակ դինի և ծփեն զտեղին:

Ե. ՅԱՂԱԳՍ ԿՈՂԸՆՁԻ

Նշանքն է որ թուլնա շնիքն, բռնվի զօղվածքն, դողայ, նստի ու թապլի և ելնէ ի երենէն փրփուր:

Բժշկութիւնն է: Առ թառանգուապին դրամ տասն, տրորէ զինք յերեք լիտր շողզուր ու լից ընդ փողըն ի վայր և անցմնցեցո, և թաթիսէ զձեզնդ ի մեղրն և ի ձէթն՝ և մտոյ ի գրաստուն որովայնն և սրբէ:— Այլ գեղ: Առ հայինունկ նուկի մի, լոսէ ու մաղէ, ու առ մեղր դգալ երեք, հին գինի լիտր երեք, քացախ դգալ հինգ, խառնէ ընդ իրար, երեք քածին արա ու լից յամէն օր բաժին մի ընդ փողըն ի վայր, ծածկէ չեր և ած ի շուռ:

Զ. ՅԱՂԱԳՍ ՔԱՄՊԱՐԻ

Նշանքն է որ ի շուկակն ի նման լինի բայց շառնու զամէն ձեռն և ելնէ յիրմէ զիճութիւն և թարախ:

Բժշկութիւնն է: Առ երակ ի բաղկունքն ընդ ներքսէ և ընդ դրացէ, և լուս զիսոցն շողջրով սպիրիկ ու թող որ ցամքի. և առ մեղր դրամ քսան ու դղմի կտոր, այրէ որ լինի գործելի, լիսէ ու

խառնէ հետ մեղրին ու կապէ քթեթով երեք օր. ու ապա բաց, թէ լինի ողջցի՝ դու երկու երեք հետ այլ արա:

Է. ՅԱՂԱԳՍ ՄԿԱՏՄԵՐՈՅ

Եփէ զօշնանն ու ջրովն լուա սպկիկ ու ցամքեցո, ու օծնէ զինք քաղցր կարագով ի յօրն երկու տարապա, ու մի՛ թամբեր ու հեծնուրինչի ողջանաւ:

Ը. ՅԱՂԱԳՍ ԸԹԱՄԱՏԻՒԽ

Նշանքն է, որ իշնու ջուր ի քթէն որ լինի հոտած, և փաքայ որ արցվէ աշքն:

Բժշկութիւնն է: Լից ընդ քիթն ի վայր մանուշկի ձէթ ու փորնքտացո երեք օր, որ խաշէ զաղի ձուկնն ու լից զջուրն ընդ քիթն՝ ի վայր որ փորնքտա, ու ծխէ ընդ քիթն ի վեր՝ յատպէ ու խունկ:

Թ. ՅԱՂԱԳՍ ԶԱՐՍԽ

Առ սպիտակ կեղեմինոր որ լինա հասել յինք ջուր, ու շփէ դժարսնին ակներն աղէկ վազն ու յիրիկունն, ու լուա զինք պախրի դողով. նա ենէ յիրմէ զեղ կորեկհատեր, և առ աղէկ կալեքար, լուէ ու մաղէ ու ի վերայ ցանէ ու լուա զխոցերն վաղն ու յիրիկունն:

Ժ. ՅԱՂԱԳՍ ԴԱՅԼՑԱԽԻ

Նշանքն է. լարի շնիքն և ակընչվին, քաշվի աշիցն սկուցն որ սպիտկուցն շատ երեւա, և փայտնա շնիքն որ շհանի ի գետինն, և կտրի յալկէ և ի ջրէ, և պատճառն լինի ի հովէ և ի քըրտընելոյ որ դիպի յինք քամի և պաղի և յայնոր որ յարեգակն կտպին:

Բժշկութիւնն է: Կապէ զգրաստն ի մութնտուն, ու քլոթէ զմաքին ու զմորթին շող շող հագոյ ի վերայ զիխոյն ու շնիցն, ու աղէկ կարէ, և զբուրդն ի դուրս արա և շողցոյ զարդար եղն ու լից ընդ ականցքն՝ ի վայր ու օծնէ զամէն կոնակն ու զողնն ու զքովքն. ու տուր առվոյտ ու ի մօտ կեցիր ու բարձր կապէ որ չնստի. ու զմոշին ու զխունկի փոշին ծխէ ներքեն. ու վառէ ի խէջն զմոշին կամ հայնց փայտ որ մուխ շայնէ, և լից ընդ փողքն ի վայր խանդիխունի շարապ. բժշկերն զիտեն,—Այլ զեղ: Առ խոզտի, փիճոյ

խէժ, բևկի խէժ ու հոռօմ ձէթ. շինէ զայս օծնելիք ու օծնէ զգրաստուն ամէն մարմինն մազ ի վեր*:

Այլ դեղ. Առ մոմ ու ձիթենոյ խէժ, հալէ ի հոռօմ ձէթն և շինէ զեղ մորհամ և ի բան տար:

ԻԹ. ՑԱՂԱԳՍ ՄՐՈՍԻ

Նշանքն է: Լինի ի սրոնքն զեղ ոսկոր ուռեց խիստ պինտ, և թէ ի զօդվածն մտէ աւիրի գրաստն:

Բժշկութիւնն է: Քրիզմէ զտեղն և սպրկցո ի մազէ, և ապա առ ակիշ որ լայնքն սրօսին շրօք լինի, շանթցոյ և կալ ընդդէմ յերակ որ խիստ տաքնա սրօսն ու բոյթաւմտ աճոէ ու տրորէ սերտ յօրն երկու հետ. ու եթ լեզենաս յաճռելն, դու լիսէ տաշեղ զառիկ ու շաղէ ու ի վերայ դիր սրօսին շրօք ու կապէ. ի յօրն երկու հետ արա զդեղտ ինչվի հալի սրօսն:—Այլ դեղ: Նոյն նշանօրտ քրիզմէ և շողցո և աճոէ. և առ անլուա սապոն ու մարդո խիզով տրորէ ու ի վերայ դիր. և այս կերպովս արա մինչև հալի սրօսն. և քանի մատղաշ լինի գրաստն նա շոյտ ողջանաւ:

Լ. ՑԱՂԱԳՍ ԽՇԱԽԱՑ ՃԱՆԱՋԵԼՈՅ ԶԼԱԱ ԳՐԱՍՏՆ ԵՒ ԶՎԱՏԹԱՐԵ

Երեսն աւաղ, յակընչէ ականչ արձակ. բերանն մեծ. շրթունքն նօսր. քթափողքն արձակ. դունչն ի պախցտեղոյն ի վայր պարկեշտ. աշքն մեծ և յիստակ, և պտուղն թուխ, և յիրացմէ ի հեռու, կոպքն նօսր. ականջքն ի ցից և յերկայն. տակքն բարակ մինչև ի մօտ ի մէջն և քանի ի վեր երթա նա լայննա, և ծայրն սուր, և լինի ականջն պարկեշտ և նօսր և երբ բռնես պինտ. դուրէթն կակուղ և յերկայն, և մանտր մազն որ ի հետ կա կակուղ, և ոսկրն որ ներքե դուրէթին կա՝ ցած՝ շլնին յերկայն, և փողքն և ճիտքն բարակ և նօսր, և շլնոյն երկու շեղն որ յուսէն ինչվի ծոծրակն է ներքե բաշին՝ եր բռնես նա պինտ լինի և ի լար. և շլնոյն մէջն բարձր, և շլնոյն ներքե մորթին ի կախ զեղ եղին: Նքթէպն և բիճգլխնին ի թաղման, և երբ բռնես նա լինի պինտ, և բիճացն մէջն ի դուրք, և ողնշարն դորդ որ շլնոյն վկայէ. կուրծքն արձակ, և կրծոցն երկու ձկունքն ի դուրս, և մորթն որ ի վերայ է կակուղ,

* Հշատարակիշը նշում է, որ ձեռագրից բաւր է բնկած:

և երկնին որ ի լինք կա՞ հաստ: Մղիքն կարճ և հաստ, և յետի
կարթքն լայն և յետի ձկունքն հաստ և երկնին շատ և յերկան, և
կարթքն ի յոտն: Երբուժն նօսր և ցած. կողքն լայն և հաստ,
ծունկքն պարկեշտ և ի մօտ յիրար. և ջղերն որ ի վերայ բաղկացն
սփռեալ է նա աղէկ յերկան լինի: Կոճքն կարճ և աւաղ ի մսէ. և
ջիղքն կարճ և ի թաղմնի, որ ոչ աւելի ի յոտն լինի կոճքն և ոչ
աւելի կակուղ քան զլաբսն: Մմբակքն մեծ և կակուղ և գոշ,
և կրկունքն դէպ ի դուրս և գորտն ամուր և շոր: Մսանքն որ ինչվի
ի վերայ քովացն հասնի, վերի դեհն հաստ, և ներքինն նօսր և
արձակ յիրացմէ: Մէջքն ի նըթէպէն ինչվի պճկոռացն հովն
կարճ և հաստ. և պճկոռացն յերկայնքն և լայնք և բարձրութիւնն
ի շաբ: Անդմացն շքեռքն արձակ, և ագետկուն ներքե միսն
հաստ և պինդ, և մորթն լաւ ի փակման. անդամն լայն, և պրճուկն
ի բարձր վիցած ի շաբ. և խնծորքն ի շաբ ի դուրս վիներս. և ոռն
հեռու ի ձվոցն և արձակ, որ կոճքն զիրար շծեծէ. և անդմոցն
ձկունքն ներքսինն և դրուցինն հաստ և լայն և մսլի և պինտ. և
այն մեծ երակն որ ներքե անդմացն կենա հաստ և կարճ. և
կոճքն կարճ, և ջեղն հաւսար ի յետի կոճացն ի վայր. և լինի առջի
ոտ*

* Հրատարակիչը նշում է, որ ձեռագիրը այստեղ բնդատվում է:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Միջին հայերենի բառագանձի ուսումնասիրությանը նպաստելու, ինչպես նաև հրատարակվող հուշարձանն ընթերցողներին մատչելի ու հասկանալի դարձնելու համար աշխատասիրողը նպատակահարմար է գտել սույն բառարանում բացատրել և, անհրաժեշտության դեպքում, ստուգաբանորեն ներկայացնել՝

1. Մեր բառարաններին անծանոթ այն բոլոր հայերեն բարդությունները, որոնք օգտագործված են միայն հրատարակվող «Բժշկաբանում».

2. «Բժշկաբանի» բնագրում առաջին անգամ հանդիպող բոլոր փոխառյալ բառերը.

3. Բոլոր այն բառերը, որոնց հնագույն գրավոր վկայությունը տալիս է «Բժշկաբանը».

4. Այն բառերը, որոնք ուղղագրական աննշան տարբերություններով մեկ կամ երկու վկայությամբ պահպանվել են միջին հայերենի հուշարձաններում, մասնավորաբար 13-րդ դարի երկրորդ կեսին արաբերենից հայերենի փոխադրված «Գիրք Վաստակոցում»։ Այս բառերը նպաստում են հաստատելու և ցուցաբերելու հայերենի կիլիկյան բարբառի, հատկապես զյուղատնտեսական բառապաշտի միասնությունը.

5. Բառերի բարբառային տարբերակները.

6. Միշտարբ բառեր, որոնք մեր ստուգաբանական ու բացատրական բառարաններում անստույգ են դիտվել կամ ճիշտ չեն ստուգաբանվել։

Բառարանում հիմնականում չեն ընդգրկված ամփոփված ձայնավորներով բառերը. օրինակ առևել (=առաւել), եռցնել (=եռացնել), զարկնել (=զարկանել) և այլն, ինչպես նաև ա ձայնավորից հետո յ ունեցող բառերը՝ օրինակ՝ այշ, կանայշ, մատղայշ և այլն։

Բառարանը կազմված է հետեւյալ սկզբունքով. նախ տրվում է բառի այն ձևը, որ պահպանված է հրատարակվող բնագրում (եթե

բառը ունի նաև այլ ուղղագրություն՝ տրվում է և այդ ձևը), այնուհետև փակագծերում նշվում է բնագրի այն էջը, որտեղ բառը հանդիպում է առաջին անգամ. հաճախ նշվում են նաև բառի կիրառման այլ օրինակների էջերը: Բառի բացատրականում հիմնականում տրվում են տվյալ գիրքում բառի ունեցած իմաստը, երբեմն նաև այլ առումները: Անհրաժեշտության դեպքում, մանավանդ եթե բառը առաջին անգամ է հանդիպում մեր մատենագրության մեջ, վկայակոչվում է բնագրի այն նախադասությունը (կամ նախադասությունները), որտեղ օգտագործված է բառը: Որոշ հիվանդությունների և դեղաբույսերի անուններ տրվում են նաև լատիներեն. դրամց համար հիմք են ընդունված Ամիրտովլաթի «Անգիտաց անպետի» 1926 թ. հրատարակության կ. Բասմաջյանի ծանոթագրությունները և Ա. Բեղյանի «Բուսանունների պատկերագարդ բազմալեզվան բառարանը» (Կահիրե, 1936):

Բառը ստուգաբանելիս առանձին տողով նշվում է փոխառյալ լեզուն, այնուհետև բերվում է բառի արաբատառ ձևը, որին հաջորդող փակագծերում տրվում է տառադարձությունը: Առանձին պարբերությամբ, ի հարկին, տրվում են բառի ստուգաբանման հետ կապված որոշ մանրամասներ:

Բոլոր այն բառերը, որոնք մեր բառարաններում չեն գրանցված, ցույց են տրվում + պայմանանշանով:

Եթե բառը ծանօթ է մեր բառարաններին, սակայն նորովի է ստուգաբանվում կամ լրացուցիչ նոր բացատրություններ են տըրվում, ապա այն ցույց է տրվում Օ պայմանանշանով:

Բարբառային տարբերակները ցույց են տրվում □ պայմանանշանով:

Հայտնի է, որ արաբական բառերն ու տերմինները միշնադարյան հայ գրականության մեջ միօրինակ տառադարձություն շումնեն, որի հետևանքով մեր բառարաններում դրանք հաճախ գրանցված են այլեւայլ գրերի ներքո. յայսկես օր. յարաղան «գեղնություն» հիվանդության անունը Աճառյանը վերցրել է Մխիթար Հերացուց, որ տառադարձել է արական ձևով, Գրիգորիսը այն տվել է արադան և եարաղան, իսկ մեր հուշարձանը յարաղան ու արեխան տառադարձությամբ: Հետևաբար բառարանից օգտվողները պետք է նկատի ունենան, որ այստեղ բառերը տրված են միայն այն ձևով, ինչու հանդիպում են «թժկարանիս» բնագրում:

Քառարանը կազմելու համար օգտագործված են՝

1. Արիկեան Մ., Երեքլեղուեան բնդարձակ բառարան՝ տաճկեռէն-Հայերէն-գաղիկերէն, Կ. Պոլիս, 1888:

2. Ալիշան Ղ., Հայրուսակ կամ Հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895=Հայրուսակ:

3. Աղայան Էդ., Արդի Հայերէնի բացատրական բառարան, Երևան, 1976=է. Աղայան:

4. Անառյան Հ., Հայերէն արմատական բառարան, Հ. Ա.-է, Երևան, 1926—1935=Անառ. ՀԱԲ:

5. Ամատունի Ս. Վրդ., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912=ՀԲԲ:

6. Ամիրտովլար Ամասիացի, Օգուտ բժշկութեան: Խմբագրությամբ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940=Օգ. ԲԺ.:

7. Ամիրտովլար Ամասիացւոյ Անդիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց: Ի լոյս էած Հանդիրձ ծանօթագրութեամբ Կ. Յ. Բասմաջեան, Վիեննա, 1926=Անգ. անդիւ:

8. Առձեռն բառարան, Բ. տպ., Վենետիկ, 1865=ԱԲ:

9. Բառդիրը Հայոց արարեալ.... Երեմիայ վարդապետէ, Յակոսոնայ, 1698=Երեմիա Մեղրեցի:

10. Բառդիրը Հայոց, Քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975=ԲՀ:

11. Բժշկական նոալեզվան բառարան, 1438 թ. (Karst J., Das trilingue Medizinalglossar aus MS 310 der Wiener Mekhitaristen Bibliotek, „Zeitschrift für armenische Philologie“, B. 2, H. 2, Marburg, 1903)=1438 թ. թժկ., ZFAP.

12. Բիւզանդացի Նորայր, Բառդիրը ի գաղղիկերէն լեզուէ ի Հայերէն, Կոստանդնուպոլիս, 1884=Նորայր ֆրան. բառ.:

13. Գիրը վաստակոց: Թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ: Վենետիկ, 1877=Գիրք վաստակոց:

14. Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց: Աշխատասիրությամբ Ա. Ա. Կծոյանի, Երևան, 1962=Գրիգորիս:

15. «Թարգմանութիւն անուանց գեղոց յայլ լեզուաց ի մերս», Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. 1821, 1294 թ., էջ 143—146 (օգտագործված է մանրաժապավենը)=1294 թ. ձեռ. թժկ.:

16. Սատուրյան Ռ. Գ., Բույսերի անունների լատիներեն, Հայերեն, ռուսերեն բառարան, Երևան, 1970 = Սատուրյան:
17. Կարապետեան Պ. Զ., Մեծ բառարան օսմաներէնէ Հայերէն, Կ. Պօլիս, 1912 = Կ. Զելի:
18. Կարստ Փողեթ, Միջին Հայերենի բառարան (գերմաներեն), անտիպ, Մատենադարան, Դիվան, Այլկայլ թողոններ = ՄՀԲ:
19. Կիրակոսեան Գ., Բառարան պարսկերէն-Հայերէն, Թւհրան, 1933 = Կիրակոսյան:
20. Հովհաննեան Ղ., Հետազօտութիւնը նախնեաց ուամկօրէնի վրա, 1897 = Ղ. Հովհաննյան:
21. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Հ. Ա.-Դ, Երևան, 1944—1945 = Մալխաս.:
22. Միփրար Արք, Բառգիրք Հայկազեան լեզուի, Հ. Ա.-Դ, Վենետիկ, 1769 = ՀՀԲ:
23. Միփրարայ Բժշկապետի Հերացոյ Զերմանց Միփրարութիւն, Վենետիկ, 1832 = Միփրար Հերացի:
24. Մուրադյան Մ. Հ., Բառագիտություն, տե՛ս «Ակնարկներ միջին դրական Հայերենի պատմության», Հ. Ա., Երևան, 1972, էջ 168—296 = ԱՄԳՀՊ:
25. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Հ. Ա. և Բ, Վենետիկ, 1836—1837 = ՆՀԲ:
26. Պողոսեան Հ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը, Լոս Անձելլոս, 1942 = Պողոսյան:
27. Պօզաննեան Յակովլոս Վ., Համառօտ բառարան ի տաճկականէ ի Հայ, Վիեննա, 1841 = ՊՅ:
28. Զախարիսեան Մ., Բառգիրք ի բարբառ Հայ և իտալական, Վենետիկ, 1837 = ԶԲ:
29. *Абусаид*, О строении человека. К изданию подготовила С. А. Варданян, Ереван, 1974 = Արտադիդ:
30. Баранов Х. К., Арабско-русский словарь, Москва, 1957.
31. Миллер Б. В., Персидско-русский словарь, Москва, 1953.
32. Персидско-русский словарь в двух томах, под редакцией Ю. А. Рубинчика, Москва, 1970.
33. *Bedeveian A. K.*, Illustrated Polyglottic Dictionary of Plant Names, in Latin, Arabic, Armenian, English, French,

German, Italian and Turkish Languages, Cairo, 1936 = Բնակչություն:

34. Clauson G., An Etymological Dictionary of Pre-Thirteenth Century Turkish, Oxford, 1972.

35. Redhouse J., A Turkish and English Lexicon, Constantinople, 1921.

36. Steingass F., Persian—English Dictionary, London = Եսիբիզաս:

37. The Faras-nama of Zabardast Khan, Calcutta, 1911 = Պարսկ. տպ. ձիամատլան:

38. (﴿الغاظ الدویه تصنیف نورالدین محمد عبدالله شیرازی﴾ Քեղորյացքի բառարան, աշխատասիրությամբ Նուր աղ-Դին Մոհամեդ Արդուլլա Շիրազի) [19-րդ դ. Հնդկաստան]:

39. (﴿الغاظ الدویه میزان الدویه فرهنگ تصریحه انبیس الهمالجین﴾ Քեղորյացքի բառարան և շափերը, Նասիրիյեի բառարան, բուժողների բարեկամը) [19-րդ դ. Հնդկաստան]:

40. ۱۳۲۵ (دهخدا، لغت‌نامه، تهران، ۱۳۲۵/1946),

41. ۱۳۱۷-۱۳۳۴ (فرزود سار یا فرهنگ نفیسی، جلد ۱-۵، تهران، ۱۳۱۷-۱۳۳۴ ۱۹۳۸-۱۹۵۵).

* * *

Արաբերեն և պարսկերեն բառերի լատիներեն տառադարձությունը տրված է ժամանակակից արևելագիտության մեջ ընդունված տառադարձման հիմքայլ համակարգով:

ء	ر	ز	ف	ڻ	ي	ڻ	و	aw
ب	b	ڙ	z	-	ق	ں	ڻ	ay
پ	p	ڙ	zh	ك	k	ي	I	
ت	t	س	s	گ	g	-	a	
ٿ	th	ش	sh	ل	l	-	u	iyy(1)
ج	dj	ص	ش	م	m	-	u	ü
ڏ	ڦ	ض	ڏ	ن	n	-	i	ö a, at
ح	h	ط	ت	ه	h	-	-	
خ	kh	ڦ	ڙ	و	w	-	-	
د	d	ع	'	ى	y	-	-	
ڏ	dh	غ	gh	-	-	-	-	

Ազէտակ (47), ազիտակ (59)—ազիի, պոչի տակի հատկածը. «Ազէտիուցն միան,
որ կայ յետե անդմացն, նա լինի հաստ և պինդ» (47):

Ազէտակ վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 201):

Օ Ազո (132, 143, 149)—որևէ հեղուկի նստվածք, ազտ, դիրտ. «Աւծնէ զձեռ-
քը հոռոմ ձիթով ու մտոյ պատրաստ ի յուղվախն, ու սրբէ ու հան զագոն և
զշորութիւն զինչ զտնուա» (132). «Ելք, որ ելնէ ի յաշըն, ու զէդ թութ լինի,
և երթայ յիրմէ ազո» (149):

— արար. **ՀԿՐ** (‘ակր, ‘ակար) — նույն նշ.:

Գիրք Վաստակոցի բառարանը, նրա հետևողությամբ նաև Աճառյանը
(Ա, 17), առանց նշելու բառի ծագումը, ուղիղ են մեկնում՝ «Գիրտ կամ
մրուր բազցուի կամ մեղեր, և ազտ վիրաց» (էջ 239): Մալխաս. (Օգ. թժ.,
547) առ մեկնում է «փորի ավելորդ ազբ»:

Մ. Մուրացյանը (ԱՄՊՀՊ, 260) առ ազո (ազո)-ից է բիւցնում աժամէջ
(ազոմէջ) «կենդանու սրունքների և բարձերի մեջտեղի մասը»: Ուղղելի. Ա-
ճառյանը (Ա, 839) իրավացիորեն առնմէջ կամ աժմէջ մակարերում է այ
«ուռք» ձևից:

□ Ազիիկ (70)—ազգիկ, տոհմիկ, նրբակազմ, նրբին. «Ազէկ ազդ ձի ազիիկ և
անարատ իր դաւգվածաւրն»:

□ Ազոխօր (129, 157)—ազխաչոր, խակ խաղողի հյութ, ժռաշոր: **ՏԵՇԱ ազոխ:**
վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 223): Պահպանված է բարբառնե-
րում: Մալխասյանցը ունի ազոխաչոր:

Ալիկ (67, 69), արար.—անասնակեր:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 211 (Աճառ. Ա, 53):

Ալիել (67, 82)—անասունին կեր տալ:

Վկայված է Անսիգրում, էջ 79 (Աճառ. Ա, 53):

□ Ալոյր (106, 108)—ալյուր:

Վլիմիա (145)—տե՛ս աղլիմիայ:

+ Աննաֆ (89)—ծուռ ոտք. «Ծուռիւն կա [սմբակի], որ ներբանէ լինի և ասեն
իր աննաֆ»:

— արար. **ՀԽՓ** (խառաֆ), հոգն. **ՀԽՓ** (ախոաֆ) — նույն. նշ.:

+ Անոկրա (86)—վեհասրար, վիհասկար. «Զի ազցած զարին այլ բէիկ անոկ-
րա» է:

Կաղմված է անոկլ «վիհաս» արմատից և արար վերջածանցից:

+ Անսաֆ (57)—բառացի՝ սպի. «Քէ լինի քովքն սպիտակ, ասեն անսաֆ»:
— արար. **ՀԽՓ** (ախսաֆ) — նույն նշ.:

Օ Աղբաց արոյն (160) — աղբաց արյուն

Տե՛ս Հայրուսակ (§ 53); Մալխասյանը հիշատակում է այս բույսի տարբեր անունները՝ աղբերաց, աղրու կամ յորն աղբերաց արյուն, յորն նղոր կուն արյուն, աղբերանց ծաղու, աղբան կամ աղրու արյուն, որ համապատասխանում է յատ. Առոլանթուս Տուռնեֆորտի կամ Բիբերստենի, իսկ Բեղեյանը (§ 2632) գնում է յատ. *Phelypeaea coccinea* Poit.

Օ Աղիմիայ (150), ախլիմիայ (145), խլիմիայ (145) — արծաթի, ոսկու կամ այլ մետաղի խարամ, աղտ. և և ոսկոյ աղիմիայ և արծաթոյ անծրութեա (159):

— արար. Ակլիմա (aklimia) — նույն նշ.:

Դիրք Վաստակոցը (էջ 113) ունի աղիմիա ձևով. իմաստը հիշտ է մեկնում Վաստակոցի բառարանը (էջ 239): «աղտք ոսկոյ և արծաթոյ»: Մալխասյանըց Թզ. բժշկ. բառը բրույկում աղլիմիա մեկնում է սրբիմիական նյութ, թթվուկ՝ որ մետաղը հաւելու ժամանակ նստում է ամանի կողերին. Հետոյի կադմիաս: Աճառյանը (Ա, 12) աղլիմիայի ծագումը անստույգ է համարել, սակայն ունի նաև որպես առանձին բառ ախլիմիա, որ Կարստը բացատրում է «մի տեսակ բույս»: *cadmia* (անդ, էջ 63):

1438 թ. բժշկաբանում հիշատակված է որպես արար. բառ. «Ախլիմիա, արապերէն խլիմիա. լադին՝ զադիմիա» (տե՛ս ZFAP, 121):

+ Աղլուտ (74) — սլացքի ժամանակ ծիան ընդդիմադիր լինելը. «Որ եթ հանդիպի ի պատերազմն ու աղլուտ լինի, նա չառնու զիր առջի բնութիւնն»:

— արար. Ելաչա (ikhlâz) «խառն, խառնուրդ» բառից՝ վերը բերված առումով (բառ Կամուսի. Բուրք. թարգմ., հ. 2, 430):

Օ Աղծրի (54) — աղածրի, տհաճ, տղնդ, պիղծ. և կայ զաւովված, որ աղծրի թվենայ, նա ի մեծութիւնն աղվորնայա:

ՆՀԲ (32): «Աղածրի. ա. գտանի զրեալ և աղարծի. Բառ անյախ»: Իրրերախայ, մատաղ, կամ Համախումը որպէս խաչն զիմեալ յաղ. «Անկեալ աղաշնեն աւասիկ ամ աղածրի երամ երամ բազմութիւն տղայոց». յն. ամ կամ համօրէն բազմութիւն տղայոց. Գ. Մկ. գ. 12: Աճառյանը (Ա, 107) աղածրի կամ աղարծի մեկնում է «փափուկ, մատղաշ»:

Գիրք Վաստակոցը (էջ 189) ունի աղծրուրին, որ բառարանում (անդ, 239) բացատրված է «աղիութիւն»: Աղծրուրին շունեն ՆՀԲ, Աճառ. և Մալխաս. ՆՀԲ տալիս է աղծեալ «աղած, աղ զրած»:

Աճառյանը (Ա, 151) առանձին անդորքածական աղծ արմատը բացատրում է «աղտ, կեղտ»: Արանից կազմված են աղծուրին «կեղտուրութիւն», աղծապիղծ «գարշելի», աղծապղծուրին, աղծել «պղծել, ապականել, կեղտուել»:

Մեր աղբյուրում բառու հակաղրվում է աղլիկ, աղվոր հասկացությանը. և եւ բուռակն, որ ծծկան լինի, նա շկարէ մարդ զաղէկն ու զայիղծն ճանալել, զի երենայ զաւովված ի բուռկութիւնն, որ աղվոր թվենայ, ու եր մեծնայ, նա հաստնայ ու յերկանայ կամ լայննայ, ու ելնէ ի հնդամէ (իմա՝ տեսքից —

թ. Զ.), հանցու կայ զաւդված, որ աղջրի (իմա՝ պիզճ, տպեղ, տհաճ) թվենայ, նա ի մեծութիւնն՝ աղվուրնայ» (էջ 54):

Այստեղից Վաստակոցի աղծրուրինը պետք է հասկանալ տհաճ համ, պղծությունը, խոսքը վերաբերում է ազ զրած չոր միբզը տհաճ համից ազատելուն. ուրիշ հասանի՝ հան ու յուա, որ ելանէ աղծրուրինեա (էջ 189):

Նորայր Բյուզանդացին (ԲԱՀ, Ա տետր, 106) ունի բառ առանց բացատրության, սակայն Առ. Սյունեցուց բերած նրա վկայությունը հաստատում է տհաճ համը իմաստը. «Զհամ աղծրուրինեանը տաղտկալիք»:

- Աղջոյր (58ր, 90, 182)—1. եղջյուր, կոտոշ. 2. նման. հճակի. «Դաղթան աղջոյրն ցածն գոված է» (58ր), «Զբնենովիսին այլ փոքր, բառ լուսին (իմա՝ պարտի) լայնքն, որ բռնէ զղունկն, որ ոչ թողու, որ աղջոյրն կոտրտի» (90):
- Աղսիրաղս (95)—անկարգ, խառնագնաց. «Եր զահէ՝ նա [ձին] աղսիրաղս երթայ»:

Վարդան պատմիչը («Հավաքրումն Պատմութեան», Վենետիկ, 1862, էջ 52) ունի ախցիկինեց. «Եւ ընկեցեալ զսուրբն Սահակ, կարգեն ի տեղի նորա զՄորմակ շարախոսակից իրեանց, որ ոչ յամեալ տարի մի՛ հալածի. և զնն զթրիշու ասորի, ամ մի. և ապա զԾմուէլ ի նոյն ցեղէ, ախցիկինեցից և վատավարքս: Նշի մեկնում է «թուլամորթ, անկարգ, խառնագնաց»: Աղանայի բարբառում կա աղջրեղց: Աճապյանը (Ա, 70, 2, 1077) սրա հետ նույնն է համարում ցըրեղ, գուրս թողնելով Նշի-ի «խառնագնաց» իմաստը. վերցինս պետք է վերականգնել:

Հավանարար աղսիրաղս նույն աղցիկինեց (աղցրեղց) ձեհ տարատեսակոթյունն է՝ ց>ս անցումով:

- + Աղվանադի (105, 137), աղվանեդի (127)—աղվանիների կարգին պատկանող դեղաբույս (*):

1294 թ. բժշկ. ունի «աղվանարօտ» աղվենու ծիրտու (էջ 143), իսկ Օգ. բժշկ.՝ աղանարօտ. Հայրուսակը (21) իրար մոտ է զնում տղանարօտ, աղվանարօտ, աղունարօտ, աղանենի, աղանին, աղվենու ծիրտ ձեռակ նշելով, որ «առաջինին և վերջինին մեջ տարբերութիւն պիտի ըլլայ, այսինքն տարբեր բոյսք պիտի ըլլան, բայց զժար է որոշենա, սակայն ելնելով բույսի ամիրտով լավագության նկարագրությունից, աղանարօտ համարում է լատ. Verbena, իսկ աղանեն ծիրտն՝ արար. Խորու կ-համամը: Արմ. Տեղեանը 1936 թ. (§ 3573—4) աղանեն ծիրտն՝ արար, աղանին նույնացնում է Verbena officinalis-ի, իսկ հապարակ աղանարօտ, աղանին նույնացնում է Verbena hybrida-ի հետ: Թ. Սատուրյանը (1970 թ., 107) աղանարօտը Verbena hybrida-ի հետ: Թ. Սատուրյանը (1970 թ., 107) աղանարօտի դիմաց դուռմ է Spergula, տորոց, առերգել, իսկ աղավնինի դիմաց՝ Verbena.

- Աղվուրին (68)—տե՛ս աղվուրին:

- Աղվոր (52...)—գեղեցիկ, սիրուն:

- Օ Աղվենել (67)—տե՛ս աղվենել:

- Աղփուր (76) | իմաստները անստոյւգ. «Զքեկ աղփուր գտնու ի թամբքն և ձգէ Աղփորել (76) | զքեկ կամ աղփորէ:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրում» (208—9) աղփուրին

(կամ ախփրութիւն) ռանասունի սատկելու համար է զործածված. Կարստը մեկնում է «անզապություն, ստահակություն» (Աճառ. Ա, 164):

Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Ա, 133), մի նոկեփորիկից քաղելով, բառ մեկնում է «ափեղցիկեղ». «Եւ ի խօսելն զյօդ պատույշ միշտ պահէ, և շարժմանց և բանից և գործոց ամեննեին բանիւ ոչ լինի, և ազգութն ոչ խօսի» («Բազմավեպ», 1848, 370ա).

□ Անուկ (42, 154)—աբոմեջ, ցայլը, երանք:

Նշմ և Աճայանը ունեն որպես ռամկական բառ՝ քաղված Ֆրա Մարինինի պատմության ԺԴ դարի թարգմանությունից: Մեր աղբյուրը տալիս է բառիս հնագույն գրավոր վկայությունը:

□ Անուկ (121)—աճառել, տրորել:

Վկայված է Մխ. Հերացու մոտ (էջ 11) և Գիրը Վաստակոցում (էջ 184):

□ Ամ (59, 87...)-1. բայց, 2. արդ (Մալխաս.), 3. ուրեմն. «Ամ ի յայսոց (59) «Ամ պահէ զբեկ» (76), «Ամ քանի կարես կակուղ արա զպախուցն» (88):

+ Ամանցի (52)—Ամանի երկրից, ամանեցի, ամանական:

Ամբակ (121, 128)—տե՛ս ամպակ:

Ամպակ (129, 130, 133)—տե՛ս անպակ:

+ Այլբնդայլի (112), այլբնդիլ (106, 110, 156, 157)—այլայլվել. «Այլբնդայլի գրաստն և լարվի պնչերն» (112), «Հետ երեք աւորն պաղ լինի շունչն ու այլբնդիլ» (106):

Գրաբարյան այլ ընդ այլոյ արտահայտությունն է, որ կիլիկյան հայերնեում բայլական ձև է ընդունել:

□ Այլոր (71, 76...)—այլօր, վաղանդ, մյուս օրը:

Բարբառներում պահպանված է Էլօր (Աճառ. Ա, 251): Մալխաս. ունի այլօր:

□ Այլվա (50, 52)—դարձյալ, նորից:

□ Այնել (44, 67...)—առնել (արարի), անել:

□ Այշ (147)—աշ:

□ Այշողնալ (104)—հաշողել. «Արա զայս տարապանիս (իմա՞ մի քանի անդամ) ինչվի այշողնալ»:

Այպ (38...)-տե՛ս յայլու:

+ Այսամ (58)—մեկ կամ երկու ոտքը սպիտակ ձի. «Թէ մէկ ոտն լինի սպիտակ ու ի հակատն լկենայ նշան, նա կոշին իր այսամ»:

— արար. **չասահամ** (‘աշাম, ‘աշամ) «առզեի մեկ կամ երկու ոտքը սպիտակ, իսկ մարմնի մյուս մասերը այլ գույնի ձի» (Դեհմառդա):

□ Այտ (48...)-այդ, զա:

+ Այտցեղ (71)-այդպիսի, այդ կերպ. «Որ զայտցեղ բնութիւնդ շուտնի»:

□ Անդամ (47)—աղդը. «Ազէտկուցն միսն, որ կայ յետե անդմացն, նա լինի հաստ և պինդ»:

Պահպանված է Զուղայի բարբառում (Աճառ. Ա, 307), իսկ Ղարադաղի բարբառում՝ անդմ (ըստ Օ. Եգանյանի «Ղարադաղի բարբառ» անտիպ աշխատության):

+ Անդն (51)—այնտեղ. «Աստեղ ու անդն ծծին լիստակ լինի գոյնն»:

Տեղ ցույց տվող և մասնիկի համար հմմտ. առջե, յետե, վերե, ներքե, միջն (Աճառ. Բ, 693):

+ Անդիմակաց (58)—ոչ տոկուն. «Եւ շահրիկն ու յարապ ձիան լինի անդիմակաց ի շող աշխարթ»:

+ Անդմէջ (55) —անասունի ետեի երկու ոտքերի ներսի կողմը, աճուկ, երանք, արումնչ (տե՛ս). հմմտ. անդմ. «Եւ անդրմմէջն կարմիր դեղնօյն»:

Պարսկ. ձիամատյաններում համապատասխան բաժնում գործածված է Հայկակած (տոհից) «երանք, աճուկ»:

□ Անծած (76)—անշարժ:

Անծրուր (113—139), պարսկ.—անձրութ, անզրութ (Sarcocolla):

Օ Անկածնի (76)—տկարանալ, թուլանալ. «Երբ ձին անկածնի, նա դուն ի յետ վազէ կամ ի յետ ընկիր ի ձորչն առջուցն»:

Բայական սույն ձեփ հնագույն դրավոր վկայությունն է: Մալխաս. ունի անկածնել. «Նվաստանալ, արհամարհվիլ, թշվառանալ»:

□ Անիշ (60)—առանց նշանների, բծերի. «Ինիսի թուխ» անիշ սկս:

□ Անովն (61)—անուն. «Գրվի տաղերն (իմա՞ դաղերն) և իրենց անովլերն»:

Ըստ Հյուրշմանի անուն առաջացել է «անվան, *անովան նախաձեկից (Աճառ. Ա, 369): Պետք է ենթադրել, որ մեր օրինակի վ-ն դալիս է այս նախաձեկից»:

Անպակ (107, 110, 130), ամբակ (121, 128), ամպակ (129, 130, 133)—անապակ, անխառնուրդ, մաքուր. հմմտ. ապակ:

+ Անսայ (128, 130)—նստատեղի ջիղերը, որոնք ձգվում են ազդրից մինչև գարշապար. «Եւս երակ յերկու բազուկն, զայն մնծ երկու երակն, որ կա անդմացն ներսն, որ ասէ յարապն իր անսայ» (128):

— արար. նսայ (տե՛ս) բառի հոգնակին է:

□ Անցմնցել (37, 48, 68), անցմնցել (107) անցմնցել (67, 73), անցմնցեցնել (68, 97), անցմնցիցել (122)—քայլեցնել (ձիու մասին). «Եւ հեծ իր ու անցմնցեցոյ պահ միս (67), «Եւ իր աղէկ դնդն այն է, որ հեծնու ու անցմնցից զինքը (122):

Մալխասայանցը մեկնում է՝ «գեղեցիկ, ներդաշնակ շարժումներով շրջագայել՝ խաղալ (ձիու մասին)»:

Նորայր թյուղանդացին (ԲՍՀ, Ա. տետր, 335) մեկնում է «շարժում ընել»:

Օ Անցնել (155)—թրքել, ի բաց անցանել. «Յաղագս, որ գրաստն զգարին անարատ անցնել»:

Հուշարձանիս ցանկում (Էջ 41. գլ. ձեռէ)՝ «կասն, որ զգարին անարատ թրքել»: Գրաբարում՝ ի բաց անցանել նշանակում է «նստել ի կարիս որովայնի» (ԵՀԲ, 249):

+ Աշխառ (58)—ձի, որի ոտքերը սպիտակ են, բայց խառնված սկ մաղերով. «Ի

յոր ոտք որ կենայ սպիտակ ու կենայ ի լինք ուն մաղեր խառն, նա ասեն իր աշխառ։

— արար. **اشقر، اشقر** (ashqar, ashkar) «տարբեր երանգներ ունեցող կարմիր գույն՝ մերթ սպիտակավուն կարմիր, մերթ շագանակագույն կամ խարսչաշ (ձի)»։

Մեր հուշարձանի բացատրությունը փոքր ինչ հեռանում է արար. բառի հանրահայտ իմաստից։

+ Աշալ (58)—առջի, բաշի կամ ականջների վրա սպիտակ նշան ունեցող ձի. «Յորժամ կենայ ապոյն բոլորն սպիտակ նշան, կոչեն իր աշխալ»։

— արար. **اعل** (ash'al) — նույն նշ.։

+ Ապակ (116)—անմաքուր, ջրախառն. «Ապակ կիր»։

ՏԵ՛՛ Աճառ. Ա, 286, անապակի բառի ստուգաբանությունը։

Ապիզոված (37, 44)—ապագոված, պարսաված, վատ, անարդ։

Վկարված է Գիրը Վաստակոցում, էջ 214 (ՆՀԹ, 276)։

□ Ապողնեան (60)—ապարանջան։

□ Առաստախ (148)—առաստաղ, քիմք։

□ Առջի (101, 83)—1. առջենի. 2. առաջին. «Եւ շատն յառջի ուղին լինի» (101), «Պարտ է գֆառայն ցանել ի յառջի ամիսն ի ձմռան» (83)։

Ասահար (40)—տե՛ս ույսայ. «Վասն ասահար ցաւում»։

+ Ասլ (89)—ցեղական, իսկական. «Նա լինի աղէկ ու զգայ ի յալ»։

— արար. **صل** (asal) «ծագում, ցեղ, իսկական»։

Վկարված է ասլի Գիրը Վաստակոցում (էջ 35): Սազումը ուղիղ մեկնեցին նորայր Բյուզանդացին (ԲՈՀ, 417) և Կարսոց (ՄՀԲ, թղթա. 249, վ. 5, թ. 38): Տիրայր արք. (Ֆրիկ, էջ 631) դնում է որպես պարսկ. բառ: Պարսկերներ փոխ է առել արարերնից։

+ Աստափ (89)—ձիան զիստերի առավել մոտիկությունը՝ սրունքների բացվածությամբ. «Եւ ծոռմիւն... որ զրուցէ լինի և ասեն իր աստափ»։

— արար. **فداص** (şadaç), հզ. **فداصا** (aşdâci) — նույն նշ.։

+ Աստե (51)—այստեղ. «Աստե ու անդե ծծին յիստակ լինի գոյնն»։

Տեղ ցույց տվող և մասնիկի համար հմմտ. առչ, յեսն, վերև, ներքև, մինչև (Աճառ. Բ, 603):

+ Աստղանակատ (57)—ճակատին աստղ ունեցող (ձիու համար). «Թէ լինի ճակատն ըրորդ կամ չորեր կոյս կամ երեր կոյս սպիտակ, նա կոչեն իր աստղանակատ»։

Ավղուրին (68, 69)—տե՛ս ավղուրին։

Ավղնել (35, 65)—երարացնել. հմմտ. աւաղ։

+ Աստալյ (137)—մկան. «Առ զիսողին ուղին ու զատալայնին ու եփէ»։

— արար. **أدلاص** (adale) — նույն նշ.։

Բառս ապալայ տառաղարձությամբ ունի Արուսալիդը, որ ուղիղ մեկնեց Ա. Վարդանյանը (Աբուսալիդ, 222): Միջիմար Հերացին հիմանդին տրվող մի ուտելիք է առաջարկում, որը պատրաստվում է ուլի ստներից և արտալայից. ըստ Աճառյանի (Ա, 749) տապարի կծղակներից վերև գտնված աղդրի փա-

փուկ մասերը», որ փոխառություն է վրացերենից, իսկ ըստ Մալխասյանի՝ թուրքերենից։ Սա նույն առաջան է տից առաջ բայց հավելումով (ինչպես առողջականացնելու)։

+ Առօհամ (55)—սև ձի՛ մուզ կանալի հակումով։ «Կան ի ձիանին քուիս սև և փայլկում։ Եւ յարապն ասէ իր անուն առօհամ»։

— արար. չհամ (adham) — նույն նշ.։

□ Առօրալ (90)—արտօրալ, շտապել։ Տե՛ս արտօրալ։

+ Առօրայ (57)—մարմինը սպիտակ, իսկ զլուխն ու վիզը այլ գույնի ձի. տեւ կան ի ձիանն չալ ձի, որ լինի իր ամէն մարմինն սպիտակ ու զլուխն ու վիզը գոյն, զինչ որ լինի. ասէ իր յարապն առօրայ։

— արար. չհամ (adha'm) սև զլուխն սպիտակ ձի կամ ովսար (ըստ Նաֆիսիի), «զլուխը և վիզը սպիտակ ձի» (ըստ Բրիտանական գրադ. պարսկ. ոՉիամատյանին, ձեռ. 6623, էջ 25)։

Արապիկ խէծ (162)—տե՛ս խէծ արապիկ։

Արատկան (85)—տե՛ս արօտկան։

Արեխան (41)—տե՛ս յարապն։

+ Արինակապ (143)—արյան հոսքը կորող դեղ։

□ Արծիկի (115, 117, 139), արծիկի (139)—1. արծակի, բացել. 2. լիցնել, դցել (մի բանի մեջ). «Հետ երեք աւուրն արծիկէ լիցիթիթ» (117), «Առ թառանդոյն... ու արծիկէ զինք յերեք նուկի շող ջուր» (115)։

Արծվեցա (138)—արծվիր հիվանդությունը (տե՛ս)։

Օ Արծիկի (40)—ջրողության հետևանքով մարմնի տարրեր մասնություն մորսում, լյարդում, փայծաղում, աչքի ու մատների վրա առաջացած այտուցներ, պալարներ։

Բառու ունի ՀՀԲ. Աճառյանը (Ա, 692) բացատրում է «Ճի տեսակ ջրողություն», Մալխասյանցը՝ «փորի ջրողություն», «փայծաղի հիվանդություն» (արծվեցա)։

Գրիգորիսի մոտ (էջ 149—150) արծիկի հիվանդության դիմաց տրվում է արար. անվանումը բարոխսայ [= լեռակալ istisikā]. որ ըստ նրա երեք տեսակ է. տապի («թմբուկային» այտուց, որ հարվածելիս թմբուկի ձայն է հանում), զլսի («փորի ջրողություն» oedema) և լահի («մաշկի և ենթամաշկային ցանցաշերտի այտուց, anasarca»). այս տերմինները բացատրել է Հ. Գ. Փափազյանը (տե՛ս Գրիգորիս, 229, 222, 223): Ըստըսայ բառացի, ըստ Դեհնողայի, նշանակում է «ծարավ» (այս հիվանդությամբ տառապողները միշտ ծարավի զարցողություն ունեն) և տալիս է վերը արծիկին տրված բացատրությունը։

+ Արդպի (94)—ծռել, կորացնել, կեռել. «Զապին արդպի ի վրա զաւկին»։

— արար. շառք (‘ակրած) սկարիմ. պոչը բարձր ու կեռ» և հ. Ել

լուրդությամբ կազմված։ Հայերենում աղբապ բառի մեջ տեղի է ունեցել որ հնչյունների դրափոխություն՝ արդպի (ել)։

Օ Արմուի (38, 73)—կծան զրաստ (էջ). «Յորժամ կամ էնաս հեծնուլ արմուի զրաստ, զու խափ տուր ու զլկամն ի զլուխն զիր» (73)։

— արար. չու (արտ) սկծան, խածնող» և հ. Ունի վերջածանցով կազմված։

Բառու մեկ անգամ գործածված է Գիրը Վաստակոցում (էջ 197). «Պարտէ է զձին երկու իրօք փորձել՝ մէկ տեսակաւ, և մէկ՝ ներգործութեամբ... Եւ զարմուհին՝ տեսակաւ միայն»։ Հայցական հողովով դրված բառը Վաստակոցի բառարանում վերցվել է որպես ուղղական և մեկնարանվել՝ «մատսկ ձի որ պահի վասն սերնդաւն», Այստեղից էլ անցել է ն. Բյուզանդացու ֆրանսերեն-հայերեն բառարանին, Մալխասյանցին ու Աճառյանին (Ա, 713)։ Աճառյանը այս բիսեցնում է հայերեն արմ «արմատ» բառից ն. Բյուզանդացին իր միջին հայերենի բառարանը կազմելիս նորից է անդրադարձել այս բառին և տվել է ճշշտ բառաձեռ՝ արմունի (ԲԱՀ, Ա տետր, 518), որ նա մեկնում է «ամենին՝ եւնելով Հովհան Մամիկոնյանի պատմության Արքահամ Երեցի ձեռագիր ընդօրինակությունից, որտեղ Նույն պատմության տպագրի ամենի» (Վենետիկ, 1889, էջ 48) բառի փոխարեն կա արմունի։ Մաշտոցյան Մատենադարանի № 4584 ձեռացիրը (1668 թ.), որ Արքահամ Երեցի ընդօրինակած Հ. Մամիկոնյանի պատմությունն է, համապատասխան հատվածում նույնպես ունի արմունի։ Պետք է նեխաղը լու, որ ուշ միջնադարի այս գրիւը բարիս իմաստը իմացել է ընդհանրապես «իմանող դրաստ», ուստի և այն կիրառել է նաև չորիների նկատմամբ։ «Արդ առեալ սոցա զհարիւր արմունի չորիսն» ածին յեզր բանակին. եւ ալր մի ի տան չորին՝ որ զհնտ երթայր. Եւ իրեւ խթեցին զցորիսն սրով և արկին ի բանակն, եւ ինքեանը զհնտ մտեալ զիող պատերացմին հնլեցուցին, եւ առ ձեռն սկսան կոտորել. եւ կանչեալ զարհութեան աղմկեցան յոյժ. քանզի և չորիրն ընդ ձայն ասպարացն, եւ ընդ զօրացն աղմըկին, եւ ընդ փողոցն բախեն խրտուցեալ յամենայն կողմանց լոկ արշաէին ի բանակն» (Ճեռ. 4584, էջ 184թ.)։

+ Արմունուրին (73)—կծանություն. «Պիտի որ յիւկելցենս ի յիր արմունուրինն»։ տե՛ս արմունի։

□ Արոյն (101...)—արյուն։

Արտորալ (68), ատորալ (90)—շտապել։

Վկայված է Գիրը Վաստակոցում, էջ 203 (Աճառ. Ա, 766)։

□ Արցիկ (129)—արտապել։

Անայշնը (Ա, 770) դնում է նոր բառերի մէջ՝ արտասուել>արտասմել>արցուել անցումով։ Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

+ Արտական (85)—արտավայր։ «Ի յարաւոկանն (=յարօտկան), որ արծես, զու մի՛ հաւծել զդրաստն»։

Կազմված է հ. արօտ և իրան. զան (ցահ տաեղ, վայրա) բառերի բարդությամբ։ Ըստ Անայշնի (Բ, 21) զան հնում փոխ է առնվել հյուս. պահլավերենից *ցահ «զան», ամոռ, բաղմոց, իսկ հետագայում նաև պդար, բարձր տեղ, ժայռերի զլուխ» իմաստներով։

Զան նոր պարսկերենում ունի «տաեղ, վայր» իմաստը, որ գործածվում է բարդությունների մէջ. այսպես՝ օկայաց (չարա-ցահ) «արտավայր»։ Հավանաբար այս իմաստը վաղուց անտի գործածվել է և հայերենում, որը պահպանվել է արօտկ (զ) ան և ուսագիր բառերում։ Վերջինս վկայված է Մկրտիչ Նազաշի

տաղերում (Երևան, 1965, էջ 247): Արդի պարսկերնում սրա համարժեքն
է օկշկաշ (shikār-gāh) «ռուսատեղի»:

Օ Աւաղ (45, 65)—նիշար, վատուժ:

(Բարիս Հնագույն զրավոր վկայությունը պահպանված է 1294 թ. բժշկա-
րանում (տե՛ս Ղ. Հովնանյան, էջ 143)—խմբ.): Աձառյանը (Ա, 793) վերցրել
է Առնեն բառարանից: Վերի իմաստը Մալխասյանցը չունի:

□ Աներ (83)—ավերված, փնտացած. «Եւ այն [ֆառայն՝ խոտի ցողունը], որ կարճ
լինի, աներ է»:

□ Ալրդնալ (80)—նիշարել. տե՛ս Կատաղ:

Արթաւր (105)—տե՛ս օրիսօր:

□ Ալիրել (77, 85)—բայրայել, փշացնել, վնասել. «Զի զոզն ու թրիքն խիստ ա-
նոնք և ալիրել զգրաստուն ոտքեա» (85):

□ Ալիրիլ (52, 53, 75)—բայրայլել, վնասվել. «Ալիրի քուռկին ամբակքն» (52):
Ակնել (131, 134)—տե՛ս օկնել:

Ակնուրին (83)—տե՛ս օկնուրին:

Անդ (95)—տե՛ս օդ:

□ Անդուրին (46, 54), աղվուրին (68), ավղուրին (68, 69)—ավաղություն, նի-
հարություն, թուլություն. Հմմտ. աւադ:

Ասիկից (86)—երկու ափը միացրած, երկու բուռը կցած:
Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 166:

□ Անոմել (56)—սրուների և բարձերի մեջտեղը:
Բառիս Հնագույն զրավոր վկայությունն է. Աձառյանը (Ա, 839) վերցրել
է Նորայր Բյուղանդացու Գրանս-Հայերեն բառարանից, էջ 463բ:

+ Ա.Դ (94)—սմբակի կեղե. «Եւ այն, որ զկոճքն ընդ իրար ծնծէ և կամ ի յափէ է
կամ ի ձանձրանալով»:
— արար. Ճ (Ճ, ԱՃ)— նույն նշ.:

Բ

Բարենար (77)—բարանաբար, բարանով նետելու քար:

Բարիս Հնագույն զրավոր վկայությունն է: Նշը վերցրել է Մխիթար Ա-
պարանեցուց (ԺԴ զար):

□ Բաղդել (69, 94)—փաթթել, փաթաթել:

□ Բաղդոց (69)—փաթթոց, փաթաթան:

+ Բալ (77)—թե, բաղուկ (*). «Էլալ է քեզ բալ, անտապար (իմա՞ առանց վահա-
նի) լինել»:

— պարսկ լլ (bāl)—նույն նշ.:

Օ Բահրակ (88)—բաժին (անասնակերի). «Թէ խիստ լիմէ (իմա՞ ծարաւէ), նա
ի շարաթն ար մի տուր բահրակ, թե հանգիստ կենայ զրաստն»:

— պահապ. bahrak, նոր պարսկ. օշք (bahtē) «բաժին» (Դհհնողա):

Աձառյանը (Ա, 919) բառս «ընդեղեն կամ արմտիք ինչ անծանոթ»
իմաստով վերցրել է Զախարիանի Հայ-իտարերեն բառարանից: Զախարիա-

նը, առանց վկայության, նշել է որպես նորահայտ բառ և նշանակությունը մոտավորապես ճիշտ է կռահել: Մեր ազգյուրը խոսում է դրաստների անման կարգի մասին և հանձնարարում է շաքաթվա մեջ մեկ օր կերի բաժինը շտալ:

Բառին հնագույն գրավոր վկայությունն է հայերենում:

Ն. Բյուզանդացին (*ԲԱՀ*, Ա. տետր, 610) բահրակ բառը, առանց ծագումը նշելու, մեկնում է «մանավանդ», որ չի համընկնում մեր բնագրի իմաստին: Նա վաստակոցի ձնուագրից երկու վկայություն է բերում, որտեղ գործածված է բահրակ, բայց որոնք տպագրում փոխարինված են մանաւանդ-ով: «Եւ թէ տեղն ցուրտ լինի՝ մինչև զկեսն թաղեա զկարաւան: բահրակ (տպ. մանաւանդ) թէ զինին նօսր լինի»: Վստկ. Ճիշտ. 88. «Ալսացին ոմանը ի փորձականացն՝ եթե փոփոխէ ոք զարմանքն յնտ բնական տեղույն ի յայլ տեղի, նա այլ առաւելուն և զիրանան: բահրակ (տպ. մանաւանդ) երբ ի լերանց ի դուր տեղիք տանիս»: Վստկ. Ի., 18:

Բայտար (114), արար.—պայտար, անասնարույժ:

- Բարագ (74)—բարակ, մանրամասն, ճշգրիտ (*Մալխաս.*). «Զոր կարէ ջանալ ի բարագ մտիկ զնել մտաւք և փորձելով»:
- Բարենալ (45, 128)—բարականալ, բարակել:
- Բարձկցնել (82)—բարձրացնել. «Ալր բանձ զաւը բարձկցոյ»:
- Բարձվենել (133)—բարձվենյակ, բարձվենիկ:
- + Բարձրաբոլորգոյն (109)—բարձր ու կորածն. «Մէջ երկու ձեռացն պինդ ուսեց լինի ու բարձրաբոլորգոյն»:
- + Բերենվախ (72, 73, 95)—բերանը ինչ-որ բանից վախեցած (ինչպես ունենք՝ «աշ-քը վախեցած»). «Մէ՛ զարկենք զբերանէն լկամաւն, որ բերենվախ լինի» (72); Բերենցաւ (148), բերենցվորին (41)—բերանացավ, բերանի խոց:

Մալխասյանցը շի տալիս սրբանի խոցը իմաստը, որ ունի ՆՀԲ: Մինչդեռ մեր հուշարձանը այս հիվանդության նկարագրության մեջ ասում է, որ «իսացիր ենէ ի բերանն»:

- + Բևեռզուխ (90)—բևեռի, մէխսի գլխամասը. «Էլինի... զբնենին բարակ և զրևեռզիլնին այլ փորբ»:
- + Բևեռնան (42, 90, 131, 160), բևեռնան (*42*)—արար. ույսա (տե՛ս) հիվանդություններ՝ շափից երկար բևեռի մխրճվելը սմբակի մեջ. «Թէ զորդ լինի բևեռն, նա զորդ երթայ ընդ սմբակն ու բևեռնան այնէ»:
- Բէն (46, 58ր), բէջ (92)—թիակ, թևակ, ուսոսկը (ինչպես Բուլանըինի բարսում. Անառ. Ա., 1084):

Օ Բինզուխ (46, 58ր), բինզուխ (*101*)—ուսոսկը զլուխը, ուսազլուխը. «Բարձրութիւն երկու բէնզուխն, որ թաղվել լինի նբթէպես»:

Միիթար Հերացու մոտ (*Բ. 4*) վկայված է բինզուխ (*տե՛ս Ն. Բյուզանդացի*, *ԲԱՀ*, Ա. տետր, 706): Մալխասյանցը Օգ. թժ. բազրբույկում մեկնաբանում է. «ողնաշարի վերին մասը», իսկ ողնաշարը մեջ հատ է, մեր վկայակուման մեջ հիշատակվում է երկու բէճզլուխ»:

+ Բէնցաւ (101)—թիկնոսկը ցաւ. տե՛ս Եքրիպցաւ:

Բինզուխ (*101*)—տե՛ս բէնզուխ:

Օ Բոլոր (55, 58) — ձիու մարմնի վրա տեղ-տեղ շրջանաձև ոլորված մազեր.

«Յաղագս... բոլորնոյն, որ կենայ ի գրաստն» (13):

Հուշարձանիս ի զիխում բացատրված է բառի իմաստը. «Յաղագս բոլորնոյն, որ լինի ի մազ» (17):

□ Բոկիկ (127) — 1. բորիկ, 2. մերկ՝ առանց համեստի ու թամբի գրաստ:

Վկայված է Ներսես Շնորհալու հանելուկներում. (տե՛ս Ուրբաթագիրք և Տաղարան (1512—1513), Վենետիկ, 1975, Տաղարանի էջ զ—15).

«Կարի տեսայ ես շատ կարւան.

Որ կու իշնոյր ի Խորասան.

Իշին բոկիկ են ։ անկուտպան,

Մերկիկ բառնան և դառնան գան: (Մողիմ):

Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Ա տեսար, 737) բերում է այս հանելուկին մի այլ տարբերակը.

«Իշուին բոկիկ էր ու անփալան,

Մերկիկ հատիկ բառնան ու գան:

□ Բուռակ (121), բուրակ (106, 110, 161) — բորակ:

¶

□ Գազան (131) — ուժեղ, բարկ, թունդ:

Այս իմաստով գործածված է Դիբը Վաստակոցում, էջ 186, 188 (Աճառ. Բ, 9):

+ Գազանառ (41) — զաղանի կծած, խածած. «Վասն զազանառ խոցի» (ցանկ. գլ. ՃԺԹ):

Ցանկի այս վերնագիրը բնագրում ձևակերպված է. «Յաղագս խոցի, որ զազնի խածած լինի» (143).

Այս ձևով կազմված ունենք գայլառ «գայլից հափշտակված», շնառ ոչնից հափշտակված» և մարդառու «մարդ խածնող (ուղար)» (Աճառ. Ա, 482):

□ Գազնալ (79) — զաղանանալ, կատաղել:

+ Գահրենալ (106) — թուրանալ, դանդաղեցն դառնալ, հիվանդանալ. «Գրաստն գահրենա ու ունենայ կուրծքնու:

— արար. վահկ (kāhil) սղանդաղ, ծուլ, հիվանդ» և հ. ալ էծորդությամբ կազմված:

Ֆրիկը ունի զանալ. «Աղեկն, որ ի քո ձեռացդ ի վեր գայ՝ զանալ մի՛ կենալ», որ ուղիղ մեկնեց Տիրայր արք. (Ֆրիկ, Դիվան, 635): Աճառյանը (Բ, 226) գիալ վերցրել է Երեմիա Մեղրեցու բառարանից և համարում է «անհայտ բառ», որ պահպանված է յամր, անազան բառերի բացատրության մեջ. այսպիս՝ «յամր, անազան կամ զիալ»:

Գիալ նույն ինքը զանալ (զահր) ձնն է, որ նշանակում է «համր, անազան», խոկ նամր նշանակում է «դանդաղ» (նշԲ). անազան նշԲ թարգմանում

- է «ոչ կանուխ, հետին և համբ (իմա՝ սղանդաղ»): Աճառյանը (Ա, 277) վերջին առումը շի վեցրելու Այս իմաստը կա և ազան «ժրաշան», անդանդաղ» դրական ձեր մեջ: Աճառյանը (Ա, 6) ուշադրություն շի դարձրել սրա ժխտական անպահ ձեր «համբ, դանդաղ» իմաստին, ուստի և գրում է՝ անապահի նշանակությունը տարրեր է: Ուղղելի:
- + Գահինցնել (80)—թուլացնել, հիվանդացնել. «Ճրագուն յորժամ յեելնա, նա զանցնէ և ափրէ զգրաստն»: Հմմտ. զահինցնալ:
- + Գալլցաւ (39, 40, 107, 120, 129)—ցրտառություն. «Վառն զալլցաւի, որ է հովութիւն»:
- Հիվանդության նկարագրության մեջ (էջ 129) ասված է. «Պատճառքն լինի ի հովէ և ի բրտնելով»: Վկայված է Գրիգորիսի մոտ (էջ 213): առանց բացատրության:
- + Գալիկ (10)—գալվակին նստեցնել. «Եւ հնար է զաւկես թեթև տղայ ի վրայ գրաստունք»:
- Օ Խետուս (158)—ջրային, գետային, գետաբերուկ, գետի բերած որիէ բան. «Նա առ զետուտի խիշիփար»:
- Բառին հնագույն դրավոր վկայությունն է: Աճառյանը (Բ, 137) ունի որպես նոր բառ զետուտի:
- Գրոտատել (88)—գրգռալ. «Գրոտատէ աղիքն»:
- Հելլթունի բարբառը ունի գ'րադադիլ սրարձք բղավելու (Աճառ. Բ, 275):
- Գինային (89)—դիշային, խոնավ:
- Գինանալ (71)—դիշանալ, խոնավանալ, շրոտվել:
- Գինացնել (88)—դիշացնել, խոնավացնել, շրոտել:
- Գինուրին (103)—խոնավություն, շրոտություն:
- + Գլուխի (83)—կտավի տոպրակ, ծածրոց. «Եւ ամառն՝ զլախիւր դիր ի վրայ գրաստուն զագթանն»:
- արար. **غَلْلَى** (ghilā), հդ. **فَلْلَى** (ghulūl) — նույն նշ.: Արարելեն հդ. ձեզ հայերենում վեցրցած է որպես եղակի:
- + Գոլ (88)—անուր, օղակ, կապ, սանձ, վարավանդ. «Ի զոլերն աշվոյն վերև շվաննի կապէ, որ զմանճն քշէ»:
- արար. **غُل** (ghul) — նույն նշ.:
- + Գորգալ (72, 80, 81, 82)—զալլի պես վաղել (ձիան վազքի ձե): Հմմտ. զորգան: «Կայ [գրաստ], որ զիշավն աղէկ ուննայ, կայ ի կալաւիցնելն և կայ, որ ի զորք վաղելն ու ի պորտքայն, և կայ ի զորգանն, և կայ որ ի քալլեն և մանոր զնացքն» (72). «Կայ [գրաստ], որ զորգայ ու զշնիքն զլինովն ի հետ ի զինաց դեմ ձգէ. և ասէ իր յարապն մղայնելու» (80):
- + Գորգան (38, 79, 81, 82)—զայլի վազք ունեցող ձի. «Կան ոմանը մի, որ ի վրայ զորգան դրաստուն ի յետ տայ թամբելու» (79), «Այս ազգ զրաստն, որ... մղայնեխ ասեն իր, նա նշանին այն է, որ ի զնացքն զէդ զորգան լինի ու տուրէթն ու ակնզգին ու շնիխն ի հետ շարժի» (82):
- իրան. *gurgzən. կազմված զորզ (gurg) «զայլ» և զան (zana-) «կերպ, տեսակ» բառերի բարդումով: Հայերենում զան պահպանված է մի

շարք բառերում՝ սրբազն, այլազն, բազմազն և այլն (Աճառ. Բ, 891):

Սրանից բայական *գորգզանալ ձեզ, որից ան-ի ամփոփումը՝ գորգզալ:

Մալխասուանցը ունի ետքզնալ, որ առանց վկայության մեկնում է «ձիու իրինչաւ»: Կարծում ենք սա գորգզալ բառն է:

Պարսկ. տոպազիր ձիամատյանում՝ նմանատիպ վազքը ավանվում է گրշդ (gurg-daw) «գալլավաղզք»:

+ Գորգզանել (37, 48)—գալլի վազքով ձին վարել. Հմմտ. գորգզան:

+ Գորոփ (92)—աշքի անկյունները. «Եւ որ լինի խոր ու աշվին և գորոփն մեծնայ»:

— արար. بَرْجَ (gharib), հզ. غُرُوب (ghurub) — նույն նշ.:

Գորս (47, 90, 101, 156)—ձիան սմբակի միջի կլոր մասը:

Ակայված է Գիրք Վաստակոցում, էջ 198 (Աճառ. Բ, 287):

Օ Գորսի (42, 156)—լեզվի տակ թաղանթային ծալք:

Բառու վկայված և բացատրված է Գրիգորիսի մոտ (էջ 98). «Եւ այլ ուսից, որ ենէ բերանն ներքեւ լեզուին և անուանի զորտն, զի զորտն ի նմանէ է»:

Աճառյանը (Բ, 287) բառու վերցրել է Նորայր Բյուզանդացու ֆրանս. բառարանից՝ էջ 129ա, 616ա, որտեղ մեկնված է որպես «ձիու կամ եզան լեզվի տակ թաղանթային ծալք», մինչդեռ ըստ Գրիգորիսի մարդու լեզվի տակ ևս զորտներ են լինում:

+ Գորտնիոխ (90)—ձիան սմբակի միջի մասի փոփոխումը. Հմմտ. զորտ. տերը զրաստն զորտնիոխ լինի, նա դնեն ներքն լուսնին (իմա՞ պայտին) սեկ և լուսնենք:

+ Գում (111)—ճահճային կիյուն, որի արմատները եղեգնանման են. արաբերեն օրինու (տե՛ս) է անվանվում. «Են խոզի գումն և պատռէ ի ներս և դիրի ի յինք թիլ մի շաման»: Սագումը անսույզ:

Օ Գումարեցնել (77)—շփոթեցնել, շշկեցնել. «Ու մի զիտնար փոքր զարկը զձիոյն կամ զըռումբին (իմա՞ նիզակին) զարկին... թէ ծածկվիս՝ նա դուն զայն ամեն տախտակն ինչ կու շալկես շնովդդ և կու զումարեցնես զքեզ»:

Աճառ. (Բ, 304) զումարել բառի իմաստի զարգացումից հանում է «անճարել, շշկված մնալ»: տվյալ դեպքում բառու այս իմաստով է զործածված:

□ Գումիլ (86)—գտնվել, լինել. «Թէ անվոյտ կամ ֆառայ զումիլ»:

Դ

Օ Դարդար (92), պարսկ.—թմբուկ:

Դարդար այնել—թմբկահարել. «Թոյլ պոկնին, որ երբ յիշվեցնես՝ նա զիրար զիսպի և դարդար այնէ»:

Մի. Հերացին ունի դարդարայ ձեռվ (Աճառ. Բ, 364):

Օ Դան (53, 85)—1. ծեր, տարեց. 2. հնացած, քարթու, զալարությունը կորցրած: «Երենց հայրն ու մայրն դան լինի» (53), «Տես զառվոյտն, որ միշակ լինի, որ ո՞չ դան լինի և ո՞չ մատղայշ» (85):

— պարսկ.—արար. օլ (dāl) ծեր, անպիտան, անարժեքա:

- Գիրք Վաստակոցը քանից ունի բառա, որ նրա բառարանում ուղղի է բացատրված՝ «բարթու, հնացյալ» (էջ 243): Նշե՛ և Աճառյանը նույնպես ուղիղ են մեկնել՝ «1. հնանալով կամ չատ մեծանալով կարծրացած, զարթ և 2. պառակ, որ այլև ծնունդից դադարել է»: Աճառյանը (Բ, 379) ծագումն անստույգ է համարել:
- + Դահնալ (54, 83)—դահնանալ, ծերանալ, կնճռոտվել. տե՛ս դահ:
 - + Դահուրիին (148)—ծերություն, տարեցություն, տե՛ս դահ:
 - Դանկ (139, 163)—դանգ, ծանրության կշիռ, սերկու գարւոյ կշիռն դանգ մի է» Վրդն. ել. 1. 19 (Նշե՛): «Դանգի կշիռը զանազան ազգերի մեջ տատանվում է 0,09 4/9 գրամից մինչև 0,75 5/9 գրամ» (Մալխաս.):
 - + Դաշտիկ (39)—արյունոտ այտուց, խոց (գրաստի ազետակում), որ նույնն է ինչ կերի կամ ուսիշ ցավը (տե՛ս): «Վասն կերիշ ցաւն, որ է դաշտիկն»:
- Գրիգորիսը ևս ունի դաշտիկ հիվանդությունը (էջ 180), որի դիմաց զնում է արարերեն մաշարայ: Վերջինս բառարանում (անդ, էջ 225) կասկածով բացատրված է որպես «բժակոր տիֆո»: իրականում արար մաշարայ (māsharā), որ ասորերենից փոխառյալ բառ է, նշանակում է «արյունոտ այտուց» (ըստ Շտենգասի): Հավանաբար վերբի արյունոտ լինելն էլ թելադրել է հայերեն բառը բխնցնել դաշտանիկից:
- Դարձվութել (107, 111)—դարձվորել, այլակերպվել:
 - Դարտակ (45, 47, 54)—դատարի:
 - Դարտկուրիին (46)—դատարկություն:
 - + Դեղրել (105, 143, 159, 163)—ոսկրե կամ փայտե փոքրիկ գործիքով դեղ քանի. «Պարտ է դեղրել որպէս այլ խոցերն» (105), «դեղրէ զաշքն» (143):
- Գիրք Վաստակոցը ունի դեղդիր գոյականը (Նշե՛):
- + Դեկնախայտ (56, 59)—դեղին խայտուցներով ծածկված (ձիու մասին). Հմմտ. դեկան. «Եւ կայ [ձի] դեղին դեկնախայտ, որ լինի յիր մարմինն իր գոյնովն բոլոր բոլոր զէդ դէկնի»:
 - Դեղապետնալ (102)—բուժում, դարմանում. «Գրենք զիր ամէն ցաւերն ու զայ-պերն ու զդեղապետնալն»:
- Գրիգորիսը ունի դեղապետնալ (էջ 145) իմա՞ «բուժել»: «Եւ նասուրն ելունդ է... կա որ լինի ի խորու և ոչ դեղայպետն»:
- Դէկան (56)—դահնեկան, դրամ (նաև ոսկյա):
 - Դժար (71)—զժվար:
 - Դիմացկոտ (81)—դիմացկուն:
- Վեհայիշած է Գիրք Վաստակոցում (էջ 97):
- Դնդալ (58թ)—շարժման ժամանակ մարմնի մսերի երերալը. «Ի վազեն դնդայ միսն և կաշին»:
- Նշե՛ ունի դնդանն «ալիք, ծիանք», իսկ Աճառ. (Բ, 588)՝ դնդող, տերե-րուն, շարժուն, որից և ունենք դնդալ, դնդկուալ (Մալխաս.) և մեր ձեզ:
- Դոյր (77, 96)—դյուր, հարթ, տափարակ. «Ի դոյրն և ի դաշտն»:
 - Դոյրուրիին (137)—դյուրություն, հեշտություն:
 - + Դուն (53, 54)—կաթնատամ. «Դունն սկսնու ի սկնալ» (53), «Եւ տոչի ակայքն, որ բունի բուկին, նա դրունն է» (54):

— արար. յշ (darr) «մարգարիտ», որ ծագում է յշ (darr) «կաթ» արմատից, սրանից է և յշ (durat) «սպիտակատամներ» հյ. ն հավելում կազմաբար դուռն ձեր հետեւթյամբ:

- Դուս (71)—դուրս:
- Դրամակշեռ (66)—դրամակշեռ, մի դրամի կշիռ:
- Դրուց (99)—դուրսը. «Ո դրուց ի լինիս:
- Դրուցե (89, 99)—դուրսը. «Որ կու զայ ի դրուցեկ»:
Վկայված է Սմբ. պատմ. մեջ. էջ 73 (Աճառ. Բ, 603):

Ե

- Եր (54), եփ (54, 127)—երբ:
- + Եզնզաւակ (58ր, 93)—եզի պես լայն ու տափակ գավակ ունեցող (գրաստ).
«Մուր զաւակ... և եզնզաւակն յալպած է»:
- Ելել (101, 115)—ելունել, դուրս գալ, վեր կենալ. «Ելել յիրմէ կտոր մի ոսկոր» (101), «Ել ու Ելել, որ վազէ» (115):
- Ենազ (74)—առաջ:
- Եվելիված (71)—ավելիված, հավելիված, ավելիորդություն:
- Երեակ (133)—երակ:
- Երիկամնացաւորին (41), իրիկամնացաւ (151)—երիկամների ցաւ
Երիկամնայցաւ վկայված է Գրիգորոսի մոտ (141...):
- Երկրի (90)—երակաբեռ. «Եթէ [նշղբակն] Երկրեն շառնու ի յինք և ի յայլ տեղ
առնու խել իր, նա սպաննէ գրաստն»:
- Երկին (90)—երկայն, երկար:
- + Երկոյ (67)—որեւէ ծածկոց՝ անասունի մորթ, վերմակ, կարպետ. «Մածկէ ճլով
ու Երկոյով»:

Բառու հավանարար առաջացել է արկ արմատի Երկ տարրերակից, ինչ-
պես ունենք՝ առաջ ~ եռաջ (30), արկեսաւ ~ երկեսաւ (26): Ըստ Աճառյանի,
Հնում արկ առանձին արմատ զործածական չի եղել. նա նշում է «Ճգել» (ցցել)
իմաստը, սակայն իր բերած վկայություններից կարելի է եղրակացնել, որ
արկ ունեցել է նաև ծածկ իմաստը. այսպես՝ արկեսոց «զազանների կամ հա-
վեղենի վանդակ» (իմա՝ ծածկոց. մինչև վերջին ժամանակներս որպես արկ-
ենց օգտագործում էին մեծ կողովներ—Բ. Զ.), արկանի «ծածկել», վրան առ-
նել», արկանի «ծածկոց, զգեստ, վերարկու, հագուստ, զիխի ծածկ»», անա-
սունի մորթ, վերմակ, զիխարկ, զիխի ծածկ», յարկել «վրան ծածկել» (Աճառ.
Ա, 694—698):

Մեր վկայության մեջ —ով (օվ) և —ովլ վերչածանցները գործ. Հոլովի՛
կրկնակի հոլովիշներն են, որոնցից առաջինը բարացած է. սկզբնական ուղիղ
ձեռ կարելի է ենթադրել *Երկի «ծածկոց»:

Որ Երկոյ «ծածկոց» նշանակությունը ունի, հավաստում է էջ 69-ի նույն-
իմաստ հատվածը, որտեղ Երկոյի փոխարեն ծածկոց է օգտագործված. «Դու
յեկելցոյ զմերն ու զծածկոցնին ի վրայն»:

- Երշի (83, 97)—առաջին. առջնի. «Զոր ի յերշի ցան լինի» (83), «Ալյան, որ
յերշի ոտքն լինի» (97):

- Երշիք (39, 127) — անստույդ էջանակությամբ բառ. «Ասեն բամբի», որ յերշիքն լինի»:
- Երվեսու (71, 74) — արվեստ:
- Եփ (54) — տե՛ս եր:

Զ

- Զառեկ (116) — տե՛ս զառիկ:
- + Զառզուի (56) — պապղուն բժերով (ձիու մասին): «Եւ կա պաւզ [ձի], որ սպիտակ լինի և խառնի ի յինք սև մազեր և ասեն իր զառզուի»:
— արար. ՀՅՋՅՀՅ (zargzit) — նույն նշ.:

Զառիկ (114), զառեկ (116), իրան. — մկնդիղ (Arsenicum).
+ Զառու (56) — զեղին. «Եւ կա [ձի] ի բաց զեղին, որ լինի սպիտկղոյն եւ լինի տուրեթն ու բաշն ու ազին սպիտակ: Եւ կոչէ իր անուն պարսկի զառու»:
— պարսկ. ՀՅՅ (zard) «զեղին», որից և զարդար օչյա (zarda) «զեղներանդ ձի»:
Բառու պահապանված է զարտագոյն կամ զարտագուն ևներկի համար գործածված մի տեսակ զեղին ծաղիկ կամ բրումա և զարտակ «զեղնագուն» բառերի մեջ (Աճառ. Բ, 911—912):

- Զարդ (116, 121), զարդի (116) — զարթ, բացի:
Անսիզը (էջ 47) ունի զարդ ձևով (Աճառ. Բ, 909):
- Զարդի (48), զարդի (83) — զարթի, բացի:
Վկայված է Դիրք Վաստակոցոմ (էջ 27), իսկ Անսիզըում (էջ 45)՝ զարդի ձևով (Աճառ. Բ, 909):
- Զարք (138) — զարկ, հարված (ալիքի). «Մառոյ զինք ի զետ մի, որ ուժով լինի ու զարք ունենայ»:
- Զարդված (37, 40...) — տես զօդված:
- + Զաքրենզոյն (55) — բրումի, զաֆրանի գույն՝ զեղին:
- Զեղ, զեղ (45, 57, 60...), զետ (57) — զերդ, ինչպես որ, նման:
- Զըլըմիի (76) — զուլամբ երթալ. զինիվալյոր գլուխիլ, զիդ կոտրել. «Եւ հեծնադն, որ հեծնի, նա հայնց ամսուր կենայ, որ քաւել ձին ընկնի, որ ինք զըլըմիի»:

Աճառանը (6, 617) ունի ուլն «վիշտ, ճիշտ», որից՝ զուլամբ երթալ սկզի վրա գորիլ», իսկ Մալխասանցը (Բ, 37)՝ զալամիքել:
+ Զըմբն (109) — աշխատանքից կամ տարիից առաջացածք վնասվածք (բնանակիր անառունների). «Եւ ցաւս, որ կոչեն իր զըմբն. նշանն այս է, որ յորժամ կենայ զրաստն ու երթալ, նա պայմբռուտ խալիկն (բազկոսկիրը)»:
— արար. ՀՅՀՅ (zaman) — նույն նշ.:
- + Զըննութը (160) — բրիկոն, կինուրարիս (Cinabaris), խրակ, քիմիական նյութ, բաղադրություն ծծմբի և սնդիկի.
— պարսկ. ՀՅՀՅ (zindjafr) — նույն նշ.:
- Ամիրդովլաթը Օգ. թժ. (550) ունի զիններ ձևով և նույն նշ.:
- Բառը շպիտի շփոթել զանապիլ, զընճպիլ բույսի հետ:
- + Զիար (99, 95, 96) — լանջապանի և ողնջապիլ միջն ձգվող առասանը կամ թուր. «Եւ կա [ձի], որ զիարն ի պառունք լթողուա (96).
— արար. — պարսկ. ՀՅՅ (ziyār) — նույն նշ.:

Զուկակ (73) } արար. — նեղ ճամփա, նրբանցք, փողոց:
Զուղաղ (96) }

Աճառ. (Բ, 989) ունի զուկակ՝ որպես նորագլուտ քառ. Մեր օրինակը
հնագույն զրավոր վկայությունն է Հայերենում:

Օ Զուֆայ (105)—զուզա, զուփա, մշտիկ:

— արար. Ֆայ (zūīā) — նույն նշ.:

Բառու հնում զրպա ձեռվ փոխ է առնված ասորերենից (Աճառ., Բ, 980):

+ Զպիլինալ (115)—խաղողախոտ, ոչլախոտ (Delphinium Staphisagria L.):

— արար. Հիմի աջել (zabīb al-djabal) — նույն նշ.:

Կարստը (ՄՀԲ, թղթ. 250, գ. 11, թ. 124) ունի բառու, որ բաղել է
1438 թ. բժշկաբանից:

Ամիրուովլաթն ունի զապիպ րլ նապալ (Անգիտ. անպէտ, 635, Հայրու-
սակ, § 65):

Զօղված (զաւդված) (37, 40...)—հող, կապակցություն:

Ը

□ Ըղովիլ (78)—ուղղվել. «Ինքն այլ լրդվի ու երթայց»:

+ Ըղտացաւ (39, 126)—«Ցաւ, որ բնակի ի յետի կիցքն (իմա՝ ոտները) ի գաւա-
կիս (126):

+ Ըղտի կոտկակ (160)—բուսանո՞ւն է, թէ՝ կտըտոր. «Առ նրմէսի սոխ և ըղուու
կոտկակ, ծեծէ ընդ իրար և դիր ի յայն տեղն, որ կազնա»:

□ Ընդելնալ (48)—ընտելանալ:

□ Ընդիր (71)—ընտիր:

□ Ընրանուր (153)—ընդհանուր:

+ Ընրիշար (98, 99)—սոքերի երակների հիմանդություն (Diffusion), բառացի՝
ցրվել, սփովել. «Ընրիշարն, որ թարգմանի ցրքին և մէկնելն, որ լինի ի ջղերն
ի յառջի ոտացն ու վերջի... նա լարվի ու ցրքի երկեխն ու ջղերն յիրացմէ ի
յետ» (98):

— արար. Տաշա (intishār) — նույն նշ.:

Բառու ունի օգ. բժ., որ Մալիսաս. թարգմանում է «ցրվել, սփովել (գնդի՝
մարմնի մեջ, լույսի՝ բրի լայնանալուց» (էջ 553): Անգիտ. անպէտ (էջ 106)
ունի ինրիշար ձեռվ: Սագումը ճիշտ է նշել Ս. Վարդանյանը (Արուսաիդ,
224):

Օ Ծեճել (85)—հնձել. «Յորժամ դժառայն ընձես, նա մենակ այն առվատուցն
վիրայ, որ արեգակն ի վրայ լցայթէ ու թառմի»:

Զես պահպանված է նեխ. բարբ.՝ ընճել, Ռզմ. ընճիլ (Աճառ. Դ, 398—
399): Հ-ի ը հնչունափոխության այլ գեպքեր ևս ունենք մեր հուշարձանում
հնդիկ սեռուկ > բնդիկ սեռուկ (154), համբերելի > նմբերելի > ըմբերելի (76):

- + Ըստմարէն (55) — գրաստների զիստերի անմազ հատվածները. ուն կան ի քուլնին, որ բազկունքն ի ներքսեկ դարտակ լինի ի մազէ ...կոչէ յարապն ըռախմարէն»:
- արար. **قِمْتَان** (rakmatān) — նույն նշ.
- + Ըստման (107) — ինչ որ հիվանդության անուն. «Եւ լինի այս ցաւս ի ջրին խմելոյն, ևս առաւել՝ եր կալնու զայն ցաւս, որ ասեն իր բախման»:
- Ըստմբ (71, 76, 77) — ոռումբ՝ նիզակ. «Մի իշեցներ արմունկդ, որ կոտրի բռումբն» (76):
- Ըստավ (56), արար. — ոռուավ, ոռուր, մրգի եփած մուգ կարմիր գույնով հյութ. «Թուխ խարտեց, նման է ի յըռապի գոյն»:
- Ըստգոյն (160) — թուխս խարտայշ, կարմիր բոցագոյն. հմմտ. ըստավ: Ընդհանրապես միջնադարում ոռուպի գույնը վերագրվում էր նուան հյութի գոյնին:
- + Ըստավի (100) — ծնկի հետ կապված ինչ-որ հիվանդություն. «Եւ կայ ցաւ, որ ասեն իր բռքապի, որ թարգմանի ի հայն քամախ յմելված, որ իշնու ի յակի ի ծնկացն հաստ»:

— արար. **Ճեկ** (rakba) — նույն նշ.:

- Օ Ըստէպ (72, 75, 76, 77) — ասպանդակ. «Ցորժամ կամենաս, որ զգրաստն կանգնեցնեա» դու զբակիպէ լարէ ու կանգնեցոյ» (72):
- արար. **بَك** (rikib), պարս. **بَكَ** (rikāb) — նույն նշ.:
- Բառիս հնագույն զրավոր վկայությունն է: Ըստեկ ձեռվ ունի Աղմամարցին, հրատ. Կոստ. 125. կեր>բեկ շրջումը կատարված է հաջորդ տողի հանգի հետ համաձայնեցնելու նպատակով (Աճառ. Բ, 1063—64): Ձիշտ ձեռվ պահպանված է րուսալրար «մագավորական ախոռապես կամ ձիակալ» բառում. Սմբ. դատ. 88 (անդ, 1065): (Մոկսում և Շատախում, որոնք Գրիգորիս Աղմամարցու ծննդավայրին կից են, զործածվել է ոքեր ձեռվ. — խմբ.):

❖

- Թարդել (143) — թաթախել. «Թարդէ զինք ի սկ ձոյթն»:
- Օ Թախրան այնել (44) — սրարշավ ընթանալ. «Միրած է մատակ ձիանն, որ յեշաւ այնեն ու թախրան, զի սուր յեշվեն»:
- պարսկ. **تَحْكَتَن** (tākhṭan) «1. սրարշավ ընթանալ. 2. ավարել, կողովածել»:
- Թախտան որպես զոյտական ունի Աճառյանը (Բ, 1091) «աւարում, թալան» նշանակությամբ, որից և թաղրնել «աւարել, կողովածել»:
- Թաղառ (86, 122) — խեցեղնն զոգավոր կամ կոնքածեաման:
- Թաղար ձեռվ վկայված է Դիբը Վաստակոցում (Աճառ. Բ, 1107):
- Թաղասուֆ (40) — զրշական վրիսակ է. առ' ու բավասուֆ:

□ Թաղրիփիլ (68) — թաղաթափ լինել, հավանաբար սթափվել, քնից հետո խելքը գուշակ գալ. «Ի վաղվնէ հան զինք [զձին] ու ալվէ, որ ճապկտի (իմա՞ մարմնով ձգվի) ու բաղրիփի»:

Աճառյանը (Բ, 1101) ունի բաղրարափ «զիխարաց, մերկ զլխով», իսկ Նորայր Բյուզանդացին (ԲՄՀ, Բ տետր, 599)՝ բաղրափիմ, որ մեկնում է քրաբախել սրտին. «Յօտէ վատուծ ստամորի և սրտի բաղրափելոյ և խափանէկին» (խափակնի). Ամիրտ. Բժ. Ա. 68, ուշան խափականի որ յանկարծուինքնաւ: Յորժամ խափական ցաւն զիպի, նշան այս է. յանկասկած ուժն զնա, նուազի, սիրտն բաղրիփի». անդ, 336:

□ Թամի՛ (73, 75) — թամրի:

Պահպանված է որոշ բարբառաներում: Այս ձեռով վկայված է նաև Առաք. պատմ. 82 (Աճառ. Բ, 1115):

+ Թամբող (55ր) — այն ողները, որոնց վրա թամբն է դրվում, «թամբոց տեղը» (էջ 93). «Դամբողն ու կզողն ու ծուռ ու զին յայպ էս:

□ Թապիլ (67), բապիլ (57, բջ), բապիլի (115), բափիլ (85, 89) — թավալվել.

Գիրք Վաստակոցը ունի բապալ «թաւալումն, թապլլորկի» (էջ 189, 244):

□ Թապիցնել (82), թափիցնել (89) — թավալեցնել. տե՛ս բապիլ:

Թառանդոյն (115), պարսկ-գազպեն, մանանա:

Աճառյանը (Բ, 1147) բարսնկուսին բառի տակ հիշատակում է «Թառանկոյն Միս. բժշ., բանիգին բժշ. ունի միայն Հայրուս. § 770+, 1294 թ. բժշ.

ունի «քրանելին, մանանան», որ է, հավանաբար, Հայրուսակի աշբյուրը:

+ Թափառէփ (41, 140) — գրաւաների հիմանդրություն՝ կոնկրի վրա երևան եկող հարեր. բափառուի «նմանէ ի շուրչակ (տե՛ս) և լինի ի կոճքն» (140):

— արար. **فَسَوْسَ** (tawassuî) — նույն նշ.:

□ Թարքեւոնի (57) — թարթիլ, արտեանումբ:

Աճառյանը (Բ, 1150) ունի թարքեւոն. իսկ Ախց. բարբ.՝ թէրէվոնի:

□ Թարխոնի (139) — թարախել, թարախակալել:

Օդ. բժ. (էջ 552) ունի թարխոնի:

□ Թափիլի (85, 89) — տե՛ս բապիլ:

□ Թափիցնել (89) — տե՛ս բապիլեցնել:

+ Թեվզեն (81) — հավասարաւափի, հավասարակշիռ. «Ծատ գնալն և լեշվելին քարւան ձիոյն չէ՝ թեվզեն մեկնելովն լինի»:

— արար. **تَوَذَّقْ** (tawâzûn) — նույն նշ.:

□ Թըրիսի (95) — վրան թթվեցնել, ստամորսը թթվեցնել. «Եւ կտրած լնզուն յայպ է, զի չկարէ զարին ազէկ ուտել, շողէ, թըրիս զինք»:

Հավանաբար թըրիսունի բառի ամփոփումից առաջացած:

□ Թիշիկնետ (67) — հավանաբար՝ թաշկինակ. «Որ խոց ի ձեռքդ չկենայ՝ թիշիկնետի»:

Օ Թըրինեղի (156) — հնդկարմազ:

— պարսկ-արար. **تَامِرِي هِنْدِلِ** (tamri hindî) նույն նշ.:

Աճառ. բարհնեղի ձեռով բաղում է Հայրուսակից, և հետեւնով Հյուրշմանին, իսկ սա էլ Seidel-ին, ծագումը դնում է արարերենից՝ **تَمِرِهِ دِهْنِهِ** تَمِرِه (tam-

- ra-ul-hindi), մինչդեռ հայերենը համապատասխանում է պարսկականին՝ tamri hindī. վերջինս գործածական է և արար. զրականության մեջ: Մեր տարրերակում մը բաղաձայների միջն բ-ի հավելում է տեղի ունեցել (ինչպես արմաւաշմբաւաշմբաւ. բմբիլրմբրի): 1294 թ. բժշ. ունի <քմյալրբննդի. ի հնդկաց կա> (էջ 143):
- + Քնչիր (114)՝պղնձե, լայներան կաթսա. «Առ ի յայն բարին, որ գտվի ի կրին մէջն, որ լինի այրած, լուալ, և բնըրով առ յիրմէ բառուն դրամ, լեսէ և մաղէ»:
- պարսկ.—արար. **تندیز** (tindjiz) — նույն նշ.:
- Օ Բուր (39, 41, 42, 113, 143, 159)՝ուսուցք, բշտիկ. «Յաղագս բըրի, որ լինի ի տօշն և ի ձուբնա» (113):
- Վկայված է Գրիգորիսի մոտ (էջ 43). «Եւ լենդի, որ բուր անուանի, նայ իւր ընծայիլն ի մորթին լինի և երեսայ ի յամէն տեղ... և է բուր նման»:
- Աճառյանը (Բ, 1292) առանց վկայության ունի «1. լեզվի ծայրին վերբ. 2. ձեռքի վրա գորտնուկ» իմաստներով:
- Օ Բուրիա (145), պարսկ.—արարի թոթիր՝ պղնձե անզուս օրսիդ, որ աշքի զեղ է:
- Աճառյանը բացում է Հայրուսակից և զնում «Մի տեսակ ծաղիկ, որ աշքի զեղ է լինում»: Սագումը՝ արաբերենից ու պարսկերենից և իմաստը ճիշտ են տարիս ն. Բյուզանդացին (ԲՈՀ, Բ տետր, 796) և Մարիամյանցը:
- Բուրիս (145...)՝պարսկ.—ծանրության շափ, միջնագարում հավասար 15.449 գրամի Բուրը (104...)՝ Վկայված է Գիրը Վաստակոցում, էջ 108 (Աճառ. Բ, 1299):
- Բվլենալ (48, 53, 103)՝թվալ, համարվել. «Աղվոր բվլենալ քեզ» (48):
- Բրակիս (133), հուն.—թերիակէ, թյուրակէ, դեղաթափ՝ զեղ թույնի դեմ:
- Վկայված է Գիրը Վաստակոցում, էջ 8, 131 (Աճառ. Բ, 1203):

❖

- Ժամել (66, 75)՝շարժել. «Թանի դալիկն ժամել» նա փոշի ի վայր լցուիս:
- Այս ձեր պահպանված է Ալշ. և Մշ. բարբառներում (Աճառ. Բ, 302):
- Ժամիլ (75)՝ժամ զալ, շարժվել. Հմմտ. ժամել:
- Վկայված է Ամիրտ. բժ. Ա, 29՝ «ժամիլ սրտի» (Ն. Բյուզ., ԲՈՀ, Բ տետր, 809):
- Ժամցնել (81)՝շարժել. Հմմտ. ժամել:
- Ժամնալ (74)՝տե՛ս ծօնտալ:
- Ժմոն (79)՝պատշաճ ժամանակ, հարմար ժամանակ:
- Վկայված է Գանձակեցու մոտ (Աճառ. Գ, 10):
- Ժուռ ածել (78)՝շուռ ածել, ման տալ. «Գիշերն ի ժուռ կուտայի ածել»:
- Պահպանված է Սեբաստիայի բարբառում (Աճառ. Բ, 432):

□ Փօնտալ (74) — ճռմիկը, երերալ. «Յորդամ» առնուս լկամն ու արգելես, նա շըմանտա»:

Անապայանը արձանագրում է միջին հայերեն նօնկատալ ձեզ (Դ, 701), Մեր օրինակը կամ վրիպակ է և կամ տարնմանությամբ բառասկզբի ն-ն վերածվել է ժ-ի:

ի

+ Իազունի (57) — սպիտակ հատվածներ ձիու երեսի վրա, «Բէ լինի քիմին վրա սպիտակ, զէդ խաղ խաղ և չհասնի ինչին ճակատն ու կամ ի յաշըն, նա ասեն իր իազունի»:

— արար. Յառաջ (y'asūb) — նույն նշ.: Բառավերջի վ (b) > հ. ֆ. տառադարձությամբ: Ըստ Շատելքասի պարս.-անգլ. բառարանի՝ Մոհամմեդ մարդարիկն պատկանած ձիու անունն է:

□ Խնչուր (90, 117) — մինչեւ:

□ Խնչիլ (45...), ինչնիլ (47) — մինչեւ:

Օ Խոսվածք (100) — հիվանդություն. մարմնի որևէ հոգի դուրս ընկնելը (Hernie) (Մալխաս.), «Եւ այն, որ կոճրիսի իշուվածք է, որ իշուր ի մէջ կոճրին որպէս ոսկոր»:

Գիրք Վաստակոցը (էջ 205) և Գրիգորիսը (էջ 103) ևս ունեն իշուվածք, բայց «զրիփ» իմաստով:

□ Խեակ (71) — երակ:

+ Խերէնաշը (192) — հիվանդության անվանում՝ «է ցաւ, լինի ի ձեռացն և ի չղացն ի թուլութենին... նա դողա ձեռոր և դիպի յիրար»:

— արար. Հայոց (irtilāsh) — նույն նշ.:

Բառավերջի մ-ն հավելագրությունն է:

□ Խրիկամնացաւ (151) — տե՛ս Խրիկամնացաւորին:

□ Խրիկամունք (47) — երիկամունք:

□ Խրիկացք (88) — երեկո:

□ Խրէ (54...) — որևէ բան:

Պահպահված է Պոլսու բարբառում (Անառ. Գ, 124):

լ

Օ Լանրալ (119) — լանդակ. «Սեծած ցորենից (կամ բրնձից) պատրաստած կերպուր խաշիլի նման, որի վրա յուղ և կաթ են ածում և ուտում ինչպես հարակուր լանդակ նման, որի վրա յուղ և կաթ են ածում և ուտում ինչպես հարակուր լանդակ» (Մալխաս.). «Եւս գարէ ալոյլը ու բարկ բացախ ու շինէ լանրալ»: Նշը ունի լանդակ որպէս զվու. բառը Բառիս հնագույն զրավոր վկայությունն է:

Լար, ի լար (47, 48) — լարված, ցցված, կանգուն. «Եւ մեծ երակն... լինի հաստ ու կարճ և ի լար» (47):

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 199, 246:

□ Լեզել (88) — լիզել:

□ Լեսել (103, 104) — մանրել, փշբել, ծեծել, «Լեսէ և մանդր աղայ և մաղէ» (104):

- Անեալ (98), լինեալ (125) — լինել, դառնալ:
 Ակամ (70, 71), պարսկ. — սանձ:
 Վկայված է ԺՊ դարից (Աճառ. Գ, 235):
 Ակամել (95) — անասունի բերնին սանձ դնել, տե՛ս Ակամ:
 □ Լմեցնել (53) — լրացնել, ամբողջացնել:
 Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 61, 67, 225), Պահպանված է նաև
 բարբառներում (Աճառ. Գ, 207):
 □ Լսել (127) — տե՛ս լսել:
 ○ Լույա (141) — խողովակ. «Դիր ի յինք եղէզնէ լույայ միշ»:
 — պարսկ. **ՃՈՒ** (lūla) — նույն նշ.:
 Բառու լիւլ ձևով վկայված է Գիրք Վաստակոցում. «Փարզ շինեա երկու
 լիվլով» (էջ 82), որ սխալմամբ թարգմանված է՝ «ծակ կամ բերան ըմպա-
 նակ անօթոց» (էջ 246): Կարստը (ՄՀԲ), Վաստակոցից քաղելով. և Մալ-
 խասպանցը ժագումն ու իմաստը նիշտ են նշել:
 □ Լուսնել (38, 85) — պայտել, «Կան ոմանք մի, որ գրաստն լուսնել տան. նոր տո-
 վոյտ տան»:
 Լուսին «պայտ» իմաստով հաղորդված է Լաստիվերտցու մոտ (Աճառ. Բ,
 254) և մեր հուշարձանում (էջ 49), որից և լուսնել:
 Վկայված է Վարդանի առակներում (Ե. Բյուզանդացի, ԲՍՀ, Բ անոր,
 1131):
 Հաճընի բարբառում պահպանված է լուսնիկ ձևով (Հ. Պողոսյան):

Խ

- Օ Խալապայ (74) — խուռն բազմություն, ամբոխ, ժխոր, շեւ հանապաշ զինք
 (իմա՞ ձիան) ի խալապայի և ի մուզով ի շատ մարդկաց մէջ տարս:
 — արար. **ՃԱԼՅ** (ghalaba) «1. բազմություն, առատություն, 2. հաղթու-
 թյուն, 3. հարձակում, 4. կարողություն, 5. իշխանություն, տիրապետություն:
 Աճառյանը բառու վերցրել է Անսիդրից և Սմբատ Սպ. Դատաստանազըր-
 բից «կախվ, չփոխություն» առումներով և ծագումը ուզիղ է որոշել:
 Խալիզն (145), արար. — խխունչ:
- Օ Խալիկ (46, 98...) — բազկոսկր. «Մեծութիւն խալիկն ու փոքրութիւն կոռացն»:
 Աճառյանը (Գ, 323) բառու վերցրել է Ս. Գարամաճյանից՝ «Նոր բառ-
 զիրք հայերէն լեզուի», Պոլիս, 1892: Մեր օրինակը Ընագույն գրավոր վկայու-
 թյունն է հայերէնում:
- + Խալա (51) — անխառն, մարուր. «Որ Աինի խալս մատակ»:
 — արար. **ԽԱԼՅ** (khâlis) — նույն նշ.:
- Միսիթար Հերացին ունի խալրս (էջ 92), որ բացատրում է «լիստակ»,
 իսկ Ֆրիկը՝ խալսս. «ապա զինչ փոքրած ոսկի, բուրայէն ի դուրս գաս
 խալսս» (տաղ ԽԱ, 72): Ուղիղ մեկնեցին նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Գ
 տետր, 15), կարստը (ՄՀԲ, Բ. 251, վ. 14, թուղթ 18) և Տիրայր արք. (Ֆրիկ,
 648):

Օ Խալսի (78, 103) — ազատվել, փրկվել. «Հանդարտութենով խալսի և ելնէ յայն բնութենք» (78), «Քշիկ գրասա խլասի յիրմէշ» (103):

— արար. **خَلْصَة** (khilāṣ) — նույն նշ.:

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում: Աւղիդ մեկնեց նորայր Բյուզանդացին (ԲՅՀ, Գ տետր, 15): Մալիսասյանցը խալսել ձևով համարում է արար. **khālis-ից**, որ մեր նախորդ բառն է. ուղղելի:

Պահպանված է Հաճընի բարբառում՝ խրլասի (Հ. Պողոսյան), Շատախում խլրս (ն) ել, Մոկսում խրլրս (ն) իլ (տե՛ս Մ. Մուրադյան, ԱՄԳՀՊ, 209):

□ Խալտնեալ (81) — խալատ (դալաթ) անել՝ սխալվել. «Խալտնեայ ի գնացք»: Խալատ, խալտիլ, դալտիլ (տե՛ս Աճառ. Գ, 319):

Օ Խախսայ (133) — մակարդ. «Խախսն յայտ շարապտ եղին խախսաց»:

Նշե՛ և Աձառյանը որոշակի «պանրի մակարդ» են բացատրում, մինչդեռ մեր օրինակը վկայում է, որ ընդհանրապես սմակարդ» է նշանակում:

Օ Խախսիայ (116, 117) — ուկառմիլի խեժը:

Աձառյանը ախախսիա զնում է իրավացիորեն արար. **لَذَّاتِي** (akăkîâ)-ից և ախախսիա՝ ակացիա ծառու, որից և պարսկ. **قِيلَّا** (kăkîâ), Մեր օրինակը ունի պարսկականի ձեր:

Խախուլայ (111), արար. — հի:

Աձառյանը (Գ, 879), Հայբռ.սակից բաղելով՝ ունի կակուլա, դաղուկ, իսկ 1438 թ. բժշկ. (Կարստ. ZFAP, 124) խախուլէ ձեռով:

□ Խածնան (89) — խածան, խածնող:

Օ Խամձեկ (45, 50...) — ծնոտ, կղակ:

Վկայված է նաև խամձեր, խամձէր, խամձեծ ձեռով (Աճառ. Գ, 352):

Օ Խամննել (71) — մտրակել. «Ցուշիկ յուշիկ գաճէ ոչ հայնց, որ խամննես և մահմիզես». Հմմտ. խամնել:

Մալխասյանցը ունի դամշիկ ձևով:

Խայծղան (126, 142...) — խայտաղան, ուտնային նյութ:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 146 (Աճառ. Գ, 363):

□ Խայծղնել (118) — խայծղանել, խայծղանով օծել. Հմմտ. խայծղան:

Խանդակ (73, 77), արար. — խրամ, փոս:

Օ Խանդարիսն (105) — ծծմոր, կապուտիկ, կապուտածաղիկ, ամբար, խաղողիկ (Centaurea Cyanus L.) (ԲԵկիան, § 940):

— արար. **كَنْطُورِيُون** (kantūriyūn) — նույն նշ.:

Աճառ. ունի խանդարելի և խանդարիա Cichorium intybus վկայրի եղրդակ:

Սագումը միշտ է տալիս 1428 թ. բժշկ.՝ «Խանդարիան. արաբերէն խրն-զուրին» (Կարստ. ZFAP, 124): Մեր ձեր բառիս հնագույն գրավոր վկայությունն է և ճշգրիտ տառապարձումը:

+ Խանդիխուն (120), խանդիխուն (105), խանդիկն (133), խանտիկն (151) — մեղրից ու հին գինուց պատրաստված խմիլը. «Խանդիխունի շարապ» (120), «Խանդիխունի» (105):

— արար. — պարսկ. **مَنْدَلَةَخَلَّ** (khandalikhāl) — նույն նշ. (Մուհամմադ

Արդուլլահի (Նուր էղ-Դինի) ղեղանուների բառ սրան, էջ 114, [19-րդ դար,

Հնդկաստան]: Ամիրտովլաթը (Անգ. անգլէտ, 219) ունի խանդիղոն ձևով, շնչքն շարապ մըն է, որ մեղրով և հին զինով շինեն, և անուշահոտ դեղեր կու խառնեն. տաք և չոր կու լինի բնութիւնն. աւգոտէ ծերոցը:

Խանդիկոն (133)—տե՛ս խանդիխուն:

□ Խանդրել (69)—խանգարել. «Զի յորժամ ցաւի խանդրած ոտքն»:

Խանտիկոն (151)—տե՛ս խանդիխուն:

□ Խառնչել (52, 53)—զուալ. «Յորժամ կենայ [էջն]... ու խիստ խառաշչէ»:

Վկայված է Վարդանի առակներում խառնչել (Աճառ. Գ, 393):

Օ Խաս (74)—1. ազնվացեղ, ազնիվ, 2. ընտիր, լավորակ. «Զիսա ձին չկանկնեցնեն»:

— արար. **خاچ** (khās) — նույն նշ.:

Դիրք վաստակոցը (էջ 203) ունի զիսաս տաճիկ ձիոյն սահմանն, որ բառարանում մեկնվում է «ընտիր» (տե՛ս անգ, 246): Սազումը ճիշտ են նշել Մալխաս. (Բ, 247) և Կարսար (ՄՀԲ, թղթ. 251, վալ. 14, էջ 109):

Օ Խասիար (71)—բնավորություն, հատկություն. «Նա պեղծ խասիար է»:

— արար. **خاصیت** (khāsīyāt) — նույն նշ.:

Միխթար Հերացու մոտ վկայված է խասիար (էջ 110) և խասիար (էջ 120), որ ինքն իսկ բացարում է՝ «որ է առանձինն իւր յատկութիւն» (այս փաստի վրա աշխատասիրողի ուշագրությունը հրավիրեց զրբիս խմբագիր Մ. Մուրազյանց): Դիրք վաստակոցը (էջ 87) ունի այս բառը, որ բառարանում մեկնվում է որպես «ներգործութիւն», ազդեցութիւն. ևս՝ օգուտ». ուղղելի վերին իմաստով: Սազումը և իմաստը ճիշտ են տվել Մալխաս. (Օգ. բժ., 554) և Կարսար (ՄՀԲ, թղթ. 251, վալ. 14, էջ 110):

+ Խարին (60)—մոխրագույն ձի. «Կան ի ձիայնն խարինն. և այն է զոյնն, զի ի մատ է յայս սպիտակութ»:

— արար. ***كرنج** (karandj) <պարսկ. **کرنگ** (karang) — նույն նշ.:

Պարսկ. **گ** (g)> արար. **շ** (d), որ հայ. տալիս է զ կամ ն:

Խարիլ (159)—դաղելու գործիք. «Խարէ պըղնձէ խարշնով»:

Վկայված է Դիրք վաստակոցում, էջ 139:

+ Խարտաս (144)—մազարաթ. «Առ... այբած խարտաս... խառնէ ի զինի և ի մեղր, բաժին մի զիր ի վրայ ոտպոյն»:

— արար. **قرطاس** (karṭās), **قرطاس** (karṭas) — նույն նշ.:

Հնում ունենք խարտու «բղիթի կամ մազարաթի թիրթ», որ փոխառված է Հունասլանցը (Աճառ. Զ, 1428):

□ Խարտեշ (55, 56)—խարտյաշ:

Խարտու (106)—խարտուք, խարտելուց թափված թևի, փոշի:

Մալխասլանցը ունի խարտուք: Բառիս հնագույն գրավոր վկայությունն է:

Խարտան (88)—տե՛ս խուրան:

Խեշ (45...)—տե՛ս խլչ:

Խէժ արապիկ (162)—արարական խնժ. տե՛ս սամդ յարասի:

ԽԵՂ (48...), ԽԵՂ (45...)—ՀԵՄԸ, մոտք, կողքին:

Հաղորդված է Գիրը Վաստակոցում, էջ 79 (ՆՀԲ), (ինչպես նաև 1271 թ. պարուն Կոստանդինի արտօնագրում. տե՛ս Դ. Հովհաննյան, Հետազոտութիւնը նախնեաց ռամկորչին վրա, Վիեննա, 1897, էջ 258, խմբ.):

ԽԵՐ (86)—տե՛ս խոր:

ԽԵՐՆԴԱԿՈՒՆ (105)—տե՛ս խանդիխուն:

ԽԵՐ—տե՛ս խոր:

ԽԻՋՐՈՒ (134), խիջր սատանայի (106)—ԷԼՅԱՆԴ, խաղավարտ (Bubo), ուղար սատանայի խիջրուն ու զբուրակն, նիէ քրով, ու լից ի փողքն ի վայրը (134):

Բառիս ծագումը արար.-ից ճիշտ է նշել և մեկնել Մալխասյանցը Օգ. թժ.

բառորորոշումը: Ամառյանը (Գ. 476) ունի անորոշ ձևով՝ «վարնգաձկ մի տեղ-սակ պալար»:

ԽԻՋՐԱԿՈՒ (132)—խղարելու ժամանակ թափածած թեփը.

Մալխասյանցը ունի խիջրուն: Բառիս հնագույն զրավոր վկայությունն է: Խիճիխուա (42)—տե՛ս խիճիխուա:

ԽԻՋՄԱԴԻԱ (113)—տե՛ս կիմուխա:

□ ԽԻՃԻԽՈՒՐ (99...), ԽԻՃԻԽՈՒՐ (42)—խեւախուռ, խեցգետին:

ԽԻԺՄԻԱՅ (145)—տե՛ս աղլիմիայ:

+ ԽԻԽՈՒՍԻ (105)—պղեծարքասպ. «Առ ժանգառ և արջասազ և խլստիս»:

— արար. **ڦڻڻ** (kılıçlı) — նույն նշ., որ փոխառութ է հուն. **χλιττετης**-ից (Չափեկաս, Պարսկ.-անգլ. բառ.):

+ ԽՈԽՈՒՆԻ (55, 59)—մուզ զեղնամուն՝ կարմրի մոտ. «Կայ խարտեշ խլուխի, որ լինի զեզ զաֆրոնոյն» (55):

— արար. **خَلْوَى** (kılıçlı) — նույն նշ.: Հաս Գեհխողայի բառարման՝ խլուխի (լա) սահնելիք է, որի հիմնական մասը զաֆրան է և զույնը կարմրագուն կամ զեղնամուն: Բրիտանական զրադ. Օգ. 3483 ձեռ. պարսկ. **خَلْمَشْتَرْ** (էջ 24b) այս զույնը հետևյալ կերպ է նկարագրում. «Աշխառը (շաղանակագույն կամ խարտյաշ ձի) մի քանի հազար երանգ է ունենում, ու մանը խլուխի (خَلْوَى) են ասում, որ զեղին է և մազերը զաֆրանի գույն»: Այստեղ զրիլը արար. շ (է) շփոթել է շ (ի)-ի հետ:

Օ ԽՆԾՈՐ (47), ԽՆԾՈՐ (126)—1. կրոռեների զուրս ցցված կոր զլուխը. 2. ձիան հետի անզամների մասները, զավակ. «Երկու խնծոր կրոնկացն ի զուրս» (47):

Երկրորդ առումով ունի զիրը Վաստակոցը՝ էջ 199:

Օ ԽՈՎԱՄԵՒԻ (76)—զամշի, մտրակ. «Զիր ամէն երանեկն ուննայ և զանպատեհ խումենին»:

Սա թուրք. կամչի բառն է, որ Մալխաս. ունի զամշի տառապարձությամբ:

Մեր օրինակը բառիս հնագույն զրավոր վկայությունն է Հայերենում:

Խոզ (111)—ջրի մամուռ. «Առ խոզի զումն և պատոէ ի ներս և զիր ի լինք թիւ մի շամանք»:

Վկայված է Խօօզ Գիրը Վաստակոցում, էջ 182 (Աճառ. Գ, 695):

Խոզմազ (158)—խոզամազ, խոզի մազի նման կոշտ (Մալխաս.):

Բառիս հնագույն զրավոր վկայությունն է:

Խոզտի (104) — խոզաճարս:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 168 (Աճառ. Դ, 539):

Խոյաչիր (45) — մեծ կամ ոչխարի նման թիթ ունեցող (ԱԲ):

Թառիս հնագույն գրավոր վկայությունն է:

□ Խոյլ (91) — խուլ, պալար, ուսեցք:

+ Խոյլ (44) — զորք, բանակ, զումարտակ. «Եւ սիրած է... ձվաւը ձիանն, որ... զիպին ընդ շարկամն ու փլցնեն ու խոյլ հնձելնիւ»:

— արար. **Խիմ** (khail), հգ. **Խիյուլ** (khuuyul) «1. ձիեր, ձիերի երամակ, 2. այրումի, հեծյալ բանակ, 3. զորք, զումարտակ»:

+ Խոյլ կամ խուլ (121) — խաճաղիկազդիներին պատկանող բույս, մեթուր (տե՛ս). «Առնուին զցուհուտ մուղին և հալէին ի խլին ձլին, որ է մեթուր, և շինէին աւծնելիք»:

Մալխասյանցը ունի խլաճաղիկ, որ է խույն խոյլենի. խլարոյս (խոլարոյս) (բառ Բեղկյանի, § 3123, *Scrophularia nodosa* L.):

Մեր ընագիրը խոյլ նույնացնում է մերուի հնա, որ է բառ Բեղկյանի (§ 2234) մեմփածաղիկ, մերուր (պարտիզաց)՝ *Matthiola oxyceras* DC., իսկ վերջինիս համազորներն են դեղին շաներամն և շանպրակ՝ *Cheiranthus cheiri* L., որ պատկանում է խաչածաղկավորներին (Jas. Cruciferae) (տե՛ս Բեղկյան, § 993):

□ Խոնճել (146) — խոնչել:

□ Խոշոր (111) — խոճկոր:

Խոստոկ (40) — փորացաւ, խիթ (Elongement). տե՛ս Խոցտոկ:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 206 (Աճառ. Դ, 633):

Խորասան (77, 88) — խաճանկ Հյուսիս-արևելյան իրանում:

+ Խորասանցնակ (90) — թեք. ծոված դիրք, վիճակ (*). «Ենեղդես խորասանցնակ որպէս խեղդեն զինատուն»:

Արդո՞ք պարսկ. **خوشمان** (xorsān) «ծոված, թեք ընկած» բառով է կազմված:

□ Խոցնակ (118) — խոց զոյանակ, խոցտուկ:

Վկայված է Մխ. Հերացու մոտ. ԻԴ. 48, 49 (Ն. Բյուզանդացի, ԲՍՀ, Պտեր, 310):

□ Խոցոնկ (101, 104, 139) — խոցոտել:

□ Խոցոտի (132) — փորացավ, խիթ, խոստոկ (տե՛ս):

+ Խուր, խըր, խըր (82, 83, 86) — առվույտ և կամ նրա սերմը. «Եր, որ է առվոյ-տին հունդի» (82), «Առնուն զիսուրն ու կորենն մանտր» (86):

— արար.-պարսկ. **تخت** (kut) «առվույտ», **تخت** (katt) «չոր կամ թարմ առվույտ, զաշտային վայրի բույսի հունդ», որ քոչվոր արարները սովոր ժամանակում են թիվում» (Նաֆիսի, Պարսկ. բառ. 2623):

Խակ ալբում և հաց են թիվում (Նաֆիսի, Պարսկ. բառ. 2623): «Եւ խումանին ունէ է, որ իշնու ի ծիկացնու»:

— արար. **خیم** (khumā) «կոտացող», «բանից էլ հիվանդության անվանումը»:

Օ խոմր (39)—չերմ, գիխացավ. «Վասն ցաւուն, որ խոմր է զրաստեա:

— արար. յաշա (կհոմաց) «1. չերմ, գիխացավ, 2. զիխացավի պատմառած տառապանքը, 3. հոգևորթյուն, վրդովմունք»:

Միջին հայերենում հաղորդված կա արար. փոխառյալ խոմրա «զարթիում, արբեցությունից նոր սիմակմած», որից և խոմրույթն «հարբեցության թմրություն» (Ամառ. Գ, 653—54), ինչպես նաև «հարբածություն և խելագարություն» (0դ. թժ. բառզրույկ):

Տանկի այս Սլո գլուխը բնագրում այսպես է՝ «Յաղագս խոմրութեան գրաստու» (էջ 75):

+ Խոմրել (42)—1. չերմէլ, 2. վրդովմէլ. հմմտ. խոմր. «Վասն խոմրելոյ, որ զեղ կատղած լինի»:

+ Խոմրենալ (79)—խոմրաբանալ, հոգնել, վրդովմէլ. հմմտ. խոմր. «Եթ խոմրենա գրաստե, ես այլ առաւել գաղնայ»:

Խոմրութին (112, 169)—չերմ, գիխացավ. հմմտ. խոմր:

+ Խոմեն (38, 102—126, 117), խոմեն (137)—զրաստների ինչ-որ հիվանդություն:

— արար. خن (կհոմաց) «ըթի հիվանդություն. ուղտերի հարբուխ» (ըստ Կամուսի թրբ.. թարգմանության և նաֆիսու Պարս. բառ., էջ 1406). առկայն հիվանդության նկարագրությունը մեր հուշարձանում ավելի լուրջ հիվանդության է վերաբերում:

Օ Խուր (106, 112)—գնդիկաձն զեղահատ. «Ծինէ խուրսեր միխալ միխալ» (106):

— արար. حرق (կորՏ) «1. գնդիկաձն որիէ իր, 2. զեղահատ»:

Միսիթար Հերացին ունի զուր և կուր (43, 50, 85...) տառապարձությամբ. «Աևս թէ տարութիւն շատ լինի և ուժով, զու տուր հետ թանին զայս զուրսս» (էջ 43): Կարսար մեկնել է «զեղ» իմաստով (Kil. Gr. § 31 և 37, տե՛ս ՄշՀ, թղթ. 251, վագ. 14, էջ 311): Մալիսայանցը (0դ. թժ. բառզրույկ) զուս, զուս կամ կուր թարգմանում է. «Ընդհանուր անուն ներս ընդունելու զեղերի»: Մ. Մուրադյանը (ԱՄՄՀՂՊ, էջ 265) ունի խուս (կուս, զոս) ձևերը, որ տալիս է «զեղ» նշանակությամբ:

Աճառյանը (Ա, 96, նաև Բ. տապ. էջ 111) Դարամազյանի բառարանից քաղել է ակրաս «զեղերի զանգված, pastille», իրը արար. բառ, որ «զիտէ նաև թաշունի, հոտ. Գ, էջ 5թ», բայց չի տվել արար. տառապարձությունը: Սա մեր թաշունի, հոտ. Գ, էջ 5թ, բայց չի տվել արար. տառապարձությունը: բարի հոգնակի ձնն է՝ قراص (աշրամ) «1. գնդիկաձն իրեր, 2. զեղահատներ»:

+ Խոպիրէ (91)—ուսուցը, խուլ. «Եւ թէ կամենաս խոպիրէ հանել, որ կա խոյլ ընդ ականցիուն և ընդ փողքն ի մէջ»:

— արար. եպիշ (habat) — Խուլոյ նշ. արար. ն (չ)-ի և (չ) ընթերցումով և կամ ն >խ փոփոխությամբ:

□ Խորենալ (54), խորենող (151)—խոխոնչ:

ՆՀԲ (Ա, 986) ունի խոխոնչ ձևով:

□ Խոխոնի (92)—զրդովել. շահալ որիէ փայլուն բանից. «Խոխոնի աշքն դէմ արեգականնեւ»:

ՆՀԲ ունի խոխոնի ձևով:

- ԽԵՂԱՅՆԱԼ (92) — ԽՄՐԻՆԵՂԱՄԻ:
- ԽԵՂԱՆ (70) — ԽՄՐԱՂԱՆ, ԽՄՐԱՆՈՂԻ:
- Վկայված է Դիբը Վաստակոցում (էջ 193):
- ԽԵՂՅԼ (73...) — ԽՄՐԱՂՅԼ:
- + ԽԵՐԱԿԻՒՆ (96) — ԽՄՐԱՆԵՂՅԼ, ՀՄԱՆԱԼԸ, ԱՀՐԵԲԸ միազնեղՅԼ. «Եւ ԽՄՐԱՂՅԼՆ լինի ի սրտին վատուժութենէն, և լինի ի ԽՄՐԱԿԻՒՆԷՆ և ընդ խումբութենէն»:
- Օ ԽԵՂՅԼ (147, 149) — ԱՀՐԸ փակմել, Հուրանալ. «ՌԱԵՆԵՆԱՅ աշվին և ԽԵՂՅԼ» (147):
- Նույն իմաստով խափ արմատից ԱՀԱՊՅԱՆԸ (Գ, 446) բերում է խափնուց: Վկայված է նաև խափնուի, որ ամարիլ, հանգիլո իմաստն ունի (տե՛ս անդ):
- ԽՈՐԱԿԻ (ԽԱՎԱՐԱԿԻ) (38) — ԽՍԱՎԲԱՆ, ՔԵՂԸՆ. «Զի ԽԱՎԱՐԱԿԻ չունի, ծառայէ առանց լեզու»:

Ա

- Սագ (98) — ծակի:
- Սաճկուել (116) — ծակգելէլ, ծակուտել. «Աւ ծաճկուէ զտերին երկու երեք տեղուած:
- Օ Սայր (79, 88, 122) — փորբր-ինչ, քիչ, կաթիչ, պաղպանց. «Առուուն ծայր մի աղջ (88), «Զգէ ի ներս ծայր մի չոր զինձ» (122). «Իից ծայր մի ջուր» (122):
- Վկայված է Դիբը Վաստակոցում (էջ 195), որ անդ տողատակում բացարկած է «սակաւ մի կամ կիսարաց»: Նույն վկայությունը ն. Բյուզանդացին մեկնում է «փորբ ինչ» (ԲՄՀ, Գ տեսք, 408):
- Սայրոյրել (57, 139)
- Սայրել (139) } — ծարուրել, ծարիր քսել:
- Սառայիլ (84, 114) — խնամվել. «Եւ թէ նոր լինի ցաւն, նա ծառայիլի ալսողէս» (114):
- Սառ կանգնել (73) — ծառանալ, ծառու լինել, հետեւ ոտների վրա կանգնել «կենայ ի դրաստն շատ յայլեր, որպէս... ծառ կանգնելն»:
- Մալխասյանցը ունի ծառս կենալ, էղ. Աղայանը՝ ծառս կանգնել:
- Սառուրիմ (78, 84, 103) — խնամվը, սպասարկում, ծառայություն. «Ի յայս ցաւուս ծառուրիմն, զոր իսկի կարցար մեք փորձեցար» (103):
- Սառուրցա (68, 84, 95) — խնամող, սպասարկող, ծառայություն անող. «Եւ պատեհէ է, որ ծառուրցան ձիոյն, որ հայնց ծառայէ զինք» (68), «իսածնան լինի ի ծառուրցուն (= ծառութբարուն) շատ ճճելուն» (95):
- Վկայված է Սմբատ Սպ. Գատառատանագրբում, էջ 101 (Աճառ. Գ, 745):
- Սարէնեալ (84) — ծարավել:
- Բարբառներում զործածվում են ձառվինալ, ձառվինալ (Աճառ. Գ, 751):
- Սարվեցցնել (68) — ծարավեցնել:
- Սլիխ (46) — ծղի, բաղկոսկր:
- Սծմալ (151) — ծմալ (տե՛ս). «Հերբոյն... ցաւ է, որ լինի յառվին ու յակընչին ու քիլին՝ զէդ շուշկակ, և ծծմայ...»:
- + Սղատակ (46) — ծղիի՝ բաղկոսկրի ներքելի մասը. «Կակղութիւն մըսին, որ կայ ի ծղատակին յերշի զեհին վերայր:

Օ Սմալ (126)—տերալ (անաստիների). «Հանապաղ [գրաստն] ծմայ ու զգուիսն ի լերդին դէն դարձնելու»:

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է, որ ունի Մալիսայանցը: Համարաբ հույն արժատից է ծմին «փոքրիկ շնչառան»՝ վկայված Գիրք Վաստակոցում. էջ 122. «Ենիքեա զբերանն և փոքր ծմին (այլ ձ. ծակ մի) թող, որ շունչն ելանէ» (Աճառ., Գ. 797):

+ Սնարեւան (51)—արգանդի բերան. «Զգէ զամէն ախտն ի ծնարերնեն»:

Բառու ունի ն. Բյուզանդացին (Ֆրանս. բառ. 881 և ԲՍՀ, Գ տեսք, 496): բաղված Անգլիաց անպէտից: Դարարադի բարբառում ծմին նշանակում է «կովի արգանդ» (Աճառ. Գ. 778):

+ Սնուրքայ (150)—1. արյուն ծծելու ալյանե խողովակ. 2. տղրուկ. «Տուր բռնել զգրաստն ու մտոյ ծնուրքային [լաւքան] ու վերոյ [զագոն]»:

— արար. չշաճ (zalūčat) — նույն նշ.՝ յ (z)-ի ծ տառապարձումով, ինչպէս մարգպան—մարձպան, անգրութ—անծրութ:

Օ Սպովկ (77, 88)—հետաձիգ, աղեղնավոր. «Հեծնի զինք անգէտ ծովովի կամ տղայ» (77), «եւ մարէ ճույ մի ձգեր ի վրա մատակ ձիաննոյն և ոչ ի վրայ չորեստեռյն, որ կիծ շայնէ, և պնդէ զծուլուն» (88):

— արար. ջշլչ (zalūč) — նույն նշ.՝ արար. չ > հյ. ձ. հմմտ. ծնուրքայ:

Մատթ. Ուոհայեցին (1898, էջ 427) ունի ծլուկ. «Ունենով ընդ իւր մարգս հազար, ընդ ձիաւոր, ընդ ծլուկ, ընդ հարուանզայ, ընդ հետևակ», որ Աճառ. (Գ. 789) հարցականով մեկնում է «ծառա», միաժամանակ նշելով, որ Կամուսի թրբ. թարգմանության մեջ կա ջշլչ (zalūč) «արագընթաց երիվար», որը իմաստով անհարմար է: Կարստը (ՄՀԲ, թղթ. 251, վագ. 15, էջ 60) ծլուկ իմաստով է «թիթե հետևակ»: Ն. Բյուզանդացին (ԲՍՀ, Գ տեսք, 529), թարգմանում է «թիթե հետևակ»: Ուոհայեցու ծովովլը ուղղում է ծովակ, որին զուգած հետ է դնում թուրք. սօլազ՝ «անձնապահ», թիկնապահ» իմաստով: Մեր օրինակը առաջմա երկրորդ վկայությունն է հայերենում և մերժում է բառի մեջ նակը առաջմա երկրորդ վկայությունն է հայերենում և մերժում է բառի մեջ ու > ա վրիպակի առկայությունը, հետևաբար և թուրքերինից ծագելու թուր զանդացու վարկածը:

Մեր մեկնությամբ Ուոհայեցու վերը բերված նախաղասության իմաստը ավելի հասկանալի է լինում:

+ Սունծոսկու (98)—ծուծ պարունակող ռուկ:

4

Կալապել (89)—տե՛ս կալօպել:

□ Կալափցնել (68, 74, 96)—տե՛ս կալօպել:

Կալօպել (=կալալպել) (89)—ձին քառամմարակ վագեցնել:

— Յրանս. galop—նույն նշ.՝

Ճիշտ է մեկնել Ն. Բյուզանդացին՝ հիմք ունենալով Հուշարձանիս վենե-

տիկիան պատարիկը (տե՛ս «Բազմավեպ», 1867, 354). Աճառյանը (Գ. 867):

վերցրել է Բյուզանդացու ֆրանս. հայ բառարանից (էջ 585ա):

- Կակղցաւու (լակղցող) (131) — կակղցնող, կակղացուցիչ, ոճինել զայս
կակղցաւու գեղերսաւ:
- Կաղնալ (96) — կաղնալ, «կաղնալն մէկ տաիցն ի գիւսոյն ձանալվիս»:
- Օ Կամար (70, 82), Տամար (66) — հավասար, «Ի զօդվածքն ըլինի համար ու
կամարք» (70), «Նա թէ ի բոյն առևլի լինի աղջկ նշաննին, նայ դու զրաւէ,
և թէ բամարք, նա դու մի զրաւել» (66), «Հերկու առջի տարն կամարք ձգէ»
(82):
- արար. **Ճալք** (կամար) — նույն նշ. (Կամուս, թրք. թարզմ. հ. 3, էջ 545):
Անառյանը (Պ. 907) բառու քաղել է Ամբատի Դատաստանապրեից ու Ան-
սիգրից և ճիշտ է տվել իմաստը՝ «Հաւասար»: Ա. Բյուզանդացին ևս տալիս է
«Հավասար» իմաստը և Գիրք Վաստակոցի ձեռագրից բերում հնտելաւ քաղ-
վածքը. սեւ ալլրն զմոմն և զձիւնի կամարք առնեն, և հալեն, և ձիթենս
(էջ 90): նշելով, որ տպագրում բառու փոխարինված է նաևսար (ԲՍՀ, Պ
տեսք, 605), սակայն թէ՛ Անառյանը և թէ՛ Բյուզանդացին ծագումը չեն որոշել:
- Օ Կամկել (73, 126) — կամաց, հանդարտ, նրբորն. «Ջմամբն ողբնաւոր ու ի կամ-
կել կամկել ի զրայն զիր» (73), «Անցմեցեց զգրաստն կամկել» (126):
Գիրք Վաստակոցը (Բառք, էջ 248) կամկել և կամկել մեկնում է «կա-
մացուկ, հուշիկ, մեղմիկ», իսկ ոգ. բժ. բառարթութեաւ (էջ 555) Մալխասյան-
ցը կամկել բացատրում է «բաստ կամի, կամակոր կերպութ»: Անառյանը (Պ.
910) «կամաց, դանդաղ» իմաստով ունի կամկարք՝ «աղորդված 17-րդ դարից
և պահպանված բարբառներում»:
- Կամփիէ (121) — կանեփիյա. «Առ կամփիէ շուան ու կապէ, զագկտակին պինդու»:
- Օ Կայսր (60) — կեստ, պոտ, «Այն ձին, որ [ունեայ] առ կայսեր և ի վրայ պըս-
կանն կամ ի ներբանէ կամ ի զրացէ՝ որպէս զշուշմայ (իմա՝ բունչութ) կե-
տեր... չէ շնոֆոր»:
- Նշը բառիս իմաստը անհայտ է համարում. «Թերես խայտուցը, կամ
կէտք և կիտուածք՝ նշուլից, իրրու կայձեթ. «Աւապաստըն է մարմարին սպի-
տակ, պարզ իրրե զապակի, և ունի կայսեր բազումը թրս. մրկ» (1325 թ.):
Անառյանը (Պ. 940—41) նույնական անստուլդ բառ է համարում՝ «մարմա-
րիոնի վրա գտնված երակներ կամ նշաններ» իմաստով, և ավելացնում է՝
«Բառարանները զնում են կայսեր իրը նշակի: Թվում է թէ հոգնակի է կայս-
ձեից»: Մալխաս. Առ համարում է «առնեայտ նշանակությամբ» բառու:
- Մեր օրինակը, որ բառիս հնագույն վկայությունն է, ավելի պարզություն
կեն մտցնում իմաստի մեջ. սև կայսեր, որ նման են շուշմայի (բունչութի) կե-
տերի: Հնտեւարար Անառյանն իրավացի է կայսեր համարելու կայա բառի
տերի: Հնտեւարար Անառյանն իրավացի է կայսեր համարելու կայա բառի
հոգնակին, իսկ իմաստն ավելի ճիշտ տալիս է նշը՝ զնելով շնոյտուցը,
կէտքը: Հավանարար կայսր հնագույն ձեն է կետ-ի (կէտ)՝ այ>ե>է. վերջինս
հոգնակին, ինչպես նշում է Անառյանը (Պ. 1173), դառնում է կետ:
Այս ձեկից կետադրեալ, կետահարութիւն (անդ, 1174):

- Կանայչ (87)
- Կանանչ (87)
- Կանաչ (85, 108)

— կանաչ:

- Կանիփայտտիզ (115) — տիգկանեփատ, տղկանեփատ (Ricinus communis L.):
- Կանկնան (50) — կանգնող, շուպած է մատակ ձին, որ լինի շատ կանկնան ու նստի բջիկ:
- 1. Կանկուն (48) — կանգուն՝ ոտքի վրա կանգնած:
- 2. Կանկուն (68, 41) — կանգուն երկայնության չափ:

Օ Կասլայ (103, 127, 152) — դափնի (Laurus nobilis L.), նաև արաբական կասիա, դափնածառ, կինամոն, Cassia.

— պարսկ. Կասլա (kasllā) «արաբական կասիա» (Շտեխնգաս, Պարսկանոց. բառարան), Ճայռ (kaslla) «կասիայի մի տեսակը՝ ճմիրակ, դարչնածառ»:

Անառ. (Դ. 1015) (նաև Մալիսաս.) ըստ Հայրուսակի (§ 1333) դնում է դափնիս, միաժամանակ համեմատելով արար. kaslla-ի հետ, գտնում է, որ լիբրինս, «Ճայռ» է շատ չի հարմարում մեր բառին (արար. Յ կ = Հ, Բ, իսկ կ = Ջ զ (Ք)»: Կարստը ևս փոխառյալ է համարում արար. Ճայռ (kašla) «դափնի» (ՄՀԲ, թղթ. 251, վագ. 16, չ 109):

Նաֆիսին և Շտեխնգասը բառու պարսկերեն են համարում. այս դեպքում պարսկ. Յ (կ)-ի կ տառաղարձումն օրինական է, անգամ չի բացառվում, որ այս պահպահերն լինի՝ Կասլա (kasllā). որից և պետք է փոփառված լինի արար. Ճայռ (kassllā) «մի տեսակ ջեղ, ծառի կեղես» (Նաֆիսի, 2890):

1438 թ. ձեռ. բժշկաբանը բառին դիմաց դնում է արար. դար [= جار], որ ըստ Նաֆիսու (չ 2444) է «մշտագալար ծառ, որի փայտը այրելիս հաճելի հնում է արձակում, օգտագործվում է դեղագործության մեջ»:

Ըստ Բեգելանի (§ 2048) կասլային հոմանիշ են՝ դափնի, սարդենի, դարի, եղբեղի, հոփի (Laurus nobilis L.):

- Կարէնալ (49) — կորողանալ. «Ձերէնայ մարդ տեսնուց»:
Պահպանված է երեանի բարրառում (Աճառ. Գ, 1047): Մեր օրինակը բարիս հնագույն գրավոր վկայությունն է:

Կարծ (152) — կործործ. հազարարար տառասխալ է:

Կատին (50) — տե՛ս կօմ:

Կաւշլուշ (92) — տե՛ս կօշկօշ:

Կատա (137) — տե՛ս կօստ:

□ Կամաֆ (139, 163) — կարավ:

- Օ Կերիչ (39) — արյունոտ խոց, դաշտիկ կամ ուտիչ վերը (տե՛ս) . «Վասն կերիչ շամ, որ է դաշտիկ»:

Որպես հիմանդրություն չի հիշված բառարաններում:

- Կեզն (129) — թեր:
Վկայված է Գիրը Վաստակոցում, չ 215 (Աճառ. Գ, 1169):

- 1. Կեզոն (45) — թերող:
+ 2. Կեզոն (58թ) — այն ողները, որոնք կը ություն են առաջացնում և բարձրացնում են թամբիք տեղը (տե՛ս չ 93). «Թամբողն ու կը ունի ու ծուռ ողն յայտ է»:

- Կրխա (105), ասոր. — կթզա, փոքրիկ բաժակ, ըմպանակ:

Վկայված է Գիրը Վաստակոցում, չ 119, 120 (Աճառ. Գ, 1176):

+ Կիլիստոն (60) — անստույգ նշանակությամբ բառ. «Ի՞չ վահե լինի թուի՞ անենջ սե... ու ի վրայ զադիանն ի մազին փայլուիկ՝ զեզ ճանփնի, որ նման է յերկնի, զեզ կիլիստոն կտա. և առ հրեղին է»:

Կիծ (42, 85, 88, 121) — հիվանդություն՝ եռք, սաստիկ բռու:

Կ. Բասմաջյանը (Անդ. անդ. 721) հարցականով տալիս է լատ. Prurit. Օ Կիմուլիս (150), խիմաղիս (113) — կավեղն հող, որ հին ժամանակներում և այժմ զործ է ածվում իրրե օձառ, բուրզ թաղեցու, և իրրե զեզ. «Առ զայն կավն, որ կոչի կիմուլիս» (150). «Առ խիմաղիս կատ, լեսէ» (113):

— արար. **لیا میمیق** (կլուուլից) — նույն նշ.:

Անառ. (Դ. 489) ունի խիմուլակաւ՝ բազոված ն. Բյուզանդացու ֆրանս. բառարանից՝ էջ 245ա («Փիլիպուլակաւ, ինքու ի բուռն ի մօս լինի, լրջոյն տրամ հող»): Անառյանը ծագումը դնում է հուն. κυριοτετήηց, միաժամանակ վերապահություն անելով, որ «Կ ձայնի զեմ ի՞ ցուցյ է տալիս, որ բարը արարերեն տառագարձության միջոցով է անցել մեզ» Հիբրավի այն արարերեն է՝ նույն նշանակությամբ, իսկ արար. Ծ (է) հայերենում տառագարձում է և կ. դ. և՛ իւ:

Մեր աղբյուրը տալիս է բառիս հնագույն զրավոր վկայությունը հայերենում:

□ Կոլինչ (67, 129) — կոմիստր:

Օ Կոլինչ (39, 41, 115), արար. — փորի սաստիկ ցավ, զալարումով և շամփրումով, սանչու, խիթ (colica abdominis):

Անառյանը (Դ. 643) ունի խոլինչ և մեկնում է «մերի վրա մի տեսակ ուռեցք» նշելով, որ ՀՀԲ, ԶԲ, ԱԲ, ԲԲ բառիս վկայությունը լունեն: Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Գ տեսք, 891) հիշատակում է, որ բատ Պողաճյանի կա արար զուլունց «Եթիկնացավություն» և պարսկ. իրունն «ցավ, խիթ»: Անառյանը տալիս է բառի արար. ճիշտ ձևն ու իմաստը **جُنْلُوك** (կյուլինդ) «ազինն-րի հիվանդություն»: Մայխասյանցը կոլինչ մեկնում է «փորի սաստիկ ցավ, զալարումով...»: Այս բացարձությունը, ինչպես նշում է Մ. Մուրայյանը (ԱՄԳՀՊ, էջ 202) «համբեկնում է Քրիզորիսի և Ամիրտովլաթ Ամասիացու գործածությանը»: Արուսափղը զուլինչ ձևով (էջ 132) և մեր աղբյուրը ևս այս հիվանդությունը կապում են փորի ցավերի հետ:

Պարսկերենում այս հիվանդությունն անվանվում է նաև **چرنيش** (purnishi) և փորացավ» (հետաքրքիր զուգայիպություն հայ. փոր-ի հետ, պարսկ. փոր բառի ոռորվայն) նշանակությունը հայտնի չէ): Պարսկերենում **جُنْلُوك** (կյուլինդ) տառագարձությամբ նշանակում է նաև սկողացավ»:

Անդ. անպէտն ունի զուլինչ, զուլնշ ձևերով, որ կ. Բասմաջյանը (անդ. 726) colique հիվանդությունն է համարում:

Զալիշ պարսկերենում ունի նաև «շանք», նրանիցաւ մերարեմունք, որ մեր բարբառներում պահպանված է չալիշ զալ «շանք անել». Մարիսայանցը դնում է տաճկերենից (ՀԲԲ, Դ, 8): Աղջելի է փոխառման աղբյուրը:

Բառիս հնագույն գրավոր վեհայությունն է հայերենում:

+ Զալիշ (110) — չերմից այրվել, կրակվել (զիխի ցավից). «Զալիշ, զզուիսն, դողա բազկունքն, թուխայ ակրենչվին»:

— պարսկ. حَذَقَيْدَن (čakidan) — նույն նշ.՝ ուն զերբայական լծորդի զեմ հյ. ել: Պարսկերենը չակ «վասել, բացավասել» ձեզ հնում փոխ է տռել Առորբերենից (բառ Զ. Քալուսնի, 405):

Աճառյանը (Ե, 720) Պուսի բարբառից բերում է չախ «հանդիմանություն, կշտամբանք» իմաստով (սրից և շախել) և ծագումը դնում է պարսկ. حَذَقَيْدَن (čakhdan) «կազել, վիճել, իրար հետ կովելու»: Պարսկ. չակիան և չակհիան բայրերի հիմքը թուրք. չակ (čag)-ն է՝ բառիմաստի լնդայ-նունով:

Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վեհայությունն է հայերենում:

□ Զալիշ (66, 68) — չար, չափ:

Աճառյանը (Ե, 735) չափ բառի տակ բերում է չամ, չախ, չակ՝ որպես «ուամկական կամ միքին հայերեն» ձեռք:

□ Զարչել (85) — չարչարել, նեղել. «Եւամակ թէ զահնն և կամ չարչեն»:

Մարիսայանցը ունի չարչելի (ՀՀԽ. ձեռ չարշարել-ի):

□ Չիլ (76) — չիթ, ոչ. «Չիլ լաւ լր քեզ, թէ ժոյրն զրեզ չէր բերելու»:

¶

+ Պախւեցաւ (39, 112) — տավարացավ:

+ Պախտել (88), պաղցտել (45) — ծիան բերանի սանձատեղը. հմմտ. պաղուց. «Պախուցն շարու զպախցտեղն» (88), «Գունչն ի ոլաղցտեղացն ի վայր պարկեցաւ լինին» (45):

Պահնալ (37, 50, 51) — հղիանալ (ծիռ և այլ կենդանիների):

Վկայված է Քրիս Վաստակոցը (Ե, 202, 221 (Աճառ. Ե, 789)):

□ Պաղուց (45, 73), նաև պախուց (88, 103) — սանձ, երասանակ:

+ Պաղտատի լիտր (83), պաղտացի լիտր («») — բաղդազի լիտր (կշոի միավոր). «Ռւտէ բառուն լիտր պաղտատի» (83), «Տառ մըրու (կշոի միավոր) մի ընտրած զարի, որ լինի կշէրք տառնուհետ լիտր պաղտացի» (66):

+ Պաղտատի կանկուն (82), պաղտացի կանկուն (49) — բաղդազի կանկուն (լափի միավոր). «Էինի արձկութիւնն որոկս տառն կանկուն պաղտատի», (82), «Վեց կանկուն պաղտացի կենաց» (49):

Պաղցտել (45) — տէ՞ս պախցտել:

+ Պահնար (101) — փորբ ուսած. «Եւ պահնարն, որ է հասուածն, որ լինի ի գրասանուն»:

— արար. بَاجِر (bādžir) — նույն նշ.:

- Պայրուտել (100) (Հմիս. ձեւ պայրել-ի) — պայթել, ճաքճքել. «Պայրուտէ իւալիկն
(իմա՞ բաղկուկը)» ու արիս կենաչու:
- Պառիկիլ (128, 131) — պառակիլ՝ կողի վրա ընկնել, պառկել:
- + Պատուստնամ (39, 118) — խունամ հիվանդության վատ ձեր (*): Հիվանդության
ժամանակ «զրաստուն ոտքն ուռենայ հետէն, ու հետէն նստի. և կարէ լինել, որ
ելնէ յիրմէ գեղին ջուրը (118):

Նաֆիսու պարսկ. բառ. տալիս է զրաստների մոտ հանդիպող **ختاج**
(կիսողական) հիվանդությունը՝ առանց այն նկարագրելու Պարսկ. աշ (bad)
«վատ» բառի հավելումով՝ պատխունամ՝ ըստ երկույթին այդ հիվանդության
ավելի վատ, ծանր տեսակը:

- Պատուտիլ (94) (Հմիս. ձեւ պատառել-ի) — պատառություն. «[Սմբակն] հանա-
պազ պատուի ու փշրիս:

Պալպ (56, 60) — տե՛ս պօք:

- Օ Պինիր (122, 139). պարսկ. — դասած շաքար. ուսանէ ի հետ լիտր մի սպիտակ
շաքարու պինիր» (122):

Աճառյանը (Զ. 1202) բերում է վիենիս ձեր՝ նշելով, որ «ունին միայն ԱԲ
և նորայիր. Բառ. ֆր. 422ր, իբր մէլ. Հետևաբար մէր ազրյուրը տալիս է
այս բառի նաևզոյն զրավոր վկացությունը հայերենում:

- + Պզմիլ (78) — հակառակզիլ. «Այր սզմիլ ու չերպարք:

Կազմված է սիկմ «հակառակություն», կոիմ արմատից, որ վկայված է
Ծնորհառու թղթերում (ՆՀԲ):

- Օ Պղրպայտոն (129, 135), պղրդատոն (99) — բղրիատոն, գաղտիկուրի մի տե-
սակի:

Աճառյանը (Ա. 1079) Հայրուսակից բերում է բգրկատոն, պղրկատոն
ձերը: Վենետիկի 1294 թ. ձեռ. բժշկ. (Էջ 145) պղրկատոն մեկնում է «ունեդ
է նմանակ տավտի և այլ փորք է»: Ոգ. թժ. (Էջ 569) ունի պղր դատունէ, պղր
դատի: Ամիրուովաթէ Անգիտաց անսպէտում զրում է «պարսկներէն ասպաղաւ
կասեն», իսկ վերջինս ըստ Հայրուսակի ջղախտան է կամ «գաղտիկուրը
(Plantago): Աճառյանը բառիս արաբ. ձեր տալիս է **نَوْطَدَرْجَة** (bdhtrkatun-
na), իսկ նաֆիսին ու Բեղեյանը՝ **بَزْرَقَطْلَوْنَا** (bazrktanə), Բեղեյանը
(§ 2737) սրան հոմանիշ է զնուում Հ. լուախոտ և կտուախոտ:

- Պիտ այնել (100, 137) — պիտ առնել, հոգ տանել, խնամել. «Թէ պիտ այնեն,
նա ճարտար ողջնայ:

Պիսկուտիլ (49) — պիսկուտել, բորուել, բոստիվել:

- + Պլատ (58ր) — անսուույգ նշ. բառ. «Պլատն անդամն յաւ է և դորդն յայլած է»:

- + Պլուզ (72) — բրդե հաստ գործվածք. «Եւ կապէ ի յիր լէամն պլուզ ծրարոց ակ
մի ազք:

— արաբ. **بَلْسِي** (bulus) — նույն նշ., որ արաբ. **بَلَامَن** (ballās) բառի
հոգնակին է. Մա պարսկ. **پَلَامَن** (palās) «բրդե հաստ գործվածք, փալամա»
բառի արաբականացած ձեռ է:

Աճառյանը (Ե. 1072) բառիս ծագումը անսուույգ է համարել. նշը պլուզ

դնում է որպես սփոքիկա ու «կապուտակ» և բերում է Շեորհալու հետեւալ հանելուկը (առակը). «Տեսայ փոքրիկ մոնղոլնակ», ու ուներ ոլլուզ իրքն կընկղակ, առաւօտուն սկրնոյր մինակ, պաշտէր անուշ բազզը եղանակ (արտօտ թռչուն)։ Այստեղ պլուզ-ի իմաստը հստակվում է մեր բերած նշանակությամբ, իմա՞ սարտույտը ուներ բրդից զործված կընկղակ (կնդուղ)։

Բարիս այս նոր առումը չի չնշում այլ բնագրերում նրա սփոքիկա և տկապուտակ» իմաստները Պլուզ-ի «փոքրիկ» իմաստի համար ճիշտ է Աճառյանի նշած արար. յշւ (billy) ձեզ, որ բառ «Կամուսիք» թուրք. թարգմ. ունի «կարմանասակ» նշանակությունը: Վերջինս նույն իմաստով փոխ է առնված պարսկերենում (Խաֆիխ, 637):

Պղինձ (128)—պղինձ՝ կաթսա:

Պղինձ այս իմաստով վկայված է Դիրք Դաստակոցում՝ էջ 161 (Աճառ. ե, 1076):

+ Պնկոս (47, 50, 93)—ուսագլուխ. «Էւարժութիւն միջացն ի նրբենպէն՝ ինչնվի պնկուացն ոսկորն»:

Կարստը (ՄՀԲ, թղթ. 253, վավ. 28, էջ 232) պնկոս բիւեցնում է պրենուկ «վերին կողմն դմակի և ազույ ձիոյ» (բառ Դիրք Դաստակոցի բառարանի, 257) բառից՝ պրենուկ-ոռո՞>պրենրի-ոռո՞> պնկոսն, և մեկնում է «ձիան հետույթի հատված»:

Բառու հավանաբար առաջացել է թէշ>պէն «ուսասկը» և կոս ովեզի նման մի ոսկոր» (22Բ) բառերից «ուսագլուխ», թէնզուիս (տե՛ս) իմաստով: Գրիգորիսը ունի պնեկոս (174), որ թվում է զիստերի հատվածն է:

□ Պուրշալ (50)—պութկալ, ցատկել. «Եւ սիրած է ի մատակն, որ չորս ոտաւիքն պուրշալ»:

Մալխասյանցը ունի պուրշալ:

Պուխար (86), արար.—գոլորշի:

Բուխար ձեռք հաղորդված է Հովհան երզնկացու «Յաղազս երկնից» երկում (Աճառ. ե, 1192) և Գրիգորիսի մոտ (էջ 4, 11 և այլն):

+ Պուհուրանել (71,77)—անստույդ նշանակությամբ բառ. «Պարտ է, որ հեծելվորն զիստն լինի, որ թէ ուզէ ի վրայ ըրըմբի զորդէ..., թէ ուզէ ի վրայ պուհուրտնելոյ» (71), «Եաս մի ըրըմբնի կոտրըտէր և պուհուրտէր» (77):

○ Պոտյու (37, 38)—ձիու մարմնի վրա տեղ-տեղ շրջանակաձև կուտակված մակեր. «ՃԶ. Վասն գոյներոյ և պտուտնոյ ի ձին» (37), «Ի. Վասն պտուտնոյ, որ ի մազն լինի» (38):

Այս բառը օգտագործված է Բժշկարանիս ցանեում, իսկ բնագրի մեջ համապատասխան գլուխներում այն փոխարինված է բոլոր-ով. «ՃԶ. Յաղազս... բոլորնոյն, որ կենայ ի գրաստն» (55), «Ի. Յաղազս բոլորնոյն, որ լինի ի մազն» (58):

Պրասմ (147)՝ պարսկ.—բրսամ, պլերիտ (Մալխասյանց):

Պրսմ (41)

Թրամ ձեռվ հազորդված է Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարութեանք մեջ» (Աճառ. Ա, 1231):

Պօղ (պատ) (56, 60), պարսկ.—գորշ, մոխրագույն ձի:
Վկայված է Գիրը Վաստակոցում, էջ 199 (Աճառ. Ե, 1179),

Զ

Օ Զանդիան (193)—բռդ, օձի դեղ, օձի սխտոր

— արար. Ալեքնչ (djantiyānā) — նույն նշ:

Աճառյանը (Դ, 667) բերում է ննդիան ձեր Հայրուսակից (§ 1890) և զնում արար. Հյունչ (djantiyān) հոմանիշից: 1294 թ. ձեռ. բժշկ. (էջ 145) ունի չանդիան՝ «Երեցնանի տակ՝ ի Կրիտն լինիք:

□ Զանդիան (151)—ջենիսէ, ջախչախօն:

Զանդիան ձեռվ վկայված է Գիրը Վաստակոցում, էջ 100, 115 (Աճառ., Ե, 1187):

□ Զերմենու (125)—շերմոտ, տեղով բռնված (Ficireux). «Բէ զարի ուտէ, նա չէ չերմենու»:

Գրիգորիսը ունի չերմենու (12), իսկ Անդիտաց անգլառ՝ չերմենու (էջ 739):

Օ Զող (87)—ջոխ, ճիպոտ, զերան. «Եա այնն խոր ու փոս ու դնէ ի վրայ հաստատուն փայտեր, կաղնի ջողեր ու շարէ ի վերայ այն փոսին զէդ մատունք ի կարգնու:

— պարսկ. չշա (djungli), չշա՛ (djungli) — նույն նշ:

Զոխ մեռվ մեկ ակամ հաղորդված է Վրը. Հ. ա, 694, որ Աճառյանը (Ե, 1225) փոխառյալ է համարում վրաց. Հռօծ ջոխի սփայտ, դավազան բառից: Ճիպի բախի ծագման հապակցությամբ Աճառյանը (Դ, 657) վկայակոչում է Հ. Թիրյարքանին, որ Հ. Ճիպի բնեցնում է պարսկ. չշա՛ (čūgħi) կամ

չշա (čiġħi) սրարակ ճյուղերով հյուսված վարագույրը բառերից, և առարկում, թե բառ Բուրհանի պարսկ.-ը փոխառյալ է Բուրք.-ից և, հետևաբար, պիտի տար Հ. Խուզ: Մեր աղբյուրի վկայությունը, հատկապես չ (għi)-ի դիմաց Հ. ղ-ի հաստատում է բառիս փոխառությունը պարսկական ձերց: Վրացերենին ու թուրքերենը նույնական կարող են փոխ առած լինել պարսկերենից:

Զոհուառ մուղլ—տե՛ս մուղլ ջոխուառ:

□ Զըխանել (107, 111, 112)—մի բան ջրով խառնել. ունու քացախ և չըխանէ ջրով (107), սկաննի ի յախ ջըխանած զինին (111):

□ Զըտեղ (111)—ջրոտ, թաց տեղ. «Կանգնեցոյ զինը ի ջըտեղ»:

□ Զըցնել (87)—ջուր ցանել. «[Գրաստնին] ի հովամուտ տեղ կապեն ու չըցնեն ներքինու:

Օ Զըփող (113)—1. միզանցը, 2. խողովակ, որի միջով հոսում է չուրը. «Էնթէ բարակ ասղամ ի տոշփող» (իմա՝ միզանցը)... Կայ, որ եղածվ կու քշտէ ի չըփողնէ:

Գրիգորիսը ունի առաջին իմաստով (էջ 157), «Ճանապարհ գողոյն՝ չըփողն», որ է լըրան փաղարշաբին՝ նեղէ ի աղայսօն: Ս. Աճառտունին (ՀԲԲ, էջ 579) բառ երկրորդ իմաստով քաղել է 1231 թ. մի արձանագրությունից:

Թախմարէն (55) — առե՛ս ըռախմարէն:

Օ Թամատիս (39, 119) — զերին շնչական ուղիների բորբոքում, հարբուխ. «Թամատիսի նշանքն այս է. իշնի ընդ թիմն չուրն ու լինի հոտած և փարայ և արցվէ ալքն»:

Բառու ռամատիս ձևով վկայված է Դիբր Վաստակոցում, էջ 164 (Աճառ, Ե, 1260): Աճառանը տալիս է «մի տեսակ հիվանդություն անորոշ բացատրությունը՝ բարի հիմքը համարելով «Հուն. ծանառությունը» և ներքին հյութերի հոսում», որ ծագում է քանչա ուսումնական բարից. սրանից է ֆրանս. rhumatisme և ողացավիք. մեր բարը ստացված է արարական տառապարձության վրայից, ուր, ինչպես սպասելի է, ընկած պիտի լիներ վերջածախն ուր Մալխան. ռամատիս «ունմատիդմ. Հողացավություն» հոսումն ձեի աղավաղությունն է համարում: Աճառ. (անզ) բերում է նաև Վաստակոցում Ալիշանի տված բացատրությունը. «Կամ աշացաւութիւն է. ուլմէտ, ըստ արարաց, և կամ քսոտութիւն: Վաստակոցի բնագրում հիվանդության նկարագրությունը բացակայում է, ուստի տեղիք է ավելի կասկածի, մինչդեռ թե՛ մեր հուշարձանում և թե՛ Գրիգորիսի մոտ մանրմասն նկարագրված է հիվանդությունը, ավելին՝ Գրիգորիսը (էջ 104) տալիս է նաև հիվանդության արարերն մի այլ մանվանումը. «Եթէ այս յահելուածն (իմա՞ զինութիւն) ի յերկու բիւյակովն իջանի, նա անուանի զուգամ, որ է բառամատիս», իսկ զուգամը, ինչպես նիշտ բացարդված է Գրիգորիսի բառարանում, «Հարբուխն է՝ «զերին շնչական ուղիների բորբոքումը» (էջ 222):

+ Թայսայ (131), ասանար (40) — ամբակների բայրայման հիվանդություն, որ առաջանում է բարին զարնվելուց և այլ նման պատճառներից. «Յաղագս ռայսայի, որ է բեկուհասն» (131) «Վասն ասանար ցաւուն» (40): Բեկուհաս հիվանդության նկարագրության մեջ ասված է՝ «Թէ զորդ լինի բեկոն, նա զորդ երթայ ընդ սմբակն ու բնեռաս այն» (90):

— արար. Ճաշ (rathea) — նույն նշ.:

Հետաբրբիր է ասանար ձեզ, որը արարերն ռահաս բառի ընթերցումն է հակառակ կողմից: Արզոյթ թարգմանչի զրչական խա՞զն զն է:

+ Թայփիմէ (57) — ձիու զիսի, դունչի սպիտակությունը մինչև շուրթը. «Թէ լինի մանտր կետ կետ թուխ ու սպիտակ կամ կարմիր լայն, և թէ լինի վերի պոռիլին կն սպիտակ՝ շատ կամ քիչ, կոչեն իր անուն ռայփիմէ»:

— արար. Ճաշ (rathea) — նույն նշ.:

Ուշագրության արժանի է արար. Ճ (թի, 8)-ի Յ տառապարձումը հայերենում: Ընդհանրապես արար., նաև պարսկ. այս հնչումը հայերենում կայլուն տառապարձություն լունի. Հիմնականում այն տառապարձված է ս. իսկ երրեմն նաև դ կամ թ (տե՛ս Բ. Զուգասպյան, Պարսկերենում արարերենից փոխայլ բառերի հայտառ միջազգարյան մի բառարան, «Պատմա-բանասիրական հանգեստ, 1970, № 3, էջ 156, § 12):

+ Թասուխտ (159) — ծարիր՝ աշքին բաշելու սև դեղ (antimony):
— պարսկ.-արար. Հختաւ (răsusuhăt) — նույն նշ.:

- 1428թ. ձեռ. բժշկարանում (ZFAP, էջ 131) նշվում է, որ ոքսոլիստ
«արապկերէն» է:
- + Ռավան (95)—ընթացք, հավասարակշռություն. «Այն ձին, երբ գահեն, նա ելնէ
յուալին»:
- արարկ. Շաջ (rawān) — նույն նշ.:
- Կարսաը (ՄՀԲ, թղթ. 253, վագ. 30ր, թղ. 6) րևիան (ռավան) ձեռվ քա-
ղել է Ա. Չոպանյանի «Հայրեններու բուրաստանին մեջ» զրբից (էջ 541) և
ճիշտ է որոշել ծագումը:
- + Ռեպոն (87), սիպ (39) {— շնչարգելութիւն, հեղձանք, աստմա. «Նշանն է
+ Ռեպան (39) } [ռեպանուն]. յորժամ շնչայ, նա տայ բովացն»:
- արարկ. Ջօյ (rabū) — նույն նշ.:
- Բառու վկարված է Գրգորիոսի մոտ (էջ 107, 189). ծագումը ճիշտ է որոշել
Հ. Դ. Փափաղյանը (անդ, էջ 228):
- + Ռէշ (54)—ատամնաշար. «Յերայնայ ակուայքն ու ընկնի դահ (իմա՝ ծերացած)
- ռէշն»:
- արարկ. Շաջ (radj) — «շարք (նաև ատամի)» (Նաֆիսի, Պարսկ. բառ.,
1633):
- Ռիանան (107)—տե՛ս բոխաւան:
- + Ռուզան (95)—թերգող, մի կողմի վրա գնացող ձի. «Եւ այն ձին, երբ գահեն,
նա ելէ յավինին (իմա՝ հավասարակշռությունից), նա կոչէ յարապն իր ոռո-
դան»:
- արարկ. Շաջ (rawghān) — նույն նշ.:
- Ռիպ (137) — տե՛ս ռեպոն:
- Ռումբ (76, 77) — տե՛ս բոխմբ:
- Ռուպ (56) — տե՛ս բռուպ:
- Ռժանի (100) — տե՛ս բռժանի:
- Ռժէպ (72, 77) — տե՛ս բռժէպ:
- Ա
- Սազել (77) — հարմարեցնել, տեսքի բերել, պատրաստել. «ականիշ՝ սազրըին
(տե՛ս):
- Վկայված է Կոստանդին Երզնկացու տաղերում, էջ 108 (Աճառ. Զ, 18):
- + Սազրըին (77) — ձեկից հանել, տեսքից զցել. «մմտ. սազել. «Հեծելվորն... լթո-
ղու, որ հեծենի զինք անդիտ ծովուել կամ տղայ և սազրըին ու աւիրէց»:
- արարկ. Շայ (sāz) ոճե, պատկեր» և հյ. բափել:
- Սալար (44) — ամբողջ. «Եւ սիրած է կրտած ձիան... զի սալար կենան»:
- + Սակիլե (151) — սակավել, նվազել. «Աւորք մի յնելնայ և աւորք մի սակիլե»:
- Բայական այս ձեր առաջին անգամ է հանդիպում:
- + Սահնէ (119) — մանր աղի ձկով պատրաստված խորտիկ. «Առ զայն ջուրն, որ
երեւ ի՞սահնէնէն, որ կու շինվի մանր ձկաւմ»:
- արարկ. Շահնամ (shahnām) — նույն նշ.:

- Ամիրտովլաթը** (Անգ. անդլու, 521) բարիս խմասար համարյա ճիշտ է տալիս, նա գրում է. «Սահնայ. կու կարծեմ թէ ինքն խամփարն է, ի ձկնեն կու շինեն... ոմանք ասեն թուղի ձուկն է»:
- Օ **Սաղրի** (88)—ձիու կամ այլ գրաստի զավաել. «Զրին խմելն շատ օկտոպիսն է իր... արձկնէ զաղրին, պնդէ զմիսն»:
- թուրք.—ուրարկ.-արար. **غَرْسَى** (sağrı) — նույն նշ., նաև «զրաստ-ների զավակի մորթուց պատրաստված կաշիս»:
- Վերշին առումով Մալիսայանցն ունի որպես տաճկերենից փոխառյալ՝ Նաֆիսին, Շտենգասը և Կիրակոսյանը նշում են որպես պարսկ. բառ. Միշ-շինասիական աղբյուրներում որպես թուրքերն բառ ճիշտակիցում է ԺԷ զա-րից (տե՛ս Զ. Քլասոսն, 815):
- + **Սամանի** (56, 59, 60)—սկ բաշով ու պշով խարտաշ ձի. «Եւ կան ճիշտնին, որ կուն սամանդ. և իր գոյնն է սեղոյն զեղին» (56):
— պարսկ. **سَامَانْد** (samand) — նույն նշ.:
- + **Սամդի յարապի** (122)—արարական խեժ. ստացվում է ակացիայի տարրեր տեսակներից:
— արար. **سَمْدِيَّ** (samdi) — նույն նշ.:
- 1294 թ. բժշկարանը (էջ 146) ունի «սամիս յարապի. տաճիկ կուզ», իսկ օգ. թժ.՝ զամիս արապի, որ մեր հուշաքանում արված է նաև թարգմանարար՝ խէճ արապիկ (162):
- + **Սայլեառ** (71)—անսուուգ նշանակությամբ բառ. «Տես աղէկ սայլեառ, որ ոչ նեղ լինի և ոչ արձակ», «Եւ բանձ ամէն զիկամնին սայլեառն աղէկ է, զի երբ սայլեառն զորդնս, նա ամէն ազգ լիկամովն կարես զորդել»:
- Օ **Սանդալ** (151)—ճանդան, սանդալ ծառը. ինում է սպիտակ կամ կարմիր վեր-շինս դիղձարենանին, բուսաւունտի (Adenathera Pavonina L.), ինչպես նաև ճանտալին, կարմիր կրտուր (Pterocarpus santalinus L.) (Բնդեյյան, § § 109, 2865):
— արար. **لَذَنْدَل** (şandal) — նույն նշ.:
- Արաբերենը փոխառյալ է Հին պարսկ. **جَنْدَان** (jandān) (չ. նանդան) կամ **لَذَنْدَل** (şandal) ձեից (Նաֆիսի, հ. 3, 2171), հնագույում պարսկե-րենը իր հերթին արար.-ից փոխ է առել սանդալ ձնից: Հայերենը հնում («Աշ-խարհացոյց») փոխ է առել նանդան, իսկ ալիքի ուշ (Դարանազցի) նաև սան-դալ օմի տեսակ բուժախում (Աճառ.) իմաստով. Գարանազցին (էջ 496) զրում է. «Սանդալն փայտ է կարմիր և խաղիսակ, որ ի Հնդկաց զայ. այս խոտ դեղ է ունեցի, կրծոց, ձիոց, ջորոց և իշուց և կարի զառն է»: Աճառ. շնայած նանդան-ի ստուգարանության ժամանակ ճիշտակում է արար. sandal-ը, բայց չ. սանդալ-ի ծագումն անստուգ է համարելու ն. Ակինյանը (Դր. Աղթամարցի, Վիեննա, 1958, էջ 134) սանդալ փոխառյալ է համարում տաճկերենից: Ուղղելի: Դր. Աղթամարցին ունի սանդալի: Արար. ծագումը դարձել է Բ. Չուղալյանը 1963 թ. (տե՛ս Դր. Աղթամարցի, աշխատ. Մ. Ավ-դալիրեղյանի, էջ 354):
- Մեր աղբյուրը տալիս է բարիս հետագույն գրավոր վեկալությունը հայերե-նում:

+ Սապալ (41, 150) — արքի հիվանդություն կամ արատ, արևակալած աշք, բժոտ աշք. «Յաղագս սապալի», որ յաշք կենալ:

— արար. **سابل** (sabal) — նույն նշ..

Գրիգորիսը (էջ 80) ունի սրպի (սպը) ձևով, Կարսոր (ՄՀԲ, թղթ. 253, վազ. 31, թուղթ 77) բառ բաղկալ է 1438 թ. ձեռ. բժշկարանից: Ե՛վ Կարսոր, և՛ Հ. Պ. Փափազյանը (Գրիգորիս, 228) ճիշտ են որոշել ծագումը:

+ Սատափ (93), հգ. աստափ (տի՛ս) — երանքների, զիստերի մոտիկությունը և սեբակների հեռավորությունը իրարից. անւ այն, որ սատափ կոչն իր... նա յինի սեբակների դեպ ի դուրս և ծունդին դէպ ի ներս:

— արար. **شاداف** (shadaf) — նույն նշ..

□ Սարդուալի (133) — սարդուատայն:

Սարել (70) — սարքել, պատրաստել:

Այս իմաստով վկայված է Մմբ. պտմ. 17, 67 (Աճառ. Զ, 123):

+ Սաւն (164) — նմանողություն, ընդօրինակություն. «Գրեցի ի սաւն, և ապա վերատին նորոգեցի և զրեցի մեծ զիրու»

— պարսկ. **نون** (nūn) — նույն նշ..

Աճառյանք հուշարձանին նկարագրության մեջ (Յուցակ Հայերնեն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 138) հիշատակարանի այս բառը ընդգծել է և ծանոթագրել. «Մուի նշանակել սևազրություն, իբր և սևան, որմէ յետոյ նորէն մաքուրը զրեր և մեծ զիրու: Կարծում ենք, որ այստեղ վրիպակ չկա. Թորոս զրիշ-խմբազիրը նախ ընդօրինակել է («զրեցի ի սաւն») «Բժշկարանիս» բնագիրը, ապա խմբազրել է («զիրստին նորոգեցիս»), ինչպես ցանկացել է թարգմանի Ֆարազը և, ի վերը, մեծ զրերով արտազրել բնագիրը»:

○ Սաւնապար (122, 158), սաւնապար (136), սաւնապար (160) — մնոպար, բարդիի մի տեսակը, խոտական սոճի (Pinus Pinæa L.):

— արար. **سانوبار** (sanawbar, չանիբար).

Աճառ. (Զ, 312), նորայր թյուզանդացու վրա հիմնվելով, նշել է արարծագումը, բայց չի կարողացել ստուգել, որովհետև նորայրը սարար. բառը ընկեր այլուրենով կամ զիտական տառադարձությամբ չէ նշանակած: Վերը դիելով բառի արար. ձեզ, վերջնականապես ճշտվում է նրա ծագումն ու իմաստը:

+ Սաւսայ (39, 110) — սև մաղձ, լեղի. «Յաղագս ցաւուն, որ ի սաւսայէ լինիս:»

— արար. **ساندա** (sandā) — նույն նշ.:

Վկայված է Արուսակի և Գրիգորիսի մոտ: Սազումն ու իմաստը ճիշտ է որոշել Կարսոր (ՄՀԲ):

Սեխուկ սատանայի (153, 158) — վայրի վարունք:

Սեղուկ սատանայի (114) — վայրի վարունք:

«Պարտ է լուծել զիրուն բուրկով և սատանայի սեղուկ (77), «Առ սատանայի սեխուկ» (123):

Էջ 134-ում նույն դեղատումն է առաջարկվում՝ միայն սատանայի սեխուկի՝ փոխարնեն նշվում է սատանայի խիառուկ: Իսկ բանի որ երկուսն էլ պատկանում են Cucurbitaceae ընտանիքին, հետևաբար մեր հուշարձանում

նույնացվել են: Հունարեն սեկիոնին (Դէմքէնց) սևիսիկ կամ սեխուկը է թարգմանում Դափիանուր (տե՛ս նշԲ, սեխ), իսկ Անապյանը (Զ, 172) հուն. ծէռօչ, ծէռօչ, տէռօչ զնում է «վարունգ, սեխ, կամ դղում», հետեւար չի բացառվում. որ հայերենում խիառուկը փոխարինվեր սեխուկով և ընդհակառակը:

□ Սեսեր (121, 139)—սիսնու:

Սևով հնդիկ կամ ընդիկ (154)—շուշմա, քունչութ (Մալխաս.):

+ Սինապ (110, 154)—մանանեսի և շամչի (կամ շոր արմավի) խառնուրդից պատրաստված համեմ՝ մասի համար:

— արար. **صَنَاب** (ֆինդի) — նույն նշ.:

+ Սիսլախ (57, 91)—անստույգ նշանակությամբ բառ. «Թէ լինի {ձինի} սպիտակ ու խարտեշ, նա ասեն խարտեշ սիսլախ» (57), «Յորժամ ձենես՝ նա Ասէ, նա դիտացիր, որ խուլ է, և շատն ի սիսլախն լինի» (91):

Մալխաս. ունի սպլախ՝ ոկայտառ, կտրիճ, աշխառյժու. բառը ստուգարանված չէ և իմաստով չի բռնում:

□ Սիրենալ (78)—սիրել. «Եւ կայ, որ յախոռն սովորել լինի ի գրաստ ու սիրենայ զընկերնու»:

□ Սիրտն հասնել (104)—կլաները սպառվել. «Եւ յորժամ կտրի ի կերպ, զիտացիր, որ սիրտն հասել է, և ոչ բժշկիւ»:

□ Սլվիել (68)—արագ-արագ ման ածել. «Ի վաղվնէ հան զինք ու սլվիել»:

Անապյանը (Զ, 263) Մշո բարբառում նշում է սլվիալ «Մոշունների արագ թոշելը»՝ սլանալ-ից, Մալխասունցը՝ սլվիալ «Վայլիկիել», սլվիել «սուլել», ճլվլալ, իսկ Անատունին սլվիալ մշենում է «արագ-արագ շարժվիլ, գնալ գալ». այս վերջինը համբենում է մեր օրինակի նշանակությանը:

Սղանն (108)—սղանդ, զրկանդ (Aristolochia). «Առ... սղաննի տակ»:
ՆշԲ ունի սղաննին և սղանդն, սամկը. սղաննի ձեները:

Օ Սղար (44), արար,—րերդ, պարիսապ:

Արար. հիսէր նույն նշ. բառի շըզուն ձեն է ն-ի դ հնլունափոխությամբ: ՆշԲ և Անապյանը (Զ, 292) տալիս են «պաշարումն, փխր. անձկություն, նեղություն» իմաստուներուն:

+ Սմբակիերան (40, 89, 142)—սմբակի գորտի ծայրամասերը. «Թիշ մի լինի բացած յուսինն (իմա՝ պայտը) ի սմբակիերան» (89):

+ Սմբակիցաւ (40, 142)—սմբակի բարակության հետեւանքով առաջացած վերք. հիվանդության նշաններն են. «Էլինի նաւր սմբակ ու պեղծ, նա յորժամ ի վերայ բարի կոխէ, նա ընդ ներքսէ արոյնի»:

Սերի (111) ասոր.—պեսար, կարիք, կարստություն:

Վկայված է Անսիդրում, էջ 75 (Անառ. Զ, 309):

Տնկել (76, 114)—պետք ունենալ. տե՛ս սենիկ:

+ Սեոլի, սունակ (58ը)—անստույգ հիվանդություն. «Խոտենանն և սնուկն ի քիթի յայա է», «Թթին սունակն նաւր՝ զոված է»:

Սորել (67), սորքել (67, 71)—ամփոփել, վեր բաշել. տե՛ս սորոր:

Ապրը (ՀՅ) — ամփոփ. «Քաշքն բարձր ու սորոր՝ զոված է»:

Վեպիված է Դիրք Վաստակոցում, էջ 199 (Աճառ. Զ, 314):

□ **Սոյուր** (156), **սոյր** (161) — հավանաբար սուսր՝ կարմրագեղ, սիզիկոն. «Առ սոյուր և լից ի վրայ շուրը» (156).

Սոյր (161) — տե՛ս սոյուր:

+ **Սուլախ** (42, 163) — աշբի բչտիկ (Anchilops). «Յաղագս աշից ցաւու, որ կուշ սուլախ»:

— արար. **մալաչ** (sulâk) — բշտիկ կոպի վրա, որի հետևանքով կոպը կարմրում և թերթնուիքները թափացնմ են:

Ծղ. բժ. բառարանում (էջ 511) արդած է ճիշտ իմաստը, բայց չի նշված ծագումը: Աւելի նաև Անգիտաց անովիտը՝ էջ 742:

+ **Սուլպակ** (107) — մի տեսակ անորոշ խոտ. «Առ սուլպակ, որ է խոտ»:

+ **Սունակ** (58ր) — տե՛ս սոնուկ:

+ **Սուսանի** (57) — կապատկուն, շուշանագույն. «Եւ կայ, որ լինի կապոյտ աշք... և ասնի իր անուն սուսանի»:

— պարսկ. — արար. **հանցաս** (sūsanī) — նույն նշ.:

Ծղ. բժ. ունի առանձ շուշան ծաղիկը:

○ **Սոփի** (45) — օգորիկ. Հարթ. «Երեսն լայն և կակուզ ու սոփի՝ աղէկ է»:

— արար. **խավ** (šāi) — նույն նշ.:

Բառու ունի «մարուր, շինչ, պարզ, անկեղծ, ամբողջ, անվնաս» իմաստները, որ պահպանված է սափ (Աճառ. Զ, 155) և սօփ (Ֆրիկ, Դիվան, 678), իսկ Սվեդիայի բրբու. սոփ (սուր) ձեռբով:

+ **Սպալխայ** (42) — անստույգ նշանակությամբ բառ. «Վասն խիճիկրի, որ վերի սպալխայն լինի»:

Այս վերնագիրը բնագրում հետևյալ կերպ է թարգմանված. «Յաղագս խիճիկրի, որ ներդն անզամոյն լինի» (էջ 127):

Սպիկիկ (66, 71) — տե՛ս սպրիկիկ:

□ **Սպենախայտ** (59) — սոսպենախայտ, սոսպենարիծ. «[Չինի], որ մշկաբաշն ու տուրեթն ան [լինի]... և կենայ ի յինք սովիտակ դեղին մազեր նա խառն, կոչեն սամանդ յատասի, որ թարգմանի սպենախայտ սամանը»:

Այստեղ սպենախայտ զրված է արար. յատասի (adası) (տե՛ս) «սոսպանան» բառի դիմաց. սոսպենարի ունի անկումով՝ սպին:

Հայրուսակը (§ 2827) հարցականով ունի սպօֆ: Ալիշանը գրում է. «Եթէ սիսալ չէ (թէն ընտիր է զրուածն) անուամբ անծանօթ՝ այլ իրօք ծանօթ՝ ընդունի կամ հասարակ ուստիկիր մը պիտի ըլլայ, որովհետեւ Ս. Բարսղի հարցդեղին մեկնիչն կ'ըսէ (ԽԴ). «Կերակրոյն զիւտ՝ յԱստուծոյ շնորհցաւ Ցորեանն Ապօբն, զործել դնոսա և առա կերակրել»: Աճառ. (Զ, 414) բերում է Ալիշանի բացատրությունը:

Նկատի առնելով մեր օրինակում ունի անկումը բառի անձան ժամանակ (սոսպենախայտ—սպենախայտ), կարելի է ենթազրել, որ սպօֆը սովոր հագնակի գործիքականն է՝ սովօֆ > սպօֆ, սակայն անհասկանալի է զործիքական մեր օգտագործումը ուղղական ցորեանի հետ:

- Մաղարիա արեղան («Պատմութիւն վասն աղջին նետողաց», Պետերբուրգ, 1870, էջ 7) մոնղոլների արտաքինը նկարագրելիս գրում է. «Երևան... սպահնեմաբ զեղով ծեփիին» (Երուսաղեմի հրատարակության մեջ՝ սպահնեման): Եթե ընդունելու լինենք ուսպնցությունը բառի ո-ի անկումը նաև այս բարդության մեջ, ապա այսուղի խոսքը ոչ թե «սպահնող զեղիս» մասին է, այլ «սուպահնման» դեղի, որ ակնարկ է մոնղոլների զեղը գույնին:
- + Սւունկուու (159)—սպունկուու (158)—շնախաղող. վերջինս բառ Մալխայանցի է «մորմազգիների» (Solanaceae) կարգին պատկանող թուփ, կեռասի մեծովիչամբ փայլուն ան պտուղով, որ շատ թունավոր է: «Սպունկուու խարկէ (իմա՝ այրէ), (159), «Սպունկուու խարկէ գտնեղն» (158):
- պարսկ. *սապանց* (sapangzūr) — նույն նշ.:
- Պարսկ. սապանզուու. սիալ բնիթերցումով նաև՝ սապունզուու, առաջին վանկի ա-ի ամփոփումով՝ տալիս է «սպանզուու կամ սպունզուու: Ժողովրդական ստուգարանսթյամբ այս բառը հավանաբար մեկնվել է «սպունզ» (իմա՝ սրազնիքի ավագանի սպունզու), որը և պիտի տար «սպունզուու» սպունկուու (գրծ. սպունկուու): Խակ ն-ի անկումով՝ նաև սպունկուու:
- Նշ. թովմա Արծրունուց (Գ, 2) բերում է սպունզ բառը՝ «Զիբինս (իմա՝ նետերը) կապարճիցն սրպով ծածկեալ՝ զսատակլական զօրութիւն թառցանէր ընդում սրբոցն», և մեկնում (անթէ չկայցէ սիալ զրշաց, լինի որպէտ պարսկ. ռէսլի). Կերակուր իւղով և շոր թանով կազմեալ, ախորժ տուելի, խալծ, կեր... Այլ լաւ ևս երի ընթեռնուի սպնզով, որ լինի փոխարերութիւննա:
- Նշ. սպունզ բառի տակ բերում է ընդ սպունկան ծածկեալ տնէր զերկաբն (նախան ի յանդիմանեն զԴաւիթ ոնով)» վկայակոչումը (Ռակ. ապաշխ. 49), և եղբակացնում է. «Ի սոյն նմանութեամբ Ռուի բերել և բանն Արծր., որ եղաւ ի բանն սպունզ: Զի՞ և Ա՞ նույնպես սպունզ «կերակուր» իմաստով նն տալիս: ԱՅ ավելացնում է ընդ սպնզով՝ կամ սպունզով ծածկեմ զերկաթ, զնետ—«վարպետութեամբ խրատել կամ յորդորելու»:
- Աճառ. (Զ, 408, 409), բերելով վերոհիշյալ բացատրությունները և ավելացնուած լացելով, որ Վարդանյանը (ՀԱ, 1920, 337) «սպունզ իրու սպունզ. կցում է ապունզ և ապունզ ասոր. ՏՐԱԳ ձերին, որ նույնպես զուրկ է և ձայնից, սպունզ-ը «անստույգ բառ» է համարում:
- Մայխասյանցը ընդունում է Վարդանյանի կարծիքը և բառը «սպունզ» է մեկնում, ավելացնելով, որ «կերակուր» նշանակությունը սիալ է:
- Արդ համադրելով մեր հուշարձանի սպունկուու» >սպունզուու» (գրծ. սպունզուու >սպնզուու) «շնախաղող» թունավոր բույսը Արծրունուց վկայակոչված գրծ. սպեզով բառի հետ, կարելի է հնիթազրել, որ վերջինն զրշական սիալ է, պետք է լինի գրծ. «սպունզ» >սպնզուու, որով Արծ. նախադասության իմաստը ճշգրտվում է. «սատակլական զորութիւն» ունեցող թունավոր շնախաղողի հյութով մեծածկեալ» փրիները (նետերը) թոցնում են զեպի սրբերը:
- Այս մնկնությամբ հստակում է նաև Ռակ. ապաշխ. Նշ. վկայությունը:
- Սպրկիկ (52), սպկիկ (66, 71)—մաքուր, զերծ արատից:
- Օ Ստամբուրան (21)—ստամբուրան. կերակրափողից մուտքը ստամբուր.

«Աղջկցել զատամոյբերանն ու զուարձ պահէ զինքը»:

Վկայված է Գրիգորիսի մոտ (էջ 84...), Անգիտաց անպէտում (էջ 743):
Անի Նորայր Բյուզանդացին (ֆրանս. բառ. էջ 881a):

Օ Ստուդի (133) — կերակրափող. «Կալվի ստուգն, որ չկարէ ուտել»:

Բառու վկայված է եղել միայն ստօպմբ գործիական հոլովով. Նշմ գրել է
ուղղական ստիգ կամ ստուգն, իսկ ԱԲ և Աճառյանը՝ միայն ստուգն:

Մեր աղբյուրը բարիս ուղղականի հեագույն վկայությունն է և հաստա-
տում է ԱԲ և Աճառյանի բնրած ձեռք ճշտությունը: Գրիգորիսը (էջ 97, 192,
104...) ունի ստուգն, ստուկն, ստունկն ձեռով:

Մրանի (47) — տե՛ս սրօնի:

Մրան (98, 100) — տե՛ս սրօն:

□ Մրաբաց (85) — սրտարաց, սիրտ բացող. «Մրաբաց տեղ լինի ու հովամուս»:

Աճառյանը (Զ, 254) դիում է որպես նոր բառ: Մինչդեռ մեր օրինակը տա-
լիս է բարիս հեագույն մկայությունը:

□ Մրտելնել (73) — բարկանալ, նեղանալ. «Չթամքն... ի վրայ զի՞ր՝ ոչ սրտելնելով
կամ հաեց որ բշտեն»:

Յրիկը ունի սիրտ ևլնել՝ «բարկանալ, զայրանալ, խոժոռել» (էջ 677),
իսկ Մալխասյանցը՝ սրտել «մեկի վրա նեղանալ» իմաստներով:

□ Սրօնի (սրանի) (47) — սրունք:

Սրօն (սրան) (98, 100) — միու սրունքի վրա կարծր այտուց:

— ֆրանս. SURGOS — նույն ել.:

Բառու նորայր Բյուզանդացին վերցրել է մեր հուշարձանի Վենետիկյան
պատառիկից (Հրատ. «Բազմավելս» 1867, էջ 357; Տե՛ս ֆրանս. բառ. 1184):

¶

□ Վազիլուել (54) — ցատկուել, «Վազիլուէ» (քուակին) ի վրայ մաւրենա:

□ Վազցնել (50) — վազցնել՝ անասուններին զուզավորել:

Վկայված է Գրիգոր Վաստակոցում, էջ 200, 201 (ՆՀԲ):

□ Վարար (38) — վատիար, վատ, պիզճ. «Վասն խրատուց և ձանձելոյ գրաստն
ամենայն զիմար զլաւն ի վարարէն»:

Օ Վաղ (87) — առավոտ, «Զարպյոտն և զֆառայն աւելի ձգէ ու զգարին թաց՝ վաղն
ու յերիկունն, ու տուր, որ ուտէք»:

□ Վանց (37, 48...) — վասն, համար, պատճառով:

□ Վասէ (91) — փայլ. «Ծայրին մազին սպիտակ փայլկոտուկ լինի, որ վառ՝ ուն-
նաս»:

□ Վասուն (46) — ակար, թուլլի
Վկայված է Գրիգորի դեղազրում՝ 1036 թ. տե՛ս Պ. Հովեանյան, էջ 415—
416. իմբ.):

□ Վասունի (69) — ակարանալ, թուլանալ. Հմմտ. Վասուն: «Վասունի ու ի յուժէ
կարիք»:

□ Վասունցնել (703) — ակարացնել, թուլացնել, հմմտ. Վասուն:

- Վատուժուրին (54) — թուլություն. հմմտ. վատուժ:
- + Վախի (44, 45, 52, 80, 82, 86) — ձիու ինչ-որ տեսակ (7). «Որ լինի բարակ քին ոսկորն՝ ազէկ ազգ է, և երբ լայն լինի՝ վրլախ է» (44), «Հործամ վաղցնեն վլախի ի վրայ իշու» (52):
- արար. Աղջու (wālakki) — ձիու տեսակ, որ օգտագործել է «արարական կիրակ բռնվորական ցեղը» (Կամուսի թուրք. թարգմ. հ. 3, էջ 67):
- + Վլախոցյն (70, 74) — վլախ (տե՛ս) տեսակի ձի. և կյա ազգ ձիս, որ վլախոցյն ձի էք:

S

- + Տակշուր (79, 87, 122) — գրաստներին սպասարկող անձ (7). «Եւ զայս [թամրելը] տակշուրնին կու այնենք (79), «Եւ տակշուրնին առնուն զաւազ գրաստնին» (87), «Եւ կան ոմանք մի ի տակշուրնին, որ աղքնձեն զգարին և այնենք որպէս փոխինձ ու տան գրաստնունք (87), «Տակշուրնին զիտեն, որ կապը կու այնենք յառվոյսոնք (122):
- + Տանին (146, 155), տայնին (140) — քունչութի ձիթ. «Հան զթուղն... ծեծէ, ու լից ի վրայ զարէշուր... ու միամորթէ, որ զէզ տայնին դառնաւ (140), «Զեդ տանին լինիք (146):
- արար. Հայութ (tahiut) — նույն նշ.:
- Պահպանված է դահնազոյն բարդության մեջ (Աճառ. Բ, 386), Աճառյանը վերցրել է Փ. Բ. Հավելվածից, նշելով՝ «Հետքածածկած մեր հին մատենագրության մեջ»: Ճիշտ է մեկնել Կարսոր (ՄՀԲ, թղթ. 254, վագ. 34, թուղթ. 18):
- O Տահրկել (76) — սասաննէ, թափահարել, ընկճել. ունչվի զրագուկդ տահրկէ զարկնու:
- արար. تحرير (tahirik) սասանում, թափահարում և հ. Ել լժորդությամբ կազմված:

Բնագրում բարիս հայերեն հոմանիշը օգտագործված է Հաշորդ իսկ նախադասության մեջ. «Նա զարկին ու բռումըն շարկամուն բականերել լինիք (էջ 33):

Աճառյանը, բառս վերցնելով վարդանի առակներից, Անսիգրից և Աղեքսանդրի կաֆաներից, մեկնում է «Հաղթել», սակայն ծագումը Հայտնի չէ սահնդրի համարականությամբ: Սակայն մեր թագավորականության մեջ է թարգմանում: Կարսնան Զգ. բժ. բառարանում Մալխասյանցը «ընկճել» է թարգմանում: Կարսնան Զգ. բժ. 254, վագ. 34, թուղթ. 21) բխեցնում է «տակ-հաշել կամ տը» (ՄՀԲ, թղթ. 254, վագ. 34, թուղթ. 21) բխեցնում է «տակ-հաշել կամ *տակ-ա-հարել ձեից «Հաղթահարել» նշանակությամբ և «տակիրել» > տահրկել անցումով»:

- Տաղ (38-61), պարսկ. — դադ, խարմածք, խարան:
- + Տայար (41, 148) — ապականություն. «Ցաղազս բերնցաւի, որ տայար լինի... զայ ի բերնէ հոտած հոտա:
- արար. Ճօ (da'at) — նույն նշ.:
- + Տայխան (99) — ինչ-որ հիվանդություն. «Տայխանն... լինի յոտքն ու ի ձեռքեւ որ է ցաւ, որ ի կոճին մէջն լինի յեվելված՝ իբրև զկատու կամ այլ մեծք»:

Տայնին (140) — տե՛ս տահին:

□ Տասնեւրկու (54), տասնեւրկու (113).

□ Տասնուրել (66).

□ Տասնունինգ (66).

□ Տասնումէկ (51).

+ Տարարին (162) — խարանածան, սպանիական ճանձ (Cantharis vesicatoria կամ Musca bispanica). «Առ զտարարին ու խայծղան ու դիր ի վրայ (Խոյլերոյն) ու կապէ»:

— արար. շշայ (dharat̄iḥ) — նույն նշ.՝ ծ (z)-ի և տառադարձությամբ:

Տարեշրայ (87) — տե՛ս տրաշրայ:

□ Տարէկնակ (53) — տարեկան, «Զուննայ երկու տարէկնակն զնացքն»:

Օ Տարս (75) — հարված, զարկ. «ի տարպն և զմահմեզացն (իմա՝ խթանների) հասցենին ի ձին»:

— արար. թթ (darg) — նույն նշ.՝ թ (t)-ի և տառադարձությամբ:

Աճառյանը (Զ, 836) ունի տարպայ ձեր՝ նույն արժատից ձարթ (darga) տանգամ», սակայն բուն «զարկ» իմաստով վկայություններ չենք ունեցել:

Տարպայ (50, 51, 117), արար. — անգամ. տե՛ս տարպ. «Վազցնեն որպէս զազի տարպայն» (8):

+ Տարփա (149) — հարված ալքին, որից ալքը ջրակալվում է. Հարվածի հետևանքով ալքի վրա առաջացած կարմրություն. «Յաղագս տարփայի, որ է զարկը ի լաշեն»:

— արար. թթ (tarfa) — նույն նշ.:

□ Տափիր (45) — տափակարիթ:

+ Տեռ (42, 102) — մտրակ, խարազան. «Յորժամ ցաւ դիպի զնբթէպն ի տեռէ և ի պարկուց» (101):

— արար. շշ (dhirt) — նույն նշ.՝ ծ (dh)-ի և տառադարձությամբ:

Աճառյանը (Զ, 863—867) ունի հյ. տեռ, տեռն այլ իմաստներով:

Տիմես (130, 131, 141), տմէս (162), արար. — սպեզանիով վիրակապ:

Վկայված է Գիրը Վաստակոցում, էջ 166 (Աճառ. Զ, 905):

Տիփիս (147), տիփիս (156), արար. — տիփիս, կոստղ (մի տեսակ խեժ) (լու. Viscus):

Վկայված է տիփիս, տիփղ, տապղ ձեռով (Հայրուսակ, § 2954, Աճառ. Զ, 910):

Տլէ (144), արար. — կակզացուցիչ զեղ, սպեզանի:

Օ Տոլի (156) — ուն խաղողի որթ, ուն խաղող. «Առ տոլոյ մկրատիններ և ազոն և իթուն ու անեռութ»:

— արար. գալօ (dawāl) — նույն նշ.՝ աւ >օ>ո անցումով:

Աճառ. (Զ, 935) առարկելով Հայրուսակի (§ 2972) տված բացարությանը («դզում կամ ուրիշ տարածվող բույս»), զանում է, որ Վաստակոցի (213) վկայությունը ավելի հարմարում է շխաղողի տերեններին»՝ «Բէ տաքու-

թիւն դիպի պախորիին... տոլոյ տերեւ տուր արածելու: Այնուհետև Աճառ. բառի ծագումը որոշելու համար բերում է ուստինքն չը (տու) «խաղող» և արար. ջաջ (dawālī) «մի տեսակ խաղող» և ավելացնում է՝ «այս երերի հարաբերությունը դժվար է որոշելու:

Հարցի լուծմանը նպաստում է նաֆիսու Պարսկ. բառարանը, որը Աճառյանի հիշած dawālī բառը բացարում է որպես «ուս խաղողի մի տեսակ», որ պարսկական խուրման է. ուստիիս: Որ հիբազի մեր ազրյուրեները տոլի սոսն խաղողի որթ» են հասկացել՝ հաստատում է վաստակոցը (էջ 24). այստեղ սպիտակ խաղողը հակադրվում է տօնիին. «Բայց սպիտակ աղցի, որ մանրապատուղ է, և զտոլի սիրէ ինքն և զծառս ի շերմային զաւոսն, լաւահամ զինի առնէ»:

Օ Տոշ (39, 40...)—ձիու առնանդամ:

— պարսկ. توش (tūsh) նշանակում է «ուժ», արդյոք սրանից է ծագում մեր բառու:

Վկայված է Գիրը Վաստակոցում, էջ 199, 201: Աճառյանը (2, 950) բարիս ծագումը անստույգ է համարել:

Ըստ Յ. Եղանյանի տոշ Ղարադաղի բարբառում նշանակում է «երկանքի ներքինի քարի կենտրոնի ցից փայտը, որի վրա հագնում է վերի բարը» (տե՛ս նրա «Ղարադաղի բարբառ» անտիպ աշխատությունը):

- Տոշգուխ (138)—ձիու առնանդամի զիուխը. Հմմատ. տոշ. «Բարսկ ասղաւմ խոթէ ի տոշգուխն» (105):
- Տոշփող (113, 138)—ձիու առնանդամի միզանցը. Հմմատ. տոշ. «Խոթէ բարսկ ասղաւմ ի տոշփողն»:
- + Տորվանտակ (145)—նորահաս միրզ. «Առ զտորվանտակն, շորցոյ, լեռէ ու մաղէ, դիր ի յաշբն»:

— իրան. *turgwanda, պարսկ. سُرْجَوْنَ (turgwanda) — նույն նշ.:

Կարստը (Մ2Բ) նոր ծողովածուից (III, 22) բաղելով բառո՞ւ տալիս է պարսկերեն ձեր:

Տուրեր (38, 45, 58, 59, 91), տուրեր (91)—մաղի ցցունք ձիու ճակատին:

— Ֆրանս. toupet — նույն նշ.:

Գուրեր ձեռզ Ն. Բյուլանդացին վեցրել է Հուշարձանիս վենետիկյան պատառիկից («Բազմավեպ», 1867, 357. տե՛ս նաև ֆրանս. բառ. 1225):

- + Տուպիայ (114)—անստույգ նշ. բառ. «Այլ զեզ ելքնդի, որ կուի տուպիայ»:
- Տուուն (60), արար.—սալամբ թուզուր:

Աճառյանը (Բ, 60) ունի դառնկ ձեռզ:

- + Տրաշրայ (86), տարեշրայ (87)—անորոշ բոյս. «Եւ այն ալիկն, որ անուան նեն իր տրաշրայ» (86), «Այս է տարեշրայն», որ յետե ասվոյտին տան» (87):

Տիբնտել (71)— արդեւակել, արգիել. «Տիբնտել զու իր (իմա՞ ձիուն) ու կանկ առայ:

Հաղորդված է նաև տինդել՝ ժղուարից (Աճառ. Զ, 1026):

Ցրդի (111, 155), ցրտի (146) — ցիրդ, ցրդենի:

□ Ցրմի (198) — ցրմէլ. «Ընթիշարն», որ թարգմանի ցրմին և մէկնելն, որ լինի ի չղերնւ:

Մալխասայանցը ունի ցրմել «թափել, ցիրուցան անել» բարբառալին ձեզ:
Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է:

Փ

Փաղարուշ (12) — միզափամփուշտ:

Աճառյանը (Ա, 1204) տալիս է նաև բաղարուշ, բաղափուշտ, փալարուշ, փաղափուշտ, փալափուշտ, փալափուշտ ձները:

Գրիգորիսի մոտ (էջ 11, 69 և այլն) վկայված է այս ձեզ:

+ Փաղցալ (137) — վեասել (*). «Բէ ցաւն [ստամորսի] ուժով լինի, որ զոր փաղցայ ու ձգէ, նա հոտած լիեիք:

Աճառյանը (Ա, 920) Մազիստրոսի Գամագտականից բերում է բաղածել տանատույզ բացը՝ վկայակոչելով Գ. Մեննիշյանին («Հանդես ամսօրյա», 1911, 551): Վերջինս Ա. Դր. և Սրբմիայից բացում է բաղածուրին՝ «վնասա տկարությունը իմաստով»:

Չնայած բաղածել, բաղածուրին բառերի ծագումը ստույգ չէ, ասկայն տրված «վնաս» իմաստը ավելի հավանական է, հատկապես եթև նկատի առնենք բաղածել՝ >բաղցալ> >փաղցալ> անցումը: Վերջինիս «վնասել» նշանակությունը միանգամայն ընդունելի է մեր բնագրում:

□ Փայլիստոկ (55, 60, 91) — փայլիստոն, և՛ վրայ գազմանն ի մազին փայլիստոկը (69):

□ Փայծաղնացատուրին (40) — փայծաղի ցավ (Sple' nospathie):

Գրիգորիսը (էջ 182) ունի փայծաղնացա, իսկ Ամիրտովլաթը (Անգիտ. անգլա., 749)* փայծաղնացատուրին:

+ Փաշխտի (83, 142, 161) — գրգովէլ, շփոթվել. «Յորժամ իշնուու ի գրաստվէն ու տեսնուու որ կենայ ու փաշխտի, նա զու ի շորջած մի կանգնեցներ» (83): Տերը կենայ ու երնէ գրաստն յախոռոյն՝ նա զէդ փաշխտած ելեկ» (142):

— պարսկ. ناشیخشان (pasikhkhidan) — նույն նշ.:

Փառայ (86) — տե՛ս Փառայ:

Փարալ (40, 119, 140) — հազար (անաստևների):

Հաղորդված է Գիրը Վաստակոցում, էջ 207 (Աճառ. Զ, 1191):

□ Փեղ (155) — փիղ:

□ Փնդոնել (97) — փնտրել:

□ Փոխսփոխել (77) — փոփոխել:

○ Փորոք (39*, 110, 123) — խորշ, խոռոշ. «Վասն ցաւուն, որ փորքացն ներբան լինի» (39), «Բաշկէ զամէն ցաւ, որ ի գրաստուն փորքն լինի» (110):

Վկայված է Ամիրտովլաթը Անգիտաց անպէտում (էջ 751), որ Կ. Բասմաջյանը թարգմանում է վիշեր: Մալխասայանցը ունի «սրտի երկու խորշերից յուրաքանչյուրը» իմաստով:

Քրիզորիսը ունի փորող (էջ 61, 113) և փորով (էջ 124), որի դիմաց դնում է արար. անուած, որ նոյն (جُوْف — djawī) բառի հոգեակին է՝ խոռոշ իմաստով:

Փրչել (112) — աղատվել, պրծնել:

Վկայված է Ասսիֆքում, էջ 81 (Աճառ. Զ, 1326):

Օ Փրփիշ (155) — հավանաբար փրփիշ խոտը, աշտականաշ բարբեկ:

Հայրուսակիր (637) ունի փրփիշ խոտ, իսկ Բեղեյանը (170)՝ փրփիշ, փրփիշնակ (Aizoon canariense L.):

□ Փերի (108) — փքվել, ուռչել:

Այս բառը միակն է, որ Աճառյանը մեր հուշարձանից բաղել է 1906 թ., երբ Բավրիզում ծանոթացել է ձևոազրին (Զ, 1311):

¶

Օ Քածպար (39, 117), բացպար (117) — աւրանման զերք (անասունների). «Յագս շուռնախի, որ է բացպարն»:

Դիրք Վաստակոցը (էջ 223) ունի բածպոր (բածբոր), որ նշն մեկնում է «ազդ բորոյ իրեն բորոտութիւն շան», իսկ Աճառյանը (Զ, 1338)՝ «մի տեսակ բորոտություն»:

Հիմանդրության նկարագրության մեջ (էջ 117) առված է՝ «նման է ալոցաւս ի շուռնախն, ու շառնու զամէն ձեռն (իմա՞ ձիու առջնի ոտը), և ենէ յիրմէ գիմութիւն և թարախ», իսկ շուռնակը զրաստի ոտների վրա եղած ճարերն են. արար. շուռնախն ևս նշանակում է «պատովածք զրաստի ոտների վրա»:

Քամիշապա (110), պարսկ. — սալի:

Աճառյանը (Զ, 1427) ունի բարուպա և բամիշապա ձեռքով:

□ Քաղցեցնել (68) — բաղցածացնել. «Աղցնելնելն չէ հայնց, որ բաղցեցնէ կամ ծարվեցնել»:

Քամմար (66) — տե՛ս կամմաթ:

+ Քամմախ (100) — անսառոյդ նշ. բառ. «Եւ կայ ցաւ, որ ասեն իր բոքապի, որ թարգմանի ի հայն բամմախ յնելված, որ իշխու ի յակն ի ծնկացն հաստա»:

+ Քամմայ (41, 143) — տեսողության միագնում, աշբի կարմրություն և քոր. «Յագս աշակ աշացաւու, որ կոչի բամմայ»:

— արար. ՃՆԸԿ (kammat, kamma) — նույն նշ.:

Մալիսայանցը 04. թժ. բառարանում բացատրում է՝ «աշբի հիմանդրություն, երբ թվում է, թե աշբում ցախեր և ավազ է ածած», բայց բառի ծագումը չի նշում:

+ Քամմար (141) — անգիտակցարար. «[Գրաստն] յոտն ելնէ, ու ուսքն ի մասրին դիսի, բամմար ընկնի ի վրայն»:

— պարսկ. ՃՏԸԿ (kamkar) — նույն նշ.:

Բառս հնում պահպակնենից փոխ է առնվել կամմակամ, աղատ, ինքնիշխանք նշանակությամբ, իսկ բամմար նոր պարսկ. ճնն, որ աղատ, ինքնիշխանք նշանակությամբ փոխ է առնվել ալելի ուշ:

Օ Քայլան (38, 79, 80, 81) — Հանդարտ քայլվածը ունեցող ձի. «Կան ի գրաստ-նին, որ լինի բայլան. և առէ իր յարապն հմլայճ» (80):

Անապյանը (Զ, 1379) զնում է որպես նոր բառ: Մալիսայանցը բացատ-րում է՝ «Լավ քայլը ունեցող», արար. հոմանիշը՝ հմլայճ (տե՛ս՝ նշանակում է ունանդարտ քայլվածը ունեցող): Բնապրում յայլան որպես որոշակի հաս-կացություն է օգտագործվում՝ «Յազագս գործառն և բայլան գրաստուն»:

□ Քան (51, 53...) — բանց, ինչպես, ոնց:

Քաշ, բաշ (59, 58ր, 93) — սնակուշտ. «Եւ [լրուրինին] ոչ ատած է և ոչ սիրած... որ լինի ի բաշն» (59), «Քաշն բարձր ու սոթոթ գոված է» (58ր):

Բառու մեկ անգամ հազորդված է Բարսեղ Կեսարացու թղթերում (ՆՀԲ, Ա-ճառ, Զ, 1392):

Քաշիկ (70, 123) — ձիու փորբաշ, թամբի տակ:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 198 (Անառ, Զ, 1392):

□ Քաշիկ (77) — զրաստին փորբաշ անցկացնել, հազցնել. հմմտ. բաշիկ. Վկայ զրաստ, որ ի հեծեսվն է կամ ի բաշիկն սոսկայ», ուսուել աւերի գրաստն... եր մերկիկ հեծուուն և եր առաւել պինդ բաշին»:

Քաշտեղ (95) — զրաստի փորբաշի հարած տեղը. հմմտ. բաշիկ. «Եւ այն [ձին], որ լըողու, որ լամբեն... նա լինի ի շատ մենատամերոյն (իմա՞ շըջուսկ), որ ելի... ի բաշտեղն»:

□ Քաշու դունզ (155) — զնի կղունզ խնցեմորթը, որ ծովային կենդանի է. «Եւ բաշու դունզն... լեակ և մաղէ և խաւուն ի տահինն ու շփէ ի զրաստնես:

Միջնադարյան բժշկական զրականության մեջ ունենալ զնի եղունգ, որ Ալիշանը (Հայրուսակ, § 587) որպես բույս է ընդունել: Նորայր Թյուզանդա-ցին («Հանդես ամսօրյա», 1921, 103) աշտիպ բառը ճշգրտում է Գաղղանսոսի մի առաջնիքը բույսը և Ամիրտովլաթի Անգիտաց անպէտի մը վկայությամբ, որանց հիշատակված է արար. ազիալ թիպ ծովային կենդանին. վերջինիս հայերն անվանումը բառ Ամիրտովլաթի դիու բույնը չ՝ ոյերկայն, ի սատաֆ կու նմանիւ:

Դեհսողայի Պարսկ. բառարանը շատ մանրամասն տալիս է այս խնցա-մորթու նկարագրությունը. արար. ճշգրիտ անվանումը՝ ազիալ ար-թիր է—

ظاظا غاراطنیب (aztâr al-ṭib), որ պարսիկները զնի եղունգ, արշի կղունզ, սատաֆի եղունգ են սատամ. Դիմորիդոսը սատաֆի տեսակ է համարում, որ սատաֆում է հնդկական կղզիներից, կամբալուն է և հաճելի հոտ ունի, սպացվում է որպես օձանելիք. օգտակար է ստամորթի, լյարդի և այլ հիվանդությունների բուժման համար:

Հայտնի է, որ նույն հայերի թոտ քաջընը համարվում էին զգներ ու սատանաներ», հետաքար պետք է ենթադրել, որ բաշու դունզը նույն ինքը զնի եղունգն է:

+ Քարսի (39, 109) — հիվանդություն՝ թոտով վարակված, բշտիկներ ու քոր ու-նեցող կենդանի. «Յազագս ցաւուն, որ կոչի բարայ» (109):

— պարսկ. շշ (garg) — նոյն նշ.: Պարսկ. շ (g) զիրը միջնադար-յան պարսկ. և արար. ձեռագրերում զրվում էր և կարդացվում նաև շ (k) որից հայ. բարայ:

□ Քարկապոյտ (56, 60) — կապտավուն. «Եւ թե լինի ուն մազերն ի սպիտեկին մէջն, որ կապոյտ զոյն քշտի. ասեն իր խարկապոյտ» (56):

Մալխաս. խարկապոյտ մեկնում է «Ե՞ի տեսակ բաց կապոյտ ներկ» որպես զավառական բառ: Ե՞րբ օրինակը բառին հանգույն զրավոր վկայություններ է հայերենում:

+ Քարտուշ (55) — խարտյաշ. «Եւ կայ ի բաց խարտեշ, որ լինի մազծայրքն և մազտակերն սպիտեկոյն ու բաշն ու ազին ու տուրեթն սպիտակ: Եւ կոչէ պարսկերն իր խարտուշ»:

Բառու պարսկերնեն բառարաններին ծանոթ լէ, իսկ հայերեն խարտեաշի ծագումը ևս անհայտ է: Երկու բառերի մեջ ընդհանուր է տուշ-տեսաշ (երրեմն՝ տեշ) վերջնամասնիկը: Պետք է ենթազրել, որ սա իրանական **տշտշ** (tash) տկրակ, բոցը բառն է, որ այս անկումով կիրառվում է և մամանակակից պարսկերնում tash ձևով: Հայտնի է, որ Հ. խար արմատը (առանձին անգործածական) իր մեջ ունի և կրակը իմաստը (խարել «այրել», խարույկ տկրակը) (տե՛ս Ահառ. Գ, 397): Հ. խարտեաշ և պրսկ: Քարտուշ բառերը, որ ունեն սղենակարմիր, ոսկեզրոյն զեղինո նշանակությունը, ենթազրում են իրան. *khātash հիմքը

Քամել (51, 68, 76) — բացի, միայն, միայն թե, ոչ այլապես բան: Վկայված է Անիգրում 21, 51 (Ահառ. Զ, 1433):

Քացպար (117) — տե՛ս խածպար:

Օ Քափշայ (151) — փրփուր, բափ. «Առ արծիքի խափշայ, ոսկոյ ազլիմիա... լիսէ զգեղենին և մազէւ:

— պարսկ. **ჯէք** (kaič), **Ճաճէք** (kača) — նույն նշ.:

Կարստը (ՄՀԲ, թղթ. 254, վավ. 37, էջ 97) ճիշտ է նշում ծագումն ու իմաստը: Աճառյանը (Զ, 1437) բառու բազոմն է երզն. երկն. իմ սշանթն... որ ինչ զիսի այրէ և անցանի և մնայ որպէս երկաթի խափշայ» և մեկնում է որպես պարսկ. կաֆա կարծ քարեփին, որ երզնկացու տվյալ բնագործմ հասկանալի չէ. մինչդեռ սփրփուրը նշանակությունը հստակ է դարձնում նաև խարասության իմաստը. շանթը զիազելով որևէ իրի՝ այրում է և տերկաթի խափշայի (փրփուրի): Այս հետք է թողնում:

Օ Քափուր (125), պարսկ. — բափուր (Camphora):

Բառու հնում փոխ է առնված պահապերենից խափուր ձեռվ, իսկ ավելի ուշ նաև՝ պարսկ. — արար.-ից **Ճաճէք** (kāčēt) խափուր:

+ Քըմ (44) — բերանակապ (անասունների). «Եւ սիրած է կրտած ձիան, որ քըմի զեխնու:

— արար. **Կ** (kam) — նույն նշ.:

□ Քըմնան (44) — բերանակապը հանած (անասուն). հմմտ. բիմ. «Քըմնան երթանք:

□ Քըշիք (46), լշիկ (51), կշիկ (73) — բլիկ, բիչ, սակաւ:

□ Քրանարիլ (141) — զալթելով բլիք բերանի վրա ընկնել. «Զի երբ [կոճն] զորդ լինի՝ նա կանկնի չեղքն, ու երբ էջ՝ նա քրանարիլ:

Մալխասյանցը ունի բրահմարել: Մեր օրինակը հնագույն գրավոր վկայությունն է:

□ Քրահրան (94), բրահրելու (94) — սայիլաքող, զայթող. Հմմտ. բրահմարիլ. «[Քրաստր] խիստ բրահրան լինի» (94):

□ Քրահրել (40, 73, 141), բրահրել (76) — տե՛ս բրահմարիլ:

Քրան (141, 148), պարսկ. — բաթան, կտավ:

Քրեր (107, 112) — բաթանից պատրաստված վիրակապ, պատրույզ:

+ Քրիւզ (122, 137), ֆիրիւր (105) — գաղախէծ, խաղիրան (Astragalus Tragacanthia L.):

— արար. Կաթրա (kathrā), պարսկ. Կաթրա (katrā) — նույն նշ.

1438 թ. ձև. բժշկ. բարիս դիմաց զնում է արար. բրիւր, լատ. տրակակում (= tragacanthum) (Կարստ, ZFAP 146): Յգ. բժ. ունի ֆիրա, խոկ Անդխուաց անդխոր՝ բարիւր ձեռքով:

Քիրիւր (105) — տե՛ս ֆիրա:

Օ Քիսէ (88, 131) — տոպրակ, քակի. «Զմեռն ի վրայ ձիին ֆիսէ անցոյ» (88) — պարսկ. Ժամակ (kisā) — նույն նշ.:

Բառա հնում բանկ ձեռք փոխառոյալ է պահապավերենից (Աճառ. Զ, 1544), իուկ հնապայում նոր պարսկ.-ից՝ ֆիսէ: Մալխասյանցը տալիս է ֆիսա, ֆիսիկ զավառական ձեռքրը:

+ Քիբբ (10) — աչքի բիբ. «Իշնու ընդ քիբին թարախ ֆիբբին և շունեալ հուտ»: — պարսկ. Կլակ (klak) — նույն նշ.:

+ Քլափ (55) — սեախառն կարմիր կամ դեղնախառն սե. «Եւ կաս սոկէզոյն քումայիլ (իմա՞ արմավազոյն), որ է դեղին փայլկոտուկ կարմրզոյն, այտ նման է յոսկոյն զոյնն. Եւ ասէ իր յարապն քումայիլ գլափ»:

— արար. ՎՃ (kalai) — նույն նշ.:

Քիմելիք (105) — արկիմելիք, արքայապատկի:

Հազորդված է Ելիլի մելիի, Ելիլի-իւշ-մելիի (Աճառ., Ա, 844), և աբիլիլ-մելիք (ZFAP, 135) ձեռքով:

Օ Քնատեղ (133) — բունք. «Քնատեղացն երեակըն զայրնայ»:

Բառիս հնագույն զրավոր վկայությունն է: Մալխաս. տալիս է որպես հազվադեպ բառ:

Քուր (148) — տե՛ս խուր:

Քումայր (55), արար — արմավազումն ձի:

Վկայված է Գիրը վաստակոցում, էջ 199 (Աճառ. Զ, 1519):

+ Քունյափա (105) — անորոշ տեսակի բառյու. «Եւ ապա [առ] աղցած հունյափա»:

Նման մի բառ ունի նաֆիսու Պարսկ. բառարանը՝ արար. Լը-հ (kunihā), որի տերեւները նման են որճի թփի տերեւներին: Ծանենգասը նույնը բացատրում է որպես «զիհի նմանվող բայցու»: Եթե հունյափա-ն նույն արար. կու-իհա-ն է, ապա հասկանալի է արար. ն-ի տառագարձումը յ-ի, բայց պարզ չէ իս վերջավորությունը:

+ Քունկա (40, 37), բուռակների խոզք՝ զեղախատ հիմանդությունը. «Այս ցաւա վառկը շատն ի բուռկնին լինի և կոչի բուռկաւու»:

- + Քուտնայ (119, 146) — անստույդ նշ. բառ. «Էկց ամէն բթափողեւ քուտնայ միշ (119), «Արա քուտնայ մի ու լից ընդ վողըն ի վայր (146):
- + Քուտայ (40, 129) — ցրտառության մի տեսակ. «Է ազգ մի ի գալլցաւէն» (129), որ «է հուղթին» (107):
— արար. շամակ (կուտայ) «գրաստների հիվանդություն»:
- Զպիտի շփոթել քուտայ, քուտա «մաղաղուրկ զեմք» բառի հետ:
- Քչինալ (110) — բշանալ (*Մալխասյանց*):
- Քչկցնել (66) — բշացնել, պակասեցնել:
- Օ Քրբզմել (162), հուն. — մազը թափել բաղնիսի ցեխով. «Քրբզմէ զոտքն և զիր զմիսդ պախուիի» ի վերայա:
- Ն. Բյուզանդացին (ֆրանս. բառ. 1107ր) ունի միշ. Հ. Տրիգմա ժմազ թափելու արևելյան զեղ, բաղնիսի ցեխով, որի ծագումը Աճառյանը (Զ, 1552) դնում է հունարենից: Արանից էլ կազմված է Քրբզմել:
- Քրման (161) — Քրիման՝ նահանգ հարավ-արևելյան իրանում:

0

- Օր (146) — օդ:
- Օրխօր (արխար) (105), արար. — վաղամեռուկ, տղմի կնյուն:
- Աճառյանը (Զ, 40) ունի արխար. հաղորդված է նաև ադխար, օրխար, իրխիր ձեռքով:
- Օկտել (131, 134) — օգտել, օգնել:
- Օկտորին (83) — օգուտ, օգտակարություն:
- Օղ (95) — ողն:

Ֆ

- + Ֆախստ (100) — ազդրի հիվանդություն. «Փախստ ցաւ է, որ բաշվի կռճացն շեղն ու կարճնայա:
- արար. ձահճ (fakhdzh) — ազդր, դիստ, արար. Ճ (dzh)-ի հ. և (q) տառադարձությամբ:
- + Ֆախտ (118) — բժշկության մեջ օգտագործվող ընդեղնի տեսակ. «Առ զգեղին, որ կոչի ֆախտի հութ»:
- պարսկ. օշխթ (fâkhteh) — նույն նշ.:
- + Ֆառայ (38, 83, 84—87), փառայ (86) — խոտի ցողուն. «Յորժամ տաս զՓառայն կամ զառվոյտնեա:
- պարսկ. օշչ (parra) — նույն նշ.:

